



Armenian
2019

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԱՐՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ

Bush



Gavin Newsom, նահանգապետ
Կալիֆոռնիա նահանգ

Brian C. Annis, քարտուղար
Կալիֆոռնիա նահանգի փոխադրուժների
գործակալություն

William Davidson, տնօրենի պաշտոնակատար
Կալիֆոռնիա նահանգի Ավտոտրանսպորտի
դեպարտամենտ



Սույն ձեռնարկը հասանելի է
www.dmv.ca.gov կայքում:



Կալիֆոռնիա նահանգի հարգելի համերկրացի,

Անկախ այն բանից՝ դուք փորձառու վարորդ եք, ով դեկի առաջ է տասնամյակներ շարունակ, թե՛ ձեր ժամանակավոր թույլտվությունը ստացող դեռահաս, Կալիֆոռնիա նահանգի Ավտոտրանսպորտի դեպարտամենտը (*California Department of Motor Vehicles*) հանձն է առել ապահովել, որպեսզի վարորդական իրավունքի վկայական ունեցող ցանկացած անձ հասկանա ճանապարհային երթնեկության կանոններն ու գործնականորեն ձեռք բերի անվտանգ մեքենավարման սովորություններ:

Մեր մեծ նահանգում կան վարորդական իրավունքի վկայական ունեցող 27 միլիոնից ավելի վարորդներ, և նրանց բոլորի, ինչպես նաև ճանապարհներից օգտվող հետիոտների ու հեծանվորդների համար մեր նպատակն է՝ անվտանգ կերպով տուն վերադառնալ ամեն օր: Այս Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկը (*California Driver Handbook*) ուղեցույց է վարորդների համար՝ նրանցից ունեցած ակնկալիքների և նրանց պատասխանատվության մասին:

Քանի որ կալիֆոռնիացիներն այս տարի նորացնում են վարորդական իրավունքի վկայականը կամ նոր վկայական են ձեռք բերում, նրանք ունեն դաշնային չափորոշիչներին համապատասխանող, “REAL ID” քարտի համար դիմելու տարբերակ: 2020թ. հոկտեմբերի 1-ից սկսած՝ ներքին չվերթ իրականացնող ինքնաթիռ նստելու համար կպահանջվի DMV REAL ID քարտ կամ դաշնային մարմինների կողմից հաստատված այլ նույնականացնող փաստաթուղթ: DMV-ի կայքում բացատրվում են REAL ID քարտի առավելություններն ու պահանջները, ներառյալ դիմելու համար պահանջվող փաստաթղթերը: Հուսով ենք՝ տպելու համար հարմար այդ փաստաթղթերը կօգնեն արագացնել ձեր այցը գրասենյակ:

DMV-ն բարելավում է հաճախորդների սպասարկումը՝ թարմացնելով առցանց հասանելի ռեսուրսները: Այցելելով **dmv.ca.gov**՝ կարող եք օգտվել այս ձեռնարկի թվային տարբերակից, ինչպես նաև պարապել քննությունների համար, ծանոթանալ հաճախ տրվող հարցերին և այլ նյութերի կրթվելու և մեքենավարման կարողությունը կատարելագործելու համար: Քանի որ կապ չունի՝ դուք բազմափորձ, թե սկսնակ վարորդ եք, մենք բոլորս շահում ենք լավ մեքենավարման սովորություններից:

Ձեզ մաղթում ենք անվտանգ ուղևորություններ:

BRIAN C. ANNIS
Քարտուղար
Կալիֆոռնիա նահանգի փոխադրուժների գործակալություն (*California State Transportation Agency*)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

2019 թ. ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ	VII
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ DMV -ի ՄԱՍԻՆ	VIII
Ուր գրել	ix
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1
Հրաժարում պատասխանատվությունից	1
DMV -ի գործառույթն ու տեվալանը	1
Անձի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ	1
Հիմնական տեղեկություններ	2
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՎԱՐՈՂԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿՅԱԿԱՆ	2
Ո՛վ պետք է ունենա վարորդական իրավունքի վկայական:	2
Կալիֆոռնիայի բնակիչները	2
Կալիֆոռնիայի բնակիչ հանդիսացող զինծառայողները (ԱՄՆ Ձինված ուժեր)	2
Կալիֆոռնիայում տեղաբաշխված ոչ մշտաբնակ զինծառայողները	3
Կալիֆոռնիայի նոր բնակիչները	3
Կալիֆոռնիա այցելող չափահասները	3
Տարեց վարորդի անվտանգությունը	3
ՎԱՐՈՂԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿՅԱԿԱՆԻ ՍՍՏՅՈՒՄ	4
REAL ID Act	5
Ինչպես է REAL ID Act -ն ազդում կալիֆոռնիացիների վրա	5
REAL ID հարկավոր է ինձ:	5
Ինչպե՞ն պարտադրվում է REAL ID քարտի համար դիմելուն:	5
Ամուսնացել էք, ամուսնալուծվել էք կամ փոխել էք անունը:	6
Ինչ է պահանջվում հիմնական C կարգի վարորդական իրավունքի վկայականի համար դիմելիս	6
Պահանջներ չափահասների թույլտվության նկատմամբ	7
Պահանջներ չափահասների վարորդական իրավունքի վկայականի նկատմամբ	8
ՎԱՐՈՂԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԵՐԸ	9
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	10
Որտե՞ղ հանձնել քննությունները:	10
DMV -ի քննությունները	11
Խարեւոյթուն	12
ՀՍՏՈՒԿ ԲՄԺԻՆ – ԱՆՁՓԱՇԱՀԱՆՆԵՐ	12
Պահանջներ անչափահասների թույլտվության նկատմամբ	12
Անչափահասների թույլտվության սահմանափակումներ	13
Պահանջներ անչափահասների վարորդական իրավունքի վկայականի նկատմամբ	13
Բացառություններ. անչափահասների վարորդական իրավունքի վկայականի սահմանափակումներ	14
Այլ նահանգների անչափահասներ	15
Այլ նահանգների անչափահասների վարելու թույլտվություն	15

Այլ նահանգների անչափահասների վարորդական իրավունքի վկայական	15
Ժամանակավոր վարորդական իրավունքի վկայականի դեմ իրականացվող միջոցառումներ	15
Ժամանակավոր վարորդական իրավունքի վկայականը պահելը	16
Անչափահասները և բջջային հեռախոսները	16
ԶԱՋԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԿՅԱԿԱՆԻ ՍՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	17
Կորցրած, գողացված կամ վնասված վարորդական իրավունքի վկայականի փոխարինում	17
Անվան փոփոխություններ	17
Գենդերային կատեգորիայի փոփոխություններ	17
Վարորդական իրավունքի վկայականի նորացումներ	18
Նորացում փոստով կամ ինտերնետով	18
Վարորդական իրավունքի վկայականի ժամկետի երկարաձգում	18
Ձեր տիրապետության տակ գտնվող վարորդական իրավունքի վկայականը	20
Հասցեի փոփոխություններ	20
Տեսողություն	20
Բժշկական տվյալների քարտ	20
Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն	21
Տեղեկություններ «Վետերան» նշման և վետերանների նպաստների մասին	21
Ինչպե՞ն կարող եմ ստանալ «Վետերան» նշումը:	21
Գրանցվել քվեարկելու համար	22
Վարորդական իրավունքի վկայական չունեցող վարորդներ	22
Դիվանագիտական վարորդական իրավունքի վկայականներ	22
Նույնականացման քարտեր	22
Առանց տուրքի նույնականացման քարտեր	23
Նույնականացման քարտի նորացում փոստով կամ ինտերնետով	23
Վարորդական դպրոցներ	23
Տարեց վարորդների ծրագիր	24
Շեփոխների պարտականությունները	24
Նոր տեխնոլոգիական միջոցներ	25
ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	26
Ամրագրայիններ	26
Երեխաների անվտանգության համակարգ և հատուկ մանկական նստոցներ	26
Անվտանգ երթևեկություն օդային բարձիկներ ունեցող մեքենայով	27
Ավտոմեքենաներում հսկողությունից դուրս թողնված երեխաներ	28
Շեղված ուշադրությամբ մեքենավարում	28
Վտանգներ շոգ եղանակին	28
ԵՐԹԵՎԵՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵՐՊՈՒՄ	29
Երթևեկությունը կարգավորող լուսացույցներ	29
Շեփոխային լուսացույցներ	30

ճանապարհային նշաններ.....	31
ՃԱՆԱԳԱՐԱՇԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ.....	34
Առաջնահերթ երթևեկության կանոններ.....	34
Ընդհանուր տեղեկություններ.....	34
Հետիոտներ.....	34
Հետիոտնային անցումներ.....	35
Փոխհատումներ.....	35
Օդակաձև փոխհատումներ.....	36
Լեռնային ճանապարհներ.....	37
Արագության սահմանափակումներ.....	37
Նվազեցված արագություններ.....	37
ՏԵՍՈՂԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄ.....	42
Շրջակայքի զննում.....	42
Իմացք, թե ինչ է կատարվում առջևում.....	42
Իմացք, թե ինչ է կատարվում ձեռք կողքերում.....	44
Իմացք, թե ինչ է կատարվում ձեռք հետևում.....	45
Որքա՞ն է ճշգրիտ կարող էք կանգ առնել.....	45
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՅՎՈՒՄ.....	46
Գծերի գույները.....	46
Երթևեկության գոտու ընտրություն.....	47
Երթևեկության գոտիները փոխելը.....	47
Վազանցի գոտիներ.....	47
Մառախոլակն կամ ուղևորատար տրանսպորտային միջոցների (HOV) գոտիներ.....	48
Ձախ շրջադարձի կենտրոնական գոտիներ.....	48
Շրջանցման տարածքներ և գոտիներ.....	49
Երթևեկության գոտու վերջը ցույց տվող գծանշաններ.....	49
Ճանապարհի զիջելու գծեր.....	49
Հեծանվուղիներ.....	49
ՇՐՋԱՂԱՐՁԵՐ.....	50
Այլ և ձախ շրջադարձերի օրինակներ.....	52
Թույլատրված հետադարձեր.....	53
Արգելված հետադարձեր.....	56
ԿԱՅԱՆՈՒՄ.....	56
Թեք ճանապարհին կայանելը.....	56
Չուզանք կայանում.....	57
Ներկված եզրաքարերի մոտ կայանելը.....	58
Արգելված կայանում.....	59
Կայանման հատուկ կանոններ.....	60
ԻՆՉՊԵՆ ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐԸՆ ՄԵՔԵՆԱՆ.....	60
Ազդանշանում.....	60
Ղեկավարում.....	61
Ձեռքերի դիրքը.....	61
Տրանսպորտային միջոցի կառավարում.....	61
Ձայնային ազդանշան, ցուլապատերներ և վթարային ազդանշաններ.....	62
Ձայնային ազդանշան տվեք.....	62
Ձայնային ազդանշան մի տվեք.....	62
Միացրեք ցուլապատերները.....	63
Օգտվեք վթարային ազդանշաններից.....	63
Տեքստային հաղորդագրում և բջջային հեռախոսներ.....	64

ՏՐԱՆՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՐՔՎՎՈՐՈՒՄԸ.....	66
Հեռավորության պահպանում.....	66
Վարորդների համար վտանգ ներկայացնող անձինք.....	66
Առավելագույն վտանգից խուսափում.....	67
Երթևեկության հոսք մուտք գործելու համար անհրաժեշտ տարածությունը.....	67
Ճանապարհը հատելու կամ երթևեկությանը միանալու համար անհրաժեշտ տարածությունը.....	67
Ճանապարհից դուրս գալու համար անհրաժեշտ տարածությունը.....	68
Վազանց.....	68
Մոտեցում վազանցի համար.....	68
Վազանցից հետո երթևեկության գոտի վերադառնալը.....	69
Երբ ձեզ վազանցում են.....	69
ՃԱՆԱԳԱՐԱՇՈՎ ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ ԵՐԹԵՎԵԿՆԸ.....	70
Մեծ բեռնատարներ (ավտոզանգքներ) և զբոսաշրջային մեքենաներ.....	70
Արգելակում.....	70
Բեռնատարի վարորդի մեռյալ գոտիները. «Տեսադաշտի բացակայություն».....	70
Շրջադարձ կատարելը.....	70
Մանկայանություն.....	72
Ավտոբուսներ, տրամվայներ և տրոլեյբուսներ.....	72
Արագընթաց ներքաղաքային գնացքներ.....	73
Հաստուկ նշանակության մեքենաներ.....	74
Դանդաղընթաց մեքենաներ.....	74
Համայնքային էլեկտրամոբիլներ և ցածր արագության մեքենաներ.....	75
Կենդանաբարձ փոխադրամիջոցներ.....	75
Մոտոցիկլետներ.....	75
Հեծանիվներ.....	76
Հեծանիվներ երթևեկելի գոտում.....	77
Կույր հետիոտներ.....	80
Ճանապարհաշինարարներ և աշխատանքների իրականացման տարածքներ («կոնային գոտիներ»).....	82
Կրկնակի սուզանքի գոտիներ.....	82
Վերադասավորում և մեքենայի ընթացքի դանդաղեցում.....	82
Վտանգավոր բեռներ փոխադրող մեքենաներ.....	83
Ձեր գործողությունները ճանապարհային խցանման ժամանակ.....	83
Ձեր գործողությունները ագրեսիվ վարորդների և ճանապարհների դրսևորվող ագրեսիվ վարքի առկայության դեպքում.....	83
ՃԱՆԱԳԱՐԱՇԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ.....	84
Մեքենան դարձրեք տեսանելի.....	84
Ինչ վիճակում է ճանապարհը.....	84
Ոլորաններ.....	85
Երթևեկության արագությունները.....	85
Երթևեկության վտանգները.....	85

Չուր ճանապարհին.....	85	Տրանսպորտային միջոցի մեջ ակոհոլի կամ կանեֆային արտադրանքների օգտագործում կամ առկայություն.....	101
Սայթաբուն ճանապարհներ.....	85	Մինչև 21 տարեկան վարորդներ (ակոհոլային խմիչքի առկայություն).....	101
Ուժեղ քամիներ.....	86	Բոլոր տարիքի վարորդներ.....	101
Մեքենավարում մատախուղի կամ թանձր ծխի պայմաններում.....	86	Արյան մեջ ակոհոլի պարունակության (ԱԱՊ) սահմանային արժեքները.....	102
Մեքենավարում արևացույքի պայմաններում.....	87	Ինքնին վարչական պատասխանատվություն.....	102
Մեքենավարում մթության պայմաններում.....	87	Զրոյական հանդուրժողականություն մինչև 21 տարեկան վարորդների կողմից ակոհոլի օգտագործման նկատմամբ.....	103
Մեքենավարում անձրևի կամ ձյան պայմաններում.....	88	Դատավճիռներ ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու դեպքում.....	103
Չեղդված երթևեկելի մասեր.....	88	21 տարեկան և ավելի բարձր տարիքի վարորդներ. «Կարում ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրեր և սահմանափակ վարորդական իրավունքի վկայականներ.....	106
Մեքենավարում բլրապատ տեղանքում կամ ոլորանների վրա.....	89	ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՅՈՒԾԻԶՉ	
Երթևեկության ընդհատումներ.....	89	ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ.....	106
Պատուհանների ու հայելիների մաքրությունը.....	89	Ինչ չի կարելի անել.....	106
Հարմարեցրեք նստոցը և հայելիները.....	90	Ինչ է պետք անել.....	108
Անվադողերի անվտանգություն.....	90	ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ.....	108
Կանաչ մեքենավարում.....	90	Ֆինանսական պատասխանատվություն.....	108
Այլ վտանգեր.....	92	Ապահովագրական պահանջներ.....	108
Ինչ պետք է վարորդն անի, երբ ոստիկանը պահանջում է կանգ առնել.....	92	Ձեր անձնական գործում գրանցված ճանապարհահատրանսպորտային պատահարները.....	109
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ		Ճանապարհահատրանսպորտային պատահարները, ապահովագրությունը և անչափահասները.....	109
ՁեռնԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	93	Տուգանային կտրոն.....	110
Տեխնիկական բնույթի խորհուրդներ.....	93	Ոստիկանության աշխատակցին չնեարկվելը.....	110
Կողասահում սայթաբուն մակերևույթների վրա.....	93	Վարորդական գործում նշվող տուգանային միավորներ.....	111
Մեքենավարում ճանապարհային պատվածքից դուրս.....	94	Դատավճիռը հաճախ էլ երթևեկության կանոնները խախտողների դրաց.....	111
Արագացմամբ կողասահում.....	94	Վկայականի կասեցում կամ գրկում.....	111
Լոկված անիվներով կողասահում.....	94	Տվյալների գաղտնիություն.....	112
Արագարարի խափանում.....	95	Բարբարոսություն և գրաֆիտի, բոլոր տարիքային խմբերը.....	112
Ղեկի մեխանիզմի փակված.....	95	Արագության մրցավազքեր և անզույշ վարում.....	112
Բախումը դժբախտ պատահար չէ.....	95	Հրագեղի առկայություն.....	112
Բախումների պատճառները.....	95	Տրանսպորտային միջոցի գրանցման պահանջներ.....	112
Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից.....	95	Կալիֆոռնիայի տրանսպորտային միջոցները.....	112
Ինչպես հաղորդել բախման մասին.....	96	Այլ նահանգների տրանսպորտային միջոցներ.....	113
Խորհուրդներ անվտանգության վերաբերյալ.....	97	Խորհուրդներ մեքենայի առնանգումը կանխելու մասին.....	114
Արագընթաց բազմագոտի ճանապարհին.....	97	ՎԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՁԱՆՉ «ԱՐԱԳ ՓԱՍՏԵՐ» Լ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ.....	115
Երկաթուղագծերի վրա.....	98		
ՎԱՐՈՂԻ ՊԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ.....	98		
Տեսողություն.....	98		
Լսողություն.....	98		
Մեքենավարում հոգնած կամ քնկոտ վիճակում.....	99		
Դեղամիջոցներ.....	99		
Առողջություն և հույզեր.....	99		
Ինչ հիվանդությունների մասին են պարտավոր գեղուցել բժիշկները.....	100		
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԹՄՐԱՅՈՒԹԵՐ.....	100		
Ոգելից խմիչքների կամ թմրանյութերի ազդեցության տակ մեքենա վարելը վտանգավոր է.....	100		

Ձեզ հարկավոր է **REAL ID** վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ:



Կալիֆոռնիա նահանգի Ավտոտրանսպորտի դեպարտամենտը (**DMV**) առաջարկում է դաշնային չափորոշիչներին համապատասխան **REAL ID** վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտեր:

REAL ID կամ դաշնային չափորոշիչներին համապատասխանող այլ փաստաթուղթ կպահանջվի ներքին չվերթեր իրականացնող ինքնաթիռ նստելու կամ դաշնային հաստատություն կամ ռազմական բազա մուտք գործելու համար սկսած **2020** թ. հոկտեմբերի **1**-ից:

Մինչև **2020** թ. հոկտեմբերի **1**-ը, Կալիֆոռնիա նահանգի բոլոր գործող վարորդական վկայականները և նույնականացման քարտերը կարելի է օգտագործել ներքին չվերթեր իրականացնող ինքնաթիռներ նստելու համար:



Որպեսզի դիմեք **REAL ID** քարտի համար՝

- պայմանավորվեք **DMV**-ի տեղական գրասենյակ այցելելու մասին (մեծապես խորհուրդ է տրվում պայմանավորվել).
- դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին ծանոթանալու համար այցելեք **DMV**-ի կայքը:

18 տարեկանից ցածր տարիքի անձանցից չի պահանջվում **REAL ID** ունենալ թույլտված համար: Այցից առաջ այցելուները պետք է դիմեն դաշնային հաստատություններին կամ ռազմական բազաներին, որպեսզի իմանան, թե ինքնությունը հաստատող ինչ փաստաթղթեր են ընդունվելու:

ՈՒԺԻ ՄԵՋ Է 2019 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

Անցում և վազանցում աղբահավաք մեքենաներից (*Passing and Overtaking Waste Service Vehicles*)

Հանրային փողոցում կամ ավտոմայրուղում կանգնած աղբահավաք մեքենային մոտեցող կամ այն վազանցող տրանսպորտային միջոցի վարորդից պահանջում է անցնել ապահով հեռավորությամբ՝ առանց աղբահավաք մեքենայի անվտանգ աշխատանքը խանգարելու՝ պատշաճ կերպով հաշվի առնելով անվտանգությունն ու երթևեկության պայմանները:

Արյան մեջ ալկոհոլի պարունակության քիմիական ստուգման մերժում (*Refusal of Chemical Testing of Alcohol Content in Blood*)

Քրեական հետևանքներից ազատում է այն անձանց, ովքեր հրաժարվում են իրենց արյան մեջ ալկոհոլի և (կամ) թմրանյութերի պարունակությունը պարզելու նպատակով քիմիական թեստի հանձնումից, երբ օրինականորեն ձերբակալվում են ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու համար:

Շարժիչավոր հրվող երկանիփներ (*Motorized Scooters*)

Արգելում է շարժիչավոր հրվող երկանիփ վարել ժամում 25 մղոնից (մղոն/ժ) մեծ թույլատրելի արագություն ունեցող մայրուղում, եթե այն II կամ IV կարգի հեծանվային ճանապարհ չէ: Թույլատրում է շարժիչավոր հրվող երկանիփի շահագործում մինչև 35 մղոն/ժ թույլատրելի արագություն ունեցող մայրուղում և միայն պահանջում է, որ շարժիչավոր հրվող երկանիփ վարողները, ում տարիքը 18-ից ցածր է, կրեն սաղավարտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ DMV-Ի ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՍԵՐԸ	
Երկուշաբթի	8:00-ից մինչև 17:00
Երեքշաբթի	8:00-ից մինչև 17:00
Չորեքշաբթի	9:00-ից մինչև 17:00
Հինգշաբթի	8:00-ից մինչև 17:00
Ուրբաթ	8:00-ից մինչև 17:00
Շաբաթ	Փակ է
Կիրակի	Փակ է

Որոշ տեղական բաժանմունքներ կարող են ունենալ երկարացված ժամեր և բաց լինել շաբաթ օրերին, իսկ մի քանիսը տրամադրում են միայն վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի տրաման կամ տրանսպորտային միջոցների գրանցման ծառայություններ: Շաբաթ օրը «ղեկի մոտ» մեքենավարման քննություններ չեն անցկացվում: Պարզելու համար՝ արդյոք ձեր տեղական բաժանմունքն ունի երկարացված ժամեր, կամ տեղական բաժանմունքի տեղը գտնելու և ծառայությունների տարբերակներին տեղեկանալու համար այցելեք www.dmv.ca.gov կամ զանգահարեք 1-800-777-0133:

Մտեք համացանց www.dmv.ca.gov հասցեով, որպեսզի՝

- պարզեք տեղական գրասենյակների հասցեները, աշխատանքի ժամերը, մեքենայով այցելելու ցուցումները, հեռախոսահամարները և վճարման ընդունելի եղանակները.
- պայմանավորվեք տեղական գրասենյակ այցելելու կամ մեքենավարման քննությունն հանձնելու վերաբերյալ (բացի առևտրային մեքենաների վարման քննություննից).
- լրացնեք վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի էլեկտրոնային դիմումի ձևը (*Electronic Driver License & ID Card Application, eDL 44*).
- փոխեք DMV-ի մատյաններում գրանցված ձեր հասցեն.
- պատվիրեք անհատականացված համարանիշներ.
- ստանաք վարորդական իրավունքի վկայականի և նույնականացման քարտի ավյալներ.
- տեղեկություններ ստանաք փոխադրամիջոցների և նավերի գրանցման վերաբերյալ.
- համացանցից ձեռք բերեք ներբեռնելի ձևաթղթեր.
- ծանոթանաք հրապարակումներին՝ ձեռնարկներին, գրքույկներին և քննական հարցերի օրինակներին.
- ստանաք տարեց վարորդներին վերաբերող տեղեկություններ.
- ստանաք անչափահաս վարորդներին վերաբերող տեղեկություններ.
- տեսնեք ինտերնետային հղումներ դեպի այլ նախանգային և դաշնային գործակալությունների կայքէջեր.
- նորացնեք ձեր վարորդական իրավունքի վկայականը կամ տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը:

Մովորական աշխատանքային ժամերին գանգահարեք 1-800-777-0133 հեռախոսահամարով, որպեսզի

- ձեռք բերեք կամ խնդրեք վարորդական իրավունքի վկայականի և տրանսպորտային միջոցի գրանցման վերաբերյալ տեղեկություններ, ձևաթղթեր և հրատարակություններ.
- պարզեք գրասենյակների հասցեները և աշխատանքի ժամերը.
- պայմանավորվեք մեքենավարման քննություն հանձնելու մասին.
- խոսեք DMV-ի ներկայացուցչի հետ կամ նրան խնդրեք հետ գանգել:

Օրական 24 ժամ և շաբաթական 7 օր տրամադրվող ավտոմատացված ծառայությունից օգտվելու համար գանգահարեք 1-800-777-0133 հեռախոսահամարով, որպեսզի

- վճարման ծանուցագրի վրա նշված նորացման տարբերիչ համարի (*renewal identification number, RIN*) միջոցով նորացնեք ձեր տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը: Կարող եք վճարել վարկային քարտով կամ էլեկտրոնային չեկով.
- պայմանավորվեք տեղական գրասենյակ այցելելու մասին: Պարտադիր ունեցեք Ձեր վարորդական իրավունքի վկայականը կամ նույնականացման քարտի համարը, տրանսպորտային միջոցի համարանիշը և (կամ) տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (*vehicle identification number, VIN*):

Խույ կամ թույլ լսողություն կամ խոսքի խանգարում ունեցող անձինք կարող են գանգահարել անվճար 1-800-368-4327 հեռախոսահամարով, որպեսզի ստանան DMV-ի ծառայությունների հետ կապված աջակցություն: Այս համարով ստացվում և պատասխանվում են միայն այլ հեռատիպից մեքենագրված հաղորդագրությունները:

ՈՒՐ ԳՐԵԼ

Եթե դիտողություններ կամ առաջարկություններ ունեք այս հրատարակության վերաբերյալ, խնդրում ենք ուղարկել հետևյալ հասցեով՝

*Department of Motor Vehicles
Customer Communications Section, MS H165
PO Box 932345
Sacramento, CA 94232-3450*

© Copyright, Department of Motor Vehicles 2019

Բոլոր իրավունքները պահպանված են

Այս աշխատանքը պաշտպանված է ԱՄՆ «Շեղինակային իրավունքի մասին» օրենքով: Այս աշխատանքի հեղինակային իրավունքը պատկանում է DMV-ին: Շեղինակային իրավունքի մասին օրենքն արգելում է (1) հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության վերարտադրությունը, (2) հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության պատճենների տարածումը, (3) անանցյալ ստեղծագործությունների պատրաստումը հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության հիման վրա, (4) հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության հրապարակային ցուցադրությունը կամ (5) հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության հրապարակային կատարումը: Սույն հրատարակության բոլոր մասերի կամ որևէ մասի պատճենները ստեղծելու թույլտվության վերաբերյալ բոլոր հարցումներով դիմել հետևյալ հասցեով՝

*Department of Motor Vehicles
Legal Office, MS C128
PO Box 932382
Sacramento, CA 94232-3820*

Շվեդանավորչական գովազդ տեղադրելն օգնում է հատուցել սույն հրատարակության ծախսերը: DMV-ն չի գովազդում կամ երաշխավորում գովազդող հովանավորների տրամադրած արտադրանքներն ու ծառայությունները, սակայն շնորհակալ է իրենց նշանակալի ներդրումների համար:

Եթե ցանկանում եք գովազդ տեղադրել այս հրատարակության մեջ, խնդրում ենք գանգահարել Հրատարակչական գործունեության և գովազդման նահանգային դեպարտամենտի (*Office of State Publishing Advertising Department*) գրասենյակ 1-866-824-0603 հեռախոսահամարով:

Նոր էլեկտրոնային դիմումի ձև վարորդական վկայականի և նույնականացման քարտի համար



Ժամանակ խնայելու նպատակով՝ DMV-ի հաճախորդները կարող են օգտագործել իրենց համակարգիչը, պլանշետը կամ սմարթֆոնը, որպեսզի վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի համար առցանց էլեկտրոնային դիմումի ձև լրացնեն նախքան DMV-ի գրասենյակ այցելելը:

Հասանելի է հետևյալ 10 լեզուներով՝

- Անգլերեն
- Չինարեն
- Ճապոներեն
- Գորերեն
- Թայերեն
- Իսպաներեն
- Հինդի
- Կիւմերերեն
- Տագալերեն
- Վիետնամերեն

Ավելին իմացեք այստեղ՝ www.dmv.ca.gov



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱԺԱՐՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ձեռնարկը ներկայացնում է «Կալիֆոռնիայի տրանսպորտային օրենսգրքում» (*California Vehicle Code, CVC*) համառոտ շարադրված օրենքների և կանոնակարգերի ամփոփումը: Ավտոտրանսպորտի դեպարտամենտը (*Department of Motor Vehicles, DMV*), իրավապահ մարմինները և դատարանները խստորեն հետևում են CVC տառին ու ոգուն: Կարող եք CVC-ն դիտել **Leginfo.legislature.ca.gov** կայքում կամ CVC գրքի օրինակ գնել DMV-ի ցանկացած տեղական գրասենյակում: CVC-ի և DMV-ի վճարների մասին տեղեկատվությունն առկա է **www.dmv.ca.gov** կայքում: Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկում (*California Driver Handbook*) նշված վճարները կարող են փոփոխվել:

Սույն ձեռնարկը գլխավորապես վերաբերում է հիմնական C կարգի վարորդական իրավունքի վկայականին: Կարորդական իրավունքի վկայականների և փոխադրագրերի այլ տեսակների մասին մանրամասն տեղեկությունների համար տես Կալիֆոռնիա նահանգի DMV-ի գանազան այլ ձեռնարկներ «Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկ» (*California Commercial Driver Handbook*), «Զբոսաշրջային ավտոմեքենաների և կցասայլակների ձեռնարկ» (*Recreational Vehicles and Trailers Handbook*), «Շտապ օգնության վարորդի ձեռնարկ» (*Ambulance Driver Handbook*), «Կալիֆոռնիայի ծնող-անչափահաս ուսուցողական ուղեցույց» (*California Parent-Teen Training Guide*) և «Կալիֆոռնիայի մոտոցիկլետի ձեռնարկ» (*California Motorcycle Handbook*):

DMV-ի ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆԸ

DMV-ն նահանգային մակարդակի պետական գործակալություն է, որի երկու հիմնական գործառնություններն են արտոնագրել Կալիֆոռնիա նահանգի վարորդներին և տրանսպորտային միջոցներ գրանցել նահանգի տարածքում: Սակայն DMV-ն իրականացնում ու վերահսկում է նաև շատ այլ գործառնություններ:

DMV-ի տեղականն է՝ վստահելի առաջնորդ լինել նորարարական ծառայությունների մատուցման ոլորտում: Այս տեղականը հիմնված է DMV-ի առաքելության վրա՝ հպարտորեն ծառայել հանրությանը՝ վկայականներ տալով վարորդներին, գրանցելով տրանսպորտային միջոցները, տրամադրելով ինքնությունը հաստատող փաստաթղթեր և կանոնակարգելով ավտոմեքիլային տրանսպորտի բնագավառը:

ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՃՇՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալիֆոռնիայի բոլոր վարորդական իրավունքի վկայականների կամ նույնականացման քարտերի վրա նշված տեղեկությունների արժանահավատությունը, ամբողջականությունը և գաղտնիությունը առաջնահերթ նշանակություն ունեն կառավարության բոլոր մակարդակների, մասնավոր հատվածի և հասարակության համար:

Շատ կարևոր է, որ այս փաստաթղթերը լինեն լիովին վավերական և ճշգրիտ: Կալիֆոռնիայի օրենսդրությունը պահանջում է, որ Կալիֆոռնիա նահանգի սկզբնական վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ կամ REAL ID-ին համապատասխանող վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ ստանալու համար դիմող բոլոր հաճախորդները ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ, սոցիալական ապահովության քարտ և, իրավունակ լինելու դեպքում, Կալիֆոռնիա նահանգում մշտաբնակության 2 փաստաթուղթ: Վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի վրա կնշվի ձեր իսկական լրիվ անունը, ինչպես նշված է ձեր անձը հաստատող փաստաթղթում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայականը ցույց է տալիս, որ նահանգը ձեռք բերել է մեքենա վարել ընդհանուր օգտագործման ճանապարհներին: Դուք կարող եք վարորդական իրավունք ստանալու համար դիմել DMV-ի տեղական գրասենյակների մեծ մասում (տե ս էջ viii): Երբ լրացնեք ձեր դիմումը վարորդական իրավունքի վկայականի համար, վճարեք դիմումի համար սահմանված տուրքը, անցնեք գիտելիքների բոլոր անհրաժեշտ ստուգումները, ցույց տաք, որ ձեր ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակը բավարար է, և ցուցադրեք անվտանգ մեքենավարման ձեր կարողությունը, կարող է վկայական տրվել և փոստով ուղարկվել ձեզ: Եթե որևէ հիվանդություն կամ հաշմանդամություն ունեք, ապա DMV-ն կարող է պահանջել մեքենավարման քննություն հանձնել: Հնարավոր է նաև, որ պահանջվի համապատասխան տեղեկանք բժշկից ձեր ներկա առողջական վիճակի մասին:

Կալիֆոռնիայում ժամկետանց վարորդական իրավունքի վկայականով մեքենա վարելը զանցանք է համարվում: Այդպես վարվելու դեպքում ձեզ կարող են դատական պատասխանատվության ենթարկել, ձեր տրանսպորտային միջոցը կարող է բռնագրավվել, և դուք կարող եք կանգնել դատարանի առաջ:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Ո՞վ կ ՊԵՏՔ Ե ՌՈՒՆԵՆԱ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ:

Կալիֆոռնիայի բնակիչները

Կալիֆոռնիայի բնակիչները, ովքեր մեքենա են վարում ընդհանուր օգտագործման ավտոմայրուղիների վրա կամ օգտվում են հանրամատչելի կայանատեղերից, պարտավոր են ունենալ Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայական, բացի այն անձանցից, ովքեր՝

- ԱՄՆ-ի կառավարության պաշտոնյա կամ աշխատակից են և շահագործում են ԱՄՆ-ի կառավարությանը պատկանող կամ կառավարության վերահսկողության տակ գտնվող և դաշնային և նպատակների ծառայող տրանսպորտային միջոց բացառությամբ առևտրային փոխադրամիջոցների շահագործման դեպքերի.
- վարում կամ շահագործում են ավտոմայրուղիներում շահագործման կամ տեղափոխման համար չնախատեսված գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ.
- ավտոմայրուղին հատելու համար վարում կամ շահագործում են ավտոմայրուղիների համար չնախատեսված տրանսպորտային միջոց:

Կալիֆոռնիայի բնակիչ հանդիսացող զինծառայողները (ԱՄՆ Զինված ուժեր)

Եթե դուք գտնվում եք նահանգից դուրս՝ զինծառայության մեջ, և ունեք Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի գործող վկայական, ապա ձեր և ձեր ամուսնու Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայականն ուժի մեջ կլինի Կալիֆոռնիայից բացալայելու ամբողջ ժամանակահատվածում ու ևս 30 օր զորացրումից հետո, եթե դուք պատվով զորացրվել եք Կալիֆոռնիայից դուրս: Այդ 30 օրվա ընթացքում ձեզ մոտ պահեք ձեր վարորդական իրավունքի վկայականը և զորացրման կամ արձակման փաստաթղթերը (CVC §12817):

Զանգահարեք 1-800-777-0133 համարով՝ «Զինված ուժերում ծառայող անձանց համար վկայականի երկարաձգման» (*Extension of License for Person in Armed Forces, DL 236*) քարտ ստանալու համար, որը երկարաձգում է Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայականի գործողության ժամկետը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ձեր վարորդական իրավունքի վկայականը վավերական չէ, եթե այն կասեցվել է, չեղյալ է հայտարարվել կամ հետ է կանչվել:

Կալիֆոռնիայում տեղաբաշխված ոչ մշտաբնակ զինծառայողները

Եթե դուք 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք, լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք այս ձեռնարկի «Կալիֆոռնիայի բնակիչները» և «Կալիֆոռնիա այցելող չափահասները» բաժիններին: Զինծառայությամբ պայմանավորված երկարաձգման ենթակա վկայական ունեցողները պետք է կրեն իրենց հայրենի նահանգից ստացված փաստաթղթերը, որպեսզի տեղական իրավապահ մարմինները կարողանան պարզել նրանց կարգավիճակը:

Կալիֆոռնիայի նոր բնակիչները

Երբ դուք դառնում եք Կալիֆոռնիայի բնակիչ և ցանկանում եք մեքենա վարել Կալիֆոռնիայում, պետք է 10 օրվա ընթացքում դիմեք Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայական ստանալու համար: Բնակության փաստը հաստատվում է տարբեր կերպ, ներառյալ հետևյալը

- Կալիֆոռնիայի ընտրություններում քվեարկելու համար գրանցված լինելը.
- Կալիֆոռնիայի որևէ քոլեջում կամ համալսարանում կրթության արտոնավճար վճարելը.
- տան սեփականատիրոջ գույքահարկից ազատման համար գրանցվելը.
- ցանկացած այլ արտոնություն կամ նպաստ ստանալը, որոնք սովորաբար չեն տրվում ոչ մշտաբնակներին:

Կալիֆոռնիա այցելող չափահասները

Իրենց հայրենի նահանգից կամ երկրից ստացած վավերական վարորդական իրավունքի վկայական ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի այցելուները կարող են առանց Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայականի մեքենա վարել Կալիֆոռնիայում այնքան ժամանակ, քանի դեռ նրանց հայրենի նահանգից կամ երկրից ստացած վարորդական իրավունքի վկայականն ուժի մեջ է:

Տարեց վարորդի անվտանգությունը

DMV-ն ձեռնարկ ունի հատուկ տարեց վարորդների համար: Այցելեք www.dmv.ca.gov կայքը, որպեսզի դիտեք կամ ներբեռնեք «Անվտանգ մեքենավարման ձեռնարկ տարեց անձանց համար» (*Senior Guide for Safe Driving, DL 625*) գրքույկը, զանգահարեք 1-800-777-0133 համարով՝ խնդրելու, որ այդ գրքույկի փի օրինակ ուղարկվի փոստով, այցելեք DMV-ի ձեր տեղական բաժանմունք կամ դիմեք «Տարեց վարորդների օմբուդսմեն» ծրագրի (*Senior Driver Ombudsman Program*) տարածքային ներկայացուցիչներին՝

Լոս Անջելես և Կենտրոնական ափի շրջաններ
(310) 615-3552

Մակրամենտոյի և Հյուսիսային Կալիֆոռնիայի շրջաններ
(916) 657-6464

Օրինջի և Սան Դիեգոյի շրջաններ
(714) 705-1588

Սան Ֆրանցիսկոյի, Օքլենդի և Շովախորշի տարածքներ
(510) 563-8998

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍՏԱՑՈՒՄ

Երբ դիմում եք Կալիֆոռնիա նահանգի սկզբնական վարորդական իրավունքի վկայական ստանալու համար, պետք է ներկայացնեք ձեր անձը և ծննդյան թվականը, մշտաբնակությունը հաստատող ընդունելի փաստաթղթեր և տրամադրեք սոցիալական ապահովության քարտի համարը (*Social Security Number, SSN*), եթե այդ քարտից օգտվելու իրավունք ունեք: Երբ փաստաթուղթ է պահանջվում (բացի մշտաբնակությունը հաստատող փաստաթղթերից), ապահովեք հետևյալ պահանջների կատարումը.

- տրամադրեք վավերացված պատճեն կամ ժամկետի մեջ գտնվող բնօրինակ փաստաթուղթ.
- տրամադրեք խորը կնիք կամ բնօրինակ դրոշմակնիք պարունակող փաստաթուղթ, եթե կիրառելի է.
- մի տրամադրեք լուսապատճեն: Լուսապատճենն ընդունելի է մշտաբնակության փաստաթղթերի համար.
- մի ներկայացրեք ինքնուրույն լամինացված քարտեր կամ փաստաթղթեր: Այնուամենայնիվ, DMV-ն կարող է ընդունել սոցիալական ապահովության լամինացված կամ մետաղական քարտեր:

Եթե ներկայացնեք անձը հաստատող սահմանափակ ժամկետով փաստաթուղթ, ձեր վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի գործողության ժամկետը կարող է ավարտվել անձը հաստատող փաստաթղթի հետ նույն օրը: Եթե փաստաթղթում նշված անունը տարբերվում է վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ ստանալու դիմումի մեջ նշված անունից, ապա հարկավոր է ներկայացնել նաև ձեր իսկական լրիվ անունը հաստատող որևէ ընդունելի փաստաթուղթ: Ձեզանից կվերցվեն նաև ձեր մատնահետքը, ստորագրությունը և լուսանկարը (տե՛ս «Ինչ է պահանջվում հիմնական C կարգի վարորդական իրավունքի վկայականի համար դիմելիս» բաժինը 6-րդ էջում): Վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի հետ կապված ցանկացած այլ գործարքի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ լուսանկարով:

- Անձը հաստատող ընդունելի փաստաթղթերի օրինակներ են՝ ԱՄՆ ծննդյան վկայականը, ԱՄՆ անձնագիրը, ԱՄՆ Զինված ուժերի ինքնության քարտերը, հպատակագրման վկայականը, մշտական բնակչի քարտը, ինչպես նաև օտարերկրյա անձնագիրը՝ վավերական I-94-ի հետ միասին: I-94-ի գործողության ավարտի ժամկետը պետք է լինի 2 ամսից ավելի՝ տեղական գրասենյակ կատարած ձեր այցի ամսաթվից հաշված:
- Իսկական լրիվ անունը հաստատող փաստաթղթերի օրինակները ներառում են՝ որդեգրման փաստաթղթերը, որոնք պարունակում են որդեգրումից հետո ձեզ տրված պաշտոնական անունը. անվանափոխության փաստաթղթերը, որոնք պարունակում են ձեր պաշտոնական անունը անվանափոխությունից առաջ և հետո. ամուսնության վկայականը. քաղաքացիական զուգընկերության կազմումը հաստատող վկայականը կամ գրանցման փաստաթուղթը կամ դատարանի որոշմամբ տրված ամուսնալուծության վկայականը, որը պարունակում է ձեր պաշտոնական անունը:
- Մշտաբնակության վերաբերյալ ընդունելի փաստաթղթերի օրինակներ են՝ տան կենցաղսպասարկման հաշիվը (ներառյալ բջջային հեռախոսինը), ապահովագրական փաստաթղթերը, Կալիֆոռնիա նահանգի տրանսպորտային միջոցի կամ նավի տիրապետման իրավունքը հաստատող փաստաթուղթը կամ գրանցումը, կամ ֆինանսական հաստատության փաստաթուղթը: Ծնողը, օրինական խնամակալը կամ երեխան կարող է օգտագործել ծննդյան վկայական, իսկ ամուսինը կամ գրանցված քաղաքացիական զուգընկերը կարող է օգտագործել ամուսնության վկայական կամ քաղաքացիական զուգընկերոջ գրանցման վկայական, որպեսզի հաստատի իր կապն այն անհատի հետ, ում հասցեով տրված է ընդունելի մշտաբնակության փաստաթղթերը: Ընդունելի փաստաթղթերի լրիվ ցանկը հասանելի է www.dmv.ca.gov կայքում:



Ինչպես է REAL ID Act-ն ազդում կալիֆոռնիացիների վրա

2020 թ. հոկտեմբերի 1-ից սկսած՝ դաշնային կառավարությունը պահանջելու է, որպեսզի վարորդական իրավունքի վկայականը կամ նույնականացման քարտը լինի REAL ID օրենքին համապատասխան, եթե ցանկանում եք այն որպես ինքնությունը հաստատող փաստաթուղթ օգտագործել ներքին չվերթեր իրականացնող ինքնաթիռ նստելու կամ ռազմական բազաներ կամ դաշնային հաստատությունների մեծ մասը մուտք գործելու համար:

Եթե ունեք ԱՄՆ անձնագիր, անձնագրային քարտ կամ զինգրքույկ կամ Տրանսպորտային անվտանգության վարչության (*Transportation Security Administration, TSA*) կողմից հաստատված նույնականացման քարտ, այդ փաստաթղթերը դեռ կընդունվեն ինքնաթիռ նստելու համար: 2005 թվի դաշնային REAL ID Act-ն ընդունվել էր 9/11-ի իրադարձությունների ի պատասխան: REAL ID Act-ի մասին ավելին իմանալու համար այցելեք Ներքին անվտանգության նախարարության (*Department of Homeland Security*) կայքը www.dhs.gov հասցեով:

REAL ID հարկավոր է ինձ:

REAL ID-ին համապատասխանող վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի ընտրությունը կամ հարկավոր է:

Եթե ունեք ԱՄՆ անձնագիր կամ անձնագրային քարտ, զինգրքույկ կամ դաշնային մարմինների կողմից հաստատված այլ նույնականացնող փաստաթուղթ, ապա կարող եք դա օգտագործել որպես ձեր ինքնություն հաստատող փաստաթուղթ՝ ցանկացած ժամանակ ամբողջ երկրով մեկ օդանավակայաններում TSA անցակետն անցնելու և ուժեղացված պահպանության ռեժիմով դաշնային շինություն կամ ռազմական հաստատություն այցելելու համար:

Եթե գիտեք, որ ներքին չվերթ իրականացնող ինքնաթիռ չեք նստելու կամ չեք այցելելու ուժեղացված պահպանության ռեժիմով դաշնային հաստատություն կամ ռազմական բազա, ապա REAL ID-ին համապատասխանող վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ հարկավոր չէ:

REAL ID-ին համապատասխանող վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի կարիք չկա հետևյալ նպատակների դեպքում՝

- մեքենա վարել:
- քվեարկել:
- դիմել դաշնային նպաստների համար կամ ստանալ այդ նպաստները (Վետերանների գործերի դեպարտամենտ (*Veterans Affairs*), Սոցիալական ապահովության վարչություն (*Social Security Administration, SSA*) և այլն):
- մուտք գործել դաշնային հաստատություն, որն ինքնությունը հաստատող փաստաթուղթ չի պահանջում (օրինակ՝ փոստատուն):
- այցելել հիվանդանոց կամ ստանալ կյանքի փրկության համար անհրաժեշտ ծառայություններ:

Ինչպե՞ս պատրաստվեմ REAL ID քարտի համար դիմելուն:

Որպեսզի դիմեք REAL ID քարտի համար, պետք է անեք հետևյալը՝

- ներկայացնեք անձը հաստատող փաստաթուղթ:
- ներկայացնեք Կալիֆոռնիա նահանգում մշտաբնակության 2 փաստաթուղթ:
- ներկայացնեք ձեր սոցիալական ապահովությունը հաստատող փաստաթուղթ, եթե իրավունակ եք:
 - ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Կարող եք փոխարինող սոցիալական ապահովության քարտ պահանջել առցանց այցելելով www.ssa.gov:

ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ. REAL ID-ին համապատասխանող ընդունելի փաստաթղթերի ամբողջական ցանկին ծանոթանալու համար այցելեք DMV-ի կայքը:

Ամուսնացել՝ էք, ամուսնալուծվել՝ էք կամ փոխել՝ էք անունը:

Գուցե անհրաժեշտ լինի ներկայացնել անվանափոխության փաստաթուղթ:

Կարող է պահանջվել անվանափոխության փաստաթուղթ (փաստաթղթեր), օրինակ՝ ամուսնության թույլտվության փաստաթուղթ, որպեսզի REAL ID-ին համապատասխանող վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ տրվի ձեր իսկական լրիվ անունով: Եթե ձեր անձը հաստատող փաստաթղթում նշված անունը տարբերվում է դիմումի մեջ նշված անունից, ապա պետք է ներկայացնեք ձեր իսկական լրիվ անունը հաստատող փաստաթուղթ: Օրինակ՝

- որդեգրման փաստաթղթեր, որոնք պարունակում են որդեգրման արդյունքում ձեզ տրված պաշտոնական անունները.
- անվանափոխության փաստաթուղթ, որը պարունակում է պաշտոնապես գրանցված անունը անվանափոխությունից առաջ և հետո.
- ամուսնության վկայական.
- քաղաքացիական զուգընկերության կազմավորումը հաստատող վկայական, հայտարարություն կամ գրանցման փաստաթուղթ.
- դատարանի որոշմամբ տրված ամուսնալուծության կամ քաղաքացիական զուգընկերության լուծարման վկայական, որը պարունակում է ձեր պաշտոնական անունը:

ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ՉԻՄԱԿԱՆ C ԿԱՐԳԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ

C կարգի վարորդական իրավունքի վկայականի համար դիմելիս հարկավոր է՝

- ներկայացնել լրացված և ստորագրված «Վարորդական իրավունքի վկայականի և նույնականացման քարտի դիմում» (DL 44/eDL 44) ձևը: Կարելի է eDL44 ձևը կանխավ լրացնել առցանց: Այդ դիմումը ստորագրելով՝ դուք համաձայնվում եք քիմիական թեստ հանձնել ձեր արյան մեջ ալկոհոլի կամ թմրանյութերի պարունակությունը պարզելու նպատակով՝ ըստ պաշտոնական անձի պահանջի: Եթե հրաժարվեք ստորագրել այդ համաձայնությունը, ապա DMV-ն ձեզ թույլտվություն կամ վարորդական իրավունքի վկայական չի տա.
- ներկայացնել անձը և ծննդյան թվականը հաստատող ընդունելի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- տրամադրել ձեր իսկական լրիվ անունը.
- ներկայացնել մշտաբնակությունը հաստատող ընդունելի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- իրավունակ լինելու դեպքում տրամադրել ձեր սոցիալական ապահովության համարը, որը էլեկտրոնային եղանակով կստուգվի Սոցիալական ապահովության վարչությունում.
- չհատուցվող տուրք վճարել դիմումի համար: Տուրքն ուժի մեջ է 12 ամիս: (Եթե բոլոր պահանջները չբավարարվեն 12 ամսվա ընթացքում, ապա դիմումն այլևս վավերական չի լինի, և այդ դեպքում պետք է նորից դիմեք):
 - Թույլ է տալիս 3 փորձ կատարել գիտելիքների ստուգման յուրաքանչյուր պարտադիր թեստն անցնելու համար: (Եթե գիտելիքների ստուգման թեստը ձախողեք 3 անգամ, ապա դիմումն այլևս վավերական չի լինի, և այդ դեպքում պետք է նորից դիմեք):

— Թույլ է տալիս 3 փորձ կատարել մեքենավարման քննության ժամանակ:
ԿԱՐԵՎՈՐ Է. Մեքենավարման քննությունը ձախողելու դեպքում պետք է \$7 վերահանձնման միջնորդավճար վճարեք հերթական քննության (քննությունների) համար և նշանակեք մեքենավարման քննության մեկ այլ օր: Եթե մեքենավարման քննությունը ձախողեք 3 անգամ, ապա դիմուժն այլևս վավերական չի լինի, և այդ դեպքում պետք է նորից դիմեք.

- անցնել տեսողության ստուգում: Դուք պետք է կարողանաք անցնել տեսողության ստուգումը՝ ճշտող ուսանողներով կամ առանց դրանց, ունենաք՝ 20/200-ից ավելի լավ տեսողության սրություն առնվազն մեկ աչքի համար՝ չօգտագործելով երկօպտիկական հեռադիտակային ուսանողներ կամ նմանատիպ երկօպտիկական սարքեր՝ տեսողության նվազագույն սրության չափանիշներին համապատասխանելու համար («Կալիֆոռնիայի տրանսպորտային օրենսգիրք», CVC §12805(b)).
- լուսանկարվել.
- հանձնել մատնահետք.
- ստորագրել:

ՊԱՆԱՆՋՆԵՐ ԶՍՓԱՀԱՍՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Եթե դուք առնվազն 18 տարեկան եք, համապատասխանում եք դիմումի պահանջներին և հանձնում եք անհրաժեշտ քննությունները, ապա կարող եք Կալիֆոռնիայի ուսումնական թույլտվություն ստանալ: Մեքենա վարելու սովորելու ժամանակ պետք է ուսումնական թույլտվություն ունենաք: Ձեզ ուղեկցող վարորդը պետք է 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի լինի և ունենա Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վավերական վկայական: Այդ անձը պետք է բավականաչափ մոտ նստած լինի ձեզ, որպեսզի կարողանա ցանկացած պահի իր ձեռքը վերցնել տրանսպորտային միջոցի դեկավարումը: Ուսումնական թույլտվությունը ձեզ իրավունք չի տալիս միայնակ մեքենա վարելու՝ անգամ վարորդական քննություն հանձնելու նպատակով մինչև DMV-ի տեղական գրասենյակ հասնելու համար:

Եթե ցանկանում եք ստանալ պրոֆեսիոնալ վարորդի կրթություն և անցնել ուսուցման դասընթաց, կարողացեք «Վարորդական դպրոցներ» և «Տարեց վարորդների ծրագիր» բաժինները 23-րդ և 24-րդ էջերում:

Մտոցիկլետ վարելու թույլտվություն ստանալու համար դուք պետք է.

- բավարարեք դիմելու համար անհրաժեշտ պայմանները.
- ներկայացնեք «Մտոցիկլավարման վարժանք» (*Motorcycle Training*, DL 389) ձևի ավարտական վկայական, եթե 21-ից ցածր տարիքի եք.
- հանձնեք գիտելիքների ստուգման թեստ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե դուք մտոցիկլետ վարելու թույլտվություն ունեք, ապա չեք կարող ուղևորներ տեղափոխել, պետք է այն վարեք միայն ցերեկային ժամերին և չեք կարող դուրս գալ արագընթաց բազմազոտի մայրուղի:

ՊԱՀԱՆՋՆԵՐ ԶՄՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ

ՆԿԱՏԱՄԲ

Եթե դուք առնվազն 18 տարեկան եք և երբեք վարորդական իրավունքի վկայական չեք ունեցել, ապա պետք է համապատասխանեք հետևյալ չափանիշներին՝

- Բավարարեք վարորդական թույլտվության պահանջները.
- պատրաստ լինելու դեպքում օր ու ժամ նշանակեք «ղեկի մոտ» մեքենավարման քննություն հանձնելու համար.
- երբ գրանցվում եք մեքենավարման քննություն հանձնելու համար, ներկայացրեք ձեր ուսուսական թույլտվությունը.
- հանձնեք «ղեկի մոտ» կոչվող մեքենավարման քննությունը: Քննությունը ձախողելու դեպքում պետք է վերահանձնման միջնորդավճար վճարեք երկրորդ կամ հերթական քննության համար և նշանակեք մեքենավարման քննության մեկ այլ օր:

Եթե դուք այլ նահանգում ստացած վարորդական իրավունքի վկայական ունեք, ապա պետք է՝

- կատարեք ուսուսական թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ բոլոր քայլերը.
- նահանգից դուրս ստացած ձեր վարորդական իրավունքի գործող վկայականը ներկայացնեք DMV-ին: Այլ նահանգում ստացած վկայականը անվավեր կհամարվի և կվերադարձվի ձեզ, բացի այն դեպքից, եթե դիմում եք առևտրային վարորդական իրավունքի վկայականի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սովորաբար, այլ նահանգի կամ ԱՄՆ տարածքի վարորդական իրավունքի վկայականներ ունեցողներից մեքենավարման քննություն հանձնել չի պահանջվում: Սակայն DMV-ն կարող է «ղեկի մոտ» մեքենավարման քննություն պահանջել ցանկացած տիպի վարորդական իրավունքի վկայական ստանալու դիմումի համար: «Ղեկի մոտ» մեքենավարման քննությունները պարտադիր են այլ երկրում վարորդական իրավունքի վկայական ստացած անձանց համար:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԵՐԸ

C դասի վարորդական իրավունք

- Ձեզ թույլատրվում է վարել՝
 - 26000 ֆունտ ($\approx 11,8$ տոննա) կամ ավելի պակաս լրիվ զանգված (GVWR) ունեցող երկատնի փոխադրամիջոց.
 - 6000 ֆունտ ($\approx 2,7$ տոննա) կամ ավելի պակաս լրիվ զանգված ունեցող եռատնի փոխադրամիջոց.
 - 40 ֆուտ (≈ 12 մ) կամ ավելի պակաս երկարության փակ ապրանքատար վագոն.
 - 3-անիվ մոտոցիկլետ, որի 2 անիվները գտնվում են առջևում կամ հետևում.
 - համատեղ օգտագործման ուղևորատար ֆուրգոն, որը նախատեսված է 10-15 ուղևոր տեղափոխելու համար, ներառյալ վարորդը:

ՄԱՆՈԹԻՅՈՒՆ. Համատեղ օգտագործման ուղևորատար ֆուրգոնի վարորդն իրավունք ունի աշխատելու C կարգի վարորդական իրավունքի վկայականով, բայց պիտի ունենա բուժաքննությունը հաստատող փաստաթուղթ, որը համատեղ օգտագործման ուղևորատար փոխադրամիջոցներ շահագործելու դեպքում պահանջվում է B կարգի վարորդական իրավունքի վկայականի համար: Համատեղ օգտագործման ուղևորատար ֆուրգոնում վարորդը պետք է պահի կեղծ վկայության համար պատժի սպառնալիքի տակ ստորագրված հայտարարագիր առ այն, որ վերջին 5 տարվա ընթացքում ինքը պատասխանատվության չի ենթարկվել անփութ կերպով կամ անսթափ վիճակում մեքենա վարելու կամ վրատերթի ենթարկելու և փախուստի դիմելու համար (CVC §12804.9(j)):

- Ձեզ թույլատրվում է քարշակել՝
 - կցասայլի հետ միասին (եթե այն օգտագործվում է) 10000 ֆունտ ($\approx 4,5$ տոննա) կամ ավելի պակաս լրիվ զանգված ունեցող մեկ փոխադրամիջոց:
- Չբեռնված վիճակում առնվազն 4000 ֆունտ (≈ 1815 կգ) կշռող տրանսպորտային միջոցով թույլատրվում է քարշակել՝
 - 10000 ֆունտ ($\approx 4,5$ տոննա) կամ դրանից պակաս լրիվ զանգված ունեցող բնակելի կցավագոն կամ թամբավոր տուրիստական կցավագոն, եթե քարշակումը որևէ տիպի փոխհատուցում ստանալու համար չէ.
 - ավելի քան 10000 ֆունտ ($\approx 4,5$ տոննա), բայց 15000 ֆունտը ($\approx 6,8$ տոննա) չգերազանցող զանգվածով թամբավոր տուրիստական կցանք, եթե քարշակումը որևէ տիպի փոխհատուցում ստանալու համար չէ և ունի փոխադրագիր:
- Ֆերմերը կամ ֆերմերի աշխատողը կարող է վարել՝
 - 26000 ֆունտ ($\approx 11,8$ տոննա) կամ ավելի պակաս լրիվ զանգված ունեցող ցանկացած շարժակազմ, եթե այն օգտագործվում է բացառապես գյուղատնտեսական աշխատանքների համար և վարձակալման կամ այլ տիպի փոխհատուցում ստանալու համար չէ:

ՄԱՆՈԹԻՅՈՒՆ.

- C կարգի վարորդական իրավունքի վկայական ունեցողներին չի թույլատրվում քարշակել 1-ից ավելի տրանսպորտային միջոց:
- Չի թույլատրվում, որ մարդատար մեքենան՝ անկախ քաշից, քարշակի 1-ից ավելի տրանսպորտային միջոց:
- Չի թույլատրվում, որ չբեռնված վիճակում 4000 ֆունտից ($\approx 1,8$ տոննա) պակաս զանգվածով որևէ մեքենա քարշակի 6000 ֆունտ ($\approx 2,7$ տոննա) կամ ավելի համարաշ ունեցող տրանսպորտային միջոց (CVC §21715(b)):

Վարորդական իրավունքի վկայականների և փոխադրագրերի այլ տեսակներ են՝

- ոչ առևտրային A կարգ
- ոչ առևտրային B կարգ
- առևտրային A կարգ
- առևտրային B կարգ
- առևտրային C կարգ
- մոտոցիկլետի M1 կարգ
- մոտոցիկլետի M2 կարգ
- առևտրային փոխադրագրեր՝
 - կրկնակի կամ եռակի նստատեղեր
 - վտանգավոր նյութերի տեղափոխում
 - ուղևորների փոխադրում
 - ցիստեռնով փոխադրամիջոց
- շտապ օգնության վարորդի վկայական
- դպրոցական ավտոբուսի փոխադրագիր
- էվակուատորի վարորդի վկայական
- փոխադրումներ իրականացնողների վերապատրաստման վկայականի հավաստում
- գյուղատնտեսական բանվորներ փոխադրող տրանսպորտային միջոցի վկայական
- հրշեջի հավաստագիր

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Առևտրային վկայական ունեցող հրշեջները պետք է ներկայացնեն «Քուժգնության եզրակացություն» ձևը (*Medical Examination Report, MER*) MCSA-5875 և «Քուժգնություն անցկացնողի կողմից տրված վկայական» ձևը (*Medical Examiner's Certificate, MEC*) MCSA-5876: Ոչ առևտրային վկայական ունեցող հրշեջները կարող են ներկայացնել ինքնավկայագրող «Առողջության հարցաթերթիկ» (*Health Questionnaire, DL 546*):

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՈՐՏԵՂ ՀԱՆՁՆԵԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Դուք կարող եք հանձնել տեսական քննություն, տեսողության ստուգում անցնել և մեքենավարման քննություն հանձնել DMV-ի տեղական գրասենյակներից մեծ մասում, որոնք վարորդական իրավունքի վկայականի ծառայություններ են տրամադրում:

Ժամանակ խնայելու համար հանդիպում նշանակեք առցանց՝ այցելելով www.dmv.ca.gov կայքը կամ սովորական աշխատանքային ժամերին զանգահարելով 1-800-777-0133 հեռախոսահամարով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գիտելիքների ստուգման քննությունը և տեսողության ստուգումը պահանջվում են, երբ դուք դիմում եք սկզբնական վարորդական իրավունքի վկայական ստանալու կամ այն մեկ այլ կարգի վկայականով փոխելու համար:

DMV-ի ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարորդական իրավունքի վկայական ստանալու քննությունները ներառում են՝

- տեսողության ստուգում (բերք ձեր ակնոցը կամ հպումային ոսպնյակները, եթե անհրաժեշտ են մեքենավարման համար).
- գիտելիքների ստուգման թեստ.
 - DMV-ն Հպագայուն էկրանով տերմինալ (TST) է օգտագործում գիտելիքների ստուգման թեստը վարելու համար.
- «ղեկի մոտ» կոչվող մեքենավարման քննություն, (եթե դա պահանջվի): Մեքենավարման քննության համար պետք է ունենաք պայմանավորվածություն և բերք՝
 - ձեր հին վարորդական իրավունքի վկայականը կամ ուսուսանողական թույլտվությունը, եթե ունեք.
 - Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վավերական վկայական ունեցող և առնվազն 18 տարեկան որևէ վարորդ.
 - ապացույց այն մասին, որ ավտոմեքենան պատշաճ կերպով ապահովագրված է:

ԿԱՐԵՎՐ Է: Եթե վարձակալված մեքենա եք օգտագործում, մեքենավարման քննության դիմորդը պետք է նշված լինի վարձակալության պայմանագրում: Պայմանագիրը չպետք է բացառի մեքենավարման քննությունները.

- տրանսպորտային միջոց, որը վարելն անվտանգ է, և որն ունի վավեր գրանցում: Ավտոմեքենայի արգելակման լապտերները, ձայնային ազդանշանը, կայանման արգելակը և շրջադարձի ազդանշանները պետք է սարքին վիճակում լինեն: Տրանսպորտային միջոցի անվաղողերը չպետք է մաշված լինեն և դրանց պահպանաշերտի խորությունը ցանկացած 2 հարակից փորակներում չպետք է 1/32 դյույմից (մոտ 0,8 մմ) պակաս լինի: Վարորդի կողմի պատուհանի ապակին պետք է հնարավոր լինի իջեցնել: Հողմապակին պետք է ձեր և քննությունն ընդունող անձի համար ապահովի լիովին ազատ տեսադաշտ: Ավտոմեքենան պետք է առնվազն 2 հետահայաց դիտահայելի ունենա (որոնցից մեկը պետք է լինի մեքենայի ձախ մասում՝ դրսի կողմից).
- Ձեզանից կպահանջվի ցույց տալ մեքենայի ցոլալապտերները, ապակեմաքրիչները, ապակետաքացուցիչը և վթարային լուսային ազդանշանների համակարգը: Դուք պետք է ցուցադրեք, թե ինչպես է գործում կայանման արգելակը:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ, Եթե ավտոմեքենան չհամապատասխանի վերը նշված պահանջներին, կամ դուք վարման քննության ժամանակ հրաժարվեք կապել ամրագոտիները, ապա մեքենավարման քննության անցկացման օրը կփոխվի:

Մեքենավարման քննության ժամանակ բացառապես չի կարելի օգտագործել տեխնոլոգիական միջոցներ, օրինակ՝ հետահայաց տեսախցիկներ և ինքնակայանման համակարգ:

Ձեր անվտանգության նկատառումներով՝ մեքենավարման քննության ընթացքում չի թույլատրվում ընտանի կենդանիներ կամ ուղևորներ ունենալ տրանսպորտային միջոցում, բացի DMV-ի քննող անձից կամ այլ լիազորված անձնակազմից:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Արագ փաստեր» գրքույկի «Ինչպես նախապատրաստվել մեքենավարման քննությանը» (*Preparing for Your Driving Test*, FFDL 22) բաժինը, DMV-ի տեսանյութերը և քննական հարցերի օրինակները, որոնք մատչելի են առցանց՝ www.dmv.ca.gov կայքում:

ԽԱՔԵՌԻԹՅՈՒՆ

Քննության ժամանակ օժանդակող նյութերի օգտագործումը խստիվ արգելվում է: Այդպիսի նյութերը ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝ «Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկը», հուշաթերթիկներ և (կամ) էլեկտրոնային հաղորդակցության սարքեր, օրինակ՝ բջջային հեռախոս, գրպանի համակարգիչ և այլն: Եթե գրավոր քննության ժամանակ օգտագործվի որևէ օժանդակող նյութ, ապա գրավոր քննությունը կգնահատվի որպես ձախողում: DMV-ն նաև կարող է միջոցներ ձեռնարկել վարելու ձեռնարկների կամ քննության ընթացքում ձեռք աջակցող ցանկացած այլ անձի վարելու իրավունքի նկատմամբ:

ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ – ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ

ՊԱՀԱՋՆԵՐ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ

Անչափահաս է համարվում 18 տարին չլրացած անձը: Անչափահասների դիմումները (վարորդական իրավունքի վկայականի կամ վկայականի կարգի փոփոխման վերաբերյալ) պետք է ստորագրված լինեն նրանց ծնողի (ծնողների) կամ օրինական խնամակալի (խնամակալների) կողմից: Եթե երկու ծնողները կամ խնամակալները իրականացնում են համատեղ խնամակալություն, նրանք երկուսն էլ պետք է ստորագրեն:

ԾԱՌԹՈՒԹՅՈՒՆ. Անչափահասներին չի թույլատրվում աշխատել որպես վճարվող վարորդ և վարել աշակերտներ տեղափոխող դպրոցական ավտոբուս:

Թույլտվություն ստանալու համար դուք պետք է.

- լինեք առնվազն 15½ տարեկան.
- լրացնեք «Վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի դիմում» (DL 44/eDL 44) ձևը.
- դիմումի վրա ունենաք ձեր ծնողի (ծնողների) կամ օրինական խնամակալի (խնամակալների) ստորագրությունները.

ԾԱՌԹՈՒԹՅՈՒՆ. Կարող եք վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի դիմումը լրացնել առցանց, իսկ ձեր ծնողը (ծնողները) կամ օրինական խնամակալը (խնամակալները) կարող են ձեր ստորագրել էլեկտրոնային եղանակով.

- անցնեք գիտելիքների ստուգումը: Քննությունը ձախողելու դեպքում պետք է այն վերահանձնելուց առաջ սպասեք 7 օր (1 շաբաթ)՝ չհաշված քննության ձախողման օրը:
- Եթե դուք 15½–17½ տարեկան եք, անհրաժեշտ կլինի ապացույց ներկայացնել առ այն, որ դուք

- վարորդական կրթություն եք ստացել (Վկայական վարորդական ուսուցումի ավարտելու մասին) ԿԱՄ
- ընդգրկված եք կամ մասնակցում եք ամբողջական վարորդական ուսուցման կամ վարորդական վերապատրաստման հաստատված ծրագրին (Վկայական ամբողջական [դասարանային] վարորդական ուսուցման և վարորդական վերապատրաստման ծրագրին մասնակցելու մասին): Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Արագ փաստեր» գրքույկի «Վարորդական իրավունքի ժամանակավոր վկայականի տրամադրում» (*Provisional Licensing, FFDL 19*) բաժինը www.dmv.ca.gov կայքում:

Ժամանակավոր թույլտվությունը վավերական չէ, քանի դեռ չեք սկսել մեքենավարման դասընթացը վարորդ-հրահանգչի հետ կամ չեք դարձել 17½ տարեկան: Եթե դուք թույլտվություն ունեք և մտադիր եք մեքենա վարել Կալիֆոռնիայից դուրս, ապա անպայման ծանոթացեք տվյալ նահանգում կամ երկրում վարորդական իրավունքի վկայականներին ներկայացվող պահանջներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե առնվազն 17½ տարեկան եք, կարող եք մեքենա վարելու թույլտվություն ստանալ՝ առանց ավարտելու վարորդական ուսուցման կամ վարորդական պատրաստության դասընթացները: Մակայն դուք չեք կարողանա վարորդական իրավունքի վկայական ստանալ մինչև 18 տարեկանը լրանալը:

ԱՆՉՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԹՈՒՅՆՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Ձեր թույլտվությունն ուժի մեջ չէ այնքան ժամանակ, քանի դեռ չեք սկսել վարորդական պատրաստության դասընթացը. թույլտվության վավերացման համար հարկավոր է հրահանգչի ստորագրությունը: Դուք պետք է մեքենավարման հմտություններ ձեռք բերեք Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայական ունեցող վարորդի՝ ծնողի, խնամակալի, վարորդ-հրահանգչի, կնոջ կամ ամուսնու կամ 25 տարեկանը լրացած որևէ այլ չափահասի օգնությամբ: Այդ անձը պետք է բավականաչափ մոտ նստած լինի ձեզ, որպեսզի կարողանա ցանկացած պահի իր ձեռքը վերցնել մեքենայի ղեկավարումը: Ժամանակավոր թույլտվությունը ձեզ թույլ չի տալիս որևէ ժամանակ միայնակ մեքենա վարել՝ նույնիսկ վարորդական քննություն հանձնելու նպատակով մինչև DMV-ի տեղական գրասենյակ հասնելու համար:

ՊԱՀԱՆՔՆԵՐ ԱՆՉՓԱՀԱՄԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿԿԱՏՄԱՄԲ

Դուք պետք է՝

- լինեք առնվազն 16 տարեկան.
- ներկայացնեք վարորդական ուսուցումն ու վարորդական պատրաստության դասընթացն ավարտելը հաստատող փաստաթուղթ.
- առնվազն 6 ամսով Կալիֆոռնիայի կամ այլ նահանգի ուսումնական թույլտվություն ունեցած լինեք (տե՛ս «Այլ նահանգների անչափահասներ» բաժինը 15-րդ էջում).
- ուսումնական թույլտվության վրա ունենաք ծնողի (ծնողների) կամ խնամակալի (խնամակալների) ստորագրությունը (ստորագրությունները)՝ ի հաստատում այն բանի, որ դուք վերահսկող անձի ուղեկցությամբ անցել եք 50-ժամյա մեքենավարման պրակտիկա (որից 10 ժամը գիշերային ժամերին), ինչպես նկարագրված է «Կալիֆոռնիայի ծնող-անչափահաս ուսուցողական ուղեկցություն» (DL 603): Այդ գրքույկը ստանալու համար այցելեք դեռահասների կայքը՝ www.dmv.ca.gov, կամ զանգահարեք 1-800-777-0133 համարով.
- չհատուցվող տուրք վճարեք դիմումի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Տուրքն ուժի մեջ է 12 ամիս: Եթե բոլոր պահանջները չեք բավարարել 12 ամսվա ընթացքում, ապա դիմումն այլևս վավերական չէ, և այդ դեպքում պետք է նորից դիմեք.

- հանձնեք գիտելիքների ստուգման յուրաքանչյուր պարտադիր թեստը: Եթե գիտելիքների ստուգման թեստը ձախողում եք 3 անգամ, ապա դիմումն այլևս վավերական չէ, և այդ դեպքում պետք է նորից դիմեք.
- հանձնեք մեքենավարման քննությունը (3 փորձից):

ԿԱՐԵՎՈՐ Է. Մեքենավարման քննությունը ձախողելու դեպքում պետք է վճարեք վերահանձնման փջնորդավճար, օր ու ժամ նշանակեք հերթական քննության համար և սպասեք 14 օր (2 շաբաթ)՝ չհաշված քննության ձախողման օրը, նախքան թույլ կտրվի վերաքննություն հանձնել: Եթե մեքենավարման քննությունը ձախողում եք 3 անգամ, ապա դիմումն այլևս վավերական չէ, և այդ դեպքում պետք է նորից դիմեք:

Ժամանակավոր վարորդական իրավունքի վկայական ստանալուց հետո կարող եք միայնակ վարել մեքենան այնքան ժամանակ, քանի դեռ ձեր վարորդական գործում նշված չէ պատահար կամ երթուկության կանոնների խախտում: Վարորդական իրավունքի վկայական ստանալուց հետո առաջին 12 ամսվա ընթացքում արգելվում է մեքենա վարել երեկոյան ժամը 11-ից մինչև առավոտյան ժամը 5-ն ընկած ժամանակափոշոցում և չի թույլատրվում 20 տարեկանը չլրացած ուղևորներ փոխադրել, եթե ձեզ չի ուղեկցում Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայական ունեցող ծնողը կամ խնամակալը, Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայական ունեցող 25 տարեկան կամ բարձր տարիքի որևէ վարորդ կամ լիցենզավորված և հավաստագրված վարորդ-հրահանգիչը:

18 տարեկան դառնալուն պես ձեր վարորդական իրավունքի վկայականի «ժամանակավոր» նշումն ուժը կորցնում է: Դուք կարող եք շարունակել օգտվել ձեր լուսանկարով ժամանակավոր վարորդական իրավունքի վկայականից կամ գումար վճարել և ստանալ կրկնակ վկայական՝ առանց «ժամանակավոր» նշման:

ԲԱՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՉՍՓԱՆՍՆԵՐԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍԱՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Օրենքը թույլ է տալիս հետևյալ բացառությունները, երբ հնարավոր չէ ապահովել համապատասխան փոխադրումը և անհրաժեշտ է մեքենա վարել: Հետևյալ բացառությունների դեպքում հարկավոր է ունենալ մեքենան վարելու անհրաժեշտությունը բացատրող և այդ անհրաժեշտությունը վերանայլու թվականը ցույց տվող ստորագրված տեղեկանք (բացի այն դեպքերից, երբ անչափահասն ազատված է ծնողական խնամքից)

- վարելու բժշկական անհրաժեշտության դեպքում, երբ փոխադրման այլ ընդունելի տարբերակներ չկան: Տեղեկանքը պետք է ստորագրի բժիշկը՝ նշելով այստորոշումն ու ապաքինման մոտավոր ամսաթիվը.
- դպրոցական կամ դպրոցի կողմից թույլատրված որևէ միջոցառման դեպքում: Տեղեկանքը պետք է ստորագրի դպրոցի տնօրենը, դեկանը կամ նշանակված պաշտոնատար անձը.
- աշխատանքային անհրաժեշտության դեպքում, երբ տրանսպորտային միջոց վարելը մտնում է ձեր պարտականությունների մեջ: Տեղեկանքը պետք է ստորագրի գործատերը՝ հաստատելով աշխատանքի փաստը.
- ձեր մերձավոր հարազատներից որևէ մեկին մեքենայով տեղափոխելու անհրաժեշտության դեպքում: Անհրաժեշտ է ձեր ծնողի (ծնողների) կամ իրավական խնամակալի (խնամակալների) կողմից ստորագրված տեղեկանք, որտեղ նշված կլինի մերձավոր հարազատին մեքենայով փոխադրելու անհրաժեշտության պատճառը և ավարտի հավանական ժամկետը:

Բացառություն. Այս պահանջները չեն վերաբերում ծնողական խնամքից ազատված անչափահասներին: Ծնողական խնամքից ազատված անչափահասները պետք է DMV-ին տրամադրեն դատարանի փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ դատարանը միջնորդագրի է տվել ծնողական խնամքից ազատման համար, և տրամադրեն «Կալիֆոռնիա նահանգի ապահովագրական վկայական» (*California Insurance Proof Certificate, SR 22/SR 1P*) ձևը՝ իրենց ծնողի (ծնողների) կամ երաշխավորի (երաշխավորների) ստորագրության (ստորագրությունների) փոխարեն: Ծնողական խնամքից ազատված անչափահասներն ազատված չեն ամբողջական վարորդական ուսուցման և վարորդական վերապատրաստման ծրագրի պահանջներից:

ԱՅԼ ԱՆԱՐԳՆԵՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐ

Այլ նահանգների բոլոր անչափահաս դիմողները պետք է բավարարեն 6-րդ էջի «Բնչ է պահանջվում հիմնական C կարգի վարորդական իրավունքի վկայականի համար դիմելիս» բաժնում նշված պահանջները, ինչպես նաև պետք է ունենան ծնողի (ծնողների) կամ իրավական խնամակալի (խնամակալների) ստորագրությունը «Վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի դիմում» (DL 44/eDL 44) ձևի վրա:

Այլ նահանգների անչափահասների վարելու թույլտվություն

Վարելու թույլտվություն ստանալու համար դիմող այլ նահանգների անչափահասները պետք է բավարարեն 12-րդ էջի «Պահանջներ անչափահասների թույլտվության նկատմամբ» բաժնում նշված պահանջները: Բացի այդ, եթե դուք վարորդի կրթությունը և վարորդի ուսուցման դասընթացներն անցել եք այլ նահանգում (ոչ թե Կալիֆոռնիայում), ապա DMV-ն կարող է ընդունել այլ նահանգի միջնակարգ դպրոցի կողմից լրացված «Կալիֆոռնիայից դուրս գործող միջնակարգ դպրոցները» (*To Secondary Schools Other Than California Schools*, DL 33) ձևը: Դուք կարող եք DL 33 ձևը ձեռք բերել DMV-ի ձեռնարկային գրասենյակից կամ զանգահարելով DMV-ին 1-800-777-0133 հեռախոսահամարով: DL 33 ձևն ուղարկեք ձեր այլ նահանգի միջնակարգ դպրոցին և նրանց խնդրեք լրացնել ձևը և այն վերադարձնել ձեզ:

Այլ նահանգների անչափահասների վարորդական իրավունքի վկայական

Ձեզանից կպահանջվի ներկայացնել ձեր այլ նահանգի վարորդական իրավունքի վկայականը և հանձնել զիտելիքների ստուգման թեստ՝ որպես դիմելու գործընթացի մի մաս: Սովորաբար, այլ նահանգի վարորդական իրավունքի վկայական ունեցողներից «ղեկի մոտ» մեքենավարման քննություն հանձնել չի պահանջվում: Սակայն DMV-ն կարող է «ղեկի մոտ» մեքենավարման քննություն պահանջել ցանկացած տիպի վարորդական իրավունքի վկայական ստանալու դիմումի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Կալիֆոռնիա նահանգի օրենքների համաձայն՝ այլ նահանգների անչափահաս դիմորդները վարորդական իրավունքի վկայականի առաջին տարում կամ մինչև 18 տարեկան դառնալը ենթարկվում են բոլոր ժամանակավոր սահմանափակումներին:

ԺԱՄՏԱՆԱԿՎՈՐ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԴԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դեռահասները՝ որպես խումբ, միջին հաշվով երկու անգամ ավելի հաճախ են պատահարների ենթարկվում, քան չափահաս վարորդները, թեև նրանց կեսի չափ մղոններ են անցնում: Ըստ մղոնների՝ դեռահասների մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային բախումների տոկոսը 4 անգամ ավելի մեծ է, քան չափահաս վարորդների դեպքում: Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով նոր վարորդների մահերը նրանց անփորձության, իրենց տրանսպորտային միջոցին լավ ծանոթ չլինելու և իրենց ու մեքենայի հնարավորությունները մինչև վերջ օգտագործելու ցանկության մահացու համակցություն են:

Ժամանակավոր վարորդական իրավունքի վկայականը պահելը

DMV-ն կհետևի ձեր վարորդական գործին և որևէ բախման կամ խախտման դեպքում կձեռնարկի հետևյալ քայլերը.

- Եթե դուք ծանուցում ստանաք երթևեկության կանոնների խախտման մասին, բայց դատարան չներկայանաք, DMV-ն կկասեցնի ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը, մինչև դատարան ներկայանաք:
- Եթե 12 ամսվա ընթացքում «ձեր մեղքով» 1 բախում տեղի ունենա, կամ դուք մեկ անգամ մեղադրվեք երթևեկության կանոնների խախտման համար, DMV-ն գգուշացնող նամակ կուղարկի ձեզ:
- Եթե 12 ամսվա ընթացքում «ձեր մեղքով» 2 բախում տեղի ունենա, կամ դուք երկու անգամ մեղադրվեք երթևեկության կանոնների խախտման համար (կամ ն՝ մեկը, և՛ մյուսը), ապա 30 օր իրավունք չեք ունենա մեքենա վարելու՝ առանց վարորդական իրավունք ունեցող ծնողի կամ անմիջապես 25 տարեկան և վարորդական իրավունք ունեցող որևէ այլ անձի ուղեկցության:
- Եթե 12 ամսվա ընթացքում «ձեր մեղքով» 3 բախում տեղի ունենա, կամ դուք երեք անգամ մեղադրվեք երթևեկության կանոնների խախտման համար (կամ պատահարների և խախտումների ընդհանուր թվով երեք դեպք գրանցված լինի), ապա ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը կկասեցվի 6 ամսով, և ձեզ 1 տարվա փորձաշրջան կնշանակվի:
- Եթե փորձաշրջանում գտնվելու ընթացքում ունենաք 4 կամ ավելի «ձեր մեղքով» բախումներ կամ տուգանային միավորներ հավաքեք երթևեկության կանոնների խախտման համար, ապա ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը կրկին կկասեցվի (անչափահասների գործերը քննող դատարանի՝ երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ ընդունած դատավճիռները նույնպես զեկուցվում են DMV-ին):
- Եթե դուք մեղավոր եք ճանաչվել ավտոհոլի կամ վերահսկվող նյութերի օգտագործման համար և 13-ից 21 տարեկան եք, ապա դատարանը DMV-ին կկարգադրի 1 տարով կասեցնել ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը: Եթե վարորդական իրավունքի վկայական չունեք, դատարանը DMV-ին կկարգադրի հետաձգել վարորդական իրավունքի վկայականի համար դիմելու ձեր իրավունքը: Հնարավոր է՝ նաև պահանջվի ավարտել «Վարում ավտոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագիր:

Ցանկացած սահմանափակում, կասեցում և փորձաշրջան կշարունակվի մինչև վերջ՝ ձեր 18 տարին լրանալուց հետո: Այլ ավելի խիստ, միջոցներ կարող են կիրառվել, եթե ձեր վարորդական գործը հիմք տա դրանց համար: Հիշեք, եթե ձեր վարորդական իրավունքի վկայականը կասեցվի, կամ դուք զրկվեք այդ վկայականից, ապա Կալիֆոռնիայում մեքենա վարելու իրավունք չեք ունենա:

ԱՆՉԱՓԱՆԱՍՏԵՐԸ ԵՎ ԲՁՋԱՅԻՆ ՇԵՌԱՌՈՍՏԵՐԸ

- Օրենքն արգելում է, որ անչափահասը մեքենա վարելիս օգտվի բջջային հեռախոսից կամ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքից: Չի կարելի պատասխանել զանգերին կամ ուղարկել տեքստային հաղորդագրություններ կամ պատասխանել դրանց:
- Այս օրենքի խախտման համար ներկայացված մեղադրանքների դեպքում նախատեսված են տուգանքներ:

Բացառություններ. Մեքենավարելիս բջջային հեռախոսից օգտվել թույլատրվում է միայն արտակարգ իրավիճակում իրավապահ մարմինների, առողջապահական հաստատության, հրշեջ ծառայության կամ արտակարգ իրավիճակների այլ մարմինների հետ կապ հաստատելու համար:

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿՈՐՑՐԱԾ, ԳՈՐԱՅՎԱԾ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈՒՍՐԻՆՈՒՄ

Եթե ձեր վարորդական իրավունքի վկայականը կորել, գողացվել կամ գնասվել է, ապա հարկավոր է գնալ DMV-ի տեղական գրասենյակ, լրացնել DL 44/eDL 44 ձևը (կարելի է eDL44 ձևը կանխավ լրացնել առցանց) և վճարել որոշակի գումար՝ այն վերականգնելու համար: Հարկավոր է նաև լուսանկար պարունակող և անձը հաստատող որևէ փաստաթուղթ ներկայացնել: Եթե DMV-ն չկարողանա հաստատել ձեր ինքնությունը, ապա ձեզ ժամանակավոր վարորդական իրավունքի վկայական չի տրվի:

Եթե դուք անչափահաս եք, ապա ձեր ծնողը (ծնողները) կամ խնամակալը (խնամակալները) պետք է ստորագրեն դիմումը: Եթե երկու ծնողները կամ խնամակալները իրականացնում են համատեղ խնամակալություն, նրանք երկուսն էլ պետք է ստորագրեն: Հենց որ վարորդական իրավունքի վկայականի նոր օրինակ տրվի, հին վկայականը կկորցնի ուժը: Եթե հետագայում գտնեք հին վկայականը, ոչնչացրեք այն:

ԱՆՎԱՆ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ դուք օրինական կերպով փոխում եք ձեր անունը ամուսնության կամ այլ պատճառներով, նախքան DMV այցելելն այն անպայման փոխեք նաև Սոցիալական ապահովության վարչությունում: Ձեր վարորդական իրավունքի վկայականն անձամբ բերեք DMV-ի գրասենյակ՝ ձեր ամուսնության վկայականի կամ «խկական լրիվ անունը» հաստատող որևէ այլ ընդունելի փաստաթղթի հետ միասին (տե՛ս «Ինչպես ստանալ վարորդական իրավունքի վկայական» բաժինը 4-րդ էջում): Դուք պետք է լրացնեք «Վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի դիմում» (DL 44/eDL 44) ձևը (կարելի է eDL44 ձևը կանխավ լրացնել առցանց) և վճարեք պահանջվող գումարը: DMV-ն Սոցիալական ապահովության վարչությունից էլեկտրոնային եղանակով կստուգի ձեր անունը, ծննդյան ամսաթիվը և սոցիալական ապահովության քարտի համարը:

Ձեզանից կվերցնեն նոր լուսանկար, մատնահետք և ստորագրություն:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019 թ. հունվարի 1-ից սկսած՝ հաճախորդները կարող են դիմել արական, իգական կամ ոչ բինար գենդերային կատեգորիաների համար: Ձեզանից այլևս չի պահանջվում ներկայացնել «Բժշկական գնություն և թույլտվություն» (*Medical Certification and Authorization*, DL 329) ձևը, որը լրացված է բժշկի կամ հոգեբանի կողմից, ով հավաստում է դիմողի գենդերային ինքնությունն ու վարքը: Եթե ցանկանում եք ստանալ վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ այնպիսի գենդերային կատեգորիայով, որը տարբերվում է ձեր անձը հաստատող փաստաթղթում կամ Կալիֆոռնիա նահանգի առկա վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի նշված սեռից, ապա պետք է DMV-ին անձամբ ներկայացնեք լրացված «Գենդերային կատեգորիայի հայտ» (*Gender Category Request*, DL 329 S) ձևը:

ՎԱՐՈՐՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՈՐԱՅՈՒՄԵՐ

Վարորդական իրավունքի վկայականի գործողության ժամկետը լրանալուց մոտավորապես 90-120 օր առաջ DMV-ն ձեզ վկայականի նորացման մասին ծանուցում կուղարկի ձեր գործում գրանցված հասցեով: Հետևեք ծանուցման մեջ նշված ցուցումներին: Եթե դուք վկայականի նորացման մասին ծանուցում չստանաք, մտեք համացանց կամ զանգահարեք և պայմանավորվեք վարորդական իրավունքի վկայականի նորացման հարցերով (տե՛ս էջ viii):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Դուք չեք ստանա նորացման մասին ծանուցում, եթե DMV-ին ներկայացրած ձեր դիմումն առկախ է:

Վարորդական իրավունքի վկայականի պահանջները բավարարած անձինք կարող են իրենց վկայականը նորացնել նամակով կամ առցանց՝ այցելելով DMV-ի կայքը www.dmv.ca.gov հասցեով:

DMV-ն կարող է վարորդական իրավունքի վկայական տալ 5 տարի ժամկետով: Վարորդական իրավունքի վկայականի ժամկետն ավարտվում է ձեր ծննդյան օրը՝ վկայականում նշված տարում, եթե այլ բան սահմանված չէ: Արգելվում է մեքենա վարել վարորդական իրավունքի ժամկետանց վկայականով: Վարորդական իրավունքի վկայականի հետ կապված գործառնությունների շրջանակներում գուցե պահանջվի մեքենավարման քննություն հանձնել: Մոսկ տարիքի պատճառով վարման քննություններ չեն պահանջվում: Եթե DMV-ն չկարողանա հաստատել ձեր ինքնությունը, ապա ձեզ ժամանակավոր վարորդական իրավունքի վկայական չի տրվի:

Այլ տեսակի վկայականների մասին տեղեկանալու համար տե՛ս «Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկը» (DL 650), «Ջբոսաշրջային ավտոմեքենաների և կցասայլակների ձեռնարկը» (DL 648) կամ «Կալիֆոռնիայի մոտոցիկլետի ձեռնարկը» (DL 665):

ՆՈՐԱՅՈՒՄ ՓՈՍՏՈՎ ԿԱՄ ԻՆՏԵՐՆԵՏՈՎ

Եթե ձեր վարորդական իրավունքի վկայականի ժամկետը 2 անգամ անընդմեջ չի երկարաձգվել 5-ական տարով, ապա կարող եք իրավունք ունենալ, առանց գիտելիքների ստուգման թեստ հանձնելու, փոստով կամ ինտերնետով երկարաձգելու այն, եթե

- ձեր ներկա վարորդական իրավունքի վկայականի ժամկետը լրանում է մինչև 70 տարեկան դառնալը.
- ձեր վարորդական իրավունքի վկայականը փորձնական չէ (CVC §14250).
- վերջին 2 տարվա ընթացքում դուք դատարան ներկայանալու որևէ գրավոր խոստում չեք խախտել.
- վերջին 2 տարվա ընթացքում ձեր վարորդական իրավունքը չի կասեցվել՝ ձեր արյան մեջ ալկոհոլի պարունակության (*blood alcohol concentration*, BAC) անթույլատրելի բարձր մակարդակի կամ ալկոհոլի հայտնաբերման նպատակով քիմիական կամ նախնական ստուգում չանցնելու կամ դրանից հրաժարվելու պատճառով.
- խախտումների պատճառով ձեր հավաքած ընդհանուր միավորների թիվը չի գերազանցում 1 միավորը:

ՎԱՐՈՐՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ

Եթե դուք Կալիֆոռնիայից դուրս եք գտնվում (մինչև 1 տարի ժամանակով), կարող եք անվճար դիմել վարորդական իրավունքի վկայականի գործողության ժամկետը 1 տարով երկարաձգելու խնդրանքով, նախքան ձեր վարորդական իրավունքի վկայականի ժամկետը կլրանա: Ձեր դիմումը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝ DMV, PO Box 942890, Sacramento, CA 94290-0001: Դիմումի մեջ նշեք ձեր անունը, վարորդական իրավունքի վկայականի համարը, ծննդյան թվականը, Կալիֆոռնիայում բնակության հասցեն և հասցեն նահանգից դուրս: Մահամանափակ ժամկետով վկայական ունեցող վարորդները երկարաձգման այս տարբերակից օգտվելու իրավունք չունեն:

ԽՈՒՍԱՓԵ՛Ք ՀԵՐԹԻՑ:

Գրանցման վկայականի նորացման և այլ գործարքների համար օգտվեք DMV NOW ինքնասպասարկման տերմինալներից:



Սկանավորել • Վճարել • Տպել



Տեղակայման վայր գտնելու
համար այցելեք
cadmvnow.com/info

ՁԵՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Մեքենա վարելիս պետք է միշտ ձեզ մոտ պահեք վարորդական իրավունքի վկայականը: Դուք պետք է այն ցույց տաք բոլոր պաշտոնական անձանց, ովքեր կպահանջեն վկայականը: Եթե դուք բախման եք ենթարկվել, պետք է այն ցույց տաք պատահարի մեջ ներգրավված մյուս վարորդին (վարորդներին) (տե՛ս «Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից» բաժինը 95-րդ էջում):

ՀԱՅՏԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ դուք փոխում եք բնակության վայրը, ձեր նոր հասցեն 10 օրվա ընթացքում հայտնեք DMV-ին: Հասցեի փոփոխությունն անվճար է: Դուք կարող եք ձեր վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի և տրանսպորտային միջոցի (միջոցների) համար հասցեի փոփոխության մասին DMV-ին հայտնել առցանց www.dmv.ca.gov հասցեով: Այդ կայքից կարող եք նաև ներբեռնել «Հասցեի փոփոխություն» (Change of Address, DMV 14) ձևը և փոստով այն ուղարկել թերթիկի վրա նշված հասցեով կամ զանգահարել DMV-ին 1-800-777-0133 համարով, որպեսզի խնդրեք DMV 14 ձևը փոստով ուղարկել ձեզ: Հասցեն փոխելիս ձեզ նոր վարորդական իրավունքի վկայական կամ նույնականացման քարտ չի տրվում: Կարող եք ձեր նոր հասցեն մեքենագրել կամ ձեռքով գրել թղթի փոքր կտորի վրա, ստորագրել ու թվագրել այն և ձեզ մոտ պահել (մի օգտագործեք կայուն ժապավեն կամ ամրակներ) վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի հետ միասին: Եթե ձեր հասցեն փոխում եք տեղական բաժանմունքում, DMV-ի ներկայացուցիչը ձեզ կտա «Հասցեի փոփոխության քարտ» (Change of Address Card, DL 43), որը պետք է լրացնեք և ձեզ մոտ պահեք վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի հետ միասին:

Կարեւոր է. Ձեր հասցեն փոխեք ԱՄՆ Փոստային ծառայությունում (U.S. Postal Service), որպեսզի DMV-ի նամակագրությունը փոխանցվի ձեր ներկայիս փոստային հասցեով: Դա ձեր պարտականություն է այնպես անել, որ DMV-ն իր գրանցամատյաններում ունենա ձեր ճիշտ փոստային հասցեն:

ՏԵՆՈՂՈՒԹՅՈՒՆ

DMV-ն պահանջում է, որպեսզի բոլոր վարորդները ստուգեն իրենց տեսողությունը՝ օպտիկական ռսպնյակներով կամ առանց դրանց: Եթե դուք չեք համապատասխանում DMV-ի տեսողական չափորոշիչներին (20/40), ապա ձեզանից կպահանջվի դիմել ակնաբույժին: DMV-ի ներկայացուցիչը ձեզ կտրամադրի «Տեսողական բուժզննության եզրակացություն» ձև (Report of Vision Examination, DL 62), որը ենթակա է լրացման ակնաբույժի կողմից: Եթե ձեր տեսողությունը 20/70-ից վատ չէ, DMV-ն կարող է ձեզ տրամադրել վարորդական իրավունքի ժամանակավոր վկայական, որը ձեզ ժամանակ կհատկացնի տեսողությունը ստուգելու համար: Կարորդական իրավունքի վկայականի համար դիմող բոլոր վարորդները պետք է ունենան առնվազն մեկ աչքի 20/200-ից ավելի լավ տեսողության սրություն (լավագույնս շտկված), նախքան կտրվի վարորդական իրավունքի վկայականը: Արգելվում է ավելի լավ տեսնող աչքի համար 20/200 տեսողության սրության չափորոշիչի բավարարման նպատակով օգտագործել երկօպտիկական հեռադիտակ կամ նմանատիպ ռսպնյակներ:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԳՅԱԼՆԵՐԻ ՔԱՐՏ

Զանգահարեք 1-800-777-0133 համարով՝ Բժշկական տեղեկությունների քարտ (Medical Information Card, DL 390) ձեռք բերելու համար, որի վրա պետք է նշեք ձեր արյան խումբը, ալերգիաները, բժշկի անունը և այլ բժշկական տեղեկություններ: Կարող եք այն ձեզ մոտ պահել վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի հետ միասին:

ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՄԱԿԱՆՔՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դուք կարող եք գրանցվել ձեր մահից հետո ձեր օրգաններն ու հյուսվածքները փոխպատվաստման նպատակով նվիրաբերելու համար: Երբ դիմում եք վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի համար կամ նորացնում եք այն և նշում եք “*Yes, add or keep my name on the donor registry*” («Այո, ավելացրեք իմ անունը դոնորների ցուցակում») վանդակը, ձեր անունը կավելացվի Կալիֆոռնիայի օրգանների և հյուսվածքների դոնորների ցուցակում (*Donate Life California Organ Tissue Donor Registry*), և վարորդացույն DONOR (ԴՈՆՈՐ) կետ կերևա ձեր վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի վրա: Դու պետք է նշեք **Yes** («Այո»), որպեսզի ԴՈՆՈՐ կետը պահպանվի ձեր վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի վրա: Եթե նշեք “*I do not wish to register to be an organ or tissue donor at this time*” («Ես այս պահին չեմ ցանկանում գրանցվել օրգանների կամ հյուսվածքների դոնոր լինելու համար») վանդակը, ապա ձեր անունը չի հանվի ցուցակից: Եթե ցանկանում եք ձեր անունը հանել ցուցակից, պետք է դիմեք *Donate Life California*-ին: DMV-ն կարող է ԴՈՆՈՐ կետը հեռացնել ձեր վարորդական իրավունքի վկայականից կամ նույնականացման քարտից, բայց չի կարող ձեզ հանել ցուցակից: Նաև կարող եք կատարել \$2 կամավոր նվիրատվություն՝ օրգանների և հյուսվածքների դոնորությանը նպաստելու և այն խթանելու համար՝ նշելով “*Would you like to make a voluntary \$2 contribution?*” («Կցանկանայի՞ք կատարել \$2 կամավոր նվիրատվություն») վանդակը: Ինչպես շարադրված է Կալիֆոռնիա նահանգի *California Anatomical Gift Act*-ում («Անատոմիական նվիրատվության մասին» օրենքում), ձեր թույլտվությունն իրավականորեն պարտավորեցնող է և, քանի դեռ դոնորը 18 տարեկանից ցածր տարիքի չէ, ձեր որոշումը չի պահանջում որևէ այլ անձի համաձայնություն: 18-ից ցածր տարիքի գրանցված դոնորների համար պետք է օրինական խնամակալը կայացնի նվիրատվության վերաբերյալ վերջնական որոշումը: Կարող եք ձեր նվիրատվությունը սահմանափակել կոնկրետ օրգաններով կամ հյուսվածքներով, սահմանեք օգտագործման սահմանափակումներ (օրինակ՝ փոխադրում կամ հետազոտություն), լրացուցիչ տեղեկատվություն ստանալ նվիրատվության մասին, փոխել կամ թարմացնել ձեր դոնորական կարգավիճակը կամ տվյալները, ներառյալ ձեր անունն ու հասցեն, կամ ցուցակից հանել ձեր անունը *Donate Life California* կայքում հետևյալ հասցեով՝ **donateLIFCalifornia.org**:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՎԵՏԵՐԱՆ» ՆՇԱՆ ԵՎ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՆՍԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Լրացուցիչ \$5 վճարի դիմաց՝ DMV-ն մեր երկրին հպարտորեն ծառայած անձանց առաջարկում է իրենց վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի դիմերեսին «VETERAN» (ՎԵՏԵՐԱՆ) բառը նշելու տարբերակ՝ ցույց տալու համար, որ իրենք ծառայել են ԱՄՆ Ձինված ուժերում: Բացի այդ, DMV-ն վետերաններին կտա Կալիֆոռնիա նահանգի Վետերանների գործերի դեպարտամենտ (*California Department of Veterans Affairs*) այցելելու ուղեգիր՝ որոշելու ԱՄՆ Ձինված ուժերում ծառայելու արդյունքում նպաստներ ստանալու իրենց իրավունակությունը:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ «Վետերան» նշումը:

- Այցելեք Վարչական շրջանի վետերանների սպասարկման գրասենյակի աշխատողներին (*County Veteran Service Officers, CVSO*) ստանալու ստորագրված, հավաստագրված Վետերանի կարգավիճակի վավերացման ձևը (*Veteran Status Verification Form, VSD-001*):
- Այցելեք DMV-ի տեղական գրասենյակ, որպեսզի խնդրեք «Վետերան» նշումն ավելացնել վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի վրա:
- Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք DMV-ի կայքը **www.dmv.ca.gov** հասցեում կամ կարդացեք Դուք վետերան ե՞ք (*Are You a Veteran?*) բաժինը «Արագ փաստեր» (*Fast Facts, FFDL 43*) գրքուկից: Կալիֆոռնիա նահանգի

Վետերանների գործերի դեպարտամենտի (CalVet) Connect ծրագիրը կցանկանար, որ տեղեկատվություն ստանաք նպաստների վերաբերյալ, ինչպիսիք են աշխատանքի տեղավորելը, բնակարանով ապահովելը, կրթություն և առողջապահական ծառայություններ տրամադրելը, որոնցից օգտվելու իրավունք գուցե դուք ունեք: Նշեք “If you have served, would you like to receive benefits information for which you may be eligible?” («Եթե դուք ծառայել եք, կցանկանայի՞ք տեղեկատվություն ստանալ նպաստների մասին, որոնցից օգտվելու իրավունք գուցե դուք ունեք») վանդակը DL 44 ձևում: DMV-ն ձեր անունն ու փոստային հասցեն կփոխանցի CalVet-ին, որպեսզի նրանք նպաստների մասին տեղեկատվություն փոխանցեն ձեզ: CalVet-ի մոտակա գրասենյակի տեղը որոշելու համար ձեր հեռախոսագրքում ստուգեք տեղական կառավարման մարմինների ցուցակը կամ այցելեք CalVet-ի ինտերնետային կայքը www.calvet.ca.gov հասցեում կամ www.dmv.ca.gov:

ԳՐԱՆՑՎԵՔ ՔՎԵՆԴԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Կարող եք գրանցվել քվեարկելու համար կամ թարմացնել քվեարկողի գրանցումը DMV-ում, երբ դիմում եք սկզբնական վարորդական իրավունքի վկայականի կամ նույնականացման քարտի համար, նորացնում եք ձեր վարորդական իրավունքի վկայականը կամ նույնականացման քարտը կամ փոխում եք ձեր հասցեն: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.dmv.ca.gov:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՉՈՒՆՅՈՂ ՎԱՐՈՐՆԵՐ

Արգելվում է տրանսպորտային միջոցը փոխառության տալ մի անձի, ով վարորդական իրավունքի վկայական չունի, կամ ում վկայականի գործունեությունը կասեցված է կամ չեղյալ է հայտարարված: Եթե ոստիկանությունը նրան բռնի ձեր տրանսպորտային միջոցը վարելիս, ապա այն կարող է բռնագրավվել 30 օրով (CVC §14607.6): Առանց վավերական վարորդական իրավունքի վկայականի կամ թույլտվության՝ ոչ ոք, անկախ տարիքից, իրավունք չունի մեքենա վարելու ավտոմայրուղու վրա կամ հանրային կայանատեղում: Օրենքը նաև սահմանում է, որ դուք չպետք է որևէ մեկին վարձեք, թույլատրեք կամ լիազորեք ձեր տրանսպորտային միջոցը վարել հանրային փողոցում կամ ավտոմայրուղու վրա, եթե նա չունի այդ կարգի տրանսպորտային միջոցի վարորդական իրավունք: Անձը պետք է լինի առնվազն 21 տարեկան, որպեսզի առևտրային փոխադրամիջոցների մեծ մասը վարձակալական հիմունքներով վարի միջնահանգային առևտրային նպատակներով:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Ոչ մշտաբնակ անձինք, ովքեր ունեն ԱՄՆ Պետական դեպարտամենտի (*U.S. Department of State*) կողմից տրված դիվանագիտական վարորդական իրավունքի գործող վկայական, ազատված են Կալիֆոռնիայի վարորդական իրավունք ունենալու վերաբերյալ պահանջներից:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐ

DMV-ն նույնականացման քարտ է տալիս ցանկացած տարիքի իրավունակ անձանց: Առաջին անգամ նույնականացման քարտ ստանալու համար պետք է ներկայացնեք անձը հաստատող փաստաթուղթ, մշտաբնակությունը հաստատող փաստաթուղթ և հայտնեք ձեր սոցիալական ապահովության համարը (տե՛ս «Բնչպես ստանալ վարորդական իրավունքի վկայական» բաժինը 4-րդ էջում): Նույնականացման քարտը վավերական է մինչև տրման ամսաթվին հաջորդած 6-րդ ծննդյան օրը: Եթե բավարարում եք հասարակական օժանդակության որոշակի ծառայություններից օգտվելու համար ներկայացվող որոշ պահանջներ, ապա հնարավոր է, որ ունենաք զեղչված գումարով նույնականացման քարտի համար դիմելու իրավունք: Կառավարական կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններն են որոշում, թե արդյո՞ք տվյալ անձը բավարարում է զեղչված գնով նույնականացման քարտ ստանալու պայմանները:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ, Եթե դուք 62 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք, կարող եք անվճար ստանալ տարեց քաղաքացու նույնականացման քարտ, որի դիմերեսին գրված է “Senior Identification Card” («Տարեց քաղաքացու նույնականացման քարտ»): Տարեց քաղաքացու նույնականացման քարտը վավերական է մինչև տրման ամսաթվին հաջորդած 8-րդ ծննդյան օրը:

ԱՆՍՑ ՏՈՒՐՔԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐ

- Այն վարորդները, ովքեր որևէ ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակի պատճառով այլևս չի վիճակի չեն անվտանգ վարել, կարող են իրավունք ունենալ իրենց գործող վարորդական իրավունքի վկայականն անվճար փոխանակելու նույնականացման քարտի հետ, եթե համապատասխանեն որոշակի պահանջների:
- Եթե դուք «անօթևան» եք, ինչպես սահմանված է McKinney-Vento Act-ում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում, հետևյալը՝ անօթևան երեխա կամ պատանի, անօթևան անձ, կամ՝ անհատ կամ ընտանիք, որը փախչում է ընտանեկան բռնությունից, ժամադրությունների ժամանակ գործադրվող բռնությունից, սեռական բնույթի հանցագործությունից, հոգեբանական ահաբեկումից կամ կյանքին սպառնացող այլ վտանգավոր վիճակից, ապա հնարավոր է, որ իրավունք ունենաք ստանալու առանց տուրքի նույնականացման քարտ:

Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք www.dmv.ca.gov կամ զանգահարեք 1-800-777-0133:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ՆՈՐԱՑՈՒՄ ՓՈՍՏՈՎ ԿԱՄ ԻՆՏԵՐՆԵՏՈՎ

Հաճախորդները, ովքեր իրենց նույնականացման քարտը փոստով կամ ինտերնետով նորացնելու իրավունք ունեն, ծանուցում կստանան իրենց ընթացիկ նույնականացման քարտի գործողության ժամկետի ավարտից մոտավորապես 90-120 օր առաջ: Ձեռնված գնով նույնականացման քարտերը չեն կարող նորացվել փոստով կամ ինտերնետով:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Երբ դուք մեքենա վարել եք սովորում, հարկավոր է գտնել որակյալ դասընթաց որևէ հանրային կամ մասնավոր միջնակարգ դպրոցում կամ նահանգային արտոնություն ունեցող մասնագիտացված վարորդական դպրոցում: DMV-ն Կալիֆոռնիայի տարածքում արտոնագրում է մասնագիտացված դպրոցներ և հրահանգիչներ, որոնք համապատասխանում են որակավորման խիստ չափանիշների: Դպրոցները պետք է քաղաքացիական պատասխանատվության պահովագիր ունենան, պայմանագիր կնքեն ուսանողների հետ և լիակատար հաշվեմատյաններ ունենան, որպեսզի DMV-ն կարողանա ստուգել դրանք: Դպրոցի տրանսպորտային միջոցները պետք է ամեն տարի ստուգում անցնեն: Վարորդ-հրահանգիչները պետք է 3 տարին մեկ անգամ գրավոր քննություն հանձնեն կամ ներկայացնեն ճանապարհային անվտանգության բնագավառում շարունակական կրթությունը հաստատող փաստաթուղթ: Եթե դուք օգտվում եք մասնագիտացված վարորդական դպրոցի ծառայություններից, ստուգեք վարորդ-հրահանգիչի նույնականացման քարտը: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք www.dmv.ca.gov կամ կարդացեք «Արագ փաստեր» գրքույկի «Ինչպես ընտրել վարորդական դպրոց վարորդական ուսուցման և վարորդական վերապատրաստման համար» (*Selecting a Driving School for Driver Education and Driver Training (DE/DT), FFDL 33*) բաժինը:

ՏԱՐԵՑ ՎԱՐՈՐՈՒՆԵՐԻ ԾՐԱԳԻ

Տարեց վարորդների ծրագիրը 55 տարեկան կամ ավելի բարձր տարիքի վարորդների համար նախատեսված 8-ժամյա դասընթաց է: Դասընթացն ընդգրկում է տարեց վարորդներին հատկապես հետաքրքրող բազմաթիվ թեմաներ, և այն անցկացնում են DMV-ի կողմից հաստատված դասավանդողները: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք DMV-ի կայքը: Ձեր ապահովագրական ընկերությունը կարող է զեղչեր տրամադրել այն անձանց, ովքեր ավարտում են այս դասընթացը և ավարտական վկայական են ստանում: Վկայականն ուժի մեջ է 3 տարի և կարող է նորացվել 4-ժամյա դասընթաց ավարտելու դեպքում:

ՀԵՏԻՈՏՆԵՐԻ ՊՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետիոտները (ներառյալ առողջարար վազքով զբաղվողները) պետք է տեղյակ լինեն երթևեկության պայմաններին: Զգուշացեք վարորդներից, քանի դեռ չեք համոզվել, որ փողոցն անցնելու իրավունքը ձերն է: Իմացեք, որ հիբրիդ մեքենաներն ու էլեկտրամոբիլները գործնականում անաղմուկ են էլեկտրաէներգիայով աշխատելիս, և հնարավոր է, որ դուք չլսեք, թե ինչպես են դրանք մոտենում խաչմերուկին: Ճանապարհը զիջեք տրանսպորտային միջոցներին, երբ փողոցը հատում էք խաչմերուկներում և հետիոտնային անցումներ կամ նշաններ չունեցող հատվածներում: Հիշեք՝ Եթե ձեր հայացքը հանդիպում է վարորդի հայացքին, դա դեռ չի նշանակում, թե նա զիջելու է ճանապարհը: Հանկարծակի մի՛ թողեք մայթեզրը կամ որևէ այլ ապահով տեղ և մի՛ քայլեք կամ վազեք դեպի տրանսպորտային միջոցի ընթացուղին այնպիսի հեռավորությամբ, որը կարող է վտանգավոր լինել ձեզ համար: Հետևեք այս կանոնին, նույնիսկ երբ գտնվում եք հետիոտնային անցումի վրա: Օրենքը պահանջում է, որ վարորդները միշտ ճանապարհը զիջեն հետիոտնին, բայց եթե վարորդը չկարողանա ժամանակին կանգնել՝ ձեզ վրաերթի ենթարկելուց խուսափելու համար, դուք շարունակում եք ենթակա լինել վրաերթի ենթարկվելու վտանգին: Հետիոտները չպետք է շեղեն իրենց ուշադրությունը: Քայլելիս մի օգտագործեք ձեր բջջային հեռախոսը կամ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքը: Տրանսպորտային միջոցների կամ այլ հետիոտների համար վտանգ չներկայացնելու համար, դուք պետք է միշտ տեղյակ լինեք, թե ինչ է կատարվում ձեր շրջակայքում: Միշտ հետևեք ճանապարհային լուսացույցներին: Դուք պետք է ենթարկվեք հետիոտնային երթևեկության կանոններին՝ խաչմերուկի անցումներում հետիոտնային լուսազդանշանների կամ ճանապարհային լուսացույցների առկայությունից կամ բացակայությունից անկախ (տե՛ս էջ 29 և 30): Վարորդները պարտավոր են ճանապարհային լուսացույցներով չկարգավորվող խաչմերուկում, հետիոտնային անցման սահմաններում ճանապարհին անցնելու իրավունքը զիջել հետիոտններին՝ հետիոտնային անցման գծանշված լինելու կամ չլինելու հանգամանքից անկախ:



Երբ վառվում է լուսացույցի կանաչ կամ «ԱՆՑԵՔ» (WALK) լույսը, նայեք ձախ, աջ, ապա կրկին ձախ և ճանապարհը զիջեք այն մեքենաներին, որոնք նախքան լուսացույցի լույսի փոխվելն արդեն խաչմերուկ էին մտել:

Եթե ճանապարհային լուսացույցի լույսը սկսում է թարթել կամ փոխվում է «ՄԻ ԱՆՑԵՔ» (DON'T WALK) ազդանշանի կամ ձեռքը վեր բարձրացրած պատկերի, երբ դուք արդեն հատել եք բաժանարար գոտիով փողոցի մի մասը, ապա կարող եք շարունակել անցնել փողոցը: Փողոցն անցնելիս մի կանգնեք կամ լրացուցիչ խոչընդոտ մի ստեղծեք երթևեկության համար: Հետիոտնային երթևեկությունը չի թույլատրվում ցանկացած վճարովի կամրջի կամ ավտոմայրուղու փոխհատուցներում, եթե մայթը բացակայում է, և հետիոտների երթևեկությունը թույլատրող նշաններ չկան:

Եթե մայթեր չկան, քայլեք դեմքով դեպի հանդիպակաց երթևեկությունը (տե՛ս 24-րդ էջում պատկերված նկարը): Մի քայլեք կամ վազեք այնպիսի արագընթաց բազմագոտի ճանապարհով, որտեղ հետիոտների երթևեկությունն արգելող նշաններ կան: Մի քայլեք կամ վազեք հեծանվային գոտիով, եթե մայթը բացակայում է: Գիշերային ժամերին այնպես արեք, որ հնարավորինս տեսանելի լինեք՝

- կրելով սպիտակ, բաց գույնի կամ լույս անդրադարձնող հագուստ.
- կրելով գրպանի լապտեր:

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ձեր տրանսպորտային միջոցը կարող է ունենալ տեխնոլոգիա, որը թույլ է տալիս խոսակցություններ վարել բջջային հեռախոսով կամ երաժշտություն ունկնդրել էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքով: Այդպիսի տեխնոլոգիական միջոցների աճի պայմաններում կարևոր է պահպանել ճանապարհի նկատմամբ ուշադրությունը և խուսափել մեքենավարելիս ուշադրությունը շեղող հանգամանքներից: Ահա որոշ խորհուրդներ, որոնք կօգնեն նվազեցնել տեխնոլոգիական միջոցների առաջացրած ուշադրության շեղումները՝

- մեքենա վարելու ընթացքում մի մուտքագրեք նավիգացիայի ցուցումներ.
- մեքենա վարելու ընթացքում մի կարգավորեք երաժշտական կամ այլ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքեր.
- նավիգացիոն սարքերի պարագայում հնարավորինս օգտվեք ձայնային նավիգացիայի գործառնություն:


ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Մեքենավարման քննության ժամանակ բացառապես չի կարելի օգտագործել տեխնոլոգիական միջոցներ, օրինակ՝ հեռախոսայց տեսախցիկներ և ինքնակայանման համակարգ: Մեքենավարման քննության նպատակը մեքենա վարելու ձեր կարողության մեջ համոզվելն է:

ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄՐԱԳՈՏԻՆԵՐ

Ամրագոտիներ կրելը օրենքի պահանջն է: Միշտ ամրացրեք ձեր ամրագոտին և համոզվեք, որ բոլոր ուղևորներն օգտվում են ամրագոտիներից կամ երեխաների անվտանգության համակարգից: Անվտանգության ամրագոտիներ (ինչպես գոտկատեղի, այնպես էլ ուսի ամրագոտիներ) կրելը կմեծացնի ձեր փրկության հավանականությունը ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասի ժամանակ: Կարևոր է ճիշտ կապել ամրագոտին:

- Ուսի ամրագոտին կապվում է ուսի և կրծքավանդակի վրայով այնպես, որ նվազագույն չափով լինի չպրկված: Չի կարելի ուսի ամրագոտին կապել թևի տակ կամ մեջքի հետևում: Ուսի ամրագոտին սխալ կապելը կարող է ծանր ներքին վնասվածքներ հասցնել բախման դեպքում:
- Գոտկատեղի ամրագոտին պետք է կարգավորվի այնպես, որ հարմար լինի և ամրացումից հետո անցնի կոնքերի վրայով: Այլպես, ընդհարման ժամանակ կարող եք սահել և դուրս գալ ամրագոտուց, ինչը կհանգեցնի մարմնական վնասվածքի կամ մահվան:
- Հղի կանայք պետք է գոտկատեղի ամրագոտին ամրացնեն որքան հնարավոր է ցածր՝ որովայնի ներքևից, իսկ ուսի գոտին պետք է անցնի կրծքերի արանքով ու իջնի ներքև՝ որովայնի կողքից:



Դուք և բոլոր ուղևորները պետք է անվտանգության ամրագոտիներ կրեք, հակառակ դեպքում դուք և (կամ) ձեր ուղևորը (ուղևորները) կարող եք տուգանվել: Եթե ուղևորը 16-ից ցածր տարիքի է, կարող եք տուգանվել, եթե նա չի կապել իր ամրագոտին:

Գծապատկերը լուսաբանում է, թե ինչ կարող է տեղի ունենալ տրանսպորտային միջոցների բախման դեպքում: Եթե ձեզ կողքից հարվածեն, ապա հարվածը ձեզ աջ ու ձախ կնեկնի: Անվտանգության ամրագոտիներն ու ուսի ամրագոտին ձեզ պահում են մեքենան կառավարելու համար ավելի լավ դիրքում և կարող են նվազագույնի հասցնել ծանր վնասվածքների հավանականությունը: Գծապատկերը նաև լուսաբանում է, թե ինչպես է բախվելիս կանգ առնում ձեր մեքենան, բայց դուք շարունակում եք նույն արագությամբ առաջ ընթանալ, մինչև բախվեք սարքերի վահանակին կամ հողմապակուն:

ԵՐԵՄԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱԿԱՆ ՆՍՏՈՑՆԵՐ

Ձեր երեխան պետք է պաշտպանված լինի կա՛մ երեխա ուղևորների՝ դաշնային կանոնակարգերով հաստատված անվտանգության համակարգով, կա՛մ ամրագոտիով՝ իր հասակից և տարիքից կախված:

- 2 տարեկանից ցածր տարիքի երեխաները պետք է պաշտպանված լինեն երեխա ուղևորների անվտանգության հետահայաց համակարգով, եթե երեխայի քաշը 40 ֆունտ (18 կգ) կամ ավելի չէ, կամ հասակը 3 ֆուտ 4 դյույմ (≈ 100 սմ) կամ ավելի բարձր չէ:

- 8 տարեկանից ցածր տարիքի կամ 4 ֆուտ 9 դյույմից (≈ 145 սմ) ցածր հասակի երեխաները պետք է պատշաճ կերպով ապահով տեղավորված լինեն դաշնային կանոնակարգերով հաստատված անվտանգության համակարգում:
 - 8 տարեկանից փոքր երեխաները կարող են գտնվել տրանսպորտային միջոցի առջևի նստոցում՝ դաշնային կանոնակարգերով հաստատված անվտանգության համակարգում, հետևյալ դեպքերում՝
 - հետևի նստոց գոյություն չունի.
 - հետևի նստոցները կողք նայող հետզցովի նստոցներ են.
 - հետևի նստոցները հետահայաց նստոցներ են.
 - երեխա ուղևորների անվտանգության համակարգը հնարավոր չէ պատշաճորեն տեղադրել հետևի նստոցում.
 - հետևի բոլոր նստոցներն արդեն զբաղեցված են 7 տարեկան կամ ավելի փոքր երեխաներով.
 - բժշկական նկատառումներով՝ երեխան չպետք է երթնեկի հետևի նստոցում նստած:
 - Երեխային արգելվում է երթնեկել օդային բարձիկով համալրված տրանսպորտային միջոցի առջևի նստոցում, եթե նա գտնվում է երեխա ուղևորների անվտանգության հետահայաց համակարգում:
 - 8 տարեկան կամ ավելի բարձր տարիքի ԿԱՄ առնվազն 4 ֆուտ 9 դյույմ (≈ 145 սմ) հասակի երեխաները կարող են օգտագործել դաշնային չափորոշիչներին համապատասխանող և պատշաճորեն տեղակայված ամրագոտիներ:
- ՇԱՆՈՑՈՒԹՅՈՒՆ. Երեխա ուղևորների անվտանգության համակարգի տեղադրումը կարելի է ստուգել՝ դիմելով տեղական իրավապահ մարմիններին կամ հրշեջ բաժանմունքներին: Երեխայի մեծանալուն զուգընթաց ստուգեք՝ արդյոք երեխա ուղևորների անվտանգության համակարգի չափերը համապատասխանում են ձեր երեխային:

ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ ՕՊԱՅԻՆ ԲԱՐՁԻԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵՔԵՆԱՑՈՎ

Օդային բարձիկներն անվտանգության միջոց են, որոնք օգնում են ավելի մեծ անվտանգություն ապահովել, քան հնարավոր կլիներ միայն ամրագոտիով: Մեքենան վարելիս օդային բարձիկից առնվազն 10 դյույմ հեռավորություն պահպանեք (այն պետք է չափել դեկանիվի կենտրոնից մինչև ձեր կրծոսկրը), եթե կարող եք դա անել՝ միաժամանակ լիովին կառավարելով ձեր մեքենան: Եթե չեք կարող նստել օդային բարձիկից 10 դյույմ (25,4 սմ) հեռավորության վրա՝ անվտանգությունը լիովին պահպանելով, խորհրդի համար դիմեք մեքենան վաճառողին կամ արտադրողին և պարզեք, թե ինչ լրացուցիչ միջոցներով կարելի է հեռանալ օդային բարձիկից:

Ուղևորները նույնպես պետք է նստեն ուղևորի օդային բարձիկից առնվազն 10 դյույմ հեռու:

ՇԱՆՈՑՈՒԹՅՈՒՆ. Կողային օդային բարձիկի մոտ նստած երեխաները կարող են ենթարկվել լուրջ կամ մահացու վնասվածք ստանալու վտանգին:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՈՒՄ ՆՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՄ ԹՈՂԱՎԱԾ ԵՐԵՄԱՆԵՐ

Երեխային ավտոմեքենայում առանց հսկողության թողելը երբեք ճիշտ գաղափար չէ: Արգելվում է մինչև 6 տարեկան երեխաներին մենակ թողնել ավտոմեքենայում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, Երեխային կարելի է մեքենայում թողնել 12 տարեկան կամ ավելի մեծ երեխայի հսկողության տակ:

ՇԵՂՎԱԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ

Ցանկացած բան, որը ձեզ թույլ չի տալիս անվտանգ շահագործել տրանսպորտային միջոցը, ուշադրության շեղում է: Ստորև բերված են վարորդի ուշադրության 3 տեսակի շեղումներ

- տեսողական - այքերը չեն նայում ճանապարհին.
- իմացական - միտքը չի հետևում ճանապարհին.
- ֆիզիկական - ձեռքերը դեկի վրա չեն:

Ահա շեղված ուշադրությամբ մեքենավարում առաջացնող և տրանսպորտային միջոցների բախումներին հանգեցնող որոշ գործողություններ՝

- դյուրակիր սարքի (օրինակ՝ բջջային հեռախոսի, երաժշտական սարքի) գործածում.
- ձեռքի մեկնում տրանսպորտային միջոցի ներսում որևէ առարկայի.
- տրանսպորտային միջոցից դուրս գտնվող առարկայի կամ իրադարձության դիտում.
- ընթերցանություն.
- սննդի ընդունում.
- կոսմետիկական (դիմահարդարման) միջոցի գործածում:

Պատահարների և ուշադրության շեղումների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել «Արագ փաստեր» գրքույկի «Վարորդի ուշադրությունը շեղող գործոնները» (*Driver Distractions, FFDL 28*) բաժնում:

ՎՏԱՆԳՆԵՐ ՇՈԳ ԵՂԱՆԱԿԻ

Երեխաներին և (կամ) կենդանիներին շոգ մեքենայի մեջ մենակ թողնելը վտանգավոր է և անօրինական (CVC §15620): Արևի տակ ժալիս, նույնիսկ թեթևակի բացված պատուհանի դեպքում ջերմաստիճանը կարող է շատ արագ բարձրանալ կայանված մեքենայի ներսում:

Չափազանց մեծ ջերմային ազդեցությունը կարող է հանգեցնել ջրազրկման, ջերմային հարվածի և մահվան: Կալիֆոռնիա նահանգի Քրեական օրենսգրքի (*California Penal Code*) §597.7 հոդվածն արգելում է որևէ կենդանի թողնել կամ պահել առանց հսկողության ժառանգ ավտոմեքենայի մեջ այնպիսի պայմաններում, որոնք շոգի պատճառով վտանգում են կենդանու առողջությունը կամ ինքնազգացողությունը:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԼՈՒՍԱՅՈՒՅՆԵՐ

Հոծ կարմիր – ճանապարհային լուսացույցի կարմիր լույսը նշանակում է «ԿԱՆԳ ԱՌ» (STOP): Լուսացույցի կարմիր լույսի տակ կարող եք աջ շրջադարձ կատարել կանգ առնելուց հետո: Ճանապարհը զիջեք հետիոտներին, հեծանվորդներին և վտանգ ներկայացնելու չափ մոտ գտնվող տրանսպորտային միջոցներին: Աջ շրջադարձ կատարեք միայն այն ժամանակ, երբ այդ անելը վտանգ չի ներկայացնում: Շրջադարձ մի կատարեք, եթե նշված է «ԿԱՐՄԻՐ ԼՈՒՅՄԻ ՏԱԿ ՇՐՋԱԴԱՐՁՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է» (NO TURN ON RED):



Կարմիր սլաք – Կարմիր սլաքը նշանակում է «ԿԱՆԳ ԱՌ» (STOP): Տեղից մի շարժվեք, մինչև վառվի կանաչ լույսը կամ հայտնվի կանաչ սլաքը: Կարմիր սլաքի տակ շրջադարձ մի կատարեք:



Թարթող կարմիր – ճանապարհային լուսացույցի թարթող կարմիր լույսը նշանակում է «ԿԱՆԳ ԱՌ» (STOP): Կանգ առնելուց հետո կարող եք շարժվել, երբ դա ապահով է: Հետևեք ճանապարհի առավելության կանոններին:



Հոծ դեղին – ճանապարհային լուսացույցի դեղին լույսը նշանակում է «ԶԳՈՒՅՇ» (CAUTION): Շուտով վառվելու է լուսացույցի կարմիր լույսը: Դեղին լույսը տեսնելիս կանգ առեք, եթե դա անվտանգ է: Եթե կանգ առնելն անվտանգ չէ, զգուշորեն անցեք խաչմերուկը:



Դեղին սլաք – Դեղին սլաքը նշանակում է, որ շրջադարձ կատարելու «պաշտպանված» ժամանակը սպառվում է: Պատրաստ եղեք հետևելու հաջորդ լուսային ազդանշանին, որը կարող է լինել լուսացույցի կանաչ կամ կարմիր լույս կամ կարմիր սլաք:



Թարթող դեղին – ճանապարհային լուսացույցի թարթող դեղին լույսը նախազգուշացնում է «ԶԳՈՒՇՈՐԵՆ ԱՌԱՋ ՇԱՐՇՎԵԼՈՒ» (PROCEED WITH CAUTION) մասին: Ընթացքը դանդաղեցրեք և աչալուրջ եղեք խաչմերուկ մուտք գործելուց առաջ: Խաչմերուկում ճանապարհը զիջեք ցանկացած հետիոտնի, հեծանվորդի կամ տրանսպորտային միջոցի: Ճանապարհային լուսացույցի թարթող դեղին լույսի դեպքում կանգ առնելու կարիք չկա:

Թարթող դեղին սլաք – ճանապարհային լուսացույցի այս ազդանշանը նշանակում է, որ շրջադարձերը թույլատրվում են (չպաշտպանված), բայց նախ պետք է ճանապարհը զիջեք հանդիպակաց երթևեկությանն ու հետիոտներին, այնուհետև զգուշորեն առաջ շարժվեք:



Հոծ կանաչ – ճանապարհը զիջեք դեռևս խաչմերուկում գտնվող բոլոր տրանսպորտային միջոցներին, հեծանվորդներին և հետիոտներին: Լուսացույցի կանաչ լույսը նշանակում է «ԳՆԱՑԵՔ» (GO): Եթե ձախ շրջադարձ եք կատարում, ապա դա արեք միայն այն դեպքում, երբ շրջադարձը կատարելու համար բավարար տարածություն ունեք առանց վտանգավոր իրավիճակ ստեղծելու որևէ փոխադրամիջոցի, հեծանվորդի կամ հետիոտնի համար: Մուտք մի գործեք խաչմերուկ, եթե չեք հասցնելու այն ամբողջությամբ հատել մինչև լուսացույցի կարմիր լույսի վառվելը: Խաչմերուկում խցանում ստեղծելու համար կարող եք տուգանվել:



Կանաչ սլաք – Կանաչ սլաքը նշանակում է «ԳՆԱՅԵՔ» (GO): Դուք պետք է ընթանաք սլաքի ցույց տված ուղղությամբ այն բանից հետո, երբ ճանապարհը զիջեք դեռևս խաչմերուկում գտնվող բոլոր տրանսպորտային միջոցներին, հեծանվորդներին և հետիոտներին: Կանաչ սլաքը թույլ է տալիս «պաշտպանված» շրջադարձ կատարել: Հանդիպակաց տրանսպորտային միջոցները, հեծանվորդները և հետիոտները կանգ են առնում լուսացույցի կարմիր լույսի տակ այնքան ժամանակ, քանի դեռ կանաչ սլաքը չի վառվել:



Ճանապարհային լուսացույցի անսարքություն (խափանում) – Երթևեկությունը կարգավորող լուսացույցը չի գործում, և (կամ) լուսացույցի լույսերը չեն վառվում: Առաջ շարժվեք զգուշորեն, ասես խաչմերուկը բոլոր ուղղություններով կարգավորվում է «ԿԱՆԳ ԱՌ» (STOP) նշանով:

ՀԵՏԻՈՏՆԱԿՆ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐ

Հետիոտնային երթևեկության լուսացույցները պատկերում են հետևյալ օրինակներին նման բառեր և նկարներ.

«Անցեք» (**Walk**) կամ «Փողոցն անցնող մարդ» (**Walking Person**) պատկերող լուսացույցը նշանակում է, որ կարելի է փողոցը հատել:



«Մի անցեք» (**Don't Walk**) կամ «Բարձրացրած ձեռք» (**Raised Hand**) պատկերող լուսացույցը նշանակում է, որ չի թույլատրվում սկսել փողոցի հատումը:




Թարթող «Մի անցեք» (**Don't Walk**) կամ թարթող «Բարձրացրած ձեռք» (**Raised Hand**) պատկերող լուսացույցը նշանակում է, որ չի կարելի սկսել հատել փողոցը, որովհետև լուսացույցի լույսը փոխվելու է: Եթե հետիոտնը սկսում է փողոցն անցնել այն բանից հետո, երբ լուսացույցի լույսը սկսում է թարթել, շարժվելուց առաջ սպասեք, մինչև հետիոտնը (հետիոտները) վերջացնի փողոցն անցնելը:



Հետիոտնային ճանապարհային լուսացույցները նաև կարող են թվեր ցույց տալ՝ նշելու, թե քանի վայրկյան է մնացել փողոցը հատելու համար: Հետիոտնային երթևեկության այս լուսացույցները հետիոտներին թույլ են տալիս արագացնել քայլերը, եթե անցնելու ժամանակը մոտենում է ավարտին:

Հետիոտնային փուլերը (նաև կոչվում է «Փողոցի անցում բոլոր կողմերից») խաչաձև, անկյունագծային հետիոտնային անցումների շարք են, որոնք հետիոտներին թույլ են տալիս խաչմերուկը միաժամանակ հատել ցանկացած ուղղությամբ, այդ թվում՝ անկյունագծորեն: Այս ազդանշանները կանգնեցնում են տրանսպորտային միջոցների ամբողջ երթևեկությունը հետիոտների՝ փողոցը բոլոր կողմերից անցնելու փուլում:



Հետիոտնային երթևեկության որոշ լուսացույցներ կարող են հաղորդել կարճ ձայնային ազդանշան կամ ծվվոց կամ խոսքային հաղորդագրություն: Դրանց նպատակն է օգնել կույր կամ թույլ տեսողություն ունեցող անձանց անցնել փողոցը:

Ճանապարհային լուսացույցներից շատերի վրա հետիոտնի սեղմակոճակ կա, որը հարկավոր է սեղմել, որպեսզի ակտիվացվի «Անցեք» (**Walk**) կամ «Փողոցը հատող մարդ» (**Walking Person**) հետիոտնային լուսագրանշանը: Եթե հետիոտների համար նախատեսված ազդանշաններ չկան, ապա հետևեք տրանսպորտային միջոցներին երթևեկությունը կարգավորող լուսացույցին:

ՃԱՆՊԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

Երթևեկության նշանի երկրաչափական ձևը և գույնը հուշում են, թե ինչպիսի տեղեկություն է այն պարունակում: Ահա՝ գործածվող հիմնական ձևերը:

8-անկյուն կարմիր ԿԱՆԳ ԱՌ (**STOP**) նշանը ցույց է տալիս, որ դուք պետք է այս նշանը տեսնելուն պես լրիվ «ԿԱՆԳՆԵՅՆԵՔ» մեքենան: Կանգ առեք սպիտակ սահմանագծի մոտ (փողոցի լայնքով ձգվող սպիտակ գիծ) կամ նախքան հետիոտնային անցում մուտք գործելը: Եթե փողոցում գծանշված չէ սահմանագիծ կամ հետիոտնային անցում, ապա կանգ առնեք նախքան խաչմերուկ մուտք գործելը: Առաջ շարժվելուց առաջ ստուգեք երթևեկությունը բոլոր ուղղություններով:



3-ակնողմ կարմիր ԶԻԶԻԲ (**YIELD**) նշանը ցույց է տալիս, որ ճանապարհը շարունակելուց առաջ հարկավոր է դանդաղեցնել մեքենայի ընթացքը և անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել կանգ առնելու՝ այլ տրանսպորտային միջոցներին, հեծանվորդներին և հետիոտններին թույլ տալով անցնել:



Քառակուսի կարմիր և սպիտակ կարգավորող նշանը ցույց է տալիս, որ հարկավոր է հետևել նշանի ցուցումին: Օրինակ՝ ՄՈՒՏՏԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է (**DO NOT ENTER**) նշանը ցույց է տալիս՝ չի կարելի մտնել այն ճանապարհի կամ իջատեղը, որտեղ նշանը տեղադրված է (սովորաբար, արագընթաց բազմազոտի ճանապարհից դուրս եկող իջատեղում): ՄՈՒՏՏԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է (**DO NOT ENTER**) նշանի կողքին կարող է տեղադրված լինել կամ չլինել ՀԱՆԴԻՊԱԿԱՑ ԳՈՏԻ (**WRONG WAY**) նշանը: Եթե տեսնեք այդ նշաններից որևէ մեկը կամ երկուսը միասին, շարժվեք դեպի ճանապարհի եզրը ու կանգ առեք: Դա նշանակում է, որ դուք շարժվում եք երթևեկությանը հակառակ ուղղությամբ: Ապահով լինելու դեպքում հետընթաց տվեք կամ շրջվեք և վերադարձեք այն ճանապարհի, որով ընթանում էիք: Եթե գիշերով ընթանաք երթևեկությանը հակառակ ուղղությամբ, ճանապարհի ցցում անդրադարձիչները կարմիր լույս կանդրադարձնեն ձեր ցուլապտերների լույսի ներքո:



Նշանը, որը պատկերում է կարմիր շրջանակ և այն հաստղ կարմիր գիծ, միշտ նշանակում է «ՈՉ»: Շրջանակի ներսում պատկերված նկարը ցույց է տալիս, թե ինչ չի կարելի անել: Նշանը կարող է բառեր պարունակել կամ չպարունակել:



Դեղին և սև շրջանաձև նշանը կամ խաչաձև նշանը ցույց է տալիս, որ դուք մոտենում եք երկաթուղային գծանցի: Դուք պետք է նայեք, լսեք, ընթացքը դանդաղեցնեք և պատրաստ լինեք անհրաժեշտության դեպքում կանգ առնելու: Թույլ տվեք, որ գնացքներն անցնեն, նախքան կշարունակեք ձեր ընթացքը: Երկաթուղային գծանցներից շատերը նաև ունեն կապույտ և սպիտակ նշան, որը ցույց է տալիս, թե ինչ անել, եթե արտակարգ իրավիճակ է ստեղծվել ռելսերի մոտ կամ վրա, կամ եթե ձեր տրանսպորտային միջոցը լուվել է ռելսերի վրա:



5-անկյուն նշանը ցույց է տալիս, որ մոտակայքում դպրոց կա: Կանգնեցրեք մեքենան, եթե հետիոտնային անցումով երեխաներ են անցնում:

Շեղանկյունաձև 4-անկյուն նշանը զգուշացնում է առջևում հատուկ ճանապարհային պայմանների և վտանգների մասին: Նախագուշացնող նշաններից շատերը շեղանկյունաձև են:



Կարմիր և սպիտակ կարգավորող նշաններ



Հետադարձ արգելվում է
(No U-turn)



Ձախ շրջադարձն արգելվում է
(No Left Turn)



Աջ շրջադարձն արգելվում է
(No Right Turn)

Սպիտակ կարգավորող նշաններ



Հետիոտների, հեծանիփսերի, մոպեդների երթևեկն արգելվում է:



Առջևում՝ երկկողմանի երթևեկություն



Կայանումը միշտ արգելվում է



Զիջիր վերընթաց երթևեկությանը



Միակողմանի երթևեկություն




Կայանում միայն արտակարգ իրավիճակի դեպքում



Շրջադարձերն արգելվում են



Կանաչ լույսի տակ ձախ շրջադարձ կատարողը զիջում է



Վագանցն արգելվում է



Միակողմանի երթևեկություն



Ձախ շրջադարձ կամ հետադարձ



Միայն ձախ շրջադարձ



Արագության սահմանափակում



Դանդաղ երթևեկողները ընդունեն աջ



Արգելվում է կանգ առնել երկաթգծերի վրա



3 ուղևորի



Ընդունե՛ք աջ



Մի խցանիր խաչմերուկը

Ավտոճանապարհի շինարարության և տեխնիկական սպասարկման նշաններ



Միջանցիկ երթևեկության վերադասավորումը՝ ձախից



Առջևում ճանապարհի փակ է



Առջևում ճանապարհաշինական մեքենաներ են



Առջևում ազդարար է



Առջևում աշխատանքներ են իրականացվում կողմակի վրա

Տեղեկատու-ցուցիչ նշաններ



Օդանավակայան



Դահուկասահիքի գոտի



Հանգստի գոտի՝ 1 մղոնից



Տրամվայ

Վտանգավոր բեռների ցուցանակներ



Դանդաղընթաց տրանսպորտային միջոց



Նախազգուշացնող նշաններ



Սայթարուն է, երբ թաց է (Slippery When Wet)



Միախառնվող երթևեկություն (Merging Traffic)



Բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհ (Divided Highway)



Կտրուկ շրջադարձ (Sharp Turn)



Երկկողմանի երթևեկություն (Two Way Traffic)



Գոտու վերջ (Lane Ends)



Բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհի վերջ (End Divided Highway)



Առջևում լուսացույց է (Traffic Signal Ahead)



Հետիոտնային անցում (Pedestrian Crossing)



Լրացուցիչ գոտի (Added Lane)



Խաչմերուկ (Crossroad)



Կանգ առ առջևում (Stop Ahead)



Ձիջել առջևում (Yield Ahead)



Ոլորան (Curve)



T-անկ ճամփաբաժան (T Intersection)



Ուղղության սլաք (Directional Arrow)



Ոլորապտույտ ճանապարհ (Winding Road)

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.dot.ca.gov կայքը

Մայիտակ ուղղանկյուն նշանը ցույց է տալիս, որ պահանջվում է ենթարկվել կարևոր կանոնների:

Որոշ նախազգուշացնող նշաններ ունեն լուսարձակող դեղնականաչ ֆոն: Այդ նշանները նախազգուշացնում են հետիոտներին, հեծանվորդներին, դպրոցներին, խաղահրապարակներին, դպրոցական ավտոբուսներին և դպրոցական ուղևորների նստեցման գոտիներին առնչվող պայմանների մասին: Հետևեք բոլոր նախազգուշացնող նշաններին՝ անկախ դրանց ձևից ու գույնից (օրինակները տե՛ս 32-րդ և 33-րդ էջերում):

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՌԱՋԱՀԵՐԹ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ


Ընդհանուր տեղեկություններ

Երբեք մի սպասեք, որ ուրիշ վարորդներ ճանապարհի առավելության իրավունք կտան ձեզ: Ուրիշների ճանապարհի առավելությունը հարզելը չի սահմանափակվում այնպիսի իրավիճակներով, ինչպիսիք են խաչմերուկներում հետիոտներին զիջելը կամ հեծանվորդների և մոտոցիկլավարների ճանապարհի առավելության իրավունքի նկատմամբ ուշադիր լինելը: Ձիջեք երթևեկության առավելության ձեր իրավունքը, եթե դա օգնում է խուսափել բախումներից:


Հետիոտներ

Հետիոտնը մի անձ է, ով երթևեկում է ոտքով կամ օգտագործում է փոխադրամիջոցներ, օրինակ՝ անվաչմուշկներ, անվատախտակներ և այլն, բացառությամբ հեծանիվի: Հետիոտն է համարվում նաև այն հաշմանդամը, ով տեղաշարժվում է եռանիվ կամ քառանիվ հեծանվով կամ անվասայլակով:

- Եթե մոտենում եք հետիոտնային անցմանն անկյունում կամ այլ հետիոտնային անցման, նույնիսկ եթե անցումը ճանապարհի միջին մասում է, ճանապարհային լուսացույցներով կամ առանց լուսացույցների անկյունում է, ապա, անկախ այն բանից անցումը ներկով զծանշված է, թե ոչ, պահանջվում է զգուշություն ցուցաբերել և նվազեցնել արագությունը կամ անհրաժեշտության դեպքում կանգ առնել՝ հետիոտնի անվտանգությունն ապահովելու համար:
- Մի շրջանցեք հետիոտնային անցումի մոտ կանգնած ոչ մի մեքենա: Հնարավոր է, որ այդ պահին փողոցը հատում է որևէ հետիոտն, որին դուք չեք նկատում: Կանգ առեք և շարժվեք, երբ բոլոր հետիոտներն անցել են փողոցը:
- Երբեք մեքենան մի վարեք մայթով, բացառությամբ այն դեպքերի, երբ մայթը հարկավոր է հատել որևէ ուղեմուտք կամ նրբանցք մտնելու կամ այնտեղից դուրս գալու համար: Մայթը հատելիս միշտ զիջեք հետիոտներին:
- Մեքենան մի կանգնեցրեք հետիոտնային անցումում: Դրանով դուք վտանգում եք հետիոտներին:
- Հիշեք, եթե հետիոտնը հայացքը ձեզ է ուղղում, ապա նա պատրաստ է փողոցը հատելու: Ճանապարհը զիջեք հետիոտնին:



- Բավարար ժամանակ տվեք, որպեսզի փողոցը հատեն՝
 - տարեց հետիոտները.
 - հաշմանդամ հետիոտները.
 - փոքր երեխաների հետ անցնող հետիոտները:
- Ենթարկվեք հետիոտներին վերաբերող նշաններին: Օրինակները ներառում են՝



ԿԱՐԵՎՈՐ Է. Կույր հետիոտներն ապավինում են ձեր մեքենայի ձայնին, որով տեղեկանում են մեքենայի ներկայության մասին, և հետիոտնային ազդանշանի ձայնին, որպեսզի իմանան, թե երբ է հնարավոր անվտանգ հատել փողոցը: Կարևոր է, որ մեքենան կանգնեցնեք հետիոտնային անցումից մինչև 5 ֆուտ (1,5 մետր) հեռավորության վրա: Կոմբինացված մեքենաների կամ էլեկտրամոբիլների վարորդները պետք է հատկապես տեղյակ լինեն, որ շարժիչի կամ էլեկտրաշարժիչի ձայնի բացակայության պատճառով կույր հետիոտներ կարող է ենթադրել, որ մոտակայքում ոչ մի մեքենա չկա: Հետևեք այս նշանին.

- Երբ կույր անձը դադարեցնում է ձեռնափայտի շարժումը և հետ է քաշվում խաչմերուկից, դա սովորաբար նշանակում է, որ կարող եք անցնել (կույր հետիոտների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել 80-րդ էջում):

Հետիոտնային անցումներ

Հետիոտնային անցումը փողոցի այն մասն է, որը նախատեսված է հետիոտների երթևեկության համար: Երբ պահանջվում է կանգ առնել նշանի կամ ազդանշանի պատճառով, ապա պետք է կանգ առնեք մինչև կանգ-գիծը, հետիոտնային անցումը, կանգի նշանը կամ ազդանշանը: Դուք պետք է միշտ զիջեք անցում մուտք գործող կամ արդեն անցումում գտնվող հետիոտներին: Ոչ բոլոր հետիոտնային անցումներն են գծանշված: Եթե կանգ-գիծ կա հետիոտնային անցումից առաջ, ապա նախ պետք է ենթարկվել կանգ-գծին: Գծանշված կամ ոչ գծանշված անցումներում հետիոտները ճանապարհի առավելություն ունեն: Թեև հետիոտները երթևեկության առավելություն ունեն, նրանք նույնպես պետք է հետևեն ճանապարհային երթևեկության կանոններին: Եթե մեքենայով մոտենում եք հետիոտնային անցմանը, ապա պահանջվում է զգուշություն ցուցաբերել և նվազեցնել արագությունը՝ հետիոտնի անվտանգությունն ապահովելու համար: Գուցե հարկ լինի կանգ առնել, որպեսզի համոզվեք, որ հետիոտնի անվտանգությունն ապահովված է, ինչպես շարադրված է CVC §21950 պարագրաֆում: Հետիոտնային անցումները հաճախ գծանշված են սպիտակ գծերով: Դպրոցների մոտ անցումները կարող են գծանշված լինել դեղին գծերով: Որոշ հետիոտնային անցումներում տեղադրված են լինում թարթող լույսեր, որոնք զգուշացնում են հետիոտների հնարավոր անցման մասին: Անկախ այն բանից՝ լույսը թարթում է, թե ոչ, ուշադիր ստուգեք հետիոտների առկայությունը և պատրաստ եղեք կանգ առնելու:


Փոխհատումներ

Փոխհատում է կոչվում ցանկացած վայր, որտեղ երթևեկելի մասի մի գոտի հատվում է մեկ այլ երթևեկելի մասի հետ: Փոխհատումները ներառում են հատվող փողոցները, երկրորդական փողոցները, նրբանցքները, մուտքերը դեպի արագընթաց բազմագոտի ճանապարհներ և ցանկացած այլ տեղ, ուր տարբեր մայրուղիներով կամ ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցները հանդիպում են միմյանց:

- Այն փոխհատուցներում, որտեղ չկան «ԿԱՆԳ ԱՌ» (STOP) կամ «ԶԻԶԻՐ» (YIELD) նշաններ, դանդաղեցրեք մեքենայի ընթացքը և պատրաստ եղեք կանգ առնելու: Ծանապարհը զիջեք այն մեքենաներին և հետիոտներին, որոնք արդեն խաչմերուկում են կամ հենց նոր են մտնում խաչմերուկ: Զիջեք նաև այն տրանսպորտային միջոցին կամ հեծանվին, որը ձեզանից առաջ է հասնում խաչմերուկ, կամայն տրանսպորտային միջոցին կամ հեծանվին, որն ընթանում է ձեր աջից և խաչմերուկ է հասնում ձեզ հետ միաժամանակ:
 - Ծամփաբաժաններում, որտեղ չկան «ԿԱՆԳ ԱՌ» (STOP) կամ «ԶԻԶԻՐ» (YIELD) նշաններ, ճանապարհը զիջեք գլխավոր ճանապարհով երթնեկող տրանսպորտային միջոցներին և հետիոտներին: Նրանք երթնեկության առավելություն ունեն:
 - Ձախ շրջադարձ կատարելիս ճանապարհը զիջեք այն բոլոր մոտեցող տրանսպորտային միջոցներին, որոնք վտանգավորության աստիճանի մոտ են գտնվում: Բացի այդ, ուշադիր եղեք՝ մոտոցիկլավարներին, հեծանվորդներին և հետիոտներին նկատելու համար:
- Խորհուրդ անվտանգության վերաբերյալ. Երբ սպասում եք ձախ շրջադարձ կատարելու, անիճերն այնքան ժամանակ ուղիղ պահեք, մինչև շրջադարձ կատարելն անվտանգ լինի: Եթե անիճերը դեպի ձախ թեքված լինեն, և հետևից ձեզ որևէ մեքենա հարվածի, դուք կարող եք հայտնվել հանդիպակաց երթնեկության մեջ:
- Աջ շրջադարձ կատարելիս համոզվեք, որ չկան փողոցն անցնել ցանկացող հետիոտներ և ձեր կողքից ընթացող հեծանվորդներ:
 - Բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհների կամ մի քանի երթնեկության գոտի ունեցող ավտոմայրուղիների վրա նայեք՝ արդյոք մեքենաներ չեն ընթանում այն գոտիով, որը դուք հաստելու եք: Ձախ կամ աջ շրջադարձ կատարեք միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:
 - Երբ փոխհատման բոլոր անկյուններում կա «ԿԱՆԳ ԱՌ» (STOP) նշան, նախ կանգ առեք, հետո հետևեք վերը թվարկված կանոններին:
 - Եթե մեքենան կայանել էք ճանապարհի կողքին կամ դուրս եք գալիս կայանատեղից և այլն, նախքան երթնեկություն մուտք գործելը զիջեք երթնեկության հոսքում գտնվող մեքենաներին:

Օղակաձև փոխհատուցներ

Օղակաձև հատումը մի փոխհատում է, որտեղ երթնեկությունը շարժվում է կենտրոնական կղզակի շուրջը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Օղակաձև հատուցները հեծանվուղիներ չունեն, ուստի բոլոր տրանսպորտային միջոցները պետք է համատեղ օգտագործեն ճանապարհը: Օղակաձև փոխհատում մտնող կամ այնտեղից դուրս եկող տրանսպորտային միջոցները կամ հեծանիճերը պետք է ճանապարհը զիջեն երթնեկության բոլոր տեսակներին, ներառյալ հետիոտներին:



Երթնեկության մեկ և մի քանի գոտի ունեցող օղակաձև հատում

Օղակաձև փոխհատմանը մոտենալիս՝

- դանդաղեցրեք մեքենայի ընթացքը.
- ճանապարհը զիջեք այն հատող հետիոտներին ու հեծանվորդներին.
- նայեք, թե ինչ նշաններ և (կամ) երթնեկելի մասի գծանշուցներ կան, որոնք ձեզ ցուցումներ են տալիս կամ արգելում որոշակի գործողություններ կատարել.

- օղակաձև փոխհատում (դեպի աջ ուղղությամբ) մուտք գործեք այն ժամանակ, երբ բավարար տարածություն կա երթուղեկող տրանսպորտային միջոցների միջև՝ հոսքին անվտանգ միախառնվելու համար.
- երթուղեկեք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ. կանգ մի առեք և մի վազանցեք.
- ազդանշան տվեք երթուղեկության գոտիները փոխելիս կամ օղակաձև փոխհատումից դուրս գալիս.
- եթե չհասցնեք դուրս գալ, շարունակեք պտտվել կղզյակի շուրջը, մինչև կրկին հայտնվեք էլքի մոտ: Մեկից ավելի երթուղեկության գոտի ունեցող օղակաձև խաչմերուկում մուտքի և էլքի գոտին ընտրեք ըստ ձեր ուղղության, ինչպես նշված է նկարում: Օրինակ՝
 - փոխհատումից աջ շրջադարձ կատարելու համար (կապույտ մեքենան) ընտրեք աջակողմյան գոտին և դուրս եկեք աջակողմյան գոտիով.
 - ուղիղ գնալու համար (կարմիր մեքենան) ընտրեք ցանկացած գոտի և դուրս եկեք այն գոտիով, որով խաչմերուկ էք մուտք գործել.
 - ձախ շրջադարձ կատարելու համար (դեղին մեքենան) ընտրեք ձախակողմյան գոտին և դուրս եկեք:

Լեռնային ճանապարհներ

Երբ 2 մեքենա դեմ-հանդիման հանդիպում են գառիթափի վրա, որն այնքան նեղ է, որ նրանցից ոչ մեկը չի կարող անցնել, ապա գառիվայր ընթացող մեքենան պետք է զիջի ճանապարհը և այնքան հետընթաց տա, մինչև գառիվեր ընթացող մեքենան կարողանա անցնել: Զառիվայր ընթացող մեքենան բլրով հետընթաց շարժվելիս ավելի շատ է վերահսկում իրավիճակը:

ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄԱՆՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐ

Կալիֆոռնիա նահանգի «Երթուղեկության արագության մասին հիմնական օրենքով» (Basic Speed Law) սահմանվում է, որ երբեք չի կարելի գերազանցել այն արագությունը, որն անվտանգ է տվյալ պայմաններում:

Ինչպիսին էլ լինի ճանապարհին նշված թույլատրելի արագությունը, ձեր արագությունը պետք է կախված լինի՝

- այդ ճանապարհով ընթացող այլ տրանսպորտային միջոցների քանակից և արագությունից.
- ճանապարհի մակերևույթի հարթ, անհարթ, կոպճապատ, թաց, չոր, լայն կամ նեղ լինելուց.
- երթուղեկելի մասում գտնվող կամ այն հատող հեծանվորդներից կամ հետիոտներից.
- անձրևի, մառախուղի, ձյան տեղումների, քամու կամ փոշու առկայությունից:

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե ճանապարհին այլ բան նշված չէ, երկգոտի չբաժանված ավտոմայրուղում և կցորդով մեքենաների համար առավելագույն թույլատրելի արագությունը ժամում 55 մղոն (88,5 կմ) է:

Նվազեցված արագություններ

Ինտենսիվ երթուղեկություն կամ անբարենպաստ եղանակային պայմաններ

Ինտենսիվ երթուղեկության կամ անբարենպաստ եղանակային պայմաններում պետք է ավելի դանդաղ վարել: Մակայն, եթե չափազանց դանդաղ վարելու դեպքում խանգարեք բնականոն և ընդունելի ընթացքով շարժվող երթուղեկությանը, ապա հնարավոր է, որ սուգանվեք: Եթե ցանկանում եք մեքենան այլ տրանսպորտային միջոցներից ավելի դանդաղ վարել, ապա մի ընթացեք «Համար 1 գոտիով» (արագ գոտի) (տե՛ս «Երթուղեկության գոտու ընտրություն» բաժինը 47-րդ էջում): Երբ մեկ այլ մեքենա հետևից ընդհուպ մոտեցել է ձեզ և ցանկանում է ավելի արագ ընթանալ, պետք է տեղափոխվեք դեպի աջ:


Քարշակ ավտոմեքենաներ, ավտոբուսներ կամ ծանր բեռնատարներ

Երբ դուք որևէ մեքենա կամ կցորդ եք քարշակում կամ վարում եք ավտոբուս կամ 3 կամ ավելի սննի ունեցող բեռնատար, պետք է ընթանաք ամենաաջ գոտիով կամ դանդաղընթաց մեքենաների համար հատուկ նշված գոտիով: Եթե ոչ մի գոտի գծանշված չէ, և ձեր ընթացքի ուղղությամբ 4 կամ ավելի գոտի կա, ապա թույլատրվում է մեքենան վարել միայն ճանապարհի աջ եզրին ամենամոտ 2 գոտիներից մեկում մեկով: Ձեր կողքին գտնվող հետիոտները, հեծանվորդները կամ այլ տրանսպորտային միջոցներ կարող են վազանց կատարելու կամ վազանցվելու ժամանակ ենթարկվել հանկարծակի ուժեղ օդային հոսքերի ազդեցությանը: Դանդաղեցրեք ընթացքը և անցեք անվտանգ ու վազանցեք անվտանգ հեռավորությամբ (3 ֆուտ (≈ 90 սմ) կամ ավելի՝ հեծանվորդների համար):

Երեխաների մոտակայքում

Մեքենան դպրոցից 500-1000 ֆուտ (150-300 մետր) հեռավորության վրա վարելիս, երբ երեխաները դրսում են կամ հատում են փողոցը, թույլատրելի արագությունը ժամում 25 մղոն (≈ 40 կմ) է, եթե այլ բան նշված չէ ճանապարհին: Բացի այդ, եթե դպրոցի տարածքը ցանկապատված չէ, և երեխաները դրսում են, երբեք ժամում 25 մղոնից ավելի արագ մի վարեք: Որոշ դպրոցների տարածքները կարող են ունենալ ընդամենը ժամում 15 մղոն (≈ 24 կմ) արագության սահմանափակում: Դպրոցների մոտակայքում ուշադիր եղեք, որպեսզի նկատեք

- հեծանվորդներին և հետիոտներին.
- դ պ ր ո ճ ւ ն ե ր ի մ ո տ ա կ ա յ ք ու մ անվտանգությունը հսկող պարեկին կամ փողոցային երթևեկությունը կարգավորողին: Անպայման հետևեք նրանց հրահանգներին: Փողոցային երթևեկությունը կարգավորողի անվտանգության համար թույլ տվեք, որ նա ապահով կերպով հասնի փողոցի եզրին, և նոր միայն շարժվեք տեղից.



Բոլոր տրանսպորտային միջոցները պետք է կանգ առնեն

- կանգնած դպրոցական ավտոբուսները և փողոցը հատող երեխաներին: Որոշ դպրոցական ավտոբուսներ համալրված են դեղին փարոսիկով, որը թարթում է, երբ այն պատրաստվում է կանգ առնել և դուրս թողնել երեխաներին: Դեղին թարթող լույսը զգուշացնում է, որ դանդաղեցնեք մեքենայի ընթացքը և պատրաստվեք կանգ առնելու: Եթե թարթում են ավտոբուսի կարմիր լույսերը (որոնք գտնվում են ավտոբուսի վերևում առջևից և հետևից), ապա պետք է կանգ առնեք անկախ ձեր ընթացքի ուղղությունից, մինչև երեխաներն ապահով կերպով հասնեն փողոցը, որից հետո կարմիր լույսերը դադարում են թարթել: Օրենքն արգելում է տեղից շարժվել այնքան ժամանակ, քանի դեռ կարմիր լույսերը թարթում են (CVC §22454): Եթե կանգ չառնեք, կարող եք տուգանվել մինչև \$1000, և ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել 1 տարով: Եթե դպրոցական ավտոբուսը գտնվում է երկկողմ կամ բազմագոտի (յուրաքանչյուր ուղղությամբ երկու կամ ավելի երթևեկության գոտի ունեցող) ավտոճանապարհի հակառակ կողմում, կարելի է կանգ չառնել:

ԵՐԲ
ԿԱՐՄԻՐ ԼՈՒՅՍԵՐԸ
ԹԱՐԹՈՒՄ ԵՆ,
ՎԱԶԱՆՑՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է
ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ



Եկե՛ք անվտանգ պահենք
մեր երեխաներին,
Կալիֆոնիա:



Փակ տեսադաշտով խաչմերուկներ

Փակ տեսադաշտ ունեցող խաչմերուկներում թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է: Խաչմերուկը համարվում է «փակ տեսադաշտով», երբ անկյուններից ոչ մեկում «կանգ» նշաններ չկան, և մինչև խաչմերուկը հատելը վերջին 100 ֆուտը (30 մետրը) անցնելիս երկու ուղղությամբ էլ առնվազն 100 ֆուտ հեռավորության վրա չեք տեսնում: Եթե տեսադաշտը փակված է, դանդաղորեն առաջ շարժվեք, մինչև կարողանաք տեսնել:

Նրբանցքներ


Ցանկացած նրբանցքում թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն (≈ 24 կմ) է:

Երկաթուղիների մոտակայքում

Երկաթուղային գծանցից 100 ֆուտ (30 մետր) հեռավորության սահմաններում, որտեղ ի վիճակի չեք տեսնել 400 ֆուտ (120 մետր) հեռու գտնվող ռելուդինները և՛ աջ, և՛ ձախ ուղղությամբ, թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է: Դուք կարող եք ժամում 15 մղոնից ավելի արագ ընթանալ, եթե գծանցը կարգավորվում է ուղեփակոցներով, գզուշացնող ազդանշաններով կամ ազդարարի միջոցով:

Երկաթուղային գծանցներում կամ գնացքների խաչադիպման կետերում՝

- նայեք և՛ աջ, և՛ ձախ ու ականջ դրեք մոտեցող գնացքի ձայնին: Գծանցներից շատերը բազմուղի են, ուստի դրանք հատելուց առաջ պատրաստ եղեք անհրաժեշտության դեպքում կանգ առնելու: Ռելուդինները հատեք միայն հատուկ նախատեսված գծանցներում և միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է.
- նկատի ունեցեք, որ ցանկացած պահի, ցանկացած ուղղությամբ և ցանկացած գծով կարող է գնացք շարժվել: Եթե երկաթուղագծերն անցնելուց հետո հարկավոր է կանգ առնել, ապա դա անելուց առաջ սպասեք, մինչև ձեր մեքենան ամբողջովին անցնի գծերից: Կանգնելուց առաջ համոզվեք, որ մինչև վերջ անցել եք բոլոր գծերը.
- երբեք մի կանգնեք երկաթգծերի վրա: Երկաթգծի վրա կանգ առնելը վտանգում է ձեր կյանքը, և կարող եք մարմնական վնասվածքներ ստանալ կամ զոհվել.
- ուշադիր եղեք՝ նկատելու այն տրանսպորտային միջոցները, որոնք պետք է կանգ առնեն երկաթուղին հատելուց առաջ: Այդ տրանսպորտային միջոցներից են ավտոբուսները, դպրոցական ավտոբուսները և վտանգավոր բեռներ փոխադրող բեռնատարները.
- հիշեք, որ ճանապարհային լուսացույցի թարթող կարմիր լույսը նշանակում է «ԿԱՆԳ ԱՆ»: Կանգ առեք ամենամոտ գծից առնվազն 15 ֆուտ (≈ 4,5 մետր), բայց ոչ ավելի քան 50 ֆուտ (≈ 15 մետր) հեռավորության վրա, երբ գծանցը կարգավորող սարքերը գործում են կամ որևէ մեկը գզուշացնում է ձեզ, որ գնացք է մոտենում: Կանգ առեք, եթե տեսնում եք, որ գնացք է գալիս, կամ լսում եք մոտեցող գնացքի սուլոցը, շապր կամ զանգը.
- երբեք մի անցեք իջնող ուղեփակոցի տակով կամ մի շրջանցեք փակ ուղեփակոցը: Նախագզուշացնող կարմիր թարթող լույսերը ցույց են տալիս, որ պետք է կանգնեք և սպասեք: Չշարունակեք անցումը երկաթուղագծերի վրայով, քանի դեռ կարմիր լույսի թարթումը չի դադարել, նույնիսկ եթե ուղեփակոցը բարձրանա: Եթե ուղեփակոցն իջեցված է, և դուք չեք տեսնում մոտեցող գնացքը, զանգահարեք երկաթուղային



արտակարգ իրավիճակների նշված անվճար հեռախոսահամարով կամ 9-1-1: Պատրաստ եղեք հաղորդելու ձեր գտնվելու վայրի մանրամասն նկարագրությունը:

Արագընթաց ներքաղաքային գնացքների տարանցիկ երկաթուղային գծանցներ

Երկաթուղային գծանցների համար կիրառվող կանոնները վերաբերում են նաև արագընթաց ներքաղաքային գնացքների տարանցիկ երկաթուղային գծանցներին:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ. Արագընթաց ներքաղաքային գնացքները շատ անաղմուկ են շարժվում և շատ ավելի շուտ են արագություն հավաքում, քան գնացքները:

Տրամվայների, տրոլեյբուսների և ավտոբուսների մոտակայքում

Երբ անցնելն անվտանգ է, անցում կատարելու թույլատրելի արագությունը ժամում 10 մղոն (16 կմ) է: Այս սահմանափակումը գործում է այն անվտանգության գոտիներում կամ խաչմերուկներում, որտեղ տրամվայի, տրոլեյբուսի կամ ավտոբուսի կանգառ կա, և երթևեկությունը կարգավորվում է պաշտոնական անձի կամ ճանապարհային լուսացույցի օգնությամբ: Անվտանգության գոտին նշված է ճանապարհին տեղադրված ուռուցիկ ելուններով կամ գծանշաններով և առանձնացված է լինում հետիոտների համար: Անվտանգության գոտիներ կարելի է տեսնել հիմնականում այն վայրերում, որտեղ երթևեկելի մասից օգտվում են և՛ տրամվայները կամ տրոլեյբուսները, և՛ մյուս տրանսպորտային միջոցները:



Գործարար կամ բնակելի թաղամասեր

Թույլատրելի արագությունը ժամում 25 մղոն (40 կմ) է, եթե այլ բան նշված չէ:

Կենդանիների մոտակայքում

Եթե տեսնում եք կենդանու նկարով նշան (տե՛ս օրինակը), ուշադիր եղեք երթևեկելի մասում կամ մոտակայքում հնարավոր կենդանիների նկատմամբ: Եթե երթևեկելի մասի մոտ կենդանիներ կամ ընտանի անասուններ եք տեսնում, դանդաղեցրեք ընթացքը և առաջ շարժվեք զգուշորեն: Անպայման հետևեք կենդանիների համար պատասխանատու անձի ցուցումներին: Ճանապարհին թափառող կենդանի տեսնելիս դանդաղեցրեք մեքենայի ընթացքը կամ կանգ առեք, եթե դա ապահով է: Մի շեղեք ընթացքը, քանի որ կարող եք կորցնել մեքենայի կառավարումը և վթար առաջացնել: Զգուշացեք կենդանիների հանկարծակի շարժումներից, քանի որ նրանք անկանխատեսելի են և կարող են հանկարծակի դուրս գալ երթևեկելի մաս:



ՏԵՍՈՂԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄ

ՇՐՋԱԿԱՅՔԻ ՁՆՆՈՒՄ

Շրջակայքը գննելը (չորս կողմը նայելը) ներառում է ձեր մեքենայի շուրջ անվտանգ տարածության պահպանումը: Երբ մեկ այլ վարորդ սխալ է թույլ տալիս, ձեզ ժամանակ է հարկավոր հակազդելու համար: Ձեր մեքենայի համար բոլոր կողմերից թողեք բավականաչափ տարածություն, որպեսզի հակազդելու ժամանակ ունենաք: Այդ տարածությունն անհրաժեշտության դեպքում տեղ կթողնի արգելակելու կամ մանևրելու համար:

Իմացեք, թե ինչ է կատարվում առջևում

Վերջին պահի ստիպողական քայլերից խուսափելու և վտանգը շուտ նկատելու համար ուսուճասիրեք ճանապարհը 10-15 վայրկյան ձեզանից առաջ: Վտանգավոր է հայացքն անընդհատ անմիջապես մեքենայի առջև գտնվող տրանսպորտային միջոցին կամ ճանապարհին սևեռած պահելը: Բացի դիմացը նայելուց, ուշադիր եղեք նաև ձեր շուրջը գտնվող մեքենաների նկատմամբ: Նայեք հայելիների մեջ: Իմացեք, թե ինչ է կատարվում ձեր հետևում, որպեսզի կարողանաք պատրաստ լինել առջևում տեղի ունեցող իրադարձություններին:



Իմացեք ձեր մեքենայի տարածքները: Կանաչը՝ ի՞նչ է կատարվում առջևում: Կապույտը՝ ի՞նչ է կատարվում ձեր կողքերում: Դեղինը՝ մեռյալ գոտիներ կամ «տեսադաշտի բացակայություն»: Կարմիրը՝ ի՞նչ է կատարվում ձեր հետևում:

Շրջապատն ընկալեք ամբողջովին – Եթե նայեք միայն ճանապարհի միջին հատվածին, ապա չեք նկատի, թե ինչ է կատարվում ձեր կողքը և հետևում: Շուրջը գննելը թույլ է տալիս տեսնել՝

- մեքենաներ, մոտոցիկլետներ, հեծանիֆներ, հետիոտներ և կենդանիներ, որոնք կարող են հայտնվել ճանապարհին, երբ դուք հասնեք նրանց.
- առջևում խնդիրների մասին նախազգուշացնող նշանները.
- ցուցումներ տվող նշանները:

Գոտիները փոխելուց առաջ նայեք ձեր հետևի դիտահայելու մեջ՝ մոտակայքում գտնվող մեքենաներ հայտնաբերելու համար, և ուսի վրայով հետ նայեք՝ «մեռյալ գոտիները» ստուգելու համար (տե՛ս դեղին մակերեսը վերևի պատկերում):



Ստվերագծված տարածքները ձեր հայելիներից թաքնված մեռյալ գոտիներն են:

Զգոն եղեք հնարավոր վտանգների նկատմամբ – Նայեք ձեր առջևից ընթացող մեքենայից այն կողմ: Հայացքը «նույն կետին հառած» մի պահեք: Մտուզեք ձեր հետևի դիտահայելիները, որպեսզի իմանաք մոտակայքում գտնվող տրանսպորտային միջոցների դիրքը: Արագընթաց բազմագոտի ճանապարհով երթևեկելիս պատրաստ եղեք երթևեկության պայմանների փոփոխությանը: Հետևեք այլ վարորդների ազդանշաններին: Ուշադիր եղեք, որպեսզի նկատեք ուղեմուտքերից կամ փոխհատումներից երթևեկության հոսքին միացող տրանսպորտային միջոցները: Պատրաստ եղեք ճանապարհային պայմանների և երթևեկության հոսքի կտրուկ փոփոխությունների: ԲՎացեք, թե երթևեկության որ գոտիներն են ազատ, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգուվեք դրանցից:

Դիմացի մեքենայի «պոչին մի՛ կպչեք»: Շատ վարորդներ իրենց առջևից ընթացող մեքենաներին հետևում են չափազանց մոտ («պոչից կպած») և չեն կարողանում տեսնել բավարար չափով հեռու, ինչը պարտադիր է, քանի որ առջևի մեքենան արդեն փակում է նրանց տեսադաշտը:

Եթե ինչ-որ մեքենա ձեր դիմացից շատ մոտ ընթանալով միախառնվում է երթևեկության հոսքին, ոտքը հեռացրեք արագարարի ոտնակից: Դա տարածություն կբացի ձեր և առջևի մեքենայի միջև, և դուք ստիպված չեք լինի կտրուկ արգելակել կամ փոխել երթևեկության գոտին: Նման պատահարից խուսափելու համար կիրառեք «3 վայրկյանի կանոնը» երբ ձեր դիմացից ընթացող մեքենան անցնում է որևէ կետի, օրինակ՝ ճանապարհային նշանի մոտով, հաշվեք «հազար մեկ, հազար երկու, հազար երեք»: Դա տևում է մոտավորապես 3 վայրկյան: Եթե այդ կետն անցնեք նախքան հաշվելն ավարտելը, ուրեմն բավարար հեռավորություն չեք պահպանում առջևից ընթացող մեքենայից:

Դուք պետք է նկատի ունենաք ավելի մեծ տարածություն, երբ՝

- ձեր հետևում «պոչից կպած» մեքենա կա: Նման դեպքերում մեծացրեք տարածությունը և մի արգելակեք հանկարծակի: Աստիճանաբար դանդաղեցրեք մեքենայի ընթացքը կամ անցեք այլ գոտի՝ «պոչից կպած» մեքենայի հետ բախումը կանխելու համար.
- մեքենան վարում էք սայթաքուն ճանապարհներով.
- ընթանում եք մոտոցիկլավարների կամ հեծանվորդների հետևից խոնավ կամ սառցապատ ճանապարհով, ճանապարհի մետաղական ծածկույթի վրայով (օրինակ՝ կամրջի ճաղաշարով, ռելսուղիներով և այլն) կամ կոպչապատ ճանապարհով: Այդպիսի մակերևույթներով երթևեկելիս մոտոցիկլավարները կամ հեծանվորդները կարող են հեշտությամբ վայր ընկնել.
- ձեր հետևից ընթացող մեքենայի վարորդը ցանկանում է վազանց կատարել: Տարածություն թողեք ձեր մեքենայի դիմաց, որպեսզի վազանց կատարելուց հետո այդ վարորդը կարողանա վերադառնալ նույն գոտին և ընթանալ ձեր առջևով.
- կցորդ էք քարշակում կամ ծանր բեռ էք տանում: Հավելյալ քաշը դժվարացնում է մեքենան կանգնեցնելը.
- ընթանում եք մեծ տրանսպորտային միջոցների հետևից, որոնք փակում են ձեր դիմացի տեսադաշտը: Տարածությունը մեծացնելով՝ դուք կկարողանաք տեսնել մեքենայի շրջակայքը.
- երկաթուղային գծանցը հատելիս տեսնում եք ավտոբուս, դայրոցական ավտոբուս կամ հատուկ ցուցանակով մեքենա: Այդ տրանսպորտային միջոցները պետք է կանգ առնեն երկաթուղային գծանցներում.
- միանում եք արագընթաց բազմագոտի ճանապարհով ընթացող երթևեկության հոսքին:

Իմացեք, թե ինչ է կատարվում ձեր կողքերում

Ամեն անգամ այնպիսի վայր հասնելիս, որտեղ մարդիկ կարող են հատել ձեր ճանապարհը կամ հայտնվել ձեր դիմաց, կամ որտեղ երթևեկության գոտին հանդիպում է մեկ այլ գոտու, դուք պետք է նայեք ձեր մեքենայի աջ և ձախ կողմերը՝ համոզվելու համար, որ ոչ ոք չի մոտենում: Փոխհատուցներում, հետիոտնային անցումներում և երկաթուղային գծանցների վրա միշտ նայեք ձեր երկու կողմերը:

Փոխհատուցներում՝

- նայեք և՛ մեկ, և՛ մյուս ուղղությամբ, եթե անգամ հատող փողոցի վրա լուսացույցի կարմիր լույս է վառվում կամ կանգ առնելու նշան կա.
 - նախ նայեք դեպի ձախ, քանի որ ձախից մոտեցող տրանսպորտային միջոցները ձեզ ավելի մոտ են գտնվում, քան աջից մոտեցողները,
 - հետո նայեք աջ,
 - հետո մեկ անգամ ևս նայեք ձախ. հնարավոր է, որ որևէ հետիոտնի, հեծանվորդի կամ տրանսպորտային միջոցի նկատած չլինեք առաջին անգամ.
- մի ապավինեք լուսացույցի լույսերին: Որոշ վարորդներ անտեսում են լուսացույցի լույսերը: Նախքան խաչմերուկ մուտք գործելը նայեք ձախ, աջ և առաջ՝ մոտեցող մեքենաները տեսնելու համար:

Մեքենայի յուրաքանչյուր կողքից բավականաչափ տարածություն պահպանելու համար հետևեք ստորև նշված քայլերին.

- մի հայտնվեք մեկ այլ վարորդի մեռյալ գոտում: Նա կարող է չնկատել ձեր մեքենան և երթևեկության գոտին փոխելիս բախվել ձեզ.
- բազմագոտի փողոցում աշխատեք այլ մեքենաների հետ անմիջապես կողք-կողքի չշարժվել՝ անկախ հանդիպակաց ուղղությամբ երթևեկության առկայությունից կամ բացակայությունից: Հնարավոր է, որ մեկ այլ վարորդ, առանց կողքերը նայելու, զբաղեցնի ձեր գոտին կամ փոխի գոտիներն ու բախվի ձեզ: Ընթացեք այդ մեքենայից կա՛մ ավելի առաջ, կա՛մ ավելի հետ.
- հնարավոր և անվտանգ լինելու դեպքում տարածություն թողեք արագընթաց բազմագոտի ճանապարհ մուտք գործող տրանսպորտային միջոցների համար, նույնիսկ եթե ունեք ճանապարհի առավելություն.
- արագընթաց բազմագոտի մայրուղու ելքի մոտ մի շարժվեք այլ տրանսպորտային միջոցների հետ կողք-կողքի: Որևէ վարորդ կարող է հանկարծ որոշել դուրս գալ մայրուղուց կամ ուղղությունը փոխել ետ դեպի մայրուղի.
- տարածություն պահեք ձեր մեքենայի և կայանված տրանսպորտային միջոցների միջև: Հնարավոր է, որ այդ պահին մեքենայի հետևից որևէ մեկը դուրս գա, մեքենայի դուռը բացվի կամ ինչ-որ մեքենա հանկարծ տեղից շարժվի.
- զգույշ եղեք մոտոցիկլավարների կամ հեծանվորդների մոտով անցնելիս: Միշտ մեծ տարածություն թողեք ձեր մեքենայի և մոտոցիկլետների կամ հեծանիֆների միջև:

Իմացեք, թե ինչ է կատարվում ձեր հետևում

Շատ կարևոր է ստուգելը, թե ինչ կա ձեր ետևում, նախքան՝

- կփոխեք գոտիները: Ուսի վրայով հետ նայեք՝ համոզվելու, որ չեք փակում այն գոտիով ընթացող մեքենաների ճանապարհը, ուր ուզում եք մտնել.
- կնվազեցնեք մեքենայի արագությունը: Արագ նայեք հայելիների մեջ: Հայելիների մեջ նայեք նաև այն ժամանակ, երբ պատրաստվում եք շրջադարձ կատարելու դեպի որևէ երկրորդական փողոց կամ մերձատար ուղի կամ մեքենան կայանատեղիում կանգնեցնելու.
- ցած կիջնեք երկար կամ զառիթափ ճանապարհով: Զգուշացեք մեծ տրանսպորտային միջոցներից, քանի որ դրանք կարող են շատ կարճ ժամանակում մեծ արագություն հավաքել.
- հետընթաց կշարժվեք: Հետընթացը միշտ վտանգավոր է, որովհետև դժվար է տեսնելը, թե ինչ կա մեքենայի ետևում: Մեքենան կայանման տեղից հետընթացով դուրս գալիս՝
 - մեքենա նստելուց առաջ ստուգեք, թե ինչ կա մեքենայի առջևում և հետևում.
 - իմացեք, թե որտեղ են գտնվում ձեր երեխաները: Մեքենան տեղից շարժելուց առաջ համոզվեք, որ նրանք մեքենայից հեռու են և ամբողջությամբ ձեր տեսադաշտում.
 - եթե մոտակայքում այլ երեխաներ կան, նախքան հետընթաց տալը համոզվեք, որ տեսնում եք նրանց.
 - մի բավարարվեք միայն հայելիների մեջ հայացք գցելով կամ ձեր կողապակուց դուրս նայելով.
 - հետընթաց տալուց առաջ շրջվեք ու հետ նայեք աջ և ձախ ուսերի վրայով: Ապահովության համար ես մեկ անգամ աջ ու ձախ ուսերի վրայով հետ նայեք հետընթաց տալու ժամանակ.
 - դանդաղ հետ շարժվեք՝ որևէ ընդհարումից խուսափելու համար:

Հաճախակի ստուգեք ձեր հետևից ընթացող մեքենաները, որպեսզի նկատեք «պոչին կպած» որևէ մեքենա (որը կիպ մոտեցել է ձեր մեքենային): Եթե հետևից ընթացող մեքենան ապահով տարածություն չի պահպանում, զգուշ եղեք: Նախքան կանգ առնելը աստիճանաբար արգելակեք մեքենան: Մի քանի անգամ թեթև սեղմեք ու բաց թողեք արգելակները՝ կիպ ընթացող մեքենային զգուշացնելով, որ դանդաղեցնում եք մեքենայի ընթացքը: Հնարավորինս շուտ ազատվեք «պոչից»: Փոխեք երթևեկության գոտիները և նրան թույլ տվեք վազանց կատարել, կամ դանդաղեցրեք մեքենայի ընթացքը այնպես, որ ձեր և առջևից ընթացող մեքենայի միջև ստեղծվի բավարար տարածություն: Եթե դա չօգնի, շարժվեք դեպի կողմակն ու կանգ առեք, երբ անվտանգ կլինի՝ նրան թույլ տալով անցնել:

ՈՐՔԱՆՆ ԸՃՇԳՐԻՏ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՆԳ ԱՌՆԵԼ:

Եթե ձեր ճանապարհին որևէ արգելք է հայտնվում, դուք պետք է ժամանակին նկատեք այն, որպեսզի կանգ առնեք: Եթե ձեր դողերն ու արգելակման համակարգը լավ վիճակում են, իսկ ճանապարհի ծածկը չոր է, ապա՝

- ժամում 55 մղոն (≈ 88,5 կիլոմետր) արագությամբ ընթանալու դեպքում մոտ 400 ֆուտ (120 մետր) տարածություն է հարկավոր վտանգը նկատելու և մեքենան լրիվ կանգնեցնելու համար.
- ժամում 35 մղոն (≈ 88,5 կիլոմետր) արագությամբ ընթանալու դեպքում մոտ 210 ֆուտ (64 մետր) տարածություն է հարկավոր վտանգը նկատելու և մեքենան լրիվ կանգնեցնելու համար.

Ձեր շարժման արագությունը հարմարեցրեք եղանակի և ճանապարհի պայմաններին (տե՛ս «Երթևեկության արագության մասին հիմնական օրենքը» «Արագության սահմանափակումներ» բաժնում, էջ 37): Միացրեք լապտերները ցերեկային ժամերին, եթե դժվար է ճանապարհը տեսնելը, կամ տեսանելիությունը 1000 ֆուտից (300 մետրից) ցածր է:

ԵՐԹԵԿՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

ԳՏԵՐԻ ԳՈՒՅՆԵՐԸ

Հոծ դեղին գծերը նշում են երկկողմանի երթևեկությամբ ճանապարհի առանցքը:


Ընդհատվող դեղին գծերը ցույց են տալիս, որ կարելի է վազանց կատարել, եթե ընդհատվող գիծը ձեր շարժման գոտուն կից է:

Երկու հոծ դեղին գծերը ցույց են տալիս, որ վազանցն արգելվում է: Երբեք մի շարժվեք այս գծերից ձախ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝


- ընթանում եք ծառայողական մեքենաների/ ուղևորատար տրանսպորտային միջոցների (HOV) գոտիով, որը հատուկ մուտք ունի ձախ կողմում.
- շինարարական կամ այլ տեսակի նշանների միջոցով ցուցում եք ստանում շարժվելու ճանապարհի մյուս կողմով, քանի որ ձեր կողմը փակված կամ արգելված է.
- ձախ շրջադարձ եք կատարում մեկ զույգ զուգահեռ կրկնակի դեղին գծերի վրայով, որպեսզի մուտք գործեք մերձատար ուղի կամ մասնավոր ճանապարհ կամ դուրս գաք մերձատար ուղուց կամ մասնավոր ճանապարհից կամ կատարեք հետադարձ:

Միմյանցից 2 կամ ավելի ֆուտ հեռավորության վրա գտնվող և երկու շարքով ձգվող կրկնակի հոծ դեղին գծերը համարվում են արգելապատ: Մի շարժվեք այս արգելքի վրայով, մի հատեք այն, այդտեղից ձախ շրջադարձ կամ հետադարձ մի կատարեք, բացի այն տեղերից, որտեղ հատուկ բացվածքներ են արված (տե՛ս տրամագիծը):

Երթևեկության գոտու գծանշանն օրինակներ.



- (1) Հոծ դեղին գիծ. վազանցն արգելվում է, եթե հոծ դեղին գիծը ձեր կողմում է:
- (2) Կրկնակի հոծ գծեր. ԱՐԳԵԼ ՎՈՒՄ է վազանցել:
- (3) Ընդհատվող դեղին գիծ. կարելի է վազանցել, եթե այդ մասերն անվտանգ լինի:



Հոծ սպիտակ գծերը ցույց են տալիս միևնույն ուղղությամբ ընթացող երթևեկության գոտիները, օրինակ՝ միակողմ փողոցները:


Ընդհատվող սպիտակ գծերն առանձնացնում են երթևեկության գոտիները նույն ուղղությամբ երկու կամ ավելի գոտիներ ունեցող ճանապարհների վրա:

Կրկնակի սպիտակ գծերը երկու հոծ սպիտակ գծեր են, որոնք նշում են երթևեկության գոտու արգելապատը սովորական օգտագործման և նախընտրելի օգտագործման գոտու, օրինակ՝ ծառայողական կամ ուղևորատար փոխադրամիջոցների (HOV) գոտու միջև: Այդ գոտիներում գտնվելիս երբեք մի վերադասավորվեք. սպասեք, մինչև մեկ ընդհատվող սպիտակ գիծ հայտնվի: Հնարավոր է, որ այդ զուգահեռ գծերը տեսնեք նաև արագընթաց բազմագոտի ճանապարհի վրա կամ մոտ՝ ուղեմուտքերում և իջատեղերում:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Երթևեկության գոտիների մասին խոսելիս հաճախ համարակալում է օգտագործվում: Չախակողմյան կամ «արագ» գոտին կոչվում է «1-ին գոտի»: «1-ին գոտուց» աջ ընկած գոտիները կոչվում են «2-րդ գոտի», «3-րդ գոտի» և այլն: Շարժվեք այն գոտիով, որտեղ երթևեկության հոսքն ամենահամաչափն է: Եթե կարող եք երեք գոտուց ընտրել մեկը, ապա ընտրեք մեջտեղի գոտին, որն ունի ամենահամաչափ երթևեկության հոսքը: Ավելի արագ ընթանալու, վազանցելու կամ ձախ շրջադարձ կատարելու համար օգտվեք ձախ գոտուց: Եթե ցանկանում եք մեքենան դանդաղ վարել, մուտք գործել աջակողմյան երթևեկություն կամ դուրս գալ այդտեղից, աջ շրջադարձ կատարել, կայանել կամ դուրս գալ ճանապարհից, ապա օգտվեք աջ գոտուց: Եթե ձեր ուղղությամբ ընդամենը երկու գոտի կա, ապա շարժվեք աջ գոտիով, որտեղ երթևեկության հոսքն ամենահամաչափն է: Գոտիները հաճախակի մի փոխվեք: Հնարավորինս երկար մնացեք մինևսույն գոտում: Եթե արդեն խաչմերուկ եք մտել, շարունակեք առաջ շարժվել: Եթե սկսում եք շրջադարձ կատարել, շարունակեք և ավարտեք շրջադարձը: Վերջին պահին կատարված փոփոխությունը կարող է ընդհարուժների պատճառ դառնալ: Եթե չեք հասցրել շրջադարձ կատարել, շարունակեք ճանապարհն այնքան, մինչև կարողանաք անվտանգ և օրինական շրջադարձ կատարել:

Համարակալված երթևեկության գոտիների օրինակ.



ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՓՈԽԵԼԸ

Գոտիները փոխել նշանակում է՝

- մի երթևեկության գոտուց մյուսն անցնել.
- ուղեմուտքից մտնել արագընթաց բազմագոտի ճանապարհ.
- ճանապարհի եզրից կամ կողմակից մտնել երթևեկության հոսքի մեջ:

Նախքան գոտին փոխելը ազդանշան տվեք, նայեք բոլոր հայելիների մեջ և՝

- ստուգեք երթևեկության առկայությունն ու վիճակը ձեր ետևից ու կողքից.
- ուսի վրայով նայեք այն ուղղությամբ, ուր մտադիր եք տեղաշարժվել՝ համոզվելու համար, որ ձեր ուզած երթևեկության գոտին ազատ է.
- ստուգեք տրանսպորտային միջոցների, մոտոցիկլետների և հեծանիժների առկայությունը ձեր «մեռյալ գոտում».
- համոզվեք, որ հաջորդ գոտում ձեր մեքենայի համար բավարար տարածությունս կա:

ՎԱՋԱՆՑԻ ԳՈՏԻՆԵՐ

Նախքան վազանց կատարելը նայեք ձեր դիմաց՝ ճանապարհի ու երթևեկության վիճակը գնահատելու համար, որը կարող է այլ տրանսպորտային միջոցներին ստիպել մուտք գործել ձեր գոտին: Վազանց կատարելու համար երբեք դուրս մի եկեք ճանապարհի ասֆալտապատ կամ բանուկ մասից և դուրս մի եկեք կողմակի վրա: Բանուկ մասի եզրը կարող է սպիտակ գծանշում ունենալ ճանապարհի մակերևույթի վրա: Խաչմերուկներում, երկաթուղային գծանցներում կամ առևտրի կենտրոնների մուտքերի մոտ վազանց կատարելը վտանգավոր է:

Վազանց կատարեք ձախից: Աջից վազանցը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ՝

- բաց ավտոմայրուղու վրա պարզորոշ կերպով նշված են ձեր ուղղությանը համընթաց երկու կամ ավելի երթևեկության գոտիներ.
- ձեր դիմացի վարորդը ձախ շրջադարձ է կատարում, և դուք վազանց կատարելու համար երթևեկելի մասից դուրս չեք գալիս: Երբեք ձախից վազանց մի կատարեք, եթե դիմացի մեքենան ձախ շրջադարձի ազդանշան է տալիս.


ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՍ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (HOV) ԳՈՏԻՆԵՐ

Ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտին հատուկ գոտի է, որը նախատեսված է միայն համատեղ շահագործվող մեքենաների, ավտոբուսների, մոտոցիկլետների կամ արտանետումների ցածր մակարդակ նշող պատճենատիպով տրանսպորտային միջոցների համար: Ծառայողական փոխադրամիջոցների/ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտուց կամ ուղեմուտքից կարելի է օգտվել միայն այն դեպքում, երբ ձեր մեքենան տեղափոխում է այդ գոտու համար սահմանված նվազագույն թվով ուղևորներ, կամ եթե դուք վարում եք արտանետումների ցածր մակարդակ ունեցող կամ բանած գազեր չարտանետող տրանսպորտային միջոց, որի վրա պատճենատիպով է DMV-ի կողմից տրված հատուկ նշան: Եթե շահագործում եք արտանետումների ցածր մակարդակ ունեցող, բանած գազեր չարտանետող և (կամ) կոմբինացված մեքենա, կարող եք ազատվել ուղևորատար վճարովի գոտիներից օգտվելու համար գանձվող բոլոր վճարներին: Մոտոցիկլետավարները կարող են օգտվել ծառայողական փոխադրամիջոցների/ուղևորատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված գոտուց, եթե այլ բան նշված չէ ձանապարհին: Ուղեմուտքի մոտ կամ արագընթաց բազմագոտի ձանապարհի երկայնքով տեղադրված ցուցանակների վրա նշված է լինում յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում գտնվող մարդկանց նվազագույն թիվը, որն անհրաժեշտ է ծառայողական փոխադրամիջոցների/ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտիով (գոտիներով) երթևեկելու համար: Դրանք թվարկում են նաև շաբաթվա այն օրերը և ժամերը, երբ գործում է ծառայողական փոխադրամիջոցների/ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտիներով երթևեկելու պահանջը: Այս գոտում ձանապարհի պատվածքի վրա ներկված են լինում շեղանկյուն նշան և «Ծառայողական փոխադրամիջոցների գոտի» (Carpool Lane) բառերը: Այս գոտիները նաև կոչվում են նաև «ուղևորատար տրանսպորտային միջոցների» գոտիներ: Ծառայողական փոխադրամիջոցների/ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտի մտնելու կամ դրանից դուրս գալու համար երբեք մի հաստեք զուգահեռ կրկնակի հոծ գծերը: Դա արեք միայն հատուկ մուտքի և ելքի համար նախատեսված վայրերում:



ՉԱՅ ԵՐՋԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Չախ շրջադարձի կենտրոնական գոտին գտնվում է երկկողմանի փողոցի մեջտեղում և երկու կողմից գծանշված է երկուական գծերով: Ներքին գիծն ընդհատվող է, իսկ արտաքինը հոծ: Եթե փողոցն ունի կենտրոնական շրջադարձի գոտի, դուք պետք է այն օգտագործեք, որպեսզի պատրաստվեք կամ կատարեք ձախ շրջադարձ, կամ որպեսզի պատրաստվեք կամ կատարեք թույլատրված հետադարձ (CVC §21460.5 (c)): Չախ շրջադարձի կենտրոնական գոտում կարելի է շարժվել ընդամենը 200 ֆուտ (≈ 60 մետր): Մա սովորական երթևեկության գոտի կամ վազանցի գոտի չէ: Այս գոտուց ձախ շրջադարձ կատարելու համար ազդանշան տվեք, հեն նայեք և մեքենան վարեք աբսոլյուտ ձախ շրջադարձի կենտրոնական գոտու ներքին մասով: Կանգ մի առեք, որպեսզի չփակվեք ձեր հետևից ընթացող մեքենաների երթևեկությունը: Համոզվեք, որ երկու ուղղությամբ էլ գոտին ազատ է, և շրջադարձ կատարեք միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է: Մտուզեք արդյոք կան դեպի ձեզ շարժվող տրանսպորտային միջոցներ, որոնք պատրաստվում են ձախ շրջադարձ կատարել: Երկրորդական փողոցից կամ մերձատար ուղուց ձախ շրջադարձ կատարելիս ազդանշան տվեք և սպասեք, մինչև շրջադարձն անվտանգ լինի: Այնուհետև կարելի է մտնել ձախ շրջադարձի կենտրոնական գոտի: Երթևեկության հոսքի մեջ մտեք միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:



ՇՐՋԱՆՑՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԳՈՏԻՆԵՐ

Երկու երթևեկության գոտի ունեցող ճանապարհների վրա երբեմն գծանշված են լինում հատուկ շրջանցման տարածքներ: Ձեր հետևից եկող մեքենաներին վազանցի հնարավորություն տալու համար շարժվեք դեպի այս տարածքները: Որոշ երկգոտի ճանապարհներ ունեն վազանցի գոտիներ: Եթե դուք դանդաղ շարժվում եք երկգոտի ավտոմայրուղով կամ ճանապարհով, որտեղ վազանց կատարելը վտանգավոր է, և 5 կամ ավելի շատ մեքենաներ են ձեզ հետևում, ապա պետք է մտնեք շրջանցման տարածքները կամ գոտիները, որպեսզի այդ մեքենաները կարողանան ձեզնից առաջ անցնել:




ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ ՎԵՐՋԸ ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ԳԾԱՆՇՈՒՄՆԵՐ

Արագընթաց բազմագոտի ճանապարհների, ինչպես նաև որոշ քաղաքային փողոցների երթևեկության գոտիները, որոնք ավարտվում են, սովորաբար գծանշված են լինում հաստ ընդհատվող գծով: Եթե շարժվում եք այդպիսի ընդհատվող գծերով նշված գոտիով, պատրաստ եղեք ավտոմայրուղուց դուրս գալու կամ այն բանին, որ ձեր զբաղեցրած գոտին շուտով վերջանալու է: Հետևեք ճանապարհային նշանին, որը հրահանգում է ավտոմայրուղուց դուրս գալ կամ փոխել գոտին և այլն:



ՃԱՆԱՊԱՐՀԸ ԶԻՋԵԼՈՒ ԳԾԵՐ



Ճանապարհը զիջելու գծերը, որոնք նաև կոչվում են «շնամկան աստաճներ», կազմված են երթևեկության գոտու լայնքով գծանշված հոծ սպիտակ եռանկյուններից, որոնք ուղղված են դեպի մոտեցող տրանսպորտային միջոցները: Այս գիծը ցույց է տալիս այն տեղը, որտեղ տրանսպորտային միջոցը պետք է զիջի կամ կանգ առնի:

ՀԵԾԱՆՎՈՒՂԻՆԵՐ

Հեծանվուղին հեծանվորդների համար նախատեսված երթևեկության գոտի է, որը որոշվում է պատվածքի գծանշումներով և նշաններով: Հեծանվուղիները երբեմն ներկվում են վառ կանաչ գույնով՝ տեսանելիությունը մեծացնելու նպատակով: Գոյություն ունեն հեծանվուղիների տարբեր դասեր ու տեսակներ, այդ թվում՝

- Հեծանվային արահետ
 - Անցնում է տրանսպորտային միջոցների երթևեկությանը հարակից փողոցների երկայնքով, սովորաբար որոշվում է մեկ հոծ սպիտակ գծով, որը խաչմերուկի մոտ վերածվում է ընդհատուն գծի:
- Բուֆերային գոտով բաժանված հեծանվային արահետ
 - Ապահովում է ավելի մեծ տարանջատում տրանսպորտային միջոցների հարակից երթևեկությունից, ինչպես նաև փողոցներում սահմանված ավտոկայանատեղիներից՝ օգտագործելով երկշեղ կամ անկյունագծային գծանշումներ:



- **Հեծանվային երթուղի**
 - Հեծանվորդների համար հատկացված նախընտրելի երթուղի այն փողոցներում, որով երթևեկում են նաև տրանսպորտային միջոցները: Որոշվում է հեծանվային երթուղու նշանների տեղադրմամբ և (կամ) համատեղ օգտագործվող երթևեկելի մասի գծանշումներով:
- **Հեծանվային բուլվար**
 - Հեծանվորդների համար հատկացված նախընտրելի երթուղի այն փողոցներում, որը նախատեսված է հեծանիժների երթևեկության առաջնահերթությամբ:
- **Տարանջատված հեծանվային ճանապարհ**
 - Նաև կոչվում է առանձնացված հեծանվուղի կամ պաշտպանված հեծանվային գոտի բացառապես հեծանվորդների օգտագործման համար և ֆիզիկապես տարանջատված է տրանսպորտային միջոցների երթևեկությունից: Տարանջատումը կարող է ներառել ճկուն սյուներ, ճանապարհների մակարդակների տարանջատում, ոչ ճկուն պաշտպանակներ կամ փողոցներում սահմանված կայանատեղիներ:
- **Ընդհանուր երթևեկելի մասի հեծանվային գծանշումներ** («Ուշադրություն՝ ն, հեծանվորդ է» տիպի գծանշումներ)
 - Զգուշացնում է երթևեկող տրանսպորտային միջոցներին, որ հեծանվորդներին թույլատրվում է զբաղեցնել այս երթևեկության գոտին: Պատշաճ կերպով օգտագործվելու դեպքում, այդ գծանշումները նաև օգնում են հեծանվորդներին անվտանգ դիրք պահպանել երթևեկության գոտում:



Արգելվում է մեքենա վարել հեծանվուղիով, եթե մեքենան չէք կայանում (որտեղ թույլատրված է), չէք մտնում երթևեկելի մաս կամ դուրս չէք գալիս այդտեղից, կամ շրջադարձ չէք կատարում (խաչմերուկից 200 ֆուտ (60 մ) հեռավորության սահմաններում): Ծարժիչավոր հեծանիժների վարորդները պետք է զգույշ լինեն, որպեսզի խուսափեն հեծանվորդներից, և հեծանվային գոտիներից օգտվեն ողջամիտ և հեծանվորդների անվտանգությանը չսպառնացող արագությամբ:

ՇՐՋԱԴԱՐՁԵՐ

Ձախ շրջադարձեր – Ձախ շրջադարձ կատարելու համար շարժվեք դեպի կենտրոնական բաժանարար գիծը կամ զբաղեցրեք ձախ շրջադարձի գոտին: Սկսեք ազդանշանել շրջադարձից 100 ֆուտ (30 մետր) առաջ: Հետ նայեք ձախ ուսի վրայով և նվազեցրեք արագությունը: Կանգ առեք սահմանագծին չհասած: Նայեք նախ ձախ, ապա աջ, ապա կրկին ձախ և կատարեք շրջադարձն այն ժամանակ, երբ դա անվտանգ է: Ձախ շրջադարձ կատարելիս չի կարելի ժամանակից շուտ թեքվել և «կտրել» հանդիպակաց ընթացող մեքենաների զբաղեցրած երթևեկության գոտու անկյունը:

Ձախ շրջադարձի օրինակ.





Կարեւոր է. Անիժներն ուղիղ պահեք այնքան ժամանակ, մինչև շրջադարձ կատարելն անվտանգ լինի: Եթե անիժները դեպի ձախ թեքված լինեն, և հետևից ձեզ որևէ մեքենա հարվածի, դուք կարող եք հայտնվել հանդիպակաց երթևեկության մեջ: Կարմիր լույսի տակ ձախ շրջադարձ կարելի է կատարել միայն միակողմանի փողոցից միակողմանի փողոց մտնելիս: Շրջադարձի ազդանշան տվեք և կանգ առեք գծանշված սահմանագծի մոտ, մինչև վառվի լուսացույցի կարմիր լույսը: Եթե սահմանագիծ չկա, կանգ առեք

նախքան հետիոտնային անցում մտնելը: Եթե հետիոտնային անցում չկա, կանգ առեք նախքան խաչմերուկ մտնելը: Կարող եք ձախ շրջադարձ կատարել դեպի ձախակողմյան երթևեկությամբ միակողմանի փողոց, եթե շրջադարձն արգելող նշան չկա: Ճանապարհը զիջեք իրենց կանաչ լույսի տակ երթևեկող հետիոտներին, հեծանվորդներին կամ այլ տրանսպորտային միջոցներին:

Աջ շրջադարձեր – Աջ շրջադարձ կատարելու համար շարժվեք դեպի ճանապարհի աջ եզրը: Հեծանվային արահետի առկայության դեպքում այդ գոտին մտեք շրջադարձից ոչ ավելի, քան 200 ֆուտ (60 մետր) առաջ: Ուշադիր եղեք նկատելու համար այն հետիոտներին, հեծանվորդներին և երկաթուղու մոտոցիկլավարներին, որոնք կարող են հայտնվել ձեր մեքենայի և մայթերի միջև: Սկսեք ազդանշանել շրջադարձից 100 ֆուտ (30 մետր) առաջ: Հետ նայեք աջ ուսի վրայով և նվազեցրեք արագությունը: Կանգ առեք սահմանագծին չհասած: Նայեք աջ ու ձախ և կատարեք շրջադարձն այն ժամանակ, երբ դա անվտանգ է: Մի կատարեք մեծ շառավղով շրջադարձ մտնելով մեկ այլ գոտի: Շրջադարձն ավարտեք աջ գոտում:

Աջ շրջադարձի օրինակ.




200 ֆուտը (60 մետր) ամերիկյան ֆուտբոլի դաշտի երկարության կեսից ավելին է:

Հասարակական ուղևորատար ավտոբուսների համար առանձնացված երթևեկության գոտիներ – Չի թույլատրվում տրանսպորտային միջոց վարել, կանգնեցնել, կայանել կամ թողնել բացառապես հասարակական ուղևորատար ավտոբուսների օգտագործման համար նախատեսված ճանապարհի տարածքում, բացի այն դեպքերից, երբ տրանսպորտային միջոցը պետք է հատի երթևեկության գոտին, որպեսզի շրջադարձ կատարի: Կտեղադրվեն նշաններ ցույց տալու, որ երթևեկության գոտիները «միայն ավտոբուսների» համար են:

Աջ շրջադարձ ճանապարհային լուսացույցի կարմիր լույսի տակ – Շրջադարձի ազդանշան տվեք և կանգ առեք գծանշված սահմանագծի մոտ, մինչև վառվի լուսացույցի կարմիր լույսը: Եթե սահմանագիծ չկա, կանգ առեք նախքան հետիոտնային անցում մտնելը: Եթե հետիոտնային անցում չկա, կանգ առեք նախքան խաչմերուկ մտնելը: Կարող եք աջ շրջադարձ կատարել, եթե շրջադարձն արգելող նշան չկա: Ճանապարհը զիջեք իրենց կանաչ լույսի տակ երթևեկող հետիոտներին, մոտոցիկլավարներին, հեծանվորդներին կամ այլ տրանսպորտային միջոցներին:

Աջ շրջադարձ դեպի շրջադարձի համար նախատեսված գոտիով ճանապարհ – Դուք առանց կանգ առնելու աջ շրջադարձի իրավունք ունեք, եթե այն ճանապարհի, ուր շրջադարձ եք կատարում, ունի տրանսպորտային հոսքերի միախառնում չընդունող երթևեկության գոտի, որը նախատեսված է աջ շրջադարձ կատարող տրանսպորտային միջոցների համար, և ազատ աջ շրջադարձն արգելող նշան չկա: Դուք իրավունք ունեք առանց կանգ առնելու առաջ շարժվելու, նույնիսկ եթե լուսացույցի կարմիր լույս կա խաչմերուկով ուղիղ ընթացող տրանսպորտային միջոցների համար նախատեսված կղզյակում: Եթե աջ շրջադարձի գոտու աջ մայթեզրին կա ճանապարհային լուսացույց կամ նշան, ապա պետք է հետևեք այդ լուսացույցի կամ նշանի ցուցումներին: Հետիոտնային անցման սահմաններում միշտ զիջեք հետիոտներին: Շրջադարձն արգելված է կարմիր սլաքի դեպքում – Կարմիր սլաքի դեպքում արգելված է աջ կամ ձախ շրջադարձը:




Աջ եւ ձախ շրջադարձերի օրինակներ

Տրամագրերում մեքենաների վրա նշված համարները համապատասխանում են այս էջերում բերված նախադասությունների համարակալմանը:


Միշտ օգտագործեք շրջադարձի ազդանշանները:

1. Ձախ շրջադարձ երկկողմանի երթևեկությամբ փողոցից: Շրջադարձը սկսեք ձախ գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին: Շրջադարձն ավարտեք հատող փողոցի մեկ կամ մյուս գոտու (ցույց է տրված սլաքներով), եթե դա անվտանգ է: Եթե ձախ շրջադարձի կենտրոնական գոտի կա, շրջադարձը կատարեք այդ գոտուց: Ձախ շրջադարձը կարելի է կատարել նաև մյուս գոտուց, եթե դա թույլատրող նշաններ կամ սլաքներ կան:



2. Աջ շրջադարձ: Շրջադարձը սկսեք և ավարտեք ճանապարհի աջ եզրին ամենամոտ գոտում: Մի կատարեք մեծ շառավղով շրջադարձ՝ մտնելով մեկ այլ երթևեկության գոտի: Ուշադիր եղեք՝ նկատելու համար այն հետիոտներին, մոտոցիկլետավարներին և հեծանվորդներին, որոնք գտնվում են ձեր մեքենայի և մայթեզրի միջև: Երբեմն ճանապարհային նշանները կամ պատվածքի գծանշումները թույլ են տալիս աջ շրջադարձ կատարել մեկ այլ գոտուց, ինչպես ցույց է տրված նկարում:


3. Ձախ շրջադարձ երկկողմանի երթևեկությամբ փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք այն գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին: Շրջադարձն ավարտեք ցանկացած երթևեկության գոտում, որը բաց է և ապահով, ինչպես ցույց է տրված սլաքներով:




4. Ձախ շրջադարձ միակողմանի երթևեկությամբ փողոցից դեպի երկկողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ամենաձախ գոտուց: Շրջադարձն ավարտեք մեկ կամ մյուս գոտում, որը բաց է և ապահով, ինչպես ցույց է տրված սլաքներով:

5. Ձախ շրջադարձ միակողմանի երթևեկության փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ամենաձախ գոտուց: Ուշադիր եղեք՝ նկատելու համար այն հետիոտներին, մոտոցիկլավարներին և հեծանվորդներին, որոնք գտնվում են ձեր մեքենայի և մայթեզրի միջև, քանի որ նրանք իրավունք ունեն ձախ շրջադարձ կատարելու համար օգտվելու ձախ շրջադարձի գոտուց: Շրջադարձն ավարտեք ցանկացած երթևեկության գոտում, որը բաց է և ապահով, ինչպես ցույց է տրված սլաքներով:

6. Աջ շրջադարձ միակողմանի երթևեկության փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ամենաաջ գոտուց: Անվտանգ լինելու դեպքում կարելի է շրջադարձն ավարտել ցանկացած գոտում: Երբեմն ճանապարհային նշանները կամ պատվածքի գծանշումները թույլ են տալիս աջ շրջադարձ կատարել մեկ այլ գոտուց, ինչպես ցույց է տրված նկարում:



7. Շրջադարձ T-աձև ճանապարհամասում՝ միակողմանի փողոցից դեպի երկկողմանի փողոց: Ուղիղ ընթացող տրանսպորտային միջոցներն առավելություն ունեն: Կարելի է և՛ աջ, և՛ ձախ շրջադարձ կատարել կենտրոնական գոտուց: Ուշադիր եղեք՝ ձեր շրջադարձի շրջագծի մեջ հայտնվող մեքենաները, մոտոցիկլետները և հեծանիվները նկատելու համար:



ԹՈՒՅՆԱՏՐՎԱԾ ՇԵՏՈՒՄՆԵՐ

Հետադարձը ետ շրջադարձն է փողոցում՝ ձեր եկած ճանապարհը վերադառնալու համար: Հետադարձ կատարելու համար ազդանշան տվեք և զբաղեցրեք ամենաձախ գոտին կամ ձախ շրջադարձի կենտրոնական գոտին: Թույլատրված հետադարձ կարելի է կատարել՝

- հատելով կրկնակի դեղին գիծը, երբ դա անվտանգ և թույլատրված է.
- բնակելի թաղամասում՝
 - եթե 200 ֆուտի (60 մետրի) սահմաններում ձեզ մոտեցող տրանսպորտային միջոցներ չկան.
 - երբ ճանապարհային նշանը, լուսացույցի լույսը կամ լուսացույցը ձեզ պաշտպանում է մոտեցող տրանսպորտային միջոցներից.
- խաչմերուկում լուսացույցի կանաչ լույսի կամ կանաչ սլաքի տակ, եթե ճանապարհի վրա չկա «Հետադարձն արգելված է» (No U-turn) նշան.
- բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհի վրա, միայն այն դեպքում, երբ կենտրոնական բաժանարար գծի վրա գոյություն ունի բացվածք:

ԱՐԳԵԼՎԱԾ շԵՏԱԴԱՐՁԵՐ

Երբեք հետադարձ մի կատարեք՝


- երկաթուղային գծանցների վրա կամ դրանց մոտակայքում.
- բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհի վրա՝ հաստելով բաժանարար գիծը, ճամփեզրը, հողի շերտը կամ երկու զուգահեռ կրկնակի գծերը.
- երբ դուք յուրաքանչյուր ուղղությամբ հստակորեն չեք տեսնում առնվազն 200 ֆուտ (60 մետր) հեռավորության վրա՝ ճանապարհի կորության, բլրի, անձրևի, մառախուղի կամ որևէ այլ պատճառով.
- այնտեղ, որտեղ ճանապարհի վրա տեղադրված է «Հետադարձն արգելված է» (No U-turn) նշանը.
- երբ այլ տրանսպորտային միջոցներ կարող են բխվել ձեզ.
- գտնվում եք միակողմանի փողոցում:
- հրշեջ կայանի դիմաց: Հետադարձի համար երբեք մի օգտագործեք հրշեջ կայանի մերձատար ուղին.
- գործարար թաղամասերում: Տարածքները, որտեղ կան եկեղեցիներ, բնակարաններ, բազմաբնակարան բնակելի միավորներ և հանրային շինություններ (բացի դպրոցներից), նույնպես համարվում են գործարար թաղամասեր: Հետադարձ կատարեք միայն խաչմերուկներում, եթե որևէ նշան այն չի արգելում, կամ այնտեղ, որտեղ հետադարձերի համար հատուկ բացվածքներ կան:

ԿԱՅԱՆՈՒՄԸ

ԹԵՔ ԴԱՆԱՊԱՐՁԻՆ ԿԱՅԱՆԵԼԸ

Երբ մեքենան կայանում եք՝

- թեք մերձատար ուղու վրա, այնպես թեքեք անիփները, որ մեքենան փողոց դուրս չգա, եթե հանկարծ արգելակները չպահեն.
- գառիվայր ճանապարհի վրա, առջևի անիփները թեքեք դեպի եզրաքարը կամ ճանապարհի եզրը: Քաշեք կայանման արգելակը.
- գառիվեր ճանապարհի վրա, առջևի անիփները շրջեք եզրաքարին հակառակ ուղղությամբ և թույլ տվեք, որ մեքենան մի քանի դյույմ հետ շարժվի: Անիվը պետք է թեթևակի հպվի եզրաքարին: Քաշեք կայանման արգելակը.
- գառիվեր կամ գառիվայր ճանապարհի վրա, որը եզրաքարեր չունի, այնպես թեքեք անիփները, որ մեքենան ճանապարհի կենտրոնից հեռանա, եթե հանկարծ արգելակները չպահեն:



1. Զառիվայր. անիփները շրջեք դեպի եզրաքարը:

2. Զառիվեր. անիփները շրջեք դեպի եզրաքարից հեռացող կողմը:

3. Եզրաքարերի բացակայություն. անիփները շրջեք դեպի ճանապարհի կողմակը:


Միշտ գործի զցեք կայանման արգելակը և փոխանցման տուփը դրեք «կայանում» դիրքում:

ԶՈՒԳԱՀԵՌ ԿԱՅԱՆՈՒՄ

Զուգահեռ կայանումը մեքենավարման հմտություն է, որը թույլ է տալիս կայանել ճանապարհին զուգահեռ՝ այլ կայանված տրանսպորտային միջոցների հետ մի շարքում: Ստորև նկարագրված քայլերը բացատրում են անվտանգ զուգահեռ կայանելու ձևը:


1. Գտեք տեղ: Փնտրեք ձեր մեքենայից առնվազն 3 ֆուտով (≈ 90 սմ) ավելի երկար տարածություն: Երբ տեղ գտնեք, ազդանշանեք կայանելու մտադրության մասին:
2. Մեքենան քշեք այդ տեղի մոտ կամ այն տեղի դիմաց կանգնած տրանսպորտային միջոցի կողքով, ուր մտադիր եք կայանել: Մոտավորապես 2 ֆուտ (≈ 60 սմ) տարածություն թողեք տրանսպորտային միջոցի կամ հաջորդ տեղի միջև և կանգ առեք, հենց որ ձեր հետևի թափարգելը հավասարվի այն տեղի առջևի մասին, որտեղ ուզում եք կայանել: Նայեք հետևի դիտահայելու մեջ և ուսի վրայով հայացք գցեք, որպեսզի ստուգեք մոտեցող տրանսպորտային միջոցների առկայությունը: Ոտքը պահեք արգելակի վրա և մեքենան կանգնեցրեք հետընթաց դիրքում: Մի անջատեք ազդանշանը:
3. Ոտքը հանեք արգելակման ոտնակից: Նախքան հետընթաց տալը ստուգեք հայելիները և նայեք ուսի վրայով՝ որևէ վտանգ նկատելու համար: Սկսեք հետընթաց կատարել մոտավորապես 45 աստիճան անկյան տակ:

Քայլ 1
Մեքենան բերեք և կանգնեցրեք կայանատեղի դիմաց կանգնած մեքենայի կողքին:




Քայլ 2

S-աձև հետընթաց կատարեք դեպի կայանատեղը:



Քայլ 3

Հենց որ մեքենան կանգնի եզրաքարին զուգահեռ, քշեք առաջ, որպեսզի մեքենան կանգնեցնեք կայանատեղի մեջտեղում:



4. Ուղղեր մեքենան: Սկսեք ղեկանիվը պտտել և հեռանալ եզրաքարից, երբ հետևի անիվը գտնվում է եզրաքարից 18 դյույմ (46 սմ) հեռավորության վրա: Ուղղվելու համար գուցե հարկ լինի առաջ ու հետ քշել: Հիմա ձեր մեքենան պիտի լինի եզրաքարին զուգահեռ և դրանից ոչ ավելի, քան 18 դյույմ (46 սմ) հեռու:


ՆԵՐԿՎԱԾ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՄՈՏ ԿԱՅԱՆՆԵԼԸ

Տարբեր գույներով ներկված եզրաքարերը կայանման հետևյալ հատուկ կանոններն են թելադրում.

Մպիտակ – Կանգնեք միայն այնքան, որքան անհրաժեշտ է ուղևոր վերցնելու կամ իջեցնելու կամ փոստարկղը նամակ գցելու համար:

Կանաչ – Կայանեք սահմանափակ ժամանակով: Ժամանակի սահմանափակումները նշված են լինում կանաչ գոտու կողքին տեղադրված նշանի կամ ներկված եզրաքարի վրա:

Դեղին – Մի կանգնեք ավելի երկար, քան նշված է՝ ուղևորներ կամ բեռ վերցնելու կամ իջեցնելու համար: Սովորաբար պահանջվում է, որ ոչ առևտրային փոխադրամիջոցների վարորդները մասն մեքենայում:



Կարմիր – Կանգառը կամ կայանումն արգելված է (ավտոբուսները կարող են կանգնել ավտոբուսների համար գծանշված կարմիր գոտում):

Կապույտ – Կայանումը թույլատրվում է միայն հաշմանդամների կամ նրանց վարորդների համար, որոնց մեքենայի վրա կա հաշմանդամ անձանց կամ հաշմանդամ վետերանների տրվող ցուցանակ կամ հատուկ համարանիշ: Հաշմանդամի կայանման համար նախատեսված գոտուն կից ստվերագծված (շեղ գծերով) տարածքը կայանումն արգելող տարածք է: Հաշմանդամի կայանման ցուցանակների կամ համարանիշների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ դիմում ներկայացնելու համար այցելեք www.dmv.ca.gov կամ զանգահարեք 1-800-777-0133 հեռախոսահամարով:



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յուցանակը չարաշահողները կկորցնեն իրենց կայանման հատուկ արտոնությունները: Բացի այդ, նման չարաշահումը համարվում է զանցանք և պատժվում է մինչև \$1000 տուգանքով, մինչև 6 ամիս բանտարկությամբ՝ շրջանային բանտում, կամ՝ երկու պատժամիջոցները միասին:

Ստվերագծված (շեղ գծերով) տարածքի օրինակ.



Հաշմանդամի ցուցանակի կամ համարանիշի չարաշահման օրինակներ են՝

- ցուցանակի կամ համարանիշի կորստի կամ գողության մասին հայտարարություն տալուց և այն գտնելուց հետո ցուցանակը կամ համարանիշը օգտագործելը՝ առանց գտնելու մասին հայտնելու.
- ցուցանակը կամ համարանիշը ընկերների կամ ընտանիքի անդամներին փոխ տալը (նրանց հաշմանդամ լինել-չլինելու հանգամանքից անկախ).
- ցուցանակների փոխանակումը ընկերների կամ ընտանիքի անդամների հետ.

- ցուցանակը կամ համարանիշը օգտագործելը, երբ անձը, որին այն տրվել է, ձեռք է անցնում (հաշմանդամ երեխան, ընտանիքի անդամը, գործատուն և այլն)։
- մահացած մարդու ցուցանակի կամ համարանիշի օգտագործումը։
ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, Դուք պետք է մահացած հաշմանդամ անձի ցուցանակը և համարանիշը վերադարձնեք DMV-ի տեղական գրասենյակ կամ ուղարկեք փոստով՝
DMV
PO Box 942869, MS D238
Sacramento, CA 94269-0001

ԱՐԳԵԼՎԱԾ ԿԱՅԱՆՈՒՄ

Երբեք մի կայանեք կամ թողեք ձեր մեքենան՝

- այնտեղ, որտեղ տեղադրված է «Կայանումն արգելվում է» (No Parking) նշանը։
- գծանշված կամ չգծանշված հետիոտնային անցումների, մայթի վրա՝ մասամբ մայթը փակելով, կամ մերձատար ուղիների դիմաց։
- հաշմանդամների համար նախատեսված մայթի թեք հարթակից 3 ֆուտից (91,5 սանտիմետր) պակաս հեռավորության վրա կամ այն մայթեզրի դիմաց կամ վրա, որտեղից անվասայլակի մուտք կա դեպի մայթ։
- հաշմանդամների համար նախատեսված կայանման տարածքում, եթե դուք հաշմանդամ չեք և ցուցանակ կամ հաշմանդամի համարանիշներ չունեք։
- հաշմանդամների համար նախատեսված կայանման տարածքի հարևանությամբ, եթե այն ստվերագծված է (շեղ գծերով) («Կալիֆոռնիայի տրանսպորտային օրենսգիրք», CVC §22507.8(c)(2))։
- բանաձ գազեր չարտանետող և այդ մասին հատուկ պատճենատպված նշան կրող տրանսպորտային միջոցների կայանման կամ լիցքավորման համար նախատեսված տարածքում, եթե չեք վարում բանաձ գազեր չարտանետող տրանսպորտային միջոց, որը լիցքավորելու էք տեղում։
- թունելում կամ կամրջի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրող նշաններ կան։
- հրշեջ ջրածորանի կամ հրշեջ կայանի մերձատար ուղուց մինչև 15 ֆուտ (4,5 մետր) հեռավորության վրա։
- երկաթգծի վրա կամ դրանից մինչև 7½ ֆուտ (≈ 2,3 մ) հեռավորության վրա։
- անվտանգության գոտու և մայթեզրի միջև։
- «Երկրորդ շարքում կայանված» (կայանում փողոցում, երբ մայթեզրի մոտ կայանման համար թույլատրված բոլոր տեղերն արդեն զբաղված են)։
- փողոցի հակադիր կողմում։
- կարմիր եզրաքարի մոտ։
- արագընթաց բազմագոտի ճանապարհի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ՝
 - արտակարգ իրավիճակ է ստեղծվել։
 - պաշտոնյա անձը կամ հսկիչ սարքը պահանջում է կանգ առնել։
 - կայանումը հատկապես թույլատրված է։

ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ. Եթե ստիպված եք կանգ առնել արագընթաց բազմազոտի ճանապարհի վրա, կայանեք երթևեկելի մասից ամբողջովին դուրս և ժնացեք մեքենայի մեջ դռները փակ վիճակում, մինչև օգնությունը տեղ հասնի: Բավականաչափ տեղ թողեք ճանապարհի վրա, որպեսզի տրանսպորտային միջոցները կարողանան ազատորեն երթևեկել: Ձեր մեքենան պետք է երկու ուղղությամբ տեսանելի լինի առնվազն 200 ֆուտ (60 մետր) հեռավորությունից: Եթե մեքենան (անգամ խափանված) կանգնեցված, կայանված կամ թողնված է լինում արագընթաց բազմազոտի ճանապարհի վրա ավելի քան 4 ժամ, այն կարող է հեռացվել (CVC §22651(f)):

ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐ

- Երբ հարթ փողոցում մեքենան կայանում եք եզրաքարերի երկայնքով, առջևի և հետևի անիվները պետք է մայթեզրին զուգահեռ լինեն և գտնվեն դրանից մինչև 18 դյույմ (45 սմ) հեռավորության վրա: Եթե ճանապարհը եզրաքարեր չունի, մեքենան կայանեք փողոցին զուգահեռ:
- Երբեք մի լքեք ձեր մեքենան, քանի դեռ շարժիչը կամ էլեկտրաշարժիչն աշխատում է. կանգնեցրեք շարժիչը կամ էլեկտրաշարժիչը և գործադրեք կայանման արգելալիք:
- Երբ պատրաստ եք մեքենայից դուրս գալու, ուշադիր ստուգեք անցնող տրանսպորտային միջոցների, հեծանվորդների և մոտոցիկլավարների առկայությունը: Դուրը բաց արեք միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է, և դուք չեք խանգարում երթևեկությանը: Դուրը հարկ եղածից ավելի երկար բաց մի թողեք:
- Հատուկ ցուցանակ կամ համարանիշ ունեցող մեքենայով երթևեկող հաշմանդամները կարող են կայանել ցանկացած կայանման գոտում, որը սահմանափակված է կայանման թույլատրելի տևողության առումով, ինչպես ցույց է տալիս տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված նշանը:
- Համաձայն CVC §22511-ի՝ տեղական իշխանության մարմինն իր կարգադրությամբ կամ որոշմամբ կարող է իր իրավասության շրջանակներում կայանատեղիներ կամ տարածքներ հատկացնել հանրային փողոցում՝ բացառապես տրանսպորտային միջոցի լիցքավորման ու կայանման համար, որը կապված է էլեկտրական լիցքավորման նպատակով:



ԻՆՉՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐՆԵԼ ՄԵՔԵՆԱՆ

ԱԶԻՆՇԱՆՈՒՄ

Միշտ ազդանշան տվեք ձախ կամ աջ շրջադարձ կատարելիս, երթևեկության գոտիները փոխելիս, մեքենայի ընթացքը դանդաղեցնելիս կամ կանգ առնելիս: Ազդանշանումը մյուս վարորդներին, մոտոցիկլավարներին, հեծանվորդներին և հետիոտներին թույլ է տալիս իմանալ ձեր մտադրությունները:

Ազդանշան կարելի է տալ ձեռքով կամ մեքենայի լուսազդանշաններով: Եթե արևի պայծառ լույսի պատճառով դժվար է տեսնել լուսազդանշանները, ապա ազդանշան տվեք նաև ձեռքով:



ՁԱՅԻ ՇՐՋԱԳՄԱՐԸ

ԱՋ ՇՐՋԱԳՄԱՐԸ



ԴԱՆԴԱԼԵՑՆԵԼ ԿԱՄ ԿԱՆԳՆԵԼ

Մտոռոցիկավարները հաճախ են ձեռքով ազդանշան տալիս, որպեսզի իրենք ավելի տեսանելի լինեն: Հեծանվորդները կարող են աջ շրջադարձի ազդանշան տալ՝ աջ թևով ուղիղ դեպի աջ ցույց տալով:

Ազդանշան տվեք՝

- շրջադարձի կետին հասնելուց առաջ վերջին 100 ֆուտը (30 մետրը) անցնելու ընթացքում (ձախ կամ աջ շրջադարձ)։
- ամեն անգամ երթևեկության մի գոտուց մյուսն անցնելուց առաջ: Նայեք հայելիների մեջ, ուսի վրայով հայացք գցեք և ստուգեք մեռյալ գոտին, նախքան կփոխեք երթևեկության գոտին երբևէ:
- արագընթաց բազմագոտի ճանապարհի վրա մի գոտուց մյուսն անցնելուց առնվազն 5 վայրկյան առաջ:
- մայթերի մոտենալուց կամ դրանից հեռանալուց առաջ:
- շարժման ուղղությունները փոխելիս:
- նույնիսկ եթե շրջակայքում այլ տրանսպորտային միջոց չեք տեսնում: Հնարավոր է, որ չերևացող մեքենան հանկարծակի հայտնվի և հարվածի ձեզ:
- եթե մտադիր եք շրջադարձ կատարել խաչմերուկն անցնելուց հետո: Սկսեք ազդանշանել, երբ գտնվում եք խաչմերուկում: Եթե հարկ եղածից շուտ ազդանշանեք, ապա մյուս վարորդը կարող է կարծել, թե մտադիր եք շրջադարձը խաչմերուկում կատարել, և կարող է հայտնվել ձեր առջև: Շրջադարձ կատարելուց հետո մի մոռացեք անջատել ազդանշանը:

ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Ղեկավարավարման և ձեռքերի դիրքերի վերաբերյալ հանձնարարականները տարբեր են տարբեր տրանսպորտային միջոցների համար՝ տրանսպորտային միջոցի չափից, տարիքից, արագությունից և արձագանքման ունակությունից կախված: Թեև չկա ձեռքերի միակ ճիշտ դիրք կամ ղեկավարման միակ ճիշտ ձև, Մայրուղիներում անվտանգ երթևեկության ազգային վարչությունը (*National Highway Traffic Safety Administration, NHTSA*) սահմանել է որոշ հիմնական ուղեցույցներ:

Ձեռքերի դիրքը

Եթե ղեկը պատկերացնեք որպես ժամացույցի թվատախտակ, ձեռքերը դրեք ժամացույցի 9 և 3 թվանշանների վրա կամ մի փոքր ավելի ներքև՝ 8 և 4 թվանշանների վրա: Անվտանգության օդային բարձիկի բացվելու դեպքում դեմքի, թևերի և ձեռքերի գնասվածքներ ստանալու վտանգը նվազեցնելու համար պետք է ղեկը բռնեք դրսից՝ մատների հողերը տեղավորելով ղեկանվի արտաքին կողմից, իսկ բթամատերը՝ ղեկանվի եզրերի երկայնքով:

Տրանսպորտային միջոցի կառավարում

Տրանսպորտային միջոցը ճիշտ ղեկավարելու միակ ճիշտ ձև գոյություն չունի, բայց ահա ղեկավարման մի քանի եղանակներ, որոնք խորհուրդ է տալիս Մայրուղիներում անվտանգ երթևեկության ազգային վարչությունը:

- Ղեկավարում «ձեռքը ձեռքի դիմաց» եղանակով (**Hand-to-Hand Steering**) – Ղեկավարման այս եղանակը կարելի է նաև կոչել «հրիր-քաշիր» ղեկավարում: Ղեկավարման այս եղանակից օգտվելու դեպքում՝ ձեռքերը չեն խաչվում ղեկանվի մակերևույթի վրայով, և, հետևաբար, օդային բարձիկի բացվելու դեպքում, ավելի

փոքր է դեմքի, թևերի և ձեռքերի փասավածքներ ստանալու հավանականությունը: Այս եղանակն օգտագործելիս սկսեք ձեռքերը ժամացույցի 9 և 3 թվանշանների վրա դնելով, կամ՝ ժամը 8-ի և 4-ի դիրքից մի փոքր ներքև: Շրջադարձի ուղղությունից կախված՝ մի ձեռքը դեկանիվը կհրի վերև, իսկ հակադիր ձեռքը՝ կքաշի ներքև:

- **Ղեկավարում «ձեռքը ձեռքի վրայով» եղանակով (Hand-Over-Hand Steering)** – Ղեկավարման այս եղանակը կարելի է օգտագործել ցածր արագությունների դեպքում շրջադարձ կատարելիս, կայանելիս կամ կողասահունից հետո մեքենայի դիրքը շտկելիս: Այս եղանակն օգտագործելիս սկսեք ձեռքերը ժամացույցի 9 և 3 թվանշանների վրա դնելով, կամ՝ ժամը 8-ի և 4-ի դիրքից մի փոքր ներքև: Շրջադարձի ուղղությունից կախված՝ մի ձեռքը դեկանիվը կհրի վերև, իսկ մյուս ձեռքը՝ կթողնի դեկավարումը, խաչվելով մյուս ձեռքի հետ՝ կբռնի դեկանիվի վերնամասին և կքաշի վերև:
- **Ղեկավարում մեկ ձեռքով (One Hand Steering)** – Մայրուղիներում անվտանգ երթևեկության ազգային վարչությունը խորհուրդ է տալիս մեկ ձեռքն օգտագործել միայն այն ժամանակ, երբ շրջադարձ էք կատարում հետընթաց տալու ժամանակ, կամ երբ գործածում էք տրանսպորտային միջոցի կառավարման տարրեր, որոնք պահանջում են ձեռքը հեռացնել դեկից: Միակ դեպքը, երբ ձեռքի ժամը 12-ի դիրք է խորհուրդ տրվում, շրջադարձ կատարելու ընթացքում տրանսպորտային միջոցը հետընթաց վարելու դեպքն է, քանի որ վարորդը պետք է շրջվի նստած տեղում, որպեսզի տեսնի մեքենայի ընթացուղին: Ղեկի վրա ձեռքերի տեղադրությունը ժամը 9-ի և 3-ի դիրքում, կամ ժամը 8-ի և 4-ի դիրքից մի փոքր ներքև, շատ կարևոր է մեքենայի հավասարակշռության համար:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶՐԱՆՇԱՆ, ՅՈՒԱԼԱՊՏԵՐՆԵՐ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԱԶՐԱՆՇԱՆՆԵՐ

Ձայնային ազդանշան տվեք՝

- Միայն երբ դա անհրաժեշտ է ընդհարումներից խուսափելու համար:
- Այլ վարորդների հետ «տեսողական հաղորդակցում» ստեղծելու համար: Ձայնային ազդանշան տվեք՝ զգուշացնելու այն վարորդին, որը կարող է շրջադարձ կատարել ձեր դիմացից և բախում առաջացնել:
- Նեղ լեռնային ճանապարհների վրա, որտեղ չեք կարող տեսնել առնվազն 200 ֆուտ (60 մ) հեռու:

Ձայնային ազդանշան մի տվեք՝

- Եթե մեքենան կամ հեծանվորդը դանդաղ է շարժվում, և դուք ուզում եք, որ նա արագացնի ընթացքը կամ մի կողմ քաշվի: Հնարավոր է, որ վարորդը կամ հեծանվորդը ի վիճակի չէ անվտանգ կերպով ավելի արագ ընթանալ՝ հիվանդ, մոլորված, հարբած լինելու կամ մեքենայի մեխանիկական խնդիրների պատճառով:
 - Այլ վարորդներին նախազգուշացնելու համար, որ նրանք սխալ են գործել: Ձեր մեքենայի շշակից նրանք կարող են նոր սխալներ թույլ տալ կամ զայրանալ և պատասխանել նույն կերպ:
 - Որովհետև դուք բարկացած կամ նյարդայնացած եք:
 - Հետիոտներին, հեծանվորդներին կամ մոտոցիկլավարներին ազդանշանելու համար, եթե դա անհրաժեշտ չէ բախումից խուսափելու համար: Հիշեք, որ ձեր շշակը շատ ավելի բարձր է հնչում մեքենայից դուրս:
- ՄԱՆՈՌՈՒԹՅՈՒՆ. Ազդանշան տալը կարող է հանկարծակիի բերել մյուս վարորդներին: Ավելի անվտանգ է դանդաղեցնել ընթացքը կամ կանգ առնել, քան ազդանշան տալ:

Միացրեք ցուլապատերները՝

- Եթե եղանակային պայմանները պահանջում են միացնել ապակեմաքրիչները, ապա պետք է միացնեք նաև ցուլապատերների մոտարձակ լույսը:
- Ցանկացած ժամանակ, երբ պայմանները (ամպեր, անձրև, ձյուն, փոշի, ծուխ, մառախուղ և այլն) թույլ չեն տալիս տեսնել մյուս տրանսպորտային միջոցները:
- Փոքր գյուղական կամ լեռնային ճանապարհներին, նույնիսկ արևոտ օրերին:
- Մթութային մեջ և այն դեպքում, երբ տեսանելիությունը բավարար չէ 1000 ֆուտ (305 մ) հեռավորությունից հստակորեն մարդ կամ տրանսպորտային միջոց զանազանելու համար:
- Երբ տրանսպորտային միջոցը շահագործվել է մայրամուտից 30 րոպե հետո մինչև արևածագից 30 րոպե առաջ ընկած ժամանակահատվածում:
- Երբ տեղադրված է կարգավորող (սպիտակ) ճանապարհային նշան, որը ցուցում է տալիս, որ ցուլապատերները պետք է միացված լինեն:
- Մեքենավարման ընթացքում ուրիշների համար ձեր տրանսպորտային միջոցի տեսանելիությունը մեծացնելու նպատակով՝ նույնիսկ պայծառ օրերին և հատկապես հորիզոնում արևի ցածր դիրքի դեպքում:

Օգտվեք վթարային ազդանշաններից

Եթե առջևում ընդհարում եք տեսնում, այդ մասին զգուշացրեք ձեր հետևից եկող վարորդներին՝ միացնելով վթարային թարթալապատերները կամ 3-4 անգամ արգելակի ոտնակը արագ սեղմելով: Մեքենայի ընթացքը դանդաղեցնելիս կամ կանգ առնելիս կարող եք նաև ձեռքով ազդանշան տալ:

Երբեք կանգ մի առեք ճանապարհին, եթե դա անհրաժեշտ չէ անվտանգության կամ օրենքի պահանջը կատարելու նկատառումներով: Եթե անհրաժեշտ է կանգ առնել, սկսեք մեքենան արգելակել նախապես՝ ի ազդանշան ձեզ հետևող ավտոմեքենաներին: Եթե ճանապարհին ձեր մեքենան խափանվի, այնպես արեք, որ մյուս վարորդները տեսնեն այն: Եթե մեքենան խնդիրներ ունի և հարկավոր է կանգ առնել, հետևեք ստորև նշված կանոններին՝

- Եթե հնարավոր է, դուրս եկեք ճանապարհի երթևեկելի մասից:
- Եթե չեք կարող ամբողջապես երթևեկելի մասից դուրս գալ, կանգնեք այնպիսի մի տեղ, որ մարդիկ կարողանան տեսնել ձեզ և ձեր մեքենան հետևի կողմից: Մի կանգնեք հենց բլրի կամ ուլտրանի վրա:
- Եթե չեք շարժվում, միացրեք վթարային թարթալապատերները: Եթե մեքենան վթարային թարթալապատերներ չունի, կարող եք փոխարենը շրջադարձի ազդանշան տալ:
- անվտանգ լինելու դեպքում բարձրացրեք ծալովի թափածածկը՝ վթարային կանգառի մասին ազդանշանելու համար:
- հնարավորինս շատ զգուշացնող նշաններ ցույց տվեք այլ վարորդներին: Վթարային լուսազդանշանները կամ եռանկյունի ցուցանակները դրեք մեքենայից 200-300 ֆուտ (60-90 մետր) հետ: Դա այլ վարորդներին բավարար ժամանակ կտա, անհրաժեշտության դեպքում, երթևեկության գոտին փոխելու համար: Լուսազդանշաններն օգտագործելիս շատ զգույշ եղեք: Դրանք կարող են հրդեհի պատճառ դառնալ, հատկապես երբ գտնվում են դյուրավառ հեղուկների մերձակայքում:
- Եթե վթարային լուսազդանշաններ չունեք, հետևեք վերը թվարկված կանոններին և Ժապեթ մեքենայի մեջ, մինչև օգնությունը ժամանի: Զգույշ եղեք և Ժապեթ երթևեկելի մասից դուրս:

ՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒՄ ԵՎ ԲԶՋԱՅԻՆ ՇԵՌԱԽՈՍՆԵՐ

Չի թույլատրվում ավտոմեքենա վարել, երբ օգտագործում էք բջջային հեռախոս կամ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարք՝ տեքստային հաղորդագրություններ, ակնթարթային հաղորդագրություններ և էլեկտրոնային նամակներ գրելու, ուղարկելու կամ կարդալու համար, եթե 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չէք և չէք օգտագործում բջջային հեռախոս կամ էլեկտրոնային անլար կապի սարք այնպես նախագծված ու կազմաձևված, որ հնարավոր լինի այն աշխատեցնել ձայնով և ձեռնազատ ռեժիմում՝ մեքենան վարելիս տեքստային հաղորդակցության միջոցներ թելադրելու, ուղարկելու կամ լսելու համար: Չնայած ձեռնազատ սարքերի օգտագործումը թույլատրված է (սա չի վերաբերում անչափահասներին), սակայն վարորդները չպետք է շեղեն իրենց ուշադրությունը և կենտրոնանան անվտանգ երթևեկության վրա:

- Օգնության կանչեք միայն արտակարգ իրավիճակներում:
- Եթե ձեր բջջային հեռախոսը զանգում է, մի պատասխանեք: Թող կանչերը վերահասցեավորվեն դեպի ձայնային փոստարկղ, եթե ունեք այդ հնարավորությունը:
- Եթե ձեզ անհրաժեշտ է զանգահարել, ապա դա անելուց առաջ մեքենան անվտանգ դուրս հանեք ճանապարհից:
- Հեռախոսային խոսակցությունը ավարտեք հնարավորինս արագ կամ, հնարավորության դեպքում, խնդրեք, որպեսզի կանչը կատարի ձեր ուղևորը:
- Եթե գործածում եք էլեկտրոնային անլար հաղորդակցության սարք՝
 - այն պետք է տեղակայված լինի տրանսպորտային միջոցի հողմապակու, սարքերի վահանակի կամ կենտրոնական կառավարակետի վրա.
 - այն չպետք է խանգարի ճանապարհի դիտմանը:
- Օգտվեք տեղակայված էլեկտրոնային սարքի մեկ սահող շարժման կամ հպման գործառույթից:

Բջջային հեռախոսից մի օգտվեք՝

- վտանգավոր ճանապարհային պայմաններում.
- ուշադրությունը շեղող գրույցի բռնվելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Անչափահասներն իրավունք չունեն բջջային հեռախոս կամ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարք օգտագործելու, բացի ծայրահեղ անհրաժեշտության դեպքերից (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Անչափահասները և բջջային հեռախոսները» բաժինը 16-րդ էջում):

ՁԵՌՔԵՐԸ՝ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԻՑ ՀԵՌՈՒ



Վարորդի շարժական սարքը պետք է տեղակայված լինի տրանսպորտային միջոցի հողմապակու, սարքերի վահանակի կամ կենտրոնական կառավարակետի վրա:

Այն չպետք է փակի վարորդի տեսադաշտը:

Վարորդին միայն թույլատրվում է մատի մեկ սահող շարժում կամ հպում կատարել տեղակայված սարքի վրա:

Օրենքն արգելում է, որ անչափահասները մեքենա վարելիս օգտվեն ձեռնազատ սարքից:



ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ենթադրեք՝ դուք գտնվում եք երկգոտի ճանապարհին, և մոտենում է հանդիպակաց տրանսպորտային միջոց, իսկ ձեր առջևում աջից հեծանվորդ կա: Մեքենայի և հեծանվորդի արանքով անցնելու փոխարեն՝ վտանգները հաղթահարեք հերթով: Նախ՝ դանդաղեցրեք ընթացքը և թույլ տվեք, որ հանդիպակաց տրանսպորտային միջոցը ձեզնից անցնի: Հետո, երբ արդեն անվտանգ լինի, տեղափոխվեք դեպի ձախ՝ հեծանվորդին անցնելու համար ապահով տարածություն ստեղծելով (առնվազն 3 ֆուտ):

Վարորդների համար վտանգ ներկայացնող անձինք

Մեծացրեք հեռավորությունը ձեր և նույն գոտիով ընթացող տրանսպորտային միջոցների միջև՝ ավելի մեծ տարածություն ապահովելով այն վարորդների համար, ովքեր հավանական վտանգ են ներկայացնում: Վտանգ ներկայացնող անձինք են՝

- այն վարորդները, որոնք չեն կարող տեսնել ձեզ, որովհետև շենքերը, ծառերը կամ այլ մեքենաներ փակում են նրանց տեսադաշտը.
- մերձատար ուղիներից կամ կայանման հրապարակներից հետընթաց կատարող վարորդները.
- ձեզ վազանցող վարորդները, երբ դա անում են ճանապարհի կորացման վրա կամ հանդիպակաց տրանսպորտային միջոցների առկայության պայմաններում.
- այն վարորդները, որոնք որևէ այլ մեքենայից, հետիոտնից, հեծանվորդից, արգելքից խուսափելու համար կամ միացող երթուղիության գոտիների պատճառով ստիպված են զբաղեցնել ձեր գոտին.
- այն հետիոտները, որոնց տեսադաշտը փակված է դեմքի առաջ պահած հովանոցով կամ աչքերին քաշված գլխարկով.
- շեղված ուշադրությամբ մարդիկ, օրինակ՝
 - առաքիչները.
 - շինարար բանվորները.
 - շեղված ուշադրությամբ հետիոտներ (օրինակ՝ էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքով զրուցող կամ տեքստային հաղորդագրություն գրող) հետիոտներ.
 - երեխաները, ովքեր հաճախ առանց նայելու փողոց են վազում.
 - էլեկտրոնային անլար հաղորդակցության սարքով զրուցող կամ տեքստային հաղորդագրություն գրող կամ ուղևորների հետ զրուցող վարորդները.
 - մեքենա վարելիս երեխաներով զբաղվող, սնունդ ընդունող կամ քարտեզն ուսուժասպիրող վարորդները.
- շփոթված կամ մոլորված մարդիկ, օրինակ՝
 - զրոսաշրջիկները, հաճախ՝ բարդ խաչմերուկներում.
 - այն վարորդները, ովքեր տների համարներն են փնտրում կամ առանց ակնհայտ պատճառի դանդաղեցնում են մեքենայի ընթացքը:

Առավելագույն վտանգից խուսափում

Երբեմն ճանապարհի երկու կողմում կարող է վտանգ լինել միաժամանակ: Օրինակ՝ աջ կողմում կարող են կայանված մեքենաներ լինել, իսկ ձախ կողմում՝ հանդիպակաց մեքենաներ: Այդ դեպքում լավագույն բանը, որ կարելի է անել, «առավելագույն վտանգից խուսափելն է»: Շարժվեք հանդիպակաց և կայանված ավտոմեքենաների արանքով:

Եթե մի վտանգը մյուսից ավելի մեծ է, ապա ավելի շատ տարածություն թողեք ավելի վտանգավոր իրավիճակի համար: Ենթադրենք, ձախ կողմում հանդիպակաց մեքենաներ կան, իսկ աջ կողմում՝ հեծանվով երեխա: Ավելի հավանական է, որ հանկարծակի շարժումներ կատարի հենց երեխան: Հետևաբար, դանդաղեցրեք ընթացքը և, անվտանգությունը պահպանելով, հնարավորինս շատ օգտագործեք ձեր գոտու ձախ հատվածը, մինչև անցնեք երեխային:

Երթևեկության հոսք մուտք գործելու համար անհրաժեշտ տարածությունը

Արագընթաց բազմագոտի ճանապարհ մուտք գործեք գոյություն ունեցող երթևեկության արագությանը հավասար կամ մոտ արագությամբ: Բազմագոտի մայրուղու երթևեկությանը միանալիս կանգ մի առեք, եթե դա բացարձակ անհրաժեշտություն չէ: Արագընթաց բազմագոտի ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներն առավելություն ունեն: Անվտանգ լինելու դեպքում հետևեք «3 վայրկյանի կանոնին» (տ՝ես «Դիմացի մեքենայի «պոչին մի՛ կպչեք») բաժինը 43-րդ էջում):

- Մի փորձեք միախառնվել չափազանց փոքր տարածքի մեջ:
- Ուշադրություն դարձրեք ձեր շուրջը գտնվող մեքենաներին: Օգտվեք հայելիներից և շրջադարձի ազդանշաններից: Երթևեկության գոտիները փոխելուց կամ երթևեկության հոսքին խառնվելուց առաջ գլուխը շրջեք և ուսի վրայով արագ ետ նայեք: 3 վայրկյանի չափ տարածություն թողեք ձեր և ձեր առջևից ընթացող մեքենայի միջև: Համոզվեք, որ անհրաժեշտության դեպքում կկարողանաք անվտանգ կերպով կանգ առնել:
- Եթե հարկավոր է արագընթաց ավտոմայրուղու մի քանի գոտի հատել, դրանք հատեք հերթով: Եթե սպասեք մինչև բոլոր գոտիներն ազատվեն, ապա կարող եք երթևեկության խցանումներ առաջացնել կամ բախման վտանգ ստեղծել:

Ճանապարհի հատելու կամ երթևեկությանը միանալու համար անհրաժեշտ տարածությունը

Երբ լրիվ կանգառքից հատում եք կամ մուտք եք գործում քաղաքային ճանապարհի կամ ավտոմայրուղի, ազդանշան տվեք և թողեք բավականին մեծ տարածություն, որպեսզի այլ մեքենաների արագությանը հավասար արագություն հավաքեք: Դուք պետք է տեղ թողնեք արդեն ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցների համար: Կարևոր է իմանալ, թե ձեզ որքան տարածություն է հարկավոր երթևեկության հոսքին միախառնվելու, հատելու, մուտք գործելու կամ դուրս գալու համար: Անհրաժեշտ տարածությունը հավասար է մոտավորապես

- քաղաքի փողոցներում երկու խաչմերուկների միջև եղած հեռավորության կեսին.
 - ավտոմայրուղու վրա՝ երկու խաչմերուկների միջև եղած ողջ հեռավորությանը:
- Երթևեկության գոտիները հատելիս կամ շրջադարձ կատարելիս համոզվեք, որ առջևում կամ ձեր մեքենայի կողքերում չկան ձեր ընթացուղին խոչընդոտող տրանսպորտային միջոցներ կամ մարդիկ: Հակառակ դեպքում կարող եք հայտնվել խաչմերուկում, հանդիպակաց երթևեկության հոսքի դիմաց:

Նույնիսկ լուսացույցի կանաչ լույսի տակ մի սկսեք հատել խաչմերուկը, եթե ձեր ճանապարհիը փակող մեքենաներ կան:

Ձախ թեքվելիս մի սկսեք շրջադարձը՝ հույսը դնելով միայն այն բանի վրա, որ մոտեցող մեքենան միացրել է աջ շրջադարձի ազդանշանը: Հնարավոր է, որ այդ մեքենայի վարորդը մտադիր է հենց ձեզանից հետո շրջադարձ կատարել, կամ որ ազդանշանը միացված է փափուկ նախորդ շրջադարձից հետո: Մա հատկապես ճիշտ է մոտոցիկլավարների վերաբերյալ: Հաճախ նրանց լուսազդանշանները չեն անջատվում ինքնաբերաբար: Ընթացքը շարունակելուց առաջ սպասեք, մինչև մյուս վարորդը սկսի փաստացի շրջադարձ կատարել:

Ճանապարհից դուրս գալու համար անհրաժեշտ տարածությունը

Երբ մտադիր եք դուրս գալ արագընթաց բազմազտի մայրուղուց, ձեզ շատ ժամանակ տվեք դրա համար: Դուք պետք է հստակորեն իմանաք մայրուղու ձեզ հարկավոր ելքի, ինչպես նաև դրան նախորդող ելքի անվանումը կամ համարը: Անվտանգ ելքի համար՝

- ազդանշան տվեք, ուսի վրայով հայացք գցեք և երթևեկության գոտիները փոխեք մեկ առ մեկ, մինչև հայտնվեք անհրաժեշտ գոտում՝ մայրուղուց դուրս գալու համար.
- դուրս գալու ձեր մտադրության մասին ազդանշանեք ելքին հասնելուց մոտավորապես 5 վայրկյան առաջ.
- համոզվեք, որ ընթանում եք երթևեկության գոտուց դուրս գալու համար հարմար արագությանը՝ ոչ շատ արագ (որպեսզի չկորցնեք կառավարումը), ոչ էլ շատ դանդաղ (որպեսզի երթևեկության հոսքը շարունակվի առանց խոչընդոտի):

ՎԱԶԱՆՑ

Մոտեցում վազանցի համար

Նախքան վազանց կատարելը նայեք ձեր դիմաց՝ ճանապարհի ու երթևեկության վիճակը գնահատելու համար, որը կարող է այլ տրանսպորտային միջոցներին ստիպել մուտք գործել ձեր գոտին: Վազանց կատարեք միայն այն ժամանակ, երբ դա անելն անվտանգ է: Դուք պետք է որոշեք՝ բավարար տարածություն ունե՞ք վազանց կատարելու համար, երբ մոտենում եք՝

- հանդիպակաց տրանսպորտային միջոցին.
- բլրի կամ ոլորանի.
- փոխհատման.
- ճանապարհային արգելքի.
- հեծանվորդի:

Արգելվում է վազանցել՝

- եթե մոտենում եք բլրին կամ ոլորանին և չեք կարող նկատել այլ մոտեցող տրանսպորտային միջոցների.
- խաչմերուկից, կամրջից, թունելից, երկաթուղային գծանցից կամ խնդրահարույց տարածքներից 100 ֆուտից (մոտ 30 մետրից) պակաս հեռավորության վրա:

Ինչպես վազանցել.

Վազանց կատարելու համար երբեք դուրս մի եկեք ճանապարհի ասֆալտապատ կամ բանուկ մասից և դուրս մի եկեք կողնակի վրա: Բանուկ մասի եզրը կարող է սայլտակ զծանշում ունենալ ճանապարհի մակերևույթի վրա: Խաչմերուկներում, երկաթուղային զծանցներում և մերձատար ուղիներում վազանց կատարելը վտանգավոր է:

Վազանց կատարեք ձախից: Աջից վազանցը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ՝

- բաց ավտոմայրուղու վրա պարզորոշ կերպով նշված են ձեր ուղղությանը համընթաց 2 կամ ավելի երթևեկության գոտիներ.
- ձեր դիմացի վարորդը ձախ շրջադարձ է կատարում, և դուք վազանց կատարելու համար երթևեկելի մասից դուրս չեք գալիս: Երբեք ձախից վազանց մի կատարեք, եթե դիմացի մեքենան ձախ շրջադարձի ազդանշան է տալիս.
- գտնվում եք միակողմանի փողոցում:

Վազանց կատարելուց առաջ միշտ ազդանշան տվեք: Նաև կարող եք թեթևակի ձայնային ազդանշան տալ կամ կարճատև թարթել լույսերը, որպեսզի վարորդը հասկանա, որ մտադիր եք վազանց կատարել: Մի սկսեք վազանցը, մինչև համոզված չլինեք, որ բավարար չափով տարածություն ունեք՝ մինչ այդ զբաղեցրած գոտին վերադառնալու համար:

Երկգոտի ճանապարհների վրա աշխատեք չվազանցել այլ մեքենաներից, այդ թվում՝ մոտոցիկլետներից ու հեծանիճներից: Ամեն անգամ վազանց կատարելիս դուք մեծացնում եք բախվելու հավանականությունը: Երբ անցնում եք հեծանվորդից, դանդաղեցրեք մեքենայի ընթացքը և հեծանվորդին վազանցեք միայն այն դեպքում, եթե դա անվտանգ է՝ հնարավորության դեպքում նվազագույնը 3 ֆուտ (մոտ 90 սմ) հեռավորություն պահպանելով ձեր տրանսպորտային միջոցի և հեծանվորդի միջև: Հեծանվորդին մի սեղմեք դեպի ճանապարհի եզրը:

Վազանցից հետո երթևեկության գոտի վերադառնալը

Նախքան ձեր երթևեկության գոտին վերադառնալը համոզվեք, որ վտանգավոր լինելու չափ մոտ չեք այն մեքենային, որից քիչ առաջ անցաք: Դա կարելի է անել, օրինակ՝ ձեր մեքենայի ներսում գտնվող հետևի դիտահայելու մեջ այդ մեքենային նայելով: Եթե հետևի դիտահայելու մեջ մեքենայի երկու ցուլալապտերներն էլ երևան, ապա դուք բավարար տարածություն կունենաք ձեր շարժման գոտին վերադառնալու համար: Հույս մի դրեք այն բանի վրա, որ բավարար ժամանակ ունեք՝ միանգամից մի քանի մեքենայի վազանց կատարելու համար, կամ որ մյուս վարորդները տեղ կբացեն ձեզ համար:

Երբ ձեզ վազանցում են

Երբ որևէ տրանսպորտային միջոց անցնում է ձեզինց կամ վազանցելու մտադրության մասին ազդանշան է տվել, պետք է խուսափեք մեքենայի ընթացքն արագացնելուց և փաք ձեր երթևեկության գոտում՝ տրանսպորտային միջոցին թույլ տալով անցնել ձեզինց: Վազանցից խուսափելու համար մի արագացրեք մեքենայի ընթացքը և մի փորձեք ավելի արագ ընթանալ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ ԵՐԹԵՎԵԿԵԼԸ

ՄԵԾ ԲԵՌԱՍԱՐԼԵՐ (ԱՎՏՈՎԱՅՔԵՐ) ԵՎ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ


Մեծ բեռնատարի կամ զբոսաշրջային մեքենայի հետ ընդհարման հավանականությունը նվազեցնելու համար դուք պետք է ծանոթ լինեք ավտոգնացքի ֆիզիկական բնութագրերին և մանրամասն ձևին:

Արգելակում

Մեծ բեռնատարը կանգնեցնելու համար ավելի երկար ժամանակ է հարկավոր, քան նույն արագությամբ ընթացող մարդատար ավտոմեքենաները: Ժամում 55 մղոն (88,5 կիլոմետր) արագությամբ ընթացող մարդատար ավտոմեքենան կանգնեցնելու համար հարկավոր է միջին հաշվով 400 ֆուտ (120 մետր) տարածություն: Սակայն նույն արագությամբ ընթացող մեծ բեռնատարը կանգնեցնելու համար կարող է պահանջվել գրեթե 800 ֆուտ (240 մետր): Մի ընթացքեք մեծ բեռնատարի առջևով և հանկարծակի դանդաղեցրեք մեքենայի ընթացքը կամ կանգ առեք: Բեռնատարի վարորդը չի կարող այնքան արագ մեքենան կանգնեցնել, որ չբախվի ձեռք:

Բեռնատարի վարորդի մեռյալ գոտիները. «Տեսադաշտի բացակայություն»

Մարդատար մեքենաների վարորդները թյուրիմացաբար կարծում են, թե բեռնատարի վարորդը ճանապարհն ավելի լավ է տեսնում, քանի որ ավելի բարձր է նստած: Չնայած բեռնատարի վարորդն ավելի լավ առջևի տեսադաշտ ու ավելի մեծ հայելիներ ունի, այնուամենայնիվ, նա նաև ունի մեծ մակերեսով մեռյալ գոտիներ կամ «ՏԵՍԱԴԱՇՏԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ», որտեղ ձեր մեքենան կարող է անհետանալ բեռնատարի վարորդի տեսադաշտից:



Ստվերագծված տարածքները վարորդի մեռյալ գոտիներն են:

Բեռնատարի փակ տեսադաշտում ժառանգելով դուք վարորդին մանրելու և վթարային իրավիճակից խուսափելու հնարավորություն չեք տալիս: Ընդհանուր առմամբ, եթե բեռնատարի վարորդին չեք տեսնում նրա կողային հայելու մեջ, ապա նա էլ ձեզ չի տեսնի:

Շրջադարձ կատարելը

Երբ որևէ տրանսպորտային միջոց շրջադարձ է կատարում, հետևի անիֆսերն ավելի կարճ տարածություն են անցնում, քան առջևի անիֆսերը: Որքան երկար է մեքենան, այնքան մեծ է այդ տարբերությունը շրջադարձի ժամանակ մեքենայի շարժման հետագծում: Ահա թե ինչու ավտոգնացքների վարորդները հաճախ ստիպված են լինում մեծ շրջան վերցնել՝ աջ շրջադարձ կատարելու համար: Երբ շարժվում եք մեծ բեռնատարի հետևից, վազանց կատարելուց առաջ նայեք նրա շրջադարձի ազդանշաններին: Եթե թվում է, թե բեռնատարը ձախ է թեքվում, ապա կրկին ստուգեք շրջադարձի ազդանշանները. հնարավոր է, որ բեռնատարն իրականում կատարում է աջ շրջադարձ, բայց մինչ այդ մեծ շրջան է վերցնում:



ՁԵՐ ՏԵՍԱԴԱՇՏԸ

Նախքան աջ շրջադարձ կատարելը
հայացք գցեք աջ ուսի վրայով, որպեսզի
ստուգեք հեծանվորդների առկայությունը:



ՆՐԱՆՑ ՏԵՍԱԴԱՇՏԸ

Խուսափեք ավտովարորդի մեռյալ գոտիներից:
Կանխատեսեք երթևեկության վտանգավոր
իրավիճակները:



ՓՈԽԵՔ ՁԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ

Մանկրայնություն

Բեռնատարները այնքան մանրային չեն, որքան մարդատար մեքենաները: Մեծ բեռնատարներն ունեն արգելակման և թափառքի ավելի մեծ ճանապարհ: Բեռնատարներին ավելի մեծ տարածություն է հարկավոր շրջադարձերի համար, և դրանք ավելի ծանր են: Նշանների բացակայության պայմաններում այդ տրանսպորտային միջոցները պետք է ընթանան աջ երթևեկության գոտիով կամ ճանապարհի աջ եզրին հնարավորինս մոտ:

Մեկ ուղղությամբ 4 կամ ավելի գոտիներ ունեցող բաժանարար գոտիով ավտոմայրուղիների վրա այդ տրանսպորտային միջոցները կարող են երթևեկել նաև աջ գոտուց անմիջապես դեպի ձախ գտնվող գոտիով:

Մեծ բեռնատարների հարևանությամբ երթևեկելիս խուսափեք հետևյալ սխալներից.

- Փողոցում կամ ավտոմայրուղու վրա բեռնատարի ճանապարհը մի կտրեք՝ ճանապարհից դուրս գալու կամ շրջադարձ կատարելու համար: Բեռնատարի ճանապարհը կտրելը վտանգավոր է: Ճանապարհաշինական աշխատանքների կատարման տարածք մուտք գործելիս դանդաղեցրեք մեքենայի ընթացքը և մտք այն ժամանակ, երբ ձեր հերթը գա: Ճանապարհից դուրս գալու նպատակով մի արագացրեք մեքենայի ընթացքը՝ բեռնատարից առաջ անցնելու համար: Դանդաղեցրեք և դուրս եկեք բեռնատարի հետևեց:
- Բեռնատարը վազանցելիս մի հապաղեք և երկար ժամանակ նրա կողքով մի ընթացեք: Մեծ բեռնատարից միշտ անցեք ձախ կողմից, և վազանցից հետո շարժվեք նրա դիմացով: Մի՛ հապաղեք: Այլապես բեռնատարի համար խիստ կոճվարանա, եթե անհնարին չլինի, մանրեղ ճանապարհին որևէ արգելք հայտնվելու դեպքում:
- Բեռնատարին շատ մոտիկ կամ «պոչին կպած» մի ընթացեք: Եթե բեռնատարի հետևից այնքան մոտ եք ընթանում, որ չեք կարողանում տեսնել բեռնատարի կողային դիտահայելիները, ապա բեռնատարի վարորդն իր հերթին չի կարող տեսնել ձեզ և որևէ կերպ իմանալ, որ դուք շարժվում եք իր հետևից: Վտանգավոր է ընթանալ բեռնատարի կամ ցանկացած այլ տրանսպորտային միջոցի հետևից՝ առանց ապահով տարածություն պահպանելու, քանի որ դրանով դուք նվազեցնում եք սեփական անվտանգ հեռավորությունը, եթե դիմացից ընթացող մեքենան հանկարծ կտրուկ արգելակի:
- Մի թերագնահատեք մոտեցող ավտոգնացքի չափերն ու արագությունը: Մեծ չափերի պատճառով՝ երբեմն այն խաբուսիկ տպավորությունն է ստեղծվում, թե մեծ ավտոգնացքն ավելի դանդաղ է շարժվում: Բեռնատար և մարդատար մեքենաների մասնակցությամբ բախումների մեծ մասը տեղի է ունենում փոխհատուցներում, երբ մարդատար մեքենայի վարորդը չի պատկերացնում, թե որքան մոտ է բեռնատարը կամ որքան արագ է այն ընթանում:

ԱՎՏՈՒՄՆԵՐ, ՏՐԱՄԱՅՆԵՐ ԵՎ ՏՐՈՒՆԵՑՈՒՄՆԵՐ

Մեքենան մի վարեք անվտանգության գոտու միջով, որը նախատեսված է հետիոտների համար և նշված է ճանապարհին տեղադրված ուռուցիկ ելուններով կամ գծանշաններով: Երբ մարդիկ տրամվայ կամ տրոլեյբուս են նստում կամ իջնում այնպիսի վայրում, որտեղ անվտանգության գոտի չկա, մեքենան կանգնեցրեք տրամվայի կամ տրոլեյբուսի մոտակա դռան կամ հարթակի հետևում և սպասեք, մինչև մարդիկ ապահով տեղ հասնեն: Երբ ավտոբուսը, տրամվայը կամ տրոլեյբուսը կանգնած է անվտանգության գոտում կամ խաչմերուկում, որտեղ երթևեկությունը կարգավորվում է պաշտոնական անձի կամ լուսացույցի միջոցով, դուք կարող եք առաջ անցնել ժամում 10 մղոնը (16 կիլոմետրը) չգերազանցող արագությամբ:

Երբեք ձախից մի վազանցեք արագընթաց ներքաղաքային գնացքը կամ տրամվայը՝ անկախ վերջինիս շարժման մեջ կամ կանգնած լինելու հանգամանքից:

Բացառություններ.

- Երբ գտնվում եք միակողմանի փողոցում:
- Երբ ռելսուղին այնքան մոտ է աջ ճամփեզրին, որ հնարավոր չէ աջից անցնել:
- Երբ ճանապարհային ոստիկանը պահանջում է, որ դուք ձախից անցնեք:

ԱՐԱԳՐՆԹԱՑ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՆԱԾՔՆԵՐ


Արագընթաց ներքաղաքային գնացքներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները հանրային օգտագործման ճանապարհներին, ինչ մյուս տրանսպորտային միջոցները: Չնայած բոլորը պետք է հետևեն երթևեկության միևնույն կանոններին՝ արագընթաց ներքաղաքային գնացքները, իրենց չափերի պատճառով, հատուկ հմտություններ են պահանջում:

Արագընթաց ներքաղաքային գնացքների հարևանությամբ երթևեկելիս պահպանեք ստորև նշված անվտանգության կանոնները:


- Տեղյակ եղեք արագընթաց ներքաղաքային գնացքների երթուղիներին: Շենքերը, ծառերը և այլ օբյեկտներ փակում են տրամվայի վարորդի տեսադաշտը:
- Երբեք շրջադարձ մի կատարեք մոտեցող արագընթաց ներքաղաքային գնացքների առջևից:
- Ապահով հեռավորություն պահպանեք արագընթաց ներքաղաքային գնացքից, եթե այն երթևեկում է ավտոտրանսպորտի հետ միևնույն փողոցով:
- Արագընթաց ներքաղաքային գնացքի գծերը հատելիս ստուգեք արդյոք այն չի մոտենում: Շրջադարձը կատարեք միայն այն ժամանակ, երբ ճանապարհային լուսացույցը թույլ է տալիս դա անել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Արագընթաց ներքաղաքային գնացքները կարող են խանգարել ճանապարհային լուսացույցին: Տեղից մի շարժվեք, մինչև լուսացույցի լույսը ցույց տա, որ կարելի է շարունակել:

Շրջադարձ մի կատարեք արագընթաց ներքաղաքային գնացքների առջևից:



Անվտանգության գոտիները գծանշված են սպիտակ կետագծերով:



ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Դուք պետք է ճանապարհը զիջեք ոստիկանական, հրշեջ, շտապ օգնության և շլակ ու կարմիր փարոսիկներ ունեցող այլ հատուկ նշանակության մեքենաներին: Շարժվեք դեպի ճանապարհի աջ եզրը և կանգ առեք, մինչև նրանք անցնեն: Սակայն երբեք կանգ մի առեք խաչմերուկում: Եթե հատուկ նշանակության մեքենա տեսնելիս գտնվում եք խաչմերուկում, ավարտեք խաչմերուկով անցումը և շարժվեք դեպի ճանապարհի աջ եզրն ու կանգ առեք, եթե դա անվտանգ է: Հատուկ նշանակության մեքենաները հաճախ շարժվում են փողոցի չորսլատրված մասով, որպեսզի շարունակեն իրենց ընթացքը: Երբեմն նրանք իրենց ընթացուղին փակող վարորդներին բարձրախոսի օգնությամբ հրահանգում են ազատել ճանապարհը: Դուք պետք է ենթարկվեք պաշտոնական անձի կամ հրշեջի տված ցանկացած ցուցմանը, հրամանին կամ ազդանշանին, նույնիսկ եթե այն խախտում է երթուղային նշանները, ազդանշանները կամ կանոնները:

Ճանապարհը զիջեք հատուկ նշանակության մեքենաներին:




Օրենքով արգելվում է 300 ֆուտից (90 մետրից) ավելի մոտենալ հրշեջ ծառայության, ոստիկանության, շտապ օգնության կամ այլ արտակարգ իրավիճակների ծառայության մեքենայի, որը ունի շլակ և առկայծող փարոսիկներ (CVC §21706):

Եթե հետաքրքրասիրությունից դրդված մոտենաք հրդեհի, բախման կամ այլ աղետի վայրին, ձեզ կարող են ձերբակալել: Կողմնակի դիտորդները խանգարում են ոստիկանության, հրշեջների, շտապ օգնության անձնակազմի, փրկարարների կամ արտակարգ իրավիճակի արձագանքող այլ աշխատակիցների կարևոր աշխատանքին:

ԴԱՆՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Որոշ տրանսպորտային միջոցներ նախատեսված չեն երթուղային սովորական արագությամբ ընթանալու համար: Գյուղատնտեսական տրակտորները, լծասայլերը և ճանապարհների տեխնիկական սպասարկման մեքենաները սովորաբար շարժվում են ժամում 25 մղոն (40 կմ) կամ ավելի ցածր արագությամբ: Դանդաղընթաց մեքենաների հետևի մասում նարնջագույն կամ կարմիր եռանկյունի նշան կա: Այն նման է աջակողմյան նկարում պատկերված նշանին: Ուշադիր եղեք այդ մեքենաները նկատելու համար, և կարգավորեք արագությունը, նախքան կհասնեք նրանց:



Դանդաղընթաց մեքենա

Նկատի ունեցեք նաև, որ մեծ բեռնատարները, հեծանվորդները և փոքր, անբավարար հզորությամբ մեքենաները արագությունը կորցնում են երկար կամ շեշտակի վերելքով բլրի վրա և ավելի երկար ժամանակ են պահանջում, որպեսզի արագություն հավաքեն, երբ միանում են երթուղային հոսքին:

Ընդհանուր օգտագործման ճանապարհներով թույլատրված է նաև որոշ այլ տիպի շարժիչավոր դանդաղընթաց փոխադրամիջոցների, օրինակ՝ անվասայլակների, մոտոռոլլերների, համայնքային էլեկտրամոբիլների և գոլֆամոբիլների երթուղայինը: Ձեր արագությունը հարմարեցրեք նրանց:

Այն տրանսպորտային միջոցները, որոնք ընթանում են երթևեկության հոսքից ցածր արագությամբ և շարժվում են վազանցի համար ոչ անվտանգ երկգոտի ավտոմայրուղով, պետք է դուրս գան երթևեկելի մասից դեպի շրջանցման համար հատկացված տարածք կամ այնպիսի տեղ, որտեղ բավարար տարածություն կա անվտանգ շրջանցման համար, եթե դրանց հետևում գոյացել է 5 կամ ավելի տրանսպորտային միջոցների շարք:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՄՈՒԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՑԱՕՐ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Երբ տեսնեք այս նշանները կամ գծանշումներ՝ «ՄԻԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՄՈՒԲԻԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ» (NEV USE ONLY) կամ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՄՈՒԲԻԼՆԵՐԻ ԵՐԹՈՒՂԻ» (NEV ROUTE), զգուշացեք ճանապարհով դանդաղ ընթացող տրանսպորտային միջոցներից: Համայնքային էլեկտրամոբիլների և ցածր արագության մեքենաների օգտագործումը սահմանափակ է այն ճանապարհների վրա, որտեղ թույլատրելի արագությունը գերազանցում է ժամում 35 մղոնը (56 կմ) (CVC §§385.5 և 21260): Համայնքային էլեկտրամոբիլները և ցածր արագության մեքենաները կարող են զարգացնել մինչև ժամում 25 մղոն (40 կմ) առավելագույն արագություն: Գրանցված համայնքային էլեկտրամոբիլների և ցածր արագության մեքենաների տերերը պետք է բավարարեն ֆինանսական պատասխանատվության օրենքների պահանջները և գործող վարորդական իրավունքի վկայական ունենան այդ մեքենաների շահագործման համար:

ԿԵԼԴԱՆԱՔԱՐՇ ՓՈՒՍԴԻԱՄԻՋՈՑՆԵՐ

Ձիաքարշ սայլերը, ինչպես նաև ձի կամ որևէ այլ կենդանի հեծած անձինք շարժչավոր փոխադրամիջոցների հետ նույն ճանապարհով երթևեկելու իրավունք ունեն: Ձիերին խրտնեցնելը կամ անասուններին խուճապի մատնելը երթևեկության կանոնների խախտում է համարվում: Դանդաղեցրեք մեքենայի ընթացքը կամ կանգ առեք, երբ դա անհրաժեշտ է, կամ երբ դա պահանջում է հեծյալը կամ հովիվը:

ՄՈՏՈՑԻԿԼԵՏՆԵՐ

Մոտոցիկլավարները նույն իրավունքներն ու պարտականություններն ունեն, ինչ ավտովարորդները: Թեև երթևեկության կանոնները բոլորի համար նույնն են, մոտոցիկլավարներն ավելի մեծ վտանգի են ենթարկվում, քանի որ մոտոցիկլետները արտակարգ տեխնիկական հատկություններ են պահանջում և դժվար նկատելի են: Այդ պատճառով, մոտոցիկլավարներից շատերը լապտերները մշտապես վառ են պահում անգամ ցերեկային ժամերին:

Մոտոցիկլավարները կարող են բազմաթիվ միջոցներ ձեռնարկել, որպեսզի վարորդները և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցներն ավելի հեշտ նկատեն իրենց ներկայությունը, այդ թվում

- կրել վառ գույնի բաճկոն, ժիլետ կամ սաղավարտ.
- արտացոլող նյութեր կրել իրենց սաղավարտի կամ հագուստի վրա.
- գոտին փոխելու կամ շրջադարձ կատարելու ժամանակ միացնել շրջադարձի ազդանշանները.
- ընթացքը դանդաղեցնելուց առաջ թարթել արգելակման լույսերով, որպեսզի մյուս վարորդները ավելի հեշտ նկատեն մոտոցիկլետը.
- խուսափել այլ տրանսպորտային միջոցների մեռյալ գոտիներից և երթևեկության գոտիների ձեղքումներ իրականացնելիս չհապաղել մեքենաների միջև.
- ցուլալապտերների հեռարձակ լույս օգտագործել ցերեկային ժամերին:

Մտոցցիկավարի առավելությունը հարգելու և նրա հետ նույն ճանապարհով անվտանգ երթևեկելու համար հետևեք ստորև նշված կանոններին.

- երթևեկության գոտին փոխելիս կամ բանուկ փողոց մտնելիս ստուգեք մոտոցցիկետների առկայությունը և օգտվեք հայելիներից: Մոտոցցիկետը փոքր է և կարող է հեշտությամբ թաքնվել տրանսպորտային միջոցի մեռյալ գոտիներում.
- մոտոցցիկետի հետևից ընթանալիս 4 վայրկյանի չափ տարածություն պահպանեք: Այդ տարածությունը ձեզ հարկավոր է, որպեսզի խուսափեք մոտոցցիկավարին հարվածելուց, եթե նա հանկարծակի արգելակի կամ վայր ընկնի մոտոցցիկետից.
- հնարավորության դեպքում մոտոցցիկետին թույլ տվեք ամբողջությամբ զբաղեցնել երթևեկության գոտին: Չնայած արգելված չէ մոտոցցիկավարի կողքին մինևնույն երթևեկության գոտիով ընթանալը՝ այնուամենայնիվ, դա անվտանգ չէ.
- երբեք չփորձեք շրջանցել մոտոցցիկետը նույն երթևեկության գոտում, որով նաև դուք եք երթևեկում.
- հնարավորության դեպքում տեղափոխվեք դեպի ձեր երթևեկության գոտու մի կողմը՝ մոտոցցիկավարներին բավականաչափ տեղ տալով անցնելու համար.
- շրջադարձ կատարելուց առաջ ստուգեք մոտոցցիկետների առկայությունը և գնահատեք դրանց արագությունը.
- ուշադիր ստուգեք մոտոցցիկավարների առկայությունը, նախքան կբացեք ճանապարհային երթևեկության կողմի դռները կամ աջ շրջադարձ կկատարեք.
- տարբեր ճանապարհային պայմաններ, ինչպիսիք են փոստրակները, կոպիճը, թաց կամ սայթաթուն մակերևույթները, պատվածքի կարերը, երկաթուղային գծանցները և անհարթությունները կարող են մոտոցցիկավարին ստիպել հանկարծակի փոխել շարժման արագությունը կամ ուղղությունը: Եթե տեղյակ եք այդ պայմանների ազդեցություններին և մեքենան վարում եք զգուշորեն և ուշադիր, ապա կարող եք օգնել մոտոցցիկավարներին նվազագույնի հասցնել իրենց փասվածքներն ու մահացու ելքով վթարները: Մոտոցցիկետների անվտանգության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք Կալիֆոռնիայի Մոտոցցիկավարների անվտանգության ծրագիր (*California Motorcyclist Safety Program*) www.chp.ca.gov/programs-services/programs/california-motorcyclist-safety հասցեով կամ զանգահարեք 1-877-RIDE-411 հեռախոսահամարով:

Հեծանուկներ

Հեծանվորդներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ ավտովարորդներն ու մոտոցցիկավարները, այդ թվում՝

- ենթարկվել բոլոր ճանապարհային նշաններին և լուսացույցի լույսերին.
- հեծանվավարել փողոցային երթևեկության ուղղությամբ.
- ազդանշանել երթևեկության գոտիները փոխելիս կամ շրջադարձ կատարելիս.
- ճանապարհը զիջել հետիոտներին.
- սաղավարտ կրել (18-ից ցածր տարիքի դեպքում).
- թույլ տալ, որ ավելի արագ ընթացող տրանսպորտային միջոցները վազանցեն, երբ դա անվտանգ է.
- մշտապես լինել տեսանելի (օրինակ՝ երբեք մի խուսավարեք կայանված տրանսպորտային միջոցների միջև).
- հեծանվավարել աջ եզրաքարին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ.
- չերթևեկել մայրով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված է այն քաղաքում, որտեղ հեծանիվ եք վարում.



- ձախ և աջ շրջադարձերը կատարել նույն կերպ, ինչ մյուս վարորդները՝ օգտվելով շրջադարձերի մինևնույն գոտիներից: Եթե հեծանվորդն ուղիղ է գնում, ապա նա պետք է զբաղեցնի միջանցիկ երթուղիային գոտին՝ փոխանակ ընթանալու մայթեզրի կողքով և խոչընդոտելու աջ շրջադարձ կատարող մեքենաների երթուղությունը:

Հեծանվորդները չպետք է հեծանիվը վարեն երթուղիների մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ հեծանիվը ապահովված է արգելակով, որը հեծանվորդին թույլ կտա մեկ անիվով արգելակել և կողասահելով կանգ առնել չոր, հարթ և մաքուր ծածկի վրա:

Մուտք ժամանակ հեծանվորդները պետք է խուսափեն մուգ գույնի հագուստ կրելուց և պետք է ունենան հետևյալ հանդերձանքը

- դիմացի լապսեր, որն արձակում է 300 ֆուտ (≈ 90 մետր) հեռավորությունից տեսանելի սպիտակ լույս.
- հետևի կարմիր անդրադարձիչ կամ անթարթ կամ թարթող կարմիր լույս՝ ներկառուցված անդրադարձիչով, որը տեսանելի է 500 ֆուտ (≈ 150 m) հեռավորությունից.
- 200 ֆուտ (≈ 60 մետր) հեռավորությունից տեսանելի սպիտակ կամ դեղին անդրադարձիչ յուրաքանչյուր ոտնակի, հեծանվորդի կոշիկների կամ կոճերի վրա.
- սպիտակ կամ դեղին անդրադարձիչ առջևի անվի վրա, սպիտակ կամ կարմիր անդրադարձիչ հետևի անվի վրա, կամ անդրադարձնող հասկությամբ անվաղողեր:

Հեծանվորդներն ունեն ճանապարհով երթուղիները իրավունք և կարող են՝


- օրինական իրավունք ունենալ երթուղիները արագընթաց բազմագոտի ճանապարհների որոշակի հատվածներում, որտեղ այլընտրանքային երթուղի չկա, և որևէ նշան չի արգելում հեծանվավարումը.
- տեղափոխվել դեպի ձախ՝ արգելքներից խուսափելու համար, ինչպիսիք են կայանված կամ շարժվող տրանսպորտային միջոցները, հեծանիվները, կենդանիները կամ ապարների բեկորները.
- իրենց ընտրությամբ, շարժվել միակողմանի փողոցի ձախ մայթեզրի կամ ճամփեզրի մոտով:

Հեծանիվներ՝ երթուղիների գոտում


Երթուղիային հոսքից դանդաղ ընթացող հեծանվորդները պետք է հեծանվավարեն աջ մայթեզրին կամ երթուղիների մասի եզրին հնարավորինս մոտ, բացառությամբ հետևյալ իրավիճակներից՝

- վազանց նույն ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցից կամ մեկ այլ հեծանվից.
- խաչմերուկում, դեպի մասնավոր ճանապարհ կամ մերձատար ուղու մոտ ձախ շրջադարձի նախապատրաստում.
- որևէ արգելքից կամ ճանապարհային վիճակից (օրինակ՝ հետիոտներից, կենդանիներից, մակերևույթի խոչընդոտներից) խուսափելու անհրաժեշտության դեպքում.

Շրջադարձեր հեծանվորդների համար.




Հատուկ գոտիներ ունեցող խաչմերուկներ.



- երբ երթնեկության գոտին չափազանց նեղ է հեծանվի և տրանսպորտային միջոցի այդ գոտիով կողք-կողքի անվտանգ ընթանալու համար.

- աջ շրջադարձի մոտենալիս.

- երբ երթնեկելի մասը երկու կամ ավելի երթնեկության գոտիներով միակողմանի ճանապարհ է: Այս դեպքում հեծանվորդը կարող է ընթանալ ձախ եզրաքարին կամ երթնեկելի մասի եզրին հնարավորինս մոտ: Որևէ դանդաղընթաց տրանսպորտային միջոցի կամ հեծանվի առկայության դեպքում վարորդները միշտ պետք է անվտանգ հեռավորություն պահպանեն, և, անվտանգ լինելու դեպքում, հեծանվորդը պետք է տեղափոխվի մի դիրք, որը տրանսպորտային միջոցներին թույլ կտա վազանց կատարել:



Երթնեկության գոտում գտնվող հեծանվորդից անվտանգ հեռավորության վրա անցնելու համար կարող է պահանջվել վերադասավորում դեպի մեկ այլ գոտի, անվտանգ ու արագ վազանցում և վերադարձ սկզբնական երթնեկության գոտին՝ տարածություն թողնելով ձեր տրանսպորտային միջոցի ու հեծանվորդի միջև: Երբ անհնար է վերադասավորում կատարել հեծանվորդից անցնելու համար, առնվազն 3 ֆուտ (≈ 90 սմ) տարածություն թողեք ձեր մեքենայի և հեծանվորդի միջև: Եթե չեք կարող անցնել 3 ֆուտ տարածություն պահպանելով, անցեք անվտանգ արագությամբ, որպեսզի հեծանվորդին վտանգի չենթարկեք:

Ահա մի քանի կարևոր նկատառուներ, որոնք վարորդներն ու հեծանվորդները պիտի հիշեն: Ավտովարորդները պետք է՝

- հեծանվորդներից անցնեն բավարար հեռավորության վրա, որպեսզի նրանց չստիպեն տեղաշարժվել դեպի կայանված տրանսպորտային միջոցները կամ երթնեկության կողմից բացված դռները.
- շարժվեն դեպի ճամփեզրը կամ հեծանվային արահետը միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է.
- շրջադարձ կատարելուն նախապատրաստվելիս անվտանգ տեղ զբաղեցնեն հեծանվորդի հետևում.
- հեծանվորդի մուտք գործեն միայն շրջադարձից ոչ ավելի, քան 200 ֆուտ (60 մետր) առաջ.
- գոտիները փոխելիս կամ երթնեկության հոսքի մեջ մտնելիս հայացքով ստուգեն հեծանվորդների առկայությունը: Հեծանիվները չափով փոքր են, և հնարավոր է, որ չբերան տրանսպորտային միջոցի մեռյալ գոտում.
- զգույշ լինեն, երբ մոտենում են որևէ հեծանվորդի կամ նրանից անցնում են երկգոտի երթնեկելի մասում:





Դանդաղեցրեք ընթացքը և կանգ առեք:

Ամեն մի խաչմերուկ
հետիոտնային
անցում է:

Կալիֆոռնիան ունի ամբողջ երկրում հետիոտների և հեծանվորդների մահվան ելքով պատահարների ամենաբարձր ցուցանիշը: Մեքենավարելիս հավելյալ ուշադրություն դարձրեք ձեր շրջակայքում քայլող կամ հեծանիվ վարող մարդկանց: Դա մարդկային վարմունք է:



Նախքան շրջադարձ կատարելը կրկին անգամ ստուգեք հետիոտների կամ հեծանվորդների առկայությունը: Միշտ ամբողջովին կանգ առեք նախքան կարմիր լույսի տակ աջ շրջադարձ կատարելը:



Հետիոտնային անցումներում կանգնեք, մինչև մարդիկ անցնեն: Ամեն խաչմերուկ հետիոտնային անցում է, նույնիսկ եթե գծանշված չէ:



Եթե մեկ այլ ավտոմեքենա կանգ է առել հետիոտնային անցումում, դուք նույնպես պետք է կանգն առնեք: Հնարավոր է՝ փողոցն անցնող հետիոտնին չեք տեսնում:



ԿՈՒՅՐ ՇԵՏՈՏՆԵՐ

Այն հետիոտները, որոնք շարժվում են ուղեկցողը շների օգնությամբ կամ կարմիր ծայրով կամ առանց ծայրի սպիտակ ձեռնափայտերով, միշտ ճանապարհի առավելություն ունեն: Այդ հետիոտները մասամբ կամ լրիվ կույր են: Երբ ձեր մոտակայքում գտնվում են այդպիսի հետիոտներ, չափազանց զգույշ եղեք շրջադարձ կատարելիս կամ հետընթաց տալիս, հատկապես եթե վարում եք անադմուկ կոմբինացված մեքենա:

Ահա որոշ խորհուրդներ՝ կույր հետիոտներին օգնելու համար:

- Լուսացույցի կամ «կանգ առ» նշանի մոտ մեքենան մի կանգնեցրեք հետիոտնային անցումից ավելի քան 5 ֆուտ (մեկուկես մետր) հեռավորության վրա, եթե չկա առաջընթացը սահմանափակող «կանգ առ» շերտ (գիծ): Կույր հետիոտներն ապավինում են ձեր մեքենայի ձայնին, որով տեղեկանում են ձեր մեքենայի ներկայության մասին, ուստի կարևոր է, որ մեքենան կանգնեցնեք հետիոտնային անցումից մինչև 5 ֆուտ (1,5 մետր) հեռավորության վրա: Կոմբինացված մեքենաների կամ էլեկտրամոբիլների վարորդները պետք է հատկապես տեղյակ լինեն, որ շարժիչի կամ էլեկտրաշարժիչի ձայնի բացակայության պատճառով կույր հետիոտնը կարող է ենթադրել, որ մոտակայքում ոչ մի մեքենա չկա: Հետևեք այս նշանին. երբ կույր անձը դադարեցնում է ձեռնափայտի շարժումը և հետ է քաշվում խաչմերուկից, դա սովորաբար նշանակում է, որ նա պատրաստ չէ հատելու ճանապարհը, և դուք կարող եք անցնել:
- Կանգ առեք բոլոր հետիոտնային անցումների մոտ, որտեղ հետիոտներ են սպասում: Սպասեք, մինչև կույր հետիոտնը անցնի փողոցը:
- Մեքենան մի կանգնեցրեք հետիոտնային անցման մեջտեղում: Դա կույր հետիոտնին ստիպում է շրջանցել ձեր մեքենան և դուրս գալ հետիոտնային անցման սահմաններից դուրս՝ դեպի երթուկեկելի մաս:
- Կույր հետիոտնին բանավոր ցուցումներ մի տվեք: Նախքան փողոցը հատելու որոշում կայացնելը կույր հետիոտնը ունկնդրում է բոլոր մեքենաների ձայները:
- Աջ շրջադարձ մի կատարեք՝ առանց նախապես ճանապարհը ստուգելու: Նախքան շրջադարձը սկսելը ստուգեք հետիոտների, հատկապես կույր հետիոտների, կամ տրանսպորտային միջոցների առկայությունը: Կույր հետիոտները, որոնց լույսը կանաչ է, չեն ակնկալում, որ վարորդը աջ շրջադարձ կկատարի իրենց առջևից: Շրջադարձը կարող է ապակողմորոշել կույր հետիոտնին և նրա համար ստեղծել փողոցը հատելու ժամանակ մեկ այլ աջ շրջադարձ անող մեքենայի կողմից հարված ստանալու վտանգ:
- Ձայնային ազդանշան մի տվեք կույր հետիոտն տեսնելիս: Կույրը գաղափար չունի, թե ինչու եք ազդանշան տալիս, և կարող է վախենալ ազդանշանի ձայնից:
- Մի փակեք մայթը:

ԴՌՒՔ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՈՐԴ ԵՔ:

(նշեք համապատասխան վանդակը)

ԴՌՒՔ	Այո	Ոչ
այլ մեքենաներին վազանցում եք միայն ձախից.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
խուսափում եք վազանցի գոտիները խցանելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ճանապարհը զիջում եք ավելի արագ ընթացող մեքենաներին տեղաշարժվելով դեպի աջ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ըստ հնարավորին աջ եք պահում.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
անվտանգ հեռավորություն եք պահպանում այլ մեքենաների հետևից ընթանալիս.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
պատշաճ տարածություն եք ապահովում վազանց կատարելուց հետո նախորդ գոտին վերադառնալիս.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ամպամած, անձրևոտ, թույլ լուսավորության պայմաններում օգտագործում եք ցոլալպատները.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ճանապարհը զիջում եք հետիոտներին.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ամբողջովին կանգ եք առնում «կանգ առ» նշանների մոտ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
կանգ եք առնում լուսացույցի կարմիր լույսի տակ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
փոխհատուցներին և հետիոտներին մոտենում եք ցածր արագությամբ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
քառակողմ խաչմերուկներում հետևում եք ճանապարհը զիջելու կանոններին.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
եթե հանգամանքները թույլ են տալիս, երթնելում եք նշված թույլատրելի արագությունից ցածր արագությամբ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ճանապարհաշինական տեղամասերում ընթանում եք ավելի դանդաղ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
պահպանում եք գոյություն ունեցող պայմաններին համապատասխանող արագություններ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
շրջադարձ կատարելիս և երթնելության գոտիներում վերադասավորվելիս միացնում եք շրջադարձի ազդանշանները.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
անհրաժեշտության դեպքում տեսողական հարողակցում եք ստեղծում և հայտնում եք ազդանշան տալու ձևը մտադրության մասին.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ընկալում եք ուրիշների մտադրությունները.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

ԴՌՒՔ	Այո	Ոչ
ձայնային ազդանշան օգտագործում եք միայն ըստ անհրաժեշտության.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
խուսափում եք ցոլալպատների հեռարձակ լույսն անհարկի օգտագործելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ճանապարհը զիջում եք հատուկ նշանակության մեքենաներին տեղաշարժվելով դեպի աջ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
խուսափում եք ցոլալպատները թաքցելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
հետադարձը կատարում եք դանդաղ և շրջահայացորեն.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ճանապարհային վթարների մոտակայքում պահպանում եք պատշաճ արագություններ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
խուսափում եք անվայելուչ ժեստերին պատասխանելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
խուսափում եք այլ վարորդներին մարտահրավերներ նետելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
փորձում եք ագրեսիվ վարորդների հետ գործ չունենալ.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
կենտրոնանում եք մեքենան վարելու վրա և ձեր ուշադրությունը չեք շեղում կողմնակի գործողություններով:.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

ԴՌՒՔ ԽՈՐՄԱՓՈՒՄ ԵՔ՝	Այո	Ոչ
քնկոտ վիճակում մեքենա վարելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
աջ շրջադարձի գոտին փակելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
մեկից ավելի կայանման տեղ զբաղեցնելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
հաշմանդամների համար նախատեսված տեղում կայանելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ձեր կողքին կայանված մեքենային դռնով խփելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
մեքենան վարելիս բջջային հեռախոսից օգտվելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
գրուցելու նպատակով ճանապարհի երթնելեղի մասում կանգնելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
հարևան մեքենաներին ձեր բարձրաձայն երաժշտությամբ նեղություն պատճառելուց.....	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Գնահատեք ինքներդ ձեզ.

ՀԱՇՎԵՔ «ՈՉ» ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

(1-3) ԱՆՎՏԱՆՎ ՎԱՐՈՐԴ
(4-7) ԱՆՎՏԱՆՎ ՎԱՐՈՐԴ

(8-11) ՄԱՍՄԱՐ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՈՐԴ
(12+) ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՈՐԴ

ՃԱՆԱԳԱՐՆԱԵՒՆԱԲԱՐՆԵՐ ԵՎ ԱԵՒՍԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ («ԿՈՆԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ»)

Նշանները և տեղեկատու ցուցանակները զգուշացնում են, որ առջևում բանվորներ, դանդաղընթաց սարքավորում և երթևեկության համար փակ գոտիներ կան: Կոնաձև, գլանաձև կամ այլ նշանները ձեզ կուղղորդեն աշխատանքների իրականացման տեղամասի միջով: Դանդաղեցրեք մեքենայի ընթացքը և պատրաստ եղեք այն ավելի դանդաղեցնելու կամ կանգ առնելու, եթե ձեր ճանապարհին շինարարական տեխնիկա հանդիպի: Վերադասավորվեք հնարավորինս շուտ, երբ դա կարելի է անել անվտանգ կերպով առանց հատելու կոնաձև կամ գլանաձև արգելանշանների գիծը: Ճանապարհաշինական աշխատանքների իրականացման տարածքներում, որտեղ գոտիները նեղ են կամ կողակը փակված է, զգուշացեք հեծանիմներից և դրանց առկայության դեպքում «համատեղ օգտագործեք ճանապարհը»: Ուղղորդվեք աշխատանքների իրականացման տեղամասում արագության սահմանափակման և ցածր թույլատրելի արագության մասին նախազգուշացնող նշաններով:



Ձեր և ձեր ուղևորների անվտանգության համար մի մոռացեք զգուշորեն անցնել աշխատանքների իրականացման տարածքը, դանդաղեցնել մեքենայի ընթացքը, ձեր և դիմացից ընթացող մեքենայի միջև լրացուցիչ տարածություն թողնել, արագ վերադասավորվել, պատրաստ լինել մեքենայի ընթացքը հանկարծակի դանդաղեցնելուն կամ կանգ առնելուն, ուշադիր լինել վերջին պահին մի գոտուց մյուսն անցնող վարորդներին նկատելու համար, և աշխատեք մեքենան աշխատանքների իրականացման տեղամասում վարելիս թույլ չտալ ուշադրության շեղումներ: Ուշադրության շեղումները ներառում են ձեր ձեռնազատ բջջային հեռախոսը, տեքստային հաղորդագրություններ կարդալ-ուղարկելը և Գլոբալ տեղորոշման համակարգ (GPS) ու զվարճանքի համակարգեր աշխատեցնելը: Աշխատանքների իրականացման տեղամասում երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված տուգանքները կարող են կազմել \$1000 և ավելի: Ճանապարհաշինական աշխատանքներ կատարող բանվորին վրաերթի ենթարկելու համար մեղադրվող անձնավորությունը կարող է տուգանվել \$2000-ի չափով կամ ազատազրկվել մինչև 1 տարի ժամկետով:



Աշխատանքները դիտելու համար կանգ մի առեք կամ մեքենայի ընթացքը մի դանդաղեցրեք: Ենթարկվեք աշխատողների (ազդարարների) հատուկ նշաններին և ցուցումներին:

ՎՐԱԿԱԿ ՏՈՒԳԱՆՔԻ ԳՈՏԻՆԵՐ

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով առաջացած փասվածքների և մահվան դեպքերի աճի պատճառով, որոշ ճանապարհներ ստացել են «Անվտանգության մեծացման նպատակով կրկնակի տուգանքի գոտիների» կարգավիճակ: Այդ գոտիներում, ինչպես նաև ավտոմայրուղիների այն հատվածներում, որտեղ բանվորների ներկայությամբ ճանապարհաշինական կամ տեխնիկական սպասարկման աշխատանքներ են իրականացվում, խախտումներին համար նախատեսված տուգանքները կրկնապատկվում են (CVC §42010):

ՎԵՐԱԴԱՍՏՎՈՐՈՒՄ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԻ ԸՆԹԱՅՔԻ ԴԱՆԴԱՂԵՑՈՒՄ

Նահանգային ավտոմայրուղիների կամ արագընթաց բազմագոտի ճանապարհների վրա ճամփեզրին կանգնած վթարափրկարարական մեքենայի կամ դեղին նախազգուշակյան լուսազդանշանները թարթող բեռնատար քարշակի կամ վթարային թարթող լուսազդանշանները կամ դեղին նախազգուշակյան լուսազդանշանները միացրած կամ Ավտոտրանսպորտի դեպարտամենտին (*Department of Transportation, Caltrans*) պատկանող մեքենայի մոտենալիս վարորդները պետք է վերադասավորվեն (եթե դա անելն անվտանգ է) և դանդաղեցնեն իրենց մեքենայի ընթացքը: Օրենքի նպատակն է կրճատել մահերի թիվը վթարի ենթարկված կամ փասվածքներ ստացած վարորդներին կամ ճանապարհաշինական աշխատանքներում քնդրկված մարդկանց օգնության ցույց տվող պաշտոնյա անձանց, քարշակող մեքենաների վարորդների, շտապ օգնության բժիշկների, Կալիֆոռնիայի Ավտոտրանսպորտի դեպարտամենտի (*Caltrans*) աշխատակիցների և այլ փրկարարական ծառայությունների անձնակազմերի շրջանում:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈՒՄԱԴՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Բեռնատարի վրա շեղանկյունաձև նշանը ցույց է տալիս, որ բեռնատարով փոխադրվող բեռը (զագ, պայթուցիկ նյութեր և այլն) հնարավոր վտանգ է պարունակում: Այս նշանը կրող մեքենաները պարտավոր են կանգ առնել երկաթուղային գծանցների մոտ, զծերը հաստելուց առաջ:

տանգավոր բեռների ցուցանակներ



ՁԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԽՅԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ձեր մեքենավարման սովորությունների մեջ կատարված փոքրիկ փոփոխությունները կարող են նպաստել երթևեկության սովորական խցանումների քանակի նվազեցմանը:

Մեքենան վարելիս խուսափեք հետևյալ պահվածքից՝

- դիմացի մեքենայի «պոչին կպչելուց», երբ ապահով տարածություն չէք պահպանում դիմացից ընթացող մեքենայից.
- երթևեկության գոտիները ոչ անհրաժեշտաբար փոխելուց, երբ անընդհատ փոփոխում եք արագընթաց մայրուղու երթևեկության գոտիները.
- անուշադրությունից, որն առաջանում է ուտելուց, սեփական արտաքինին հետևելուց, բջջային հեռախոսով զրուցելուց, տեքստային հաղորդագրություններ փոխանակելուց, թերթ կարդալուց և այլն.
- անխնամ վիճակում գտնվող կամ խափանումներով աշխատող մեքենա վարելուց, կամ երբ բենզինը վերջանում է ճանապարհի կեսին, կամ սպառվում է մարտկոցի լիցքը:

ՁԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐԿՈՂ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՊՈՒՄ

Ագրեսիվ մեքենավարումը կարող է երթևեկելի մասում հանգեցնել բազմաթիվ լուրջ ինդիքների: Բոլոր վարորդները պետք է տեղյակ լինեն ագրեսիվ մեքենավարման և «ճանապարհներին դրսևորվող ագրեսիվ վարք» կոչվող պահվածքի մասին և թե ինչ անել այդ երևույթներին հանդիպելու դեպքում:

Ագրեսիվ վարորդների հարցում պետք է հաշվի առնել 2 կարևոր հանգամանք՝

1. սեփական անձի մեջ այդպիսի վարքի ճանաչում և դրանից խուսափում.
2. այդպիսի վարք դրսևորող այլ վարորդներից խուսափում:

Ագրեսիվ վարորդ դառնալուց խուսափելու միջոցները ներառում են՝

- շատ ժամանակ նախատեսեք ձեր ժամանման վայր հասնելու համար.
- մի «կտրեք» այլ մեքենաների ճանապարհը.
- դանդաղ մի ընթացեք ձախակողմյան (արագ) գոտիով.
- ապահով հեռավորություն պահպանեք դիմացից ընթացող մեքենայից.
- անհարկի ժեստեր մի արեք այլ վարորդներին.
- ձայնային ազդանշանն օգտագործեք միայն խիստ անհրաժեշտության դեպքում.
- ագրեսիվ վարորդներին թույլ տվեք անցնել ձեզնից:

Ստորև ներկայացված են ազդեցիկ մեքենավարման հանգեցնող հաճախակի հանդիպող վարքերի օրինակներ և դրանցից խուսափելու խորհուրդներ.

- Երթևեկության գոտու արգելափակում – Մի արգելափակեք վազանցի գոտին: Դուրս եկեք հեռավոր ձախակողմյան գոտուց, եթե այլ տրանսպորտային միջոցներ ուզում են ավելի արագ ընթանալ, և ճանապարհը զիջեք վազանցելու մտադրություն ունեցող մեքենաներին՝ տեղաշարժվելով դեպի աջ:
- Ընթացք դիմացի մեքենայի «պոչից կպած» – Ապահով հեռավորություն պահեք ձեր առջևում գտնվող տրանսպորտային միջոցից: Եթե ինչ-որ մեքենա ընթանում է ձեր «պոչից կպած», տարածություն թողեք ձեր և առջևում գտնվող տրանսպորտային միջոցի միջև:
- Ազդանշանային լույսեր – Վերադասավորվելիս՝ միշտ օգտագործեք ձեր ազդանշանները և խուսափեք երթևեկության գոտիները մյուս տրանսպորտային միջոցներին չափազանց մոտիկ փոխելուց: Վերադասավորվելուց հետո անջատեք լուսազդանշանը:
- Ժեստեր–Եթե պետք է որևէ ժեստ ցույց տալ մեկ այլ վարորդի, դա այնպես արեք, որ չմեկնաբանվի որպես թշնամական կամ վիրավորական ժեստ:
- Երջադարձ չկատարելը – Եթե այլ նշան տեղադրված չէ, կարմիր լույսի տակ ամբողջովին կանգ առնելուց հետո թույլատրվում են աջ շրջադարձեր: Եթե որոշեք սպասել կանաչ լույսին, դա կարող է նյարդայնացնել ձեր հետևում գտնվող մյուս վարորդներին, բայց դա երթևեկության կանոնների խախտում չէ:
- Կայանում – Մի զբաղեցրեք մեկից ավելի կայանման տեղ: Մեքենան մի կայանք հաշմանդամների համար նախատեսված կայանման տարածքում, եթե չունեք հաշմանդամի կայանման ցուցանակ կամ համարանիշ:
- Ցուլալպատերներ – Եթե օգտագործում եք ցուլալպատերների հեռարձակ լույսը, հանդիպակաց երթևեկության համար կամ հետևից որևէ տրանսպորտային միջոցի մոտենալիս փոխեք մոտարձակ լույսի: Հանդիպակաց մեքենայի հեռարձակ լույսերին մի պատասխանեք ձեր սեփական հեռարձակ լույսերով:
- Երթևեկության հոսքին միանալը – Երբ երթևեկությունը թույլ է տալիս, տեղ ազատեք տրանսպորտային միջոցների համար, որպեսզի մտնեն ձեր երթևեկության գոտին:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

ՄԵՔԵՆԱՆ ԴԱՐՁՐԵՔ ՏԵՍԱՆԵՐԻ

Վարորդի մեռյալ գոտիները պատկերված են 70-րդ էջի նկարում: Եթե նայեք միայն հայելիների մեջ, չեք կարող տեսնել այդ մեռյալ գոտիներում գտնվող տրանսպորտային միջոցները: Երջեք գլուխը՝ ստուգելու համար, թե արդյոք այդ մեռյալ գոտիներից որևէ մեկում մեքենա կա: Երկար ժամանակ մի փնտցեք մեկ այլ վարորդի մեռյալ գոտում: Հնարավորինս շուտ հետ փախեք այդ մեքենայից կամ վազանցեք այն:

ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ Է ՃԱՆԱՊԱՐՀԸ

Որքան արագ եք ընթանում, այնքան ավելի անկառավարելի է դառնում մեքենան: Սահմանված թույլատրելի արագությամբ ընթանալու փոխարեն կարգավորեք ձեր արագությունը ըստ ճանապարհային կամ այլ պայմանների, որոնք կարող են ազդել մեքենայի անվտանգ շահագործման վրա:

ՈՒՈՐԱՆՆԵՐ

Ուրբանների վրա մեքենան գտնվում է հզոր կենտրոնախույս ուժի ազդեցության տակ, ինչը հատկապես վտանգավոր է, երբ ճանապարհը սայթաքուն է: Անձրևը, ցեխը, ձյունը, սառույցը կամ կոպիճը սայթաքուն են դարձնում ճանապարհը: Եթե ուրբանի մուտքի մոտ նշված չէ թույլատրելի արագությունը, հարկավոր է հաշվի առնել, թե որքան կտրուկ է ուրբանը, և ընտրել համապատասխան արագություն: Դանդաղեցրեք մեքենայի ընթացքը նախքան ուրբան մուտք գործելը: Դուք չգիտեք՝ ինչ կարող է լինել առջևում (լրված շարժիչով մեքենա, ճանապարհատրանսպորտային պատահար և այլն): Ուրբանում արգելակելը կարող է կողասահում առաջացնել:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհարուժների հավանականությունն ավելի մեծ է, երբ տրանսպորտային միջոցներից մեկը ճանապարհով ընթացող այլ մեքենաներից ավելի արագ կամ ավելի դանդաղ է շարժվում: Եթե դուք այլ մեքենաներից ավելի արագ եք շարժվում, ապա մեծացնում եք ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ ընկնելու հնարավորությունը: Թույլատրելի արագության գերազանցումը շատ ժամանակ չի տնտեսում: Այլ մեքենաներից ավելի դանդաղ ընթանալը կամ հանկարծակի կանգ առնելը կարող է լինել նույնքան վտանգավոր, որքան թույլատրելի արագության գերազանցումը, եթե ոչ ավելի վտանգավոր, քանի որ դուք կարող եք ընդհարուժներ առաջացնել հետևից շարժվող մեքենաների հետ կամ ստիպել, որ այլ վարորդներ թեքվեն ճանապարհից՝ ձեր մեքենային բախվելուց խուսափելու համար: Եթե գտնվում եք արագընթաց գոտում և նկատում եք, որ աջ գոտիով ընթացող մեքենաները վազանցում են ձեզ, կամ մեքենաների շարք է կազմվել ձեր ետևից, լավագույն գործողությունը աջ գոտի տեղափոխվելն է, երբ դա անելն անվտանգ է, և թույլ տալը, որ այդ մեքենաներն անցնեն:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՎՏԱԳՆԵՐԸ

Ջուր ճանապարհին

Դանդաղեցրեք մեքենայի ընթացքը, երբ ճանապարհի վրա շատ ջուր կա: Հորդառատ անձրևի պայմաններում 50 մղոն/ժամ (80 կմ/ժ) կամ ավելի մեծ արագությամբ ընթանալիս դողերը կարող են ամբողջապես կտրվել ճանապարհից, և մեքենան կշարժվի ջրի վրայով կամ կենթարկվի «ջրասահքի»: Այդ ժամանակ շարժման ուղղության աննշան փոփոխությունը, արգելակումը կամ քամու թեթև պոթկումը կարող է առաջացնել մեքենայի կողասահում:

Եթե մեքենան սկսի սահել, մի արգելակեք, այլ աստիճանաբար իջեցրեք արագությունը:

Սայթաքուն ճանապարհներ

Անձրևի առաջին իսկ նշանների դեպքում դանդաղեցրեք մեքենայի ընթացքը, հատկապես չորային եղանակից: Այդ ժամանակ է, որ ճանապարհների մեծ մասը դառնում է առավել սայթաքուն, որովհետև ճանապարհի յուղն ու փոշին դեռ չեն հասցրել մաքրվել: Սայթաքուն ճանապարհի վրա անվաղողերը կորցնում են անհրաժեշտ կառչելիությունը: Շարժվեք ավելի դանդաղ, քան չոր ճանապարհի վրա: Մեքենայի արագությունը կարգավորեք հետևյալ կերպ

- թաց ճանապարհի վրա ընթացեք ժամում 5-10 մղոն (8-16 կմ) ավելի դանդաղ.
- տոփանված ձյունածածկույթի վրա կիսով չափ նվազեցրեք արագությունը.
- սառցապատ ճանապարհի վրա դանդաղեցրեք ընթացքը մինչև «սողալու» աստիճան:

Որոշ ճանապարհների մակերևույթները թաց ժամանակ ավելի սայթաքուն են, քան այլ ճանապարհներ, և սովորաբար ունենում են նախազգուշացնող նշաններ: Ահա մի քանի հայտանիշեր, որոնք կօգնեն որոշել, թե որ ճանապարհներն են սայթաքուն.

- ցուրտ, խոնավ օրերին ծառերի կամ շենքերի սովերները կարող են թաքցնել սառույցի շերտերը: Ճանապարհի այդ հատվածներն առաջին են սառչում և վերջինը չորանում.
- կամուրջները և ուղեանցները սովորաբար ճանապարհի մացած մասից ավելի շուտ են սառչում: Դրանք կարող են թաքցնել սառույցի շերտերը.
- երբ շոգ եղանակին սկսում է անձրև գալ, ճանապարհը կարող է շատ սայթաքուն լինել առաջին մի քանի րոպեի ընթացքում: Տաքությունից ասֆալտի յուղը դուրս է գալիս մակերևույթ: Դրանից ճանապարհը սայթաքուն է դառնում, մինչև յուղը լվացվում է ճանապարհի մակերևույթից:

Ուժեղ քամիներ

Ուժեղ քամիները կարող են մեքենա վարելիս լուրջ վտանգ ներկայացնել, հատկապես խոշոր ավտոմեքենաների դեպքում, օրինակ բեռնատար ավտոմեքենաների, զբոսաշրջային մեքենաների և կցորդներով ավտոմեքենաների: Ուժեղ քամիների ժամանակ մեքենա վարելիս կարելի է ձեռնարկել հետևյալ նախազգուշական միջոցները.

- Նվազեցրեք արագությունը: Դանդաղ ընթացքը թույլ է տալիս ավելի հեշտ կառավարել տրանսպորտային միջոցը և քամու ուժեղ պոռթկման դեպքում արձագանքելու ավելի շատ ժամանակ է ապահովում:
- Ձեռքերով ամուր բռնեք մեքենայի դեկը: Քամու ուժեղ պոռթկումներն անկանխատեսելի են, և եթե դուք մեքենայի դեկը ամուր չեք պահում, նման պոռթկումների արդյունքում դեկը կարող է դուրս փախչել ձեր ձեռքերից:
- Եղեք աչալուրջ: Նայեք առաջ և զգուշացեք ճանապարհի վրա առկա կողմնակի առարկաներից: Ուժեղ քամիները կարող են ավտոմայրուղու, կամ նույնիսկ անմիջապես ձեր ուղու վրա կողմնակի առարկաներ նետել: Նայելով առաջ, դուք ավել շատ ժամանակ եք ունենում ճանապարհային վտանգներից խուսափելու համար:
- Մի օգտվեք «կռուիզ կոնտրոլ» համակարգից: Քամու անսպասելի պոռթկումների ժամանակ դուք կարող եք լիարժեք կառավարել արագարարի (գազի) ոտնակը:
- Ձեռնարկեք կանխազգուշական միջոցներ: Սպասեք, մինչև փոթորիկը հանդարտվի: Անվտանգության նպատակներով խորհուրդ է տրվում մոտենալ ճանապարհի եզրին և կանգ առնել:

Մեքենավարում մառախուղի կամ թանձր ծխի պայմաններում

Մառախուղի կամ թանձր ծխի պայմաններում մեքենավարման վերաբերյալ լավագույն խորհուրդը ԶՎԱՐԵԼԸ Է: Եթե հնարավոր է, հետաձգեք ուղևորությունը, մինչև մառախուղը ցրվի: Սակայն, եթե ուղևորությունն անհետաձգելի է, ուրե՛մս շարժվեք դանդաղ, միացրեք ապակեմաքրիչները և օգտագործեք ցուլալապտերների մոտարձակ լույսը: Մառախուղն անդրադարձնում է ցուլալապտերների հեռարձակ լույսն ու կուրացնում վարորդին:

Երբեք մեքենան մի վարեք միայն կայանման կամ հակամառախուղային լույսերով:

Մեծացրեք տարածությունը դիմացից ընթացող մեքենայի ու ձեր միջև և այնպիսի արագությամբ ընթացեք, որ կարողանաք մեքենան կանգնեցնել առջևում տեսանելի տարածության մեջ: Աշխատեք չհատել երթևեկության գոտիները կամ վազանց չկատարել, եթե դա խիստ անհրաժեշտ չէ: Փորձեք լսել այն մեքենաների ձայնը, որոնք չեք կարող տեսնել: Անհրաժեշտության դեպքում լավագույն տեսանելիությունն ապահովելու համար օգտագործեք ապակեմաքրիչներն ու ապակետաքացուցիչը:

Եթե մտախոռոչն այնքան թանձրանա, որ հազիվ տեսնեք ճանապարհը, ամբողջովին դուրս եկեք ճանապարհից, միացրեք վթարային լուսազդանշանները և սպասեք, մինչև եղանակային պայմանները բարելավվեն:

Մեքենավարում արևացույթի պայմաններում

Արևացույթը կարող է շատ վտանգավոր լինել մեքենավարման ժամանակ: Հետևյալ խորհուրդները կարող են օգնել հաղթահարել արևացույթի ազդեցությունը.

- հողմապակին ներսից և դրսից պահեք մաքուր.
- համոզվեք, որ հողմապակու մաքրիչները լավ աշխատանքային վիճակում են, իսկ ապակեմաքրիչ հեղուկը լիքն է.
- կրեք բևեռացած արևային ակնոց.
- Բավարար տարածություն պահպանեք ձեր մեքենայի և շրջապատում առկա տրանսպորտային միջոցների միջև: Ավտոմեքենայի հովարը նույնպես պետք է զերծ լինի այն ամենից, ինչը կսահմանափակի օգտագործումը, և պետք է լինի սարքին վիճակում.
- խիստ ուշադիր եղեք հետիոտների նկատմամբ: Հնարավոր է, որ դժվարությամբ տեսնեք նրանց.
- փորձեք խուսափել արևածագի և մայրամուտի ժամանակ մեքենա վարելուց:

Մեքենավարում մթության պայմաններում

Գիշերը մեքենա վարելն ավելի դժվար ու վտանգավոր է, քան ցերեկը: Այնպիսի արագությամբ ընթացեք, որ կարողանաք մեքենան կանգնեցնել ձեր լապտերների լուսավորության սահմաններում: Գիշերով անձրևի ժամանակ մեքենա վարելիս միացրեք ցուլալապտերների մոտարձակ լույսը: Մեքենան վարելիս մի՛ օգտագործեք միայն կայանման լույսերը:

Որքան հնարավոր է, բաց տեղանքում կամ քաղաքի մուտք փողոցներում մեքենան վարեք հետարձակ լույսերը միացրած, եթե դա արգելված չէ: Հետարձակ լույսերով մի կուրացրեք հանդիպակաց մեքենայի վարորդին: Անհրաժեշտության դեպքում փոխեք մոտարձակ լույսի: Եթե մեկ այլ տրանսպորտային միջոցի լույսերը պայծառ են՝

- ուղիղ մի նայեք հանդիպակաց լույսերին.
- նայեք դեպի ձեր երթևեկության գոտու աջ եզրը.
- դիմացից մոտեցող մեքենային հետևեք աչքի ծայրով.
- մի փորձեք «պատժել» դիմացից եկող վարորդին՝ միացած թողնելով ձեր պայծառ լույսերը: Այդպես վարվելու դեպքում երկուսդ էլ կարող եք կուրանալ շլացուցիչ լույսերից:

Գիշերային ժամերին մեքենա վարելիս հիշեք.

- հետիոտներին և հեծանվորդներին գիշերը շատ ավելի դժվար է նկատել, ուստի աչալուրջ եղեք.

- գիշերը մոտոցիկլետները տեսնելը նույնպես ավելի դժվար է, քանի որ դրանց մեծ մասը մեկ հետևի լապտեր ունի.
- գիշերային ժամերին կարող են կատարվել ճանապարհաշինական աշխատանքներ: Նվազեցրեք արագությունը ավտոմայրուղիների այն հատվածներում, որտեղ շինարարական աշխատանքներ են կատարվում.
- պայծառ լուսավորված որևէ վայրից դուրս գալուց հետո մեքենան դանդաղ վարեք այնքան ժամանակ, մինչև ձեր աչքերը հարմարվեն մթությանը.
- երբ մեկ լույս ունեցող մեքենա է ձեզ մոտենում, տեղաշարժվեք հնարավորինս դեպի աջ: Դա կարող է լինել հեծանիվ կամ մոտոցիկլետ, բայց կարող է լինել նաև մեկ բացակայող լապտեր ունեցող մեքենա:

Մեքենավարում անձրևի կամ ձյան պայմաններում

Ճանապարհների պատվածքը մեծ մասամբ առավել սալաքարոն է այն ժամանակ, երբ անձրևը կամ ձյունը նոր է սկսվում, քանի որ յուղն ու փոշին դեռ մաքրված չեն լինում: Դանդաղեցրեք մեքենայի ընթացքը անձրևի, մանրամաղ անձրևի կամ ձյան առաջին նշանների դեպքում: Միացրեք հողմապակու մաքրիչները, ցուլալապտերների մոտարձակ լույսը և ապակետաքացուցիչը: Ուժգին անձրևախառն փոթորկի կամ ձյունամրրիկի ժամանակ հնարավոր է, որ ճանապարհի տեսանելիությունը 100 ֆուտից (30 մետրից) ավելի չլինի: Եթե չեք կարողանում տեսնել 100 ֆուտից ավելի հեռու, ապա անհնար է մեքենան անվտանգ վարել ժամում 30 մղոնից (48 կիլոմետրից) ավելի մեծ արագությամբ: Գուցե հարկ լինի ժամանակ առ ժամանակ կանգ առնել և ցեխը կամ ձյունը մաքրել հողմապակու, առջևի ու հետևի լապտերների վրայից: Չյունածածկ տարածքով վարելիս մեքենայում ունեցեք հարկավոր քանակությամբ շղթաներ և համոզվեք, որ դրանք համապատասխանում են տանող անիվների չափերին: Սովորեք, թե ինչպես են տեղադրում շղթաները, նախքան դրա անհրաժեշտությունը կառաջանա:

Հեղեղաօտ երթևեկե՞լի ՄԱՍԵՐ

Երթևեկելի մասում չափազանց շատ ջրի առկայությունը կարող է հեղեղման պատճառ դառնալ: Դա կարող է տեղի ունենալ աստիճանաբար կամ հանկարծակի: Հեղեղը վտանգավոր է և կարող է վտանգավոր լինել կյանքի համար: Կարևոր է հասկանալ երթևեկելի մասում ջրի առկայությունից բխող ռիսկերը: Հեղեղված երթևեկելի մասի վտանգներից են՝

- ճանապարհից տրանսպորտային միջոցի քշվել-տարվելը.
- լողացող բեկորներ և աննկատելի վտանգներ.
- երթևեկելի մասի փլուզում.
- տրանսպորտային միջոցի խափանում (օրինակ՝ արգելալի անսարքություն).
- էլեկտրահարում, եթե հեղեղուժա ուղեկցվում է էլեկտրահաղորդման գծերի տապալմամբ:

Եթե հեղեղված երթևեկելի մաս է հանդիպում, լավագույն որոշումը այլընտրանքային երթուղի գտնելն է: Գուցե հնարավոր լինի աչքաչափով որոշել ջրհեղեղի խորությունը. այն կարող է լինել խորը և անցնելու համար վտանգավոր: Եթե հեղեղված երթևեկելի մասով անցնելուց բացի այլ տարբերակ չունեք, անպայման դանդաղ ընթացեք: Ջրի միջով անվտանգ անցնելուց հետո դանդաղորեն և զգուշորեն ստուգեք արգելալիների աշխատանքը՝ համոզվելու, որ դրանք ճիշտ են գործում:

Մեքենավարում բյրապատ տեղանքում կամ ոլորանների վրա

Երբեք չեք կարող իմանալ, թե ինչ կա շեշտակի վերելքով բլրի կամ կտրուկ ոլորանի մյուս կողմում: Երբ հասնում եք բլրի կամ ոլորանի, դանդաղեցրեք մեքենայի ընթացքը, որպեսզի կարողանաք կանգ առնել վտանգի դեպքում: Դուք պետք է այնքան դանդաղ շարժվեք, որ կարողանաք անմիջապես կանգ առնել:

Ամեն անգամ, երբ որևէ բլուր կամ ոլորան փակում է ձեր տեսադաշտը, մտածեք, որ դիմացը մեկ այլ մեքենա կա: Վազանց կարելի է կատարել տեսադաշտը փակող բլրից կամ ոլորանից առնվազն $\frac{1}{3}$ մղոն (կես կիլոմետր) հեռավորության վրա, քանի որ անվտանգ վազանց կատարելու համար ձեզ առնվազն այդքան տարածություն է հարկավոր:

Ոլորանին կամ բլրի գագաթին հասնելիս մի շարժվեք ճանապարհի ձախ մասով, որովհետև չեք կարող բավականաչափ հեռու տեսնել՝ համոզվելու համար, որ վազանց կատարելն անվտանգ է:

Երթևեկության ընդհատումներ

Իրավապահ մարմինները երթևեկության ընդհատումներն օգտագործում են, որպեսզի՝

- դանդաղեցնեն կամ կանգնեցնեն երթևեկությունը՝ ճանապարհը վտանգագերծելու համար.
- ձեռնարկեն արտակարգ իրավիճակներում իրականացվող գործողություններ.
- կանխեն ճանապարհատրանսպորտային պատահարները թանձր մատախուղի կամ արտասովոր ինտենսիվ երթևեկության պայմաններում:

Երթևեկության ընդհատման ժամանակ ոստիկանը միացնում է հետևի վթարային լուսագդանշանները, դանդաղեցնում մեքենայի ընթացքը և շարժվում գալարած՝ մի երթևեկելի գոտուց մյուսն անցնելով: Երթևեկությունն ընդհատելու հարցում ոստիկանին օգնելու համար հետևեք ստորև նշված կանոններին.

- միացրեք վթարային թարթող ազդանշանները՝ առջևում վտանգի առկայության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար.
- սկսեք դանդաղորեն նվազեցնել մեքենայի արագությունը: Կտրուկ մի դանդաղեցրեք մեքենայի ընթացքը, եթե դա անհրաժեշտ չէ բախումից խուսափելու համար: Արագությունը իջեցրեք մինչև դիմացից ընթացող պարեկային մեքենայի արագությունը՝ միաժամանակ անվտանգ հեռավորություն պահպանելով նրանից.
- մի փորձեք վազանցել պարեկային մեքենային: Մի արագացրեք մեքենայի ընթացքը, քանի դեռ պարեկային մեքենան չի անջատել իր վթարային լուսագդանշանները, և առջևում երթևեկության պայմանները թույլ չեն տվել վերադառնալ բնական արագությունների:

ՊՍՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայելիները, հողմապակին և կողքի պատուհանները ներսից և դրսից մաքուր պահեք: Կեղտոտ պատուհանի վրա ընկնող արևի պայծառ լույսը կամ ցուլապտերների լույսը դժվարացնում են տեսնելը: Նախքան մեքենան վարելը բոլոր պատուհաններից մաքրեք սառույցը, եղյամբ կամ ցողը:

Անձրևի կամ ձյան ժամանակ վարելիս հնարավոր է, որ անհրաժեշտ լինի կանգ առնել և ցելիք կամ ձյունը հեռացնել հողմապակու, հայելիների, առջևի ու հետևի լապտերների վրայից:

ՀԱՐՄԱՐԵՑՐԷՔ ՆՏՏՈՅԸ ԵՎ ՀԱՅԵԼԻՆԵՐԸ

Նախքան անվտանգության գոտին կապելը հարմարեցրեք նստոցը: Այն պետք է բավականաչափ բարձր լինի, որպեսզի տեսնեք ճանապարհը: Տեղից շարժվելուց առաջ ուղղեք հետևի և կողքի դիտահայելիները: Եթե ձեր մեքենան ունի ցերեկային/գիշերային հայելի, սովորեք, թե ինչպես են այն օգտագործում: Գիշերային դիրքում հայելին մասամբ կլանում է հետևից եկող մեքենաների լապտերների կուրացուցիչ լույսը՝ մեծացնելով տեսանելիությունը:

ԱՆՎԱՂՈՂԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Անվաղողերն անվտանգ մեքենավարման կարևոր բաղկացուցիչ մաս են կազմում: Ահա մի քանի պարզ խորհուրդներ, որոնք կօգնեն լավ վիճակում պահել անվաղողերը.

- Անվաղողի կողային մակերևույթի վրա փնտրեք պատրվածքներ կամ փքվածքներ, ստուգեք պահպանաշերտի խորությունը և համոզվեք, որ անվաղողի ճնշումը պատշաճ տիրություն է՝ օգտվելով սեփականատիրոջ ձեռնարկից կամ «ֆունտ-ուժ քառակուսի դյույմի վրա» (PSI) ցուցիչից, որը նշված է մեքենայի դռան ներքին եզրի մեջ:



Եթե տեսնում եք Լինքոլնի գլխի կատարը, ուրեմն նոր անվաղողերի ժամանակն է:

- Կարելի է 1 սենթանոց մետաղադրամ օգտագործել անվաղողի պահպանաշերտը ստուգելու համար:

- Մետաղադրամն այնպես բռնեք, որ տեսնեք Աբրահամ Լինքոլնի գլուխը: Պետք է մետաղադրամը պահեք մատների արանքում, որպեսզի գլուխը նայի ձեզ ու ամբողջովին տեսանելի լինի:
- Մետաղադրամը՝ գլուխը ներքև ուղղված, մտցրեք դողածածկանի պահպանաշերտի ամենախորը ակոսի մեջ: Եթե գլուխն ամբողջովին տեսանելի է, ապա հարկավոր է փոխել անվաղողերը:

ԿԱՆԱՉ ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ

Կանաչ մեքենավարումը կամ «խելացի» մեքենավարումը միջոցառումների և մեթոդների համալիր է, որն առավելագույնի է հասցնում տրանսպորտային միջոցի վառելիքի օգտագործման արդյունավետությունը և նվազեցնում է արտանետումները՝ կատարելագործելով մեքենավարման սովորությունները և շարունակաբար իրականացնելով տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկում: Համաձայն ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (*U.S. Environmental Protection Agency, EPA*)՝ «...տրանսպորտի ոլորտին բաժին են ընկնում ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ ծավալները»:

Ահա մի քանի հեշտ հիշվող միջոցառումներ, որոնք կարելի է օգտագործել կանաչ մեքենավարման համար.

- Վարք – Մեքենայի ընթացքն արագացրեք ու դանդաղեցրեք սահուն կերպով և պահպանեք կայուն միջին արագություն:
- Տեխնիկական սպասարկում – Մեքենան պահեք լավ վիճակում՝ կանոնավոր կերպով անվաղողերը փչելով, յուղը փոխելով և գտիչները ստուգելով:



Պ.Օ.Փ.Գ. խորհուրդներ




Պ. Պահպանաշերտ

Դեպի ներքև ուղղված 1 սենթանոց մետաղադրամը տեղադրեք դողածածկանի պահպանաշերտի մեջ: Եթե կարողանաք ամբողջությամբ տեսնել Լինքոլնի գլուխը, ապա պահպանաշերտի խորությունը չափազանց փոքր է, և անհրաժեշտ է նոր անվադող:



Օ. Օդամղում

Ամիսը մեկ ստուգեք օդի ճնշումը: Անվադողի ցածր ճնշումը կարող է հանգեցնել դողի մաշվածքի կամ բենզինի ծախսի ավելի ցածր արդյունավետության:



Փ. Փոխատեղում

Ամեն 3000–5000 մղոն վազքից հետո փոխատեղեք անվադողերը՝ դողածածկանի պահպանաշերտի ծառայության ժամկետը մեծացնելու համար:



Գ. Գնահատում

Ամեն օր գնահատեք անվադողերի վիճակը՝ արտասովոր մաշվածք, ճաքեր և մեխեր հայտնաբերելու համար:

Ամսական ընդամենը մի քանի րոպե է հարկավոր անվտանգ անվադող ունենալու համար:



- Քաշ – Ազատվեք մեքենայի ավելորդ քաշից՝ բեռնախցիկը մաքրելով կամ տանիքից ուղեբեռի դարակները հանելով:

Արտանետումների հետագա նվազեցման համար նկատի ունեցեք բանաձ գազեր չարտանետող տրանսպորտային միջոց, որը սնուցվում է էլեկտրականությամբ կամ ջրածնով: Էլեկտրացանցին միացվող էլեկտրական ավտոմեքենաները լիցքավորվում են զիջերվա ընթացքում կամ հանրային կամ աշխատավայրի լիցքավորման կայանում: Ջրածնային վառելիքով տարրերից սնուցվող էլեկտրական ավտոմեքենաները վերալիցքավորվում են հանրային ջրածնային կայաններում: Երկուսն էլ չունեն արտանետիչ խողովակից մթնոլորտ նետվող արտանետումներ, չեն պահանջում յուղի փոխում, ապահովում են վառելանյութի գերազանց խնայողություն և նվազագույն տեխնիկական սպասարկում:

ՄԱՆՈՅՈՒԹՅՈՒՆ, Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.FuelEconomy.gov: Կանաչ մեքենավարումը խրախուսվում է Փոխադրումների և օդի որակի վարչության (*Office of Transportation and Air Quality*) և ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության կողմից:

ԱՅԼ ՎՏԱՆԳՆԵՐ

Գազային շարժիչով աշխատող բոլոր տրանսպորտային միջոցները ածխածնի մենօքսիդ են արտադրում: Ածխածնի մենօքսիդը թունավոր, անհոտ գազ է, որն արտազատվում է տրանսպորտային միջոցի արտանետիչ խողովակից: Ածխածնի մենօքսիդով թունավորման ախտանիշներից են՝ հոգնածություն, հորանջում, գլխապտույտ, սրտխառնուք, գլխացավ և (կամ) գնգոց ականջներում: Կարող եք կանխել ածխածնի մենօքսիդից թունավորումը՝ կանոնավորապես ստուգելով արտանետման համակարգը: Բացի այդ, շարժիչը գործարկելիս, մեքենան վարելիս կամ կայանված ժամանակ շարժիչը միացրած թողնելիս պատուհանը թողեք մասամբ բաց: Երբեք մի գործարկեք շարժիչը, երբ ավտոտնակի դուռը փակ է:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՎԱՐՈՐԴՆ ԱՆԻ, ԵՐԲ ՈՍՏԻԿԱՆԸ ՊԱՇԱՋՈՒՄ Է ԿԱՆԳ ԱՌՆԵԼ

Ցույց տվեք, որ նկատել եք ոստիկանին՝ միացնելով աջ շրջադարձի ազդանշանը: Միացված ազդանշանը ոստիկանին թույլ է տալիս հասկանալ, որ դուք նկատել եք իր ներկայությունը: Ոստիկանը կարող է անհանգստանալ, եթե զգա, որ իրեն չնկատելու եք տալիս, և կարող է մտածել, որ դուք իրեն չենթարկվելու պատճառ ունեք կամ ձեզ վատ եք զգում:

Տեղաշարժվեք դեպի ճանապարհի աջ կողնակը: Ոստիկանն իր պարեկային մեքենայով կառաջնորդի ձեզ: Մի շարժվեք դեպի կենտրոնական բաժանարար գոտի: Կանգ մի առեք արագընթաց բազմագոտի մայրուղու կենտրոնական բաժանարար գոտում կամ երկգոտի ճանապարհի հակադիր կողմում: Դա ինչպես վարորդին, այնպես էլ ոստիկանին ենթարկում է հանդիպակաց երթևեկության հետ բախվելու վտանգին:

Արագընթաց բազմագոտի ճանապարհի վրա տեղափոխվեք դեպի ճանապարհի աջ կողնակը, նույնիսկ եթե գտնվում եք ծառայողական փոխադրամիջոցների կամ ուղևորատար տրանսպորտային միջոցների գոտում: Հնարավորության դեպքում կանգ առեք լավ լուսավորված վայրում: Տեղափոխվեք ճանապարհի երթևեկելի մասից հնարավորին չափ հեռու: Օրվա մուր ժամերին փորձեք ավելի լավ լուսավորված վայր գտնել, օրինակ՝ փողոցային կամ մայրուղու լույսերով լուսավորված վայր, մոտակա ռեստորան կամ տեխնիկական սպասարկման կայան:

Ավարտեք բջջային հեռախոսով խոսակցությունը և անջատեք ռադիոն: Ձեր ողջ ուշադրությունն է հարկավոր, որպեսզի ռատիկանը ձեզ կանգնեցնելու և զրույց ունենալու վրա նվազագույն ժամանակ ծախսի:

Մնացեք մեքենայի մեջ, եթե ռատիկանն այլ բան չի կարգադրում: Երբեք դուրս մի եկեք մեքենայից, եթե ռատիկանը նման կարգադրություն չի անում: Ոստիկանի պահանջով մեքենան կանգնեցնելու ժամանակ ռատիկանի առաջնահերթ խնդիրներն են ձեր և ձեր ուղևորների անվտանգությունն ու իր՝ ռատիկանի անվտանգությունը: Մեծ մասամբ ձեզ և ձեր ուղևորների համար ամենից ապահովը մեքենայի մեջ մնալն է: Առանց ռատիկանի կարգադրության մեքենայից դուրս գալը կարող է մեծացնել որևէ անցնող տրանսպորտային միջոցի կողմից վրատերթի ենթարկվելու վտանգը և (կամ) ավելացնել ռատիկանի՝ իր նկատմամբ սպառնալիք զգալու աստիճանը:

Ձեր և ուղևորների ձեռքերը պետք է լինեն պարզորոշ տեսանելի դիրքում, օրինակ՝ դեկանվի վրա, ծնկներին և այլն: Ոստիկանի պահանջով մեքենան կանգնեցնելու ժամանակ վարորդի և բոլոր ուղևորների ձեռքերը չտեսնելը ռատիկանի մոտ մեծացնում է սպառնալիքի զգացողությունը: Իրավապահ մարմինների աշխատակցի նկատմամբ բռնության կիրառմամբ կատարվող հանցավոր գործողությունների մեծ մասը տեղի է ունենում ձեռքերի օգնությամբ, օրինակ՝ հրագնելով կամ սուր առարկայով: Եթե ձեր պատուհանները մզացված են, խորհուրդ է տրվում բացել պատուհանները աջ կողմակի վրա մեքենան կանգնեցնելուց հետո, և նախքան ռատիկանը կսկսի խոսել ձեզ հետ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽՈՐՀՈՒՐՆԵՐ

Կողասահում սայթաքուն մակերևույթների վրա

Մառույցը և տոփանված ձյունածածկույթը կարող են մեքենայի սահելու պատճառ դառնալ, հատկապես եթե մեքենան շատ արագ էք վարում կամ ընթանում էք զառիվայր ճանապարհով: Եթե մեքենան սկսի սահել՝

- թուլացրեք արագարարի (գազի) ոտնակը.
- այլևս մի արգելակեք.
- դեկանիվը պտտեք կողասահման ուղղությամբ:

Եթե սայթաքուն մակերևույթի վրա կորցնում եք մեքենայի կառավարումը, փորձեք գտնել մի բան, որը կարող է կանգնեցնել մեքենան: Փորձեք այնպես անել, որ մեքենայի գոնե մի անիվը հայտնվի ճանապարհի չոր պատվածքի կամ կողմակի վրա: Հնարավոր է, որ մեքենան կանգնեցնելու համար ստիպված լինեք դանդաղորեն մոտենալ ձյունաթմբի կամ թփերի:

Մայթաքուն ճանապարհի վրա կողասահումը կանխելու համար՝

- մեքենան վարեք դանդաղ և ավելի մեծ հեռավորություն պահպանեք առջևից ընթացող մեքենայից.
- դանդաղեցրեք մեքենայի ընթացքը, երբ մոտենում եք ոլորանների և փոխհատուցների.
- խուսափեք կտրուկ շրջադարձերից.
- խուսափեք կտրուկ արգելակումից: Մեքենայի ընթացքը դանդաղեցնելու կամ կանգ առնելու համար մի քանի անգամ թեթևակի սեղմեք արգելակը (դա մի արեք չլրվող արգելակներով).
- կտրուկ գառիվայր ճանապարհի վրա արգելակեք շարժիչով.
- խուսափեք հատկապես սայթաքուն հատվածներից, օրինակ՝ սառցե կղզյակներից, թաց տերևներից, յուղից կամ խոր ջրափոսներից:

Եթե արգելակները խոնավանան, չորացրեք դրանք՝ միաժամանակ թեթևակիորեն սեղմելով արագարարի (գազի) և արգելակի ոտնակները, որպեսզի մեքենան շարժվի՝ հաղթահարելով արգելակային կոճղակների ճնշումը: Դա արեք միայն այնքան ժամանակ, մինչև արգելակները չորանան:

ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄԻՆ ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՊԱՏՎԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ

Եթե անիփերը պատվածքից թեքվում և դուրս են գալիս, ամուր բռնեք դեկը, ոտքը թուլացրեք արագարարի (գազի) ոտնակի վրա և մեղմորեն արգելակեք: Ստուգեք ձեր հետևից ընթացող երթևեկությունը, հետո հանգիստ վերադարձեք պատվածքի վրա: Չի կարելի կտրուկ քաշել կամ շրջել դեկը. դրա հետևանքով կարող եք հայտնվել հանդիպակաց երթևեկության մեջ:

Արագացմամբ կողասահում

Արագացմամբ կողասահումը սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ տանող անիփերը կորցնում են կառչելիությունը ճանապարհի մակերևույթի հետ: Սահող մեքենայի կառավարումը չկորցնելու համար մի սեղմեք արգելակները: Թուլացրեք արագարարի (գազի) ոտնակը և ուղղեք առջևի անիփերը, մինչև մեքենան սկսի ուղղվել:

Լոված անիփերով կողասահում

Սովորաբար, այս տիպի կողասահումն առաջանում է, երբ մեծ արագության ժամանակ ուժգին սեղմում եք արգելակը, և մեքենայի անիփերը լրվում են: Մեքենան կսահի՝ անկախ այն բանից, թե որ կողմ կթեքեք դեկը: Անիփերը բլրկավորումից հանելու համար ոտքը վերցրեք արգելակի ոտնակից: Այնուհետև ուղղեք առջևի անիփերը, մինչև մեքենան սկսի ուղղվել: Եթե ձեր մեքենան չունի չլրվող արգելակներ, և դուք սկսում եք լոված անիփերով կողասահել, ոտքն աստիճանաբար դրեք արգելակի ոտնակին, մինչև անվտանգ արագություն ձեռք բերեք մեքենավարումը շարունակելու համար: Մակայն, եթե սեղմում եք արգելակի ոտնակը և այն հասնում է հատակին, արագորեն մղեք արգելակի ոտնակը՝ ճնշում ստեղծելու համար: Արգելակները մղելու ընթացքում մեքենան փոխեք ավելի ցածր կամ չեզոք փոխանցման՝ ընթացքը դանդաղեցնելու համար: Այնուհետև փորձեք կանգ առնելու համար օգտագործել վթարային կամ կայանման արգելակը: Աստիճանաբար դանդաղեցրեք ընթացքը, մինչև արագությունն անվտանգ լինի ճանապարհը շարունակելու համար:

Արագարարի խափանում

Եթե արագարարը խափանվի, դուք պետք է՝

1. անցնեք արագության փոխանցման տուփի չեզոք դիրքին.
2. արգելակեք.
3. ուշադիր հետևեք ճանապարհին.
4. փնտրեք երթևեկության հոսքը շրջանցող այլընտրանքային երթուղի կամ այլ ելք.
5. մյուս վարորդներին նախազգուշացնեք ձայնային ազդանշանի և վթարային լուսազդանշանի միացման միջոցով.
6. փորձեք ավտոմեքենան անվտանգ կերպով հանել ճանապարհից.
7. կանգնեք և անջատեք վառոցքը:

Զգուշացում. Մեքենայի շարժման ընթացքում վառոցքն անջատելը կարող է արգելափակել դեկանիվը, և դուք այլևս չեք կարողանա կառավարել մեքենան):

Ղեկի մեխանիզմի փականք

Երբ շարժիչն աշխատում է, երբեք մեքենայի վառոցքը մի դրեք «փակ» (lock) դիրքում, այլապես դեկանիվը կարգելափակվի, և դուք կկորցնեք մեքենայի կառավարումը:

ԲԱՆՈՒՄԸ ԴԺԲԱՆՑ ՊԱՏԱՀԱՐ ԶԷ

Բախումների պատճառները

Ճանապարհատրանսպորտային պատահարների ամենատարածված պատճառներն են՝

- վարորդի ուշադրությունը շեղող գործոնները.
- բարձր արագությունը.
- ճանապարհի հակառակ կողմով շարժվելը.
- սխալ տեղից շրջադարձ կատարելը.
- ճանապարհի առավելության կանոնները խախտելը.
- կանգի ազդանշաններն ու ճանապարհային նշաններն անտեսելը:

Եթե ճանապարհին վթարային լուսազդանշանները միացրած մեքենա տեսնեք, իջեցրեք ձեր արագությունը: Հնարավոր է, որ առջևում ընդհարում կամ որևէ այլ պատահար է տեղի ունեցել: Եթե որևէ մեկը խնդրի, կանգնեք և օգնություն ցույց տվեք, եթե ոչ՝ զգուշորեն առաջ շարժվեք:

Եթե հնարավոր է, աշխատեք ընդհարման կողքով չանցնել: Տուժածներն ավելի արագ օգնություն կստանան, եթե այլ մեքենաներ օգնության ճանապարհը չփակեն:

Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից

Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից՝

- դուք պետք է կանգ առնեք: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը ժառանգաբար ստացած լինի և ձեր օգնության կարիքն ունենա: Կանգ չառնելու դեպքում ձեզ կարող են դատապարտել «վրաերթի ենթարկելու և փախուստի դիմելու» համար և խստորեն պատժել.
- եթե տուժածներ կան, զանգահարեք 9-1-1.

- Եթե որևէ մեկը ժամանակահատվածում չի ստացել կամ չի գոհվել, մեքենան դուրս բերեք ճանապարհի երթևեկելի մասից.
- Ընդհատված իրավունքի վկայականը, տրանսպորտային միջոցի գրանցման քարտը, ֆինանսական պատասխանատվությունը հաստատող փաստաթուղթը և ներկա հասցեն ցույց տվեք պատահարի մասնակից վարորդին կամ անձանց կամ պաշտոնական անձանց.
- Եթե որևէ մեկը ժամանակահատվածում չի ստացել կամ գոհվել է, ապա դուք (կամ ձեր ապահովագրական գործակալը, միջնորդը կամ օրինական ներկայացուցիչը) պետք է բախումից հետո 24 ժամվա ընթացքում գրավոր զեկույց ներկայացնեք ոստիկանությանը կամ Կալիֆոռնիայի մայրուղիների պարեկային ծառայությանը (*California Highway Patrol, CHP*).
- Դուք (կամ ձեր ապահովագրական գործակալը, միջնորդը կամ օրինական ներկայացուցիչը) պետք է 10 օրվա ընթացքում գրավոր զեկույց ներկայացնեք DMV-ին.
- Եթե դուք հարվածել եք կայանված մեքենայի կամ որևէ այլ գույքի, ձեր անունը, հեռախոսահամարը և հասցեն գրեք թղթի կտորի վրա և այն թողեք մեքենայի մեջ կամ հուսալի կերպով փակցրեք մեքենային կամ ժամանակահատվածում գույքին: Ընդհատված իրավունքի պատասխանատվության պատահարի մասին հայտնեք քաղաքային ոստիկանությանը, իսկ եթե տվյալ վայրը չմիավորված տարածքի կարգավիճակ ունի՝ CHP-ին.
- Եթե ձեր մեքենան կայանված ժամանակ տեղից շարժվում և հարվածում է մեկ այլ մեքենայի, փորձեք գտնել այդ մեքենայի տիրոջը և միջադեպի մասին վերը նշված կարգով հայտնեք իշխանություններին.
- Եթե դուք ժամանակահատվածում կամ մահ եք պատճառում որևէ կենդանու, զանգահարեք կենդանիների պաշտպանության մոտակա կազմակերպություն, ոստիկանություն կամ CHP: Մի փորձեք տեղից շարժել ժամանակահատվածում ստացած կենդանուն կամ հեռանալ թողնելով, որ վիրավոր կենդանին սատկի:

Ինչպես հաղորդել բախման մասին

Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից, այդ մասին հայտնեք DMV-ին 10 օրվա ընթացքում, եթե՝

- ավելի քան \$1000-ի վնաս է հասցվել որևէ անձի գույքին.
 - որևէ մեկը ժամանակահատվածում չի ստացել (կարևոր չէ, թե ինչ աստիճանի) կամ գոհվել է:
- Յուրաքանչյուր վարորդ (կամ վարորդի ապահովագրական գործակալը, միջնորդը կամ օրինական ներկայացուցիչը) պետք է զեկույց ներկայացնի **DMV**-ին լրացնելով «Կալիֆոռնիայում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի մասին զեկույցի» (*Report of Traffic Accident Occurring in California, SR 1*) ձևը: Այցելեք www.dmv.ca.gov ինտերնետային կայքը կամ զանգահարեք 1-800-777-0133 հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել SR 1 ձևը: CHP-ն կամ ոստիկանությունը այդ զեկույցը չեն ներկայացնի ձեր փոխարեն:

Դուք կամ ձեր ներկայացուցիչը պետք է ներկայացնեք այդ զեկույցը՝ անկախ այն բանից, թե ընդհարումը տեղի է ունեցել ձեր, թե ուրիշի մեղքով, անգամ եթե այն տեղի է ունեցել մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքում:

Զեր վարորդական իրավունքը կկասեցվի՝

- Եթե ներկայացնեք զեկույցը.
- մինչև 4 տարով, եթե համապատասխան ապահովագրական ծածկույթ չունեք՝ անկախ այն հանգամանքից, թե ով է մեղավոր եղել ընդհարման ժամանակ: Վարորդական իրավունքի կասեցման վերջին 3 տարվա ընթացքում ձեր վարորդական իրավունքի վկայականը կարող է վերադարձվել ձեզ, եթե ներկայացնեք Կալիֆոռնիա նահանգի ապահովագրական վկայական (SR 22/SR 1P), և այն ուժի մեջ մնա այդ 3 տարվա ընթացքում:

Արագընթաց բազմագոտի ճանապարհին

Ըստ CHP-ի տվյալների՝ էթե ձեր մեքենան խափանվում է արագընթաց բազմագոտի մայրուղու վրա

- ապահով կերպով այն տեղափոխեք դեպի աջ կողմնակը.
- էթե պետք է դուրս գաք մեքենայից, դուրս եկեք աջ կողմից՝ երթնելությունից հեռու.
- օգնություն կանչելուց անմիջապես հետո վերադարձեք ձեր մեքենան, նստեք աջ կողմից (երթնելությունից հեռու) և ամրացրեք ամրագոտիները.
- Ժամացրեք մեքենայի ներսում՝ ամրագոտիները կապած, մինչև ձեզ օգնության հասնեն:

Որոշ հանգամանքներում (երբ կողմնակի համար բավարար տեղ չկա, կամ երբ գոյություն ունի արգելափակից կամ արագընթաց բազմագոտի ճանապարհի գոտիներից ու ձեր մեքենայից ապահով հեռավորության վրա Ժամալու տարածք), դուրս եկեք մեքենայից և կանգնեք մեքենայից հեռու: Ձեր հայեցողությամբ օգտագործեք վթարային թարթող լույսերը՝ ըստ եղանակային պայմանների: Այդ լույսերը կարող են օգտակար լինել, սակայն կարող են նաև գրավել հարբած վարորդների ուշադրությունը: CHP-ի Ավտոմայրուղիների սպասարկման պարեկախումբը (*Freeway Service Patrol, FSP*) աշխատանքի գնալ-գալու Ժամանակամիջոցում մատուցում է անվճար ճանապարհային ծառայություններ արտակարգ իրավիճակներում: Եթե FSP-ն չկարողանա աշխատեցնել ձեր մեքենան, այն անվճար կքարշակվի դեպի CHP-ի կողմից հաստատված վայր: FSP-ն ձեզ կտրամադրի նաև լրացուցիչ օգնության կոնտակտային տվյալներ: CHP-ն կտեղեկացնի ավտոակումբին կամ քարշակման ծառայությանը:

Եթե Ժամացել էք արագընթաց բազմագոտի ճանապարհին ձեր տրանսպորտային միջոցի անսարքության պատճառով, ապա FSP-ն՝

- ձեզ կառաջարկի մի գալու գազ, էթե այն վերջացել է.
- ձեր մեքենայի «շարժիչը կգործարկի արտաքին հոսանքի աղբյուրից», էթե մարտկոցը «նստած» է.
- կլիցքավորի ձեր ռադիատորը և խողովակները.
- կփոխի թողած դռը.
- ճանապարհատրանսպորտային պատահարի մասին կգեկուցի CHP-ին:

FSP ծրագիրը՝

- ձեր մեքենան քարշակելով չի հասցնի մինչև ավտոմեքենաների մասնավոր վերանորոգման ծառայություն կամ մասնավոր տուն.
- խորհուրդ չի տա քարշակման ծառայություններ մատուցող ընկերություններ կամ թափքի վերանորոգման արհեստանոցներ.
- չի քարշակի մոտոցիկլետներ.
- օգնություն չի տրամադրի ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից մեքենաներին, էթե դա չի կարգադրվում CHP-ի կողմից:

Զանգահարեք 5-1-1 համարով՝ տեղեկանալու համար, թե արդյոք FSP-ն գործում է այն վայրում, որտեղ գտնվում էք դուք, ինչպես նաև՝ FSP-ին դիմելու կարգի մասին տեղեկություններ ստանալու համար:

Երկաթուղագծերի վրա

Եթե ձեր տրանսպորտային միջոցը լուվել է կամ այլ կերպ խափանվել՝ միաժամանակ արգելափակելով երկաթգծերի որևէ հատված, պատահար կամ մարժսական փաստվածք չկա, և

- նախագուշացնող ազդանշանային լույսերը թարթում են, կամ գնացքը մոտենում է— անհապաղ լքեք մեքենան և գնացքի գալու ուղղությամբ 45 աստիճան անկյան տակ հեռու վազեք ռելսերից ու զանգեք 9-1-1: Գուցե ընդամենը 20 վայրկյան ունենաք նախքան գնացքի գալը փախչելու համար.
- նախագուշացնող ազդանշանային լույսերը չեն թարթում, կամ դուք չեք տեսնում մոտեցող գնացք— դուրս եկեք մեքենայից և անհապաղ հավաքեք Արտակարգ իրավիճակի մասին ծանուցող համակարգի (*Emergency Notification System, ENS*) համարը, որը նշված է երկաթուղային գծանցի սյուների կամ ռելսերի մոտ տեղադրված կառավարման տուփի վրա: Հայտնեք տեղը, հատման համարը (եթե փակցված է) և ռելսուղին հատող ճանապարհը կամ մայրուղին: Անպայման նշեք, որ տրանսպորտային միջոցը գտնվում է ռելսուղու վրա: Այնուհետև զանգեք ENS-ի համարով և 9-1-1:



ՎԱՐՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեքենան անվտանգ վարելու համար լավ տեսողություն է հարկավոր (տե՛ս «Տեսողություն» բաժինը 20-րդ էջում): Եթե դուք լավ չեք տեսնում, ապա չեք կարող ճիշտ գնահատել հեռավորությունները կամ նկատել վտանգը և խուսափել դրանից: Բացի այդ, դուք պետք է նաև լավ «կողմսային» տեսողություն ունենաք, այսինքն՝ կարողանաք տեսնել նաև «աչքի պոչով», որպեսզի նկատեք ձեր կողքից մոտեցող տրանսպորտային միջոցները, երբ նայում եք ձեր դիմաց ճանապարհին: Ստուգեք ձեր տեսողությունը ամեն տարի կամ երկու տարին մեկ անգամ:

ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ

Ձայնային ազդանշանը, շչակը կամ արգելակող մեքենայի դողերի ճռռոցը կարող են զգուշացնել վտանգի մասին: Երբեմն կարող եք լսել մեքենայի ձայնը, բայց չտեսնել այն, հատկապես եթե այն գտնվում է ձեր մեռյալ գոտիներում:

Նույնիսկ սուր լսողություն ունեցող մարդիկ չեն կարող լավ լսել, եթե աղմուկը չափազանց շատ է: Օրենքով արգելվում է մեքենավարելիս ականջակալներ կամ ականջախցաններ կրել երկու ականջներում միաժամանակ:

Լսողության հետ կապված խնդիրները կարող են առաջանալ աստիճանաբար և աննկատ: Պարբերաբար ստուգեք ձեր լսողությունը: Խուլ կամ թույլ լսողություն ունեցող վարորդները կարող են հարմարեցնել անվտանգ մեքենավարման սովորությունները լսողության կորուստը փոխհատուցելու համար ավելի շատ ապավինելով իրենց տեսողական զգայարանին:

ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ ՀՈԳՆԱԾ ԿԱՍ ՔՆԿՈՏ ՎԻՃԱԿՈՒՄ

Հոգնածությունն ու քնկոտությունը կարող են ազդել տեսողության վրա և մեծացնել վտանգներին հակազդելու ժամանակը: Խուսափեք մեքենավարումից, եթե հոգնած կամ քնկոտ եք:

Հետևյալը չի կանխի քնկոտ վիճակում մեքենավարումը՝

- պատուհանն իջեցնելը.
- կոֆեին պարունակող ըմպելիք խմելը կամ շաքար ուտելը.
- ռադիո միացնելը կամ ռադիոյի ձայնն ուժեղացնելը.
- օդորակիչը միացնելը:

Հետևյալը կկանխի քնկոտ վիճակում մեքենավարումը՝

- մեքենա վարելուց առաջ բավականաչափ քնելը և մեքենա չվարելը, եթե լիովին չեք հանգստացել.
- մեքենան ուղևորի հետ վարելը և վարորդներին փոխելը, երբ սկսում եք քնկոտություն զգալ.
- հանգստանալու համար կանոնավոր կերպով կանգ առնելը, նույնիսկ եթե հոգնած չեք.
- ձեզ ձեր նպատակակետը հասցնելու համար տրանսպորտային միջոցի տեղափոխման ծառայություն կամ ընկերոջը կանչելը:

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

Հիշեք, որ բոլոր դեղամիջոցները՝ դեղատոմսով տրվող, թե ազատ վաճառվող, հնարավոր վտանգ են պարունակում և կարող են բացասաբար ազդել մեքենավարման վրա: Ազատ վաճառվող դեղերը, որոնք ընդունում եք մրսածության կամ ալերգիաների դեմ, կարող են քնկոտություն առաջացնել և ազդել մեքենա վարելու կարողության վրա: Եթե դուք անպայման պետք է դեղ ընդունեք մեքենա վարելուց առաջ, հարցրեք ձեր բժշկին կամ դեղագործին, թե ինչ տիպի ազդեցություններ է այն գործում: Ձեր ընդունած դեղամիջոցների գործած ազդեցությունների մասին տեղյակ լինելը ձեր պարտավորությունն է:

Նախքան կորոշեք մեքենա վարել, մի՝

- խառնեք տարբեր դեղեր, եթե ձեր բժիշկը նման ցուցում չի տվել.
- ընդունեք այլ անձի համար նշանակված դեղեր.
- խառնեք դեղերը ոգելից խմիչքի հետ (դեղատոմսով տրվող, թե ազատ վաճառվող):

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՅՁԵՐ

Հույզերը կարող են ազդել ձեր մեքենավարման ոճի վրա: Թույլ մի տվեք, որ հույզերն ազդեն մեքենավարման անվտանգության վրա: Մեքենա վարելիս եղեք շրջահայաց, դրսևորեք առողջ դատողություն և քաղաքավարություն: Հետևեք անվտանգ մեքենավարման կանոններին:

Բժշկի հետ քննարկեք ձեր առողջության խնդիրները, օրինակ՝ վատ տեսողության, սրտի հետ կապված խնդիրների, շաքարախտի կամ ընկնավորության հետ կապված հարցերը և հետևեք նրա խորհուրդներին: Եթե դուք այնպիսի մի հիվանդություն ունեք, որը կարող է ազդել ձեր անվտանգ մեքենավարման կարողության վրա, այդ մասին հայտնեք DMV-ին:

ԻՆՉ ՉԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԶԵՎՈՒՅՆ ԲԺՇԿՆԵՐԸ

Բժիշկները և վիրաբույժները պարտավոր են զեկուցել 14 տարեկան և ավելի բարձր տարիքի այն հիվանդների մասին, որոնց մոտ ախտորոշվել են գիտակցության կորուստներ, Ալցհեյմերի հիվանդություն կամ հարակից այլ խանգարումներ (Առողջապահության և անվտանգության օրենսգիրք (*California Health & Safety Code*, [CHSC] §103900)):

Թեև օրենքը չի պարտադրում, ձեր բժիշկը կարող է DMV-ին զեկուցել նաև այլ կարգի հիվանդությունների մասին, որոնք, նրա կարծիքով, կարող են ազդել ձեր անվտանգ մեքենավարման կարողության վրա:

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՍ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՄԵՔԵՆԱ

ՎԱՐԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Ոգելից խմիչքները և թմրանյութերը թուլացնում են մարդու դատողական ունակությունները: Դատողականության կամ առողջ դատողության թուլացումն ազդում է այն բանի վրա, թե ինչպես եք դուք արձագանքում ձեր լսածին և տեսածին: Ոգելից խմիչքների կամ թմրանյութերի ազդեցության տակ վտանգավոր է նաև երթևեկության մեջ քայլել կամ հեծանիվ վարել:

Ոգելից խմիչքների մասին վերն ասվածի մեծ մասը վերաբերում է նաև թմրամիջոցներին: Ոգելից խմիչքների ազդեցության տակ մեքենա վարելու մասին Կալիֆոռնիայում գործող օրենքը տարածվում է նաև թմրամիջոցների ազդեցության տակ մեքենա վարելու վրա: Այն վերաբերում է «ոգելից խմիչքների և (կամ) թմրանյութերի ազդեցության տակ մեքենա վարելուն»: Եթե ռատիկանը կասկած է ունենում, որ դուք տրանսպորտային միջոցը վարում եք թմրանյութերի ազդեցության տակ, նա իրավունք ունի պահանջելու, որ դուք արյան կամ մեզի ստուգում անցնեք: Ստուգումներից հրաժարվող վարորդների վարորդական իրավունքի վկայականն ավելի երկար ժամանակով կկասեցվի կամ չեղյալ կհայտարարվի:

Ցանկացած դեղի օգտագործումը (օրենքը տարբերություն չի դնում դեղատոմսով տրվող, ազատ վաճառվող կամ արգելված դեղերի միջև), որը բացասաբար է ազդում անվտանգ մեքենավարման ձեր կարողության վրա, արգելված է: Եթե համոզված չեք, արդյոք տվյալ դեղամիջոցն ազդեցություն կունենա ձեր վարելու ունակության վրա, հարցրեք ձեր բժշկին կամ դեղագործին կամ կարդացեք դեղի տուփի վրայի զգուշացնող պիտակը: Ահա որոշ փաստեր.

- մրսածության, խոտատենդի, ալերգիկ հիվանդությունների դեմ կամ նյարդերը կամ մկանները հանգստացնելու համար ընդունած դեղերի մեծ մասը կարող է քնկոտություն առաջացնել.
- դեղերը միասին կամ ոգելից խմիչքի հետ ընդունելը կարող է վտանգավոր լինել: Շատ դեղեր անկանխատեսելի կողմնակի ազդեցություններ են առաջացնում ոգելից խմիչքի հետ միասին ընդունելու դեպքում.
- խթանիչ հաբերը, հոգեխթանիչները կամ նիհարեցնող հաբերը կարող են միաժամանակ ավելի զգոն դարձնել վարորդին: Մակայն կարճ ժամանակ անց դրանք կարող են մարդու մոտ առաջացնել նյարդայնություն, գլխապտույտ և կենտրոնացման կորուստ: Այդ դեղերը կարող են նաև տեսողության վրա ազդել:

Մեքենա վարելուց առաջ արգելվում է ընդունել ցանկացած դեղ, որը «կարող է առաջացնել քնկոտություն կամ գլխապտույտ»: Որևէ դեղ ընդունելուց առաջ անպայման կարդացեք պիտակի վրա գրվածը, որպեսզի իմանաք այդ դեղի ազդեցությունները:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԵՋ ԱԼԿՈՀՈԼԻ ԿԱՄ ԿԱՆԵՓԱՅԻՆ ԱՐՏԱԴԻԱԼՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԱՄ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքը շատ խիստ է մայրուղու վրա կամ մայրուղուց դուրս տրանսպորտային միջոցի մեջ ալկոհոլի կամ կանեփային արտադրանքների օգտագործման կամ առկայության հարցում: Արգելվում է որևէ քանակի ալկոհոլային խմիչք խմել կամ որևէ կանեփային արտադրանք ծխել կամ կոլ տալ մեքենավարելու կամ ավտոմեքենայում որպես ուղևոր երթևեկելու ընթացքում: Տրանսպորտային միջոցի ներսում առկա ալկոհոլի տարան պետք է լինի լիքը, կնքված ու չբացված, սակայն այս օրենքը չի վերաբերում չվարող ուղևորներին ավտոբուսում, տաքսու մեջ, զբոսաշրջային մեքենայում կամ բնակելի ավտոֆուրգոնում: Ալկոհոլի բաց տարան պետք է գտնվի մեքենայի բեռնախցիկում կամ այնպիսի մի տեղում, որտեղ ուղևորներ չեն նստում: Ձեռնոցների արկղիկում ալկոհոլի բաց տարա պահելն առանձնապես խստորեն է արգելվում: Բացի այդ, օրենքն արգելում է կանեփի կամ կանեփային արտադրանքի տարա ունենալ ավտոմեքենա շահագործելու ժամանակ:

Մինչև 21 տարեկան վարորդներ (ալկոհոլային խմիչքի առկայություն)

Եթե ձեր 21 տարին չի լրացել՝

- չի թույլատրվում ձեր մեքենայով սպիրտային խմիչք, զարեջուր կամ գինի տեղափոխել, եթե ձեզ չի ուղեկցում ձեր ծնողը կամ որևէ այլ անձ՝ օրենքով սահմանված կարգով, իսկ տարան լիքը, կնքված և չբացված չէ:
- ձեր մեքենայում ոգելից խմիչք հայտնաբերվելու դեպքում մեքենան կարող է առգրավվել մինչև 30 օրով: Դատարանը կարող է ձեզ տուգանել մինչև \$1000-ի չափով և կա՛մ 1 տարով կասեցնել ձեր վարորդական իրավունքը, կա՛մ պահանջել, որ DMV-ն 1 տարով հետաձգի ձեր առաջին վարորդական իրավունքի վկայականի հանձնումը, եթե դուք դեռ վարորդական իրավունքի վկայական չեք ստացել:
- դուք 1 տարով կզրկվեք վարորդական իրավունքից, եթե մեղադրվեք կա՛մ արյան մեջ 0,01% կամ դրանից բարձր ալկոհոլի պարունակությամբ, կա՛մ ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու համար: Առաջին խախտման դեպքում ձեզանից կպահանջվի ավարտել լիցենզավորված «Վարում ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրի կրթական բաժինը: Նույն խախտումը կրկին թույլ տալու դեպքում ստիպված կլինեք մասնակցել ավելի երկարատև «Վարում ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրի և չեք ունենա «Վարում ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրին հաճախելու համար տրվող սահմանափակ վարորդական իրավունք:

Բացառություն. Դուք կարող եք փակ տարաներով ոգելից խմիչքներ փոխադրել, եթե աշխատում եք որևէ մեկի մոտ, ով վաճառակետից դուրս սպիրտային խմիչքների վաճառք իրականացնելու թույլտվություն ունի:

ԲՈՒՈՐ ՏԱՐԻՔԻ ՎԱՐՈՐՆԵՐ

Արգելվում է մեքենա վարել ցանկացած տիպի ալկոհոլ (ներառյալ դեղամիջոցները, օրինակ՝ հազի հեղուկ դեղախառնուրդը) մեծ քանակությամբ օգտագործելուց, որևէ դեղ (այդ թվում՝ դեղատոմսով) ընդունելուց կամ ալկոհոլն ու դեղերը որևէ համակցությամբ օգտագործելուց հետո, ինչը կարող է ազդել մեքենա վարելու ձեր ունակության վրա:

ԱՐՅԱՆ ՄԵՋ ԱԼԿՈՂՈՒԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱԱՊ) ՄԱՆՄԱՆԱՅԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Ոչ որ իրավունք չունի տրանսպորտային միջոց վարելու, երբ՝

- ԱԱՊ-ը 0,08% է կամ ավելի բարձր, եթե անձը 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի է.
- ԱԱՊ-ը 0,01% է կամ ավելի բարձր, եթե անձի 21 տարին չի լրացել.
- ԱԱՊ-ը 0,01% է կամ ավելի բարձր, եթե անձը ցանկացած տարիքի է և գտնվում է «Վարում ակոնոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրի փորձաշրջանում.
- ԱԱՊ-ը 0,04% է կամ ավելի բարձր, առևտրային վարորդական իրավունքի վկայական պահանջող ցանկացած մեքենայի դեպքում անկախ այն բանից, թե առևտրային վարորդական իրավունքի վկայական տրվել է տվյալ վարորդին, թե ոչ.
- ԱԱՊ-ը 0,04% է կամ ավելի բարձր, երբ վարձու ուղևորը հանցանքի պահին տրանսպորտային միջոցի մեջ է:

Եթե դուք կալանվել կամ ձերբակալվել եք ակոնոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու համար, DMV-ն կարող է կիրառել վարչական գործողություններ, որոնք ուղղված են ձեր վարորդական իրավունքի դեմ: Մինևույն մեղադրանքի համար դատարանը կարող է նաև այլ միջոցներ ձեռնարկել: DMV-ի ձեռնարկած միջոցն անհշվում է միայն ձեր վարորդական իրավունքին: Դատարանի որոշումը կարող է ներառել տուգանքի վճարում, բանտարկում, վարորդական իրավունքի վկայականի կասեցում և մասնակցություն ակոնոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու ծրագրին:

Ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու կապակցությամբ դատաւճի ստանալու դեպքում, DMV-ն կձեռնարկի լրացուցիչ միջոցներ ձեր վարորդական իրավունքը կասեցնելու կամ չեղյալ ճանաչելու ուղղությամբ:

Նմանատիպ դրույթներ (Կալիֆոռնիա նահանգի «Նավակայանների և նավագնացության օրենսգիրք» (*California Harbors and Navigation Code*)) տարածվում են նաև ցանկացած նավ, սահանավ, ջրադահուկներ, ջրային մոտոցիկլետներ կամ նմանատիպ այլ տեխնիկա շահագործողների վրա: Այս մեղադրանքները գրանցվում են ձեր վարորդական գործի մեջ, և դատարանը հաշվի է առնում այդ «նախկին մեղադրանքները», երբ դատաւճի է կայացնում անթափ վիճակում ավտոտրանսպորտային միջոց վարելու վերաբերյալ: Այս մեղադրանքները հաշվի են առնվում նաև այն ժամանակ, երբ, ավտոտրանսպորտային միջոցը վարելու ընթացքում թույլ տրված խախտումների պատճառով, որոշվում է վարորդական իրավունքի վկայականի կասեցման կամ զրկման տևողությունը, ինչպես նաև ձեր իրավունքների վերականգնման պայմանները:

ԻՆՔՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երբ դուք մեքենա եք վարում Կալիֆոռնիայում, դուք համաձայնվում եք անցնել շնչառության կամ արյան, իսկ որոշ դեպքերում նաև մեզի ստուգում, եթե ձեզ ձերբակալում են ոգելից խմիչքների, թմրանյութերի կամ դրանց համատեղ ազդեցության տակ մեքենա վարելու համար:

Ձերբակալման դեպքում պաշտոնական անձը կարող է վերցնել ձեր վարորդական իրավունքի վկայականը, ձեզ տրամադրել վարորդական իրավունքի ժամանակավոր վկայական 30 օր ժամկետով, ինչպես նաև վկայականի կասեցման հրաման տալ: Դուք կարող եք 10 օրվա ընթացքում վարչական լուում պահանջել DMV-ում: Ձերբակալում իրականացնող պաշտոնյա անձը կարող է պահանջել, որ դուք արտաշնչման կամ արյան ստուգում անցնեք: Դուք իրավունք չունեք ստուգում ընտրելուց կամ անցնելուց առաջ խորհրդակցելու փաստաբանի հետ:

Եթե արյան մեջ ալկոհոլի պարունակությունը 0,08% կամ ավել բարձր լինի, պաշտոնյա անձը կարող է ձերբակալել ձեզ (CVC §§23152 կամ 23153): Եթե ոստիկանը բավարար հիմքեր ունենա կարծելու, որ դուք գտնվում եք ոգելից խմիչքների և թմրադեղերի համատեղ ազդեցության տակ, բայց արդեն անցել եք ալկոհոլի նախնական ստուգում և (կամ) շնչառության ստուգում, նա կարող է ձեզանից պահանջել նաև արյան կամ մեզի ստուգում անցնել, որովհետև շնչառության ստուգումը ցույց չի տալիս թմրադեղերի առկայությունը:

Եթե դուք հրաժարվեք անցնել արյան և (կամ) մեզի պահանջվող ստուգումը, ապա մերժում կարող է հանգեցնել ձեր վարորդական իրավունքի վկայականի կասեցման: Լույսիսկ եթե հետազայում փոխել ձեր կարծիքը և համաձայնվեք անցնել ստուգումը, ձեր վարորդական իրավունքի վկայականը կարող է կասեցվել երկու պատճառով էլ, չնայած այդ երկու գործողությունները կիրականացվեն զուգահեռաբար:

Զրոյական հանդուրժողականություն մինչև 21 տարեկան վարորդների կողմից ալկոհոլի օգտագործման նկատմամբ

Եթե դուք դեռ 21 տարեկան չկաք, դուք պետք է անցնեք շնչառության ստուգում, ալկոհոլի նախնական ստուգում կամ այլ քննիական ստուգումներից որևէ մեկը: Եթե ալկոհոլի նախնական ստուգումը ձեր արյան մեջ ալկոհոլի 0,01% կամ ավելի բարձր պարունակություն հայտնաբերի, ձեր վարորդական իրավունքի վկայականը կարող է կասեցվել 1 տարով:

Եթե ալկոհոլի նախնական ստուգումը ձեր արյան մեջ ալկոհոլի 0,05% կամ դրանից բարձր պարունակություն հայտնաբերի, կամ ոստիկանը կարող է պահանջել, որ դուք արտաշնչման կամ արյան ստուգում անցնեք:

Եթե դրանից հետո անցկացված ստուգման արդյունքում ձեր արյան մեջ ալկոհոլի 0,05% կամ դրանից բարձր պարունակություն հայտնաբերի, ապա ոստիկանը ձեր վարորդական իրավունքի վկայականի կասեցման հրաման կտա և կձեռքբալի ձեզ ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու համար (CVC §23140):

ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐ ԱՎԿՈՆՈՒԻ ԿԱՏ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԱՉԻՑՑՈՒԹՅԱՆ ՏԱՎ ՄԵՔԵՆԱ ՎԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Եթե դուք մեղադրվում եք ռզելից խմիչքների, թմրանյութերի կամ դրանց համատեղ ազդեցության տակ մեքենա վարելու համար, և ձեր արյան մեջ ալկոհոլի պարունակությունը բարձր է, ապա դատարանը կարող է ձեզ դատապարտել մինչև 6 ամսով ազատազրկման և \$390-\$1000 տուգանքի՝ առաջին անգամ դատապարտվելու դեպքում: Ձեր տրանսպորտային միջոցը կարող է առգրավվել, որի դեպքում դուք պետք է վճարեք նաև պահպանման ծախսերը:

Առաջին անգամ մեղադրվելիս՝ ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը կկասեցվի 6 ամսով և, նախքան այն վերականգնելը, կպահանջվի, որ դուք մասնակցեք «Վարում ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրին, ներկայացնեք Կալիֆոռնիա նահանգի պահանջարկական վկայական (SR 22/SR 1P) և կատարեք բոլոր անհրաժեշտ վճարումները: Ծրագրի տևողությունը կախված է ձեր գործի հանգամանքներից: Եթե ձեր ԱՄՊ-ը 0,15% կամ ավելի բարձր է, և դուք մինչ այդ արդեն կատարել եք ալկոհոլի հետ կապված այլ խախտումներ կամ հրաժարվել եք քննիական ստուգում անցնել, ապա դատարանը կարող է պարտադրել, որ դուք 9-ամսյա կամ դրանից ավելի երկար տևողությամբ ծրագրի մասնակցեք: Եթե ձեր ԱՄՊ-ը 0,20% կամ ավելի բարձր է, և դատարանը պահանջում է, որ դուք անցնեք ուժեղացված վերականգնողական «Վարում ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագիրը, ապա ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը կկասեցվի 10 ամսով: Դատարանը նաև կարող է ձեզ պարտադրել, որ ձեր տրանսպորտային միջոցի մեջ տեղադրեք վառոցքի արգելափակման սարք: Վառոցքի արգելափակման սարքը թույլ չի տալիս գործի զցել տրանսպորտային միջոցը, եթե ձեր արտաշնչման օդում ալկոհոլ է հայտնաբերում: Եթե ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ ձեր մեքենավարման հետևանքով ինչ-որ մեկը վնասվածք ստանա, ապա վարորդական իրավունքի կասեցման ժամկետը կկազմի 1 տարի:

Լուրջ վնասվածքների կամ մահվան դեպքում ձեր դեմ կարող է քաղաքացիական հայց հարուցվել: Ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու բոլոր մեղադրանքները 10 տարի կպահվեն DMV-ի գրանցամատյաններում: Եթե այդ ժամանակամիջոցում դուք կրկին խախտումներ կատարեք, դատարանը և (կամ) DMV-ն ավելի խիստ պատժամիջոցներ կկիրառեն ձեր դեմ:

Թույլատրված մակարդակից ցածր ԱՄՊ-ը չի նշանակում, որ դուք կարող եք անվտանգ կերպով մեքենա վարել: Լույսիսկ արյան մեջ թույլատրելի մակարդակից ցածր ալկոհոլի պարունակություն դեպքում համարյա բոլոր վարորդներն ունենում են վարորդական կարողությունների վատթարացում: Ձեր մեքենան կանգնեցնելու պահին ձեր ոչ այնքան սթափ վիճակը բավական է, որպեսզի դուք մեղադրվեք ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու մեջ՝ նույնիսկ առանց ԱՄՊ-ը չափելու:

ԽԱՆՂԱԽՈՒԹՅՈՒՆ



ՃԱՆԱԶԵՔ ԱՅՆ ԶԵԿՈՒՑԵՔ ԱՅՆ ԿԱՆԽԵՔ ԱՅՆ

Կանխեք խարդախությունն
աշխատավայրում

- Տեղեկատվությունը չարաշահելը
- Ծառայությունների համար կաշառքներ վերցնելը
- Կեղծ փաստաթղթեր տալը
- Գույք կամ փող գողանալը
- Ապօրինաբար վճարներ չկատարելը

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է

ԶԵԿՈՒՑԵՔ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. **DMV**-ի
Հետաքննությունների վարչություն, Ներքին գործերի բաժնի
կոնտակտ՝ Reportfraud@dmv.ca.gov

Հյուսիսային Կալիֆոռնիա (916) 657-7742
Հարավային Կալիֆոռնիա (626) 851-0173 կամ (951) 653-5357

Այցելեք www.dmv.ca.gov կայքը՝ խարդախության վերաբերյալ բողոքի
ներկայացման (Fraud Complaint) INV 19 ձևը ստանալու համար



Կալիֆոռնիա նահանգի Ավտոտրանսպորտի դեպարտամենտ

Ստացիր ավելի լավ կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու մեղադրանք և գրկվիր վարորդական իրավունքի վկայականից:

Արգելվում է տրանսպորտային միջոցը վարել արդեն մեջ ավելի քան 0,08% կամ ավելի բարձր պարունակության (ԱՄՊ) դեպքում (0,04% առևտրային փոխարձանափոցի վարորդների և 0,01% մինչև 21 տարեկան վարորդների համար): Այլ գործոններ, ինչպիսիք են հոգաճությունը, դեղամիջոցները կամ սնունդը, կարող են բացասաբար ազդել տրանսպորտային միջոցը օրենքի սահմաններում շահագործելու ձևը կարողության վրա: Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է արյան մեջ ալկոհոլի մակարդակները՝ հիմք ընդունելով օգտագործած խմիչքի ուսման քանակը, սեռը և մարմնի քաշը: ՀԻՇԵՔ. Նույնիսկ մեկ ուսման ավելի քան 1 անհարյուն դարձնել անվտանգ մեքենավարումը:

Ուսման քանակը		Սարմբի քաշը ֆունտներով										Վիճակը մեքենան վարելիս	
		100	120	140	160	180	200	220	240				
0	Ա	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	Միայն անվտանգ մեքենավարման սահմանային արժեքը
	Ի	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	.00	
1	Ա	.06	.05	.04	.04	.03	.03	.03	.03	.03	.02	.02	Վարորդական ուսման քանակների բուլցնում
	Ի	.07	.06	.05	.04	.04	.03	.03	.03	.03	.03	.03	
2	Ա	.12	.10	.09	.07	.07	.06	.05	.05	.05	.05	.05	Օրերակ ազդված չափով հարթած
	Ի	.13	.11	.09	.08	.07	.07	.06	.06	.06	.06	.06	
3	Ա	.18	.15	.13	.11	.10	.09	.08	.08	.08	.08	.08	Օրերակ ազդված չափով հարթած
	Ի	.20	.17	.14	.12	.11	.10	.09	.09	.09	.09	.09	
4	Ա	.24	.20	.17	.15	.13	.12	.11	.11	.11	.11	.11	Օրերակ ազդված չափով հարթած
	Ի	.26	.22	.19	.17	.15	.13	.12	.12	.12	.12	.12	
5	Ա	.30	.25	.21	.19	.17	.15	.14	.14	.14	.14	.14	Օրերակ ազդված չափով հարթած
	Ի	.33	.28	.24	.21	.18	.17	.15	.15	.15	.15	.15	

Հանել **0,01%** խմելուց հետո յուրաքանչյուր **40** րոպեի համար:
1 ուսման հավասար է **1,5** ունցիա (**42,525** գ) **80** ստիճան թերություն ալկոհի, **12** ունցիա (**340,2** գ) **5%** թերության գարեջրի կամ **5** ունցիա (**141,75** գ) **12%** թերության գինու:

100 հոգուց այս արժեքները կգերազանցի **5**-ից պակաս մարդ:

21 ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՎԱՐՈՐԴՆԵՐ. «ՎԱՐՈՒՄ ԱԼԿՈՂՈՒ ԿԱՍ ԹՄՐԱՆՑՈՒԹԻ ԱՋԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ» ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՓՈՒԿ ՎԱՐՈՐԴՆԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

«Վարում ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագիրն ավարտելը պարտադիր է անսթափ վիճակում մեքենա վարելու մեջ մեղադրված բոլոր անձանց համար:

Ընդհանրապես, եթե դուք 21 տարեկանն անց եք և ընդգրկվում եք ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու որևէ ծրագրում, ներկայացնում եք Կալիֆոռնիա նահանգի ապահովագրական վկայական (SR 22/SR 1P) և վճարում եք վկայականի սահմանափակման և վերաթողարկման համար պահանջվող գումարները, ապա DMV-ն ձեզ սահմանափակ վարորդական իրավունքի վկայական կտա, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեր վարորդական իրավունքի վկայականը առևտրային վարորդական իրավունքի վկայական է: Ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ մեքենա վարելու համար առաջին դատավճռի դեպքում ձեզ կարող է տրամադրվել սահմանափակ վարորդական իրավունքի վկայական դեպի աշխատանքի վայր և հետ երթևեկելու, աշխատանքի ընթացքում օգտագործելու և դեպի «Վարում ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրի անցկացման վայր և հետ երթևեկելու համար: Սակայն, եթե դատարանը որոշի, որ դուք վտանգ կներկայացնեք «ճանապարհային երթևեկության» կամ «հասարակական անվտանգության» համար, ապա կարող է DMV-ին կարգադրել ձեզ չտրամադրել սահմանափակ վարորդական իրավունքի վկայական: Ձեր դեմ հարուցված այլ մեղադրանքներ նույնպես կարող են հիմք հանդիսանալ, որ դուք սահմանափակ վարորդական իրավունքի վկայական չստանաք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Առևտրային վարորդները վարելու իրավունքից զրկվում են 1 տարով և չեն կարող ձեռք բերել սահմանափակ առևտրային վարորդական իրավունքի վկայական առանց ոչ առևտրային վարորդական իրավունքի վկայական ստանալու (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկը» [DL 650]):

Ակոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ տրանսպորտային միջոց վարելու համար երկրորդ և դրան հաջորդող դատավճիռների դեպքում տուգանքներն ավելի մեծ կլինեն, ներառյալ վարորդական իրավունքի վկայականի կասեցումը 2 տարով կամ զրկումը մինչև 5 տարով: Այն բանից հետո, երբ լրանա վարորդական իրավունքի վկայականի կասեցման կամ զրկման սահմանված ժամկետը, և դուք մասնակցեք կամ ավարտեք «Վարում ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագրի մի մասը, ձեզ կարող է սահմանափակ վարորդական իրավունքի վկայական տրվել, որը թույլ կտա մեքենայով ցանկացած տեղ գնալ, եթե դուք

- ձեր տրանսպորտային միջոցում տեղադրեք վառոցքի արգելափակման սարք.
- համաձայնվեք առանց վառոցքի արգելափակման սարքի որևէ տրանսպորտային միջոց չվարել.
- համաձայնվեք ավարտել նշանակված «Վարում ակոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ» ծրագիրը.
- ներկայացնեք SR 22.
- վճարեք վարորդական իրավունքի վկայականի վերաթողարկման և սահմանափակման համար գանձվող վճարները:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ

ԻՆՉ ՁԻ ՎԱՐԵԼԻ ԱՆԵԼ.

- Երբեք մի ծխեք, երբ մեքենայում անչափահաս կա: Դուք կարող եք տուգանվել մինչև \$100-ի չափով:
- Կենդանիներին մի հարվածեք կամ թողեք ավտոմայրուղու վրա: Այս հանցանքը պատժվում է մինչև \$1000 տուգանքով, 6 ամիս բանտարկությամբ, կամ երկուսը միասին:

- Մի վարեք տրանսպորտային միջոց, երբ օգտագործում եք անլար հաղորդակցության սարք տեքստային հաղորդագրություններ գրելու, ուղարկելու կամ կարդալու համար:
- Մեքենավարելիս մի կրեք ականջակալներ կամ ականջախցաններ երկու ականջներում միաժամանակ:
- Մի վարեք մեքենան՝ իրերով կամ մարդկանցով այնքան ծանրաբեռնված, որ կորցնեք կառավարումը կամ չտեսնեք ձեր դիմացը կամ կողքերը:
 - Արգելվում է վարել որևէ տրանսպորտային միջոց, որը փոխադրում է վտանգավոր, անապահով և անվտանգությանը սպառնալիք ներկայացնող բեռ (CVC §24002(a)): Անապահով բեռները (սանդուղքներ, դուլեր և թույլ ամրացված առարկաներ պիկկապ բեռնատարների թափքում) կարող են վտանգ ներկայացնել ավտովարորդների, հատկապես մոտոցիկլետների համար, երբ դրանք ընկնեն երթևեկելի մասի վրա:
- Մարդատար մեքենայում կամ մեքենայի վրա մի տեղափոխեք որևէ իր, որը դուրս է գալիս ձախ ցայտապաշտպանների եզրագծից, կամ 6 դյուսմից (15,2 սմ) ավելի է դուրս գալիս աջ ցայտապաշտպանների եզրագծից: Մեքենայի հետևի թափարգելից ավելի քան 4 ֆուտ (122 սմ) դուրս եկող բեռան վրա պետք է ամրացված լինի 12 դյուսմանոց (30,48 սմ) կարմիր կամ նարնջագույն ֆլուորեսցենտային քառակուսի դրոշակ, իսկ գիշերային ժամերին 2 կարմիր լամպ վառվի:
- Որևէ մեկին թույլ մի տվեք երթևեկել պիկկապի կամ այլ տիպի բեռնատարի թափքում, եթե պետեղ նստոցներ չկան, և երթևեկողը չի օգտվում նստոցներից ու ամրագոտուց:
- Մի պոխադրեք կենդանիներ պիկկապի կամ այլ տիպի բեռնատարի թափքում, եթե կենդանու անվտանգությունն ինչպես հարկն է ապահովված չէ: Արդյունքում կարելի է կանխել կենդանու անկումը, դուրս ցատկումը կամ մեքենայից դուրս շարժումը:
- Մի վարեք տեսամոնիտորով համալրված մեքենա, եթե մոնիտորը տեսանելի է վարորդին և ցուցադրում է ավտոմեքենայի մասին տեղեկություններից, աշխարհի քարտեզներից, արտաքին մեդիա նվազարկչից կամ արբանյակային ռադիոտեղեկատվությունից տարբեր այլ պատկերներ:
- Մեքենայից մի նետեք ծխախոտ, սիգար կամ այլ բոցավառվող կամ այրվող առարկաներ:
- Մի փակեք ձեր տեսադաշտը՝ հողմապակու, հետին կամ կողային ապակիների վրա նշաններ կամ այլ առարկաներ կպցնելով: Հայելուց առարկաներ մի կախեք: Հողմապակուն կամ պատուհանին սոսնձվող պիտակները և այլ առարկաներ թույլատրվում են միայն
 - 7 քառակուսի դյուսմ (45,16 սմ2) մակերեսով տարածքի մեջ՝ կա՛մ ուղևորի կողմի հողմապակու ստորին անկյունում, կա՛մ հետևի պատուհանի ստորին անկյունում.
 - 5 քառակուսի դյուսմ (32,26 սմ2) մակերեսով տարածքի մեջ՝ վարորդի կողմի հողմապակու ստորին անկյունում.
 - վարորդի հետևի կողային պատուհանների վրա.
 - 5 քառակուսի դյուսմ (32,26 սմ2) մակերեսով տարածք, որը գտնվում է ձեր հողմապակու կենտրոնական հատվածի վերևում և նախատեսված է ճանապարհային հարկերի հավաքագրման էլեկտրոնային սարքի համար:
- Մի խոչընդոտեք կամ խանգարեք թաղման թափորին: Թաղման թափորին մասնակցող մեքենաների առավելություն ունեն, և եթե դուք միջատեք, խանգարեք թաղման արարողությանը կամ խոչընդոտ ստեղծեք թափորի ճանապարհին, ապա ձեզ կարող են տուգանել (CVC §2817): Հնուարկավորությունը ղեկավարվում է ճանապարհային ոստիկանի կողմից: Թափորին մասնակցող բոլոր մեքենաների հողմապակիների վրա հատուկ նշաններ կան, և դրանց բոլորի ցուլապատերները միացված են:
- Մի շահագործեք այնպիսի մեքենա, որն ունի տեսողական կամ էլեկտրոնային արտադրանք կամ սարք, որը խոչընդոտում է համարանիշի ընթերցումը կամ ճանաչումը:
- Չի կարելի որևէ կերպ փոփոխել համարանիշը:

Ի՞նչ է ՊԵՏՔ ԱՆԵԼ.

- Դուք պետք է միացնեք ցուլապտերները մայրամուտից 30 րոպե անց և միացված վիճակում պահեք մինչև արևածագից 30 րոպե առաջ:
- Դուք պետք է դեպի ձեզ շարժվող մեքենայից մինչև 500 ֆուտ (≈ 150 մետր) և ձեր առջևից ընթացող մեքենայից մինչև 300 ֆուտ (≈ 90 մետր) հեռավորության վրա հեռարձակ լույսը փոխեք մոտարձակ լույսի:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կալիֆոռնիայի «Պարտադիր ֆինանսական պատասխանատվության մասին» օրենքը (*California Compulsory Financial Responsibility Law*) պահանջում է, որ յուրաքանչյուր վարորդ և յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կրի մշտական ֆինանսական պատասխանատվություն (քաղաքացիական պատասխանատվության ապահովագրում): Գոյություն ունի ֆինանսական պատասխանատվության 4 ձև՝

- ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն.
- DMV-ի հաշվին ներդրված ավանդ \$35000-ի չափով.
- Կալիֆոռնիայում գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող որևէ ընկերության կողմից տրամադրված երաշխավորագիր \$35000-ի չափով.
- DMV-ի կողմից տրված ինքնապահովագրման վկայագիր:

Մեքենա վարելիս դուք պետք է միշտ ունենաք ֆինանսական պատասխանատվությունը հաստատող փաստաթուղթ և այն ցույց տաք պաշտոնական անձին, երբ նա ձեզ կանգնեցնում է ստուգման նպատակով, կամ երբ դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից: Այս օրենքը խախտելու համար ձեզ կարող են տուգանել կամ ազրավել ձեր մեքենան:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԵՐ

Օրենքը սահմանում է, որ դուք պետք է ֆինանսական պատասխանատվություն կրեք մեքենա վարելիս ձեր կատարած գործողությունների և ձեզ պատկանող բոլոր ավտոտրանսպորտային միջոցների համար: Վարորդների մեծ մասը նախընտրում է ունենալ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն՝ որպես ֆինանսական պատասխանատվությունը հաստատող փաստաթուղթ: Եթե դուք դառնաք այնպիսի մի ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից, որի համար ձեր ապահովագրական ընկերությունը չի վճարում, կամ եթե դուք ապահովագրված չեք, ապա ձեր վարորդական իրավունքի վկայականի գործունեությունը կկասեցվի: Եթե վարորդի ինքնությունը չի պարզվել, ապա ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ ներգրավված տրանսպորտային միջոցի տիրոջ վարորդական իրավունքի վկայականի գործունեությունը կկասեցվի:

Ապահովագրական վճարումների նվազագույն գումարը*, որը պետք է վճարվի յուրաքանչյուր ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում, կազմում է՝

- \$15000 մեկ մարդու մահվան կամ մարմնական վնասվածքի համար.
- \$30000 մեկից ավելի մարդկանց մահվան կամ վնասվածքների համար.
- \$5000 գույքին հասցված վնասի համար:

* Ցածր գներով ավտոմոբիլային ապահովագրեր մատչելի են Ալամեդա, Կոնտրա Կոստա, Ֆրեզնո, Իմպերիալ, Քերն, Լոս Անջելես, Օրինջ, Ռիվերսայդ, Սակրամենտո, Սան Բեռնարդինո, Սան Դիեգո, Սան Ֆրանցիսկո, Սան Խոսե, Սան Մաթեո, Սանտա Կլարա և Ստանիսլաուս վարչական շրջաններում: Խնդրում ենք դիմել ձեր ապահովագրական գործակալին:

Նախքան ապահովագիր գնելը զանգահարեք 1-800-927-HELP հեռախոսահամարով՝ հաստատելու, որ ձեր գործակալը կամ միջնորդը և ապահովագրական ընկերությունը լիցենզավորված են Կալիֆոռնիայի Ապահովագրության դեպարտամենտի (*California Department of Insurance*) կողմից:

Եթե դուք հյուր եք Կալիֆոռնիայում կամ վերջերս եք տեղափոխվել այստեղ, նկատի ունեցեք, որ այլ նահանգներում գործող ոչ բոլոր ապահովագրական ընկերություններն ունեն Կալիֆոռնիայում գործունեություն իրականացնելու թույլտվություն: Նախքան այստեղ կսկսեք մեքենա վարել, հարցրեք ձեր ապահովագրական ընկերությանը՝ արդյո՞ք դուք ապահովագրված եք Կալիֆոռնիայում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում: Եթե Կալիֆոռնիայում դառնաք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից, ապա ստորև նշված բոլոր 3 պայմանները պետք է բավարարվեն, որպեսզի ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը չկասեցվի:

1. Ձեր ապահովագիրը պետք է այս բաժնում նշված գումարին հավասար կամ այն գերազանցող վճար նախատեսի մարժանական փաստվածքի և գույքին հասցված փաստի համար:
2. Ձեր ապահովագրական ընկերությունը պետք է լիազորագիր տրամադրի՝ DMV-ին արտոնելով հանդես գալ որպես Կալիֆոռնիայի տարածքում իրավական ծառայություններ տրամադրող իր գործակալը:
3. Դուք պետք է մեքենան ապահովագրած լինեք նախքան Կալիֆոռնիա գալը: Այն բանից հետո, երբ տրանսպորտային միջոցը գրանցվի Կալիֆոռնիայում, դուք չեք կարող նորացնել այլ նահանգում ստացած ձեր ապահովագիրը:

Ձեր ԱՆՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԳՐԱՅՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՅԱՐՆԵՐԸ

ՊԱՏԱՅԱՐՆԵՐԸ

DMV-ն պահպանում է ստորև նշված աղբյուրներից ստացված տեղեկատվությունը յուրաքանչյուր ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ՝

- իրավապահ մարմիններից, եթե զեկուցող աշխատակիցը չի հայտնում, որ պատահարը տեղի է ունեցել ուրիշի մեղքով:
- ձեզանից կամ ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակից մյուս կողմից, եթե որևէ մեկին ավելի քան \$1000 փասա է հասցվել, կամ եթե որևէ մեկը փաստվածք է ստացել կամ զոհվել է:

Նշանակություն չունի, թե ով է ընդհարման մեղավորը. DMV-ն պարտավոր է պահել այդ տեղեկությունները:

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՅԱՐՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ԱՆՁՍՓԱՀԱՄԱՐԵՐԸ

Եթե դուք 18 տարեկան չկաք, ձեր ծնողը (ծնողները) կամ խնամակալը (խնամակալները) պետք է ստորագրի ձեր վարորդական իրավունքի վկայականի դիմումը և ֆինանսական պատասխանատվություն ստանձնի ձեր մեքենավարման համար: Երբ դուք դառնում եք 18 տարեկան, ձեր ծնողի (ծնողների) կամ խնամակալի (խնամակալների) պարտավորությունն ինքնաբերաբար ավարտվում է:

Եթե դարձել եք ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից, ձեր ծնողը (ծնողները) կամ խնամակալը (խնամակալները) կարող է քաղաքացիական կարգով պատասխանատվության ենթարկվել փաստերի համար, իսկ դուք կարող եք տուգանվել:

Բացառություն. Ձեր ծնողը (ծնողները) կամ խնամակալը (խնամակալները) կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել ձեր վարորդական իրավունքի վկայականը, քանի դեռ դուք անչափահաս եք:

ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ԿՏՐՈՒ

Եթե պաշտոնական անձը ձեզ կանգնեցնում է և պատասխանատվության է ենթարկում՝ երթևեկության կանոնների խախտման համար, դուք փաստաթուղթ եք ստորագրում՝ խոստանալով ներկայանալ ճանապարհատրանսպորտային դատարան: Դատարանում կարող եք ձեզ մեղավոր կամ անմեղ ճանաչել, կամ կարող եք վճարել սահմանված տուգանքը: Տուգանք վճարելը հավասարազոր է մեղքն ընդունելուն:

Եթե դուք անտեսեք տուգանային կտրոնը և չկատարեք դատարան ներկայանալու ձեռնարկը, ապա դատարան չներկայանալու փաստը կգրանցվի ձեր վարորդական գործի մեջ: Դատարան չներկայանալու մեկ դեպքն անգամ բավական է, որպեսզի DMV-ն կասեցնի ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը: Կասեցումն ավարտելու համար պետք է դատարան չներկայանալու բոլոր դեպքերը զրոյացնեք դատարանում և վճարեք վարորդական իրավունքի վկայականի վերաթողարկման տուրք \$55:

2017 թ. հունիսի 27-ից ուժի մեջ մտած օրենքը դատարաններին այլևս թույլ չի տալիս տեղեկացնել DMV-ին, եթե չվճարեք տուգանքը (FTP): Տուգանքը չվճարելն այլևս չի հանգեցնի վարորդական իրավունքի վկայականի կասեցմանը: Նոր օրենքի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք DMV-ի կայքը www.dmv.ca.gov:

Ամեն անգամ, երբ ձեզ մեղավոր են ճանաչում երթևեկության կանոնների խախտման համար, դատարանն այդ մասին տեղյակ է պահում DMV-ին, և այդ փաստը գրանցվում է ձեր վարորդական գործի մեջ: Խախտումների համար ներկայացված մեղադրանքների մասին այլ նահանգներից ստացված տվյալները նույնպես գրանցվում են ձեր վարորդական գործի մեջ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ ՉԵՆԹԱՐԿՎԵԼԸ

Ավտոմեքենա շահագործող ցանկացած անձ, ով միտումնավոր կերպով փախուստ է տալիս կամ փորձում է խույս տալ իր պարտականությունները կատարող ոստիկանից, կատարում է զանցանք, որի համար կարող է պատժվել առավելագույնը 1 տարի բանտարկությամբ շրջանային բանտում (CVC §2800.1):

Եթե անձը մեղավոր է ճանաչվում ոստիկանի կողմից հետապնդվելու ընթացքում որևէ մեկին ծանր մարմնական վնասվածք հասցնելու համար (CVC §2800.3(a)), ապա նա դատապարտվում է՝

- 3, 5 կամ 7 տարվա բանտարկության՝ նահանգային բանտում, կամ առավելագույնը 1 տարվա բանտարկության՝ վարչական շրջանի բանտում.
- \$2000-ից ոչ պակաս, բայց \$10000-ը չգերազանցող տուգանքի.
- և՛ տուգանքի, և՛ բանտարկության:

Եթե անձը մեղավոր է ճանաչվում ոստիկանի կողմից հետապնդվելու ընթացքում որևէ անձի սպանության համար, ապա փախուստ տվող անձը դատապարտվում է առնվազն 4-ից 10 տարվա բանտարկության՝ նահանգային բանտում (CVC §2800.3(b)):

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՇՎՈՂ ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Երթևեկության կանոնների խախտման համար ձեռք են բերված անվտանգ մեղադրանքները և ձեռք են բերված անվտանգության տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերը պահվում են ձեռք բերող պահանջարկային գործի մեջ 36 ամիս կամ ավելի երկար ժամանակով խախտման տեսակից կախված:

Անվտանգ վարորդների դաստիարակման համակարգը (*Negligent Operator Treatment System, NOTS*) հիմնված է անվտանգ վարորդի միավորների վրա և բաղկացած է համակարգչային մշակման ենթարկված նախագգուշակյան նամակների և վարորդական իրավունքի դեմ կիրառված աճող պատժամիջոցների շարքից:

Դուք կարող եք համարվել անվտանգ վարորդ, եթե ձեր վարորդական գործում գրանցված ընդհանուր «միավորների հաշիվը» համապատասխանի ստորև նշվածներից որևէ մեկին՝

- 4 միավոր 12 ամսում.
- 6 միավոր 24 ամսում.
- 8 միավոր 36 ամսում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Միավորների հաշիվը կարող է տարբեր լինել առևտրային վարորդների համար: Միավորների հաշվարկի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար տե՛ս «Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկը» (DL 650):

ԴՍԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԿԱՆՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱՎՈՐՈՒՄԵՐԻ ԴՊՐՈՑ

Երբ ոչ առևտրային վարորդը դատական պատասխանատվության է ենթարկվում երթևեկության կանոնների 1 միավորանոց խախտման համար, դատավորը կարող է վարորդին առաջարկել երթևեկության կանոնները խախտողների դպրոց հաճախելու հնարավորություն մեկ անգամ ցանկացած 18-ամսյա ժամկետում, որպեսզի իր վարորդական գործից ջողարկվի խախտման մասին գրանցումը: Դպրոցը դասընթացի ավարտման մասին էլեկտրոնային եղանակով գեկուցում է դատարանին. այնուամենայնիվ, ուսանողը դպրոցից կստանա ավարտման մասին տեղեկանք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Երբ առևտրային վարորդը դատական պատասխանատվության է ենթարկվում ոչ առևտրային փոխադրամիջոց վարելու դեպքում, վարորդը կարող է իրավասու լինել հաճախելու երթևեկության կանոնները խախտողների դպրոց: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս DMV-ի կայքը www.dmv.ca.gov հասցեում:

ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԶՐԿՈՒՄ

Եթե չափազանց շատ միավորներ հավաքեք անվտանգ մեքենավարման համար, DMV-ն ձեռք է բերում փորձնական ժամկետ կնշանակի (որը ներառում է վարորդական իրավունքի կասեցում 6 ամսով) կամ չեղյալ կհայտարարի ձեր վարորդական իրավունքը (տե՛ս «Վարչական միջոցներ» բաժնում ընդգրկված թեմաները, էջ 108–114): Վարորդական իրավունքի վկայականի կասեցման կամ զրկման հրամանում նշվում է դատարանի կարգով գործի լսում պահանջելու ձեր իրավունքի մասին:

Կասեցման կամ զրկման ժամանակաշրջանի վերջում կարող եք դիմել վարորդական իրավունքի նոր վկայական ստանալու համար և պետք է ֆինանսական պատասխանատվությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնեք:

DMV-ն չեղյալ կհայտարարի ձեր վարորդական իրավունքի վկայականը, եթե դուք մեղադրվեք տրանսպորտային միջոցն անգզույշ վարելու կամ ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքի վայրից փախուստի դիմելու մեջ, որի հետևանքով որևէ մեկին մարմնական վնասվածք է հասցվել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Դատարանները անձի վարորդական իրավունքի վկայականը կասեցնելու լիազորություն ունեն:

ՏԿՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆՈՒԹՅՈՒՆ

Ձեր վարորդական գործում նշված տեղեկությունների մեծ մասը բաց է հասարակության համար: Ձեր բնակության հասցեն կարող են տեսնել միայն լիազորված գործակալությունները: Ձեր փոստային հասցեն, եթե այն տարբեր է բնակության հասցեից, պակաս սահմանափակված է:

Վարորդի ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին տեղեկությունները գաղտնի են պահվում:

Դուք կարող եք DMV-ի ցանկացած տեղական գրասենյակից ստանալ ձեր վարորդական գործի պատճենը՝ վճարելով և անձը հաստատող վավերական փաստաթուղթ ներկայացնելով:

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՖԻՏԻ, ԲՈԼՈՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԵՐԸ

Կալիֆոռնիա նահանգի օրենսդրությունը դատարաններին թույլ է տալիս մինչև 2 տարով կասեցնել բարբարոսական արարք կատարելու, ներառյալ գրաֆիտի անելու համար մեղադրվող անձի վարորդական իրավունքի վկայականը: Եթե դուք մեղադրվել եք և վարորդական իրավունքի վկայական չունեք, դատարանը կարող է մինչև 3 տարով հետաձգել վարորդական իրավունքի վկայականի հանձնումը՝ մեքենա վարելու պաշտոնական թույլտվության ամսաթվից հաշված:

ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄՐՅԱՎԱԶՔԵՐ ԵՎ ԱՆԶԳՈՒՅՇ ՎԱՐՈՒՄ

Անձը, ով մեղադրվում է տրանսպորտային միջոցն անզգույշ վարելու կամ արագության մրցավազքի մասնակցելու մեջ, որի պատճառով մարմնական վնասվածք է հասցվել մեկ այլ անձի, ենթակա է

- բանտարկության.
- տուգանքի.
- և՛ տուգանքի, և՛ բանտարկության (CVC §23104(a)):

ՀՐԱՁԵՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Դատարանը՝

- կկասեցնի կամ չեղյալ կհայտարարի ապօրինի զենք կամ զինամթերք կրելու մեջ մեղադրվող ցանկացած անչափահասի վարորդական իրավունքը.
- պատժամիջոցներ կկիրառի հրազենի կիրառմամբ օրինազանցություն կատարած անչափահասի վարորդական իրավունքի նկատմամբ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՊԱՇՏԱՆՆԵՐ

Ստորև բերված է Կալիֆոռնիայում տրանսպորտային միջոցների գրանցմանը ներկայացվող պահանջների հակիրճ նկարագրությունը: Մանրամասն տեղեկությունների համար այցելեք www.dmv.ca.gov:

Կալիֆոռնիայի տրանսպորտային միջոցները

Երբ դուք նոր կամ օգտագործված տրանսպորտային միջոց եք գնում Կալիֆոռնիայում լիցենզավորված վաճառամիջնորդից, նա ձեզանից գանձում է տրանսպորտային միջոցի օգտագործման հարկի գումարը՝ այն գրանցելու և սեփականության վկայականը ձևակերպելու համար: Օգտագործման հարկը փոխանցվում է Կալիֆոռնիա նահանգի Հարկերի և տուրքերի վարչարարության դեպարտամենտին (*California Department of Tax and Fee Administration, CDTFA*):

Փոխանցման և գրանցման վճարներն ու փաստաթղթերն ուղարկվում են DMV-ին, ինչը ձեռք տալիս է տրանսպորտային միջոցը ժամանակավորապես վարելու թույլտվություն: Սովորաբար, գնման օրվանից հետո 6-8 շաբաթվա ընթացքում դուք, անհրաժեշտության դեպքում, ստանում եք տրանսպորտային միջոցի գրանցման քարտը, համարանիշները, պիտակները և Կալիֆոռնիա նահանգի Սեփականության իրավունքի վկայականը (*California Certificate of Title*):

Եթե վաճառամիջնորդը մասնակցում է «Գործարար համագործակցության ավտոմատացում» (*Business Partner Automation, BPA*) ծրագրին, նա կամ նրա գրանցման ծառայությունը մշակում է DMV-ի փաստաթղթերն ու հաճախորդին է տալիս գրանցման քարտը, համարանիշները և պիտակները:

Եթե դուք մասնավոր անձից եք տրանսպորտային միջոցը ձեռք բերում կամ գնում, ապա պարտավոր եք սեփականության իրավունքի փոխանցումը ձևակերպել **10** օրվա ընթացքում: DMV-ին ներկայացրեք հետևյալ փաստաթղթերը

- պատշաճ կերպով ստորագրված և լրացված Կալիֆոռնիա նահանգի Սեփականության իրավունքի վկայական կամ տրանսպորտային միջոցի անձնագրի պատճենը կամ ոչ-թղթային ձևաչափով անձնագիրը ստանալու դիմումի (*California Certificate of Title or Application for Duplicate or Paperless Title, REG 227*) ձև.
- վկայական արտանետած զազերի թունավորության աստիճանի մասին, եթե դա պահանջվի.
- տրանսպորտային միջոցի օգտագործման հարկի վճարում, եթե պահանջվի.
- «Ավտոմեքենայի կամ նավի սեփականության իրավունքի փոխանցում և վերազիջում» (*Vehicle/Vessel Transfer and Reassignment, REG 262*) ձևը, եթե կիրառելի է.
- տրանսպորտային միջոցի համապատասխան վճարները:

Երբ դուք վաճառում կամ փոխանցում եք տրանսպորտային միջոց, այդ մասին տեղյակ պահեք DMV-ին **5** օրվա ընթացքում:

Դուք կարող եք առցանց լրացնել «Տրանսպորտային միջոցի փոխանցման և պարտավորությունից ազատման» ձևը (*Notice of Transfer and Release of Liability, REG 138*), ներբեռնել և ուղարկել լրացրած ձևը կամ զանգահարել DMV-ին 1-800-777-0133 հեռախոսահամարով և խնդրել այդ ձևն ուղարկել փոստով:

Այլ նահանգների տրանսպորտային միջոցներ

Այլ նահանգում կամ արտերկրում գրանցված տրանսպորտային միջոցները պետք է գրանցվեն Կալիֆոռնիայում ձեր Կալիֆոռնիայի բնակիչ դառնալուց կամ այնտեղ աշխատանքի անցնելուց հետո **20** օրվա ընթացքում (բնակության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար տե՛ս էջ 3):

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե դուք Կալիֆոռնիայի բնակիչ եք և նոր տրանսպորտային միջոց, բեռնատար կամ մոտոցիկլետ (ներառյալ դիզելային վառելիքով աշխատող որոշ տրանսպորտային միջոցներ) եք ձեռք բերում մեկ այլ նահանգից, համոզվեք, որ այն համապատասխանում է օդի աղտոտման մասին Կալիֆոռնիայում գործող օրենսդրության պահանջներին, այլապես անհնար կլինի այն գրանցել այստեղ: DMV-ն չի կարող ընդունել տրանսպորտային միջոցը Կալիֆոռնիայում գրանցելու դիմումը, եթե տրանսպորտային միջոցը չի համապատասխանում գրանցման պահանջներին (*CHSC §§43150-43156*):

Ոչ մշտաբնակ զինծառայողները և նրանց կանայք (ամուսինները) կարող են իրենց տրանսպորտային միջոցը շահագործել Կալիֆոռնիայում՝ իրենց նահանգում տրված վավերական համարանիշներով կամ մինչև իրենց վերջին ծառայության վայրը հանդիսացող նահանգի կողմից տրված համարանիշների վավերականության ժամկետի ավարտը: Նրանք կարող են նորացնել իրենց նահանգում տրված համարանիշները, նախքան դրանց ժամկետը կավարտվի, կամ տրանսպորտային միջոցը գրանցել Կալիֆոռնիայում:

Այլ նահանգում ձեռք բերված տրանսպորտային միջոցը Կալիֆոռնիայում գրանցելու համար անհրաժեշտ են

- լրացված և ստորագրված «Դիմումի ձև սեփականության իրավունքի կամ գրանցման համար» (*Application for Title or Registration, REG 343*).
- տրանսպորտային միջոցի ստուգման վկայական՝ լրացված DMV-ի, իրավապահ մարմինների գործակալի կամ ավտոսփրոդների ակումբի աշխատակցի կողմից.
- նահանգի սահմաններից դուրս տրված սեփականության իրավունքի վկայական և (կամ) այլ նահանգում վերջին անգամ տրված գրանցման քարտ, եթե սեփականության իրավունքի վկայականը ներկայացված չէ.
- վկայական արտանետած գազերի թունավորության աստիճանի մասին, եթե դա պահանջվի.
- վկայական գանգվածի ստուգման մասին (միայն առևտրային փոխադրամիջոցների համար).
- տրանսպորտային միջոցի գրանցման համապատասխան վճարումները և օգտագործման հարկը, եթե կիրառելի է.
- լրացված Դիմում ճամփաչափի ցուցմունքների տրամադրման համար (*Odometer Mileage Disclosure Statement*), եթե կիրառելի է:

Եթե տրանսպորտային միջոցը գնված է վաճառամիջնորդից, որը մասնակցում է «Գործարար համագործակցության ավտոմատացում» ծրագրին, ապա փաստաթղթերը կարող են DMV-ին տրամադրվել վաճառամիջնորդի կողմից:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ ԿԱՆԵՆԸՆԻ ՄԱՍԻՆ

Ահա որոշ խորհուրդներ, որոնք կարող են ձեզ օգնել, որպեսզի խուսափեք մեքենայի առևանգման զոհ դառնալուց:

- Երբեք մի թողեք
 - մեքենան գործող շարժիչով և առանց հսկողության, նույնիսկ եթե մեկ րոպեով պետք է խանութ մտնեք.
 - բանալիները վառոցքի մեջ.
 - բանալիները կողպված ավտոտնակի մեջ կամ բանալիների թաքստոցում.
 - թանկարժեք իրեր, օրինակ՝ դրամապանակներ, դյուրակիր համակարգիչներ և այլ իրեր տեսանելի տեղում, նույնիսկ եթե մեքենայի դուռը փակ է: Դրանք դրսից չէրևացող տեղում դրեք.
 - անձի հաստատման փաստաթղթերը, օրինակ՝ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը կամ վարկային քարտը՝ մեքենայի մեջ:
- Միշտ
 - բարձրացրեք ապակիները և փակեք մեքենայի դռները, նույնիսկ եթե այն կայանում եք ձեր տան դիմաց.
 - մեքենան կայանեք բանուկ, լավ լուսավորված վայրերում, երբ դա հնարավոր է.
 - մեքենայի առևանգման մասին անմիջապես հայտնեք տեղական իրավապահ մարմիններին:
- Խորհուրդներ.
 - Մեքենայի մեջ տեղադրեք այնպիսի մեխանիկական սարք, որն արգելափակում է դեկը, դեկատունը կամ արգելակները:
 - Մտածեք առևանգված մեքենաների որոնման համակարգ կամ հակահափշտակիչ սարք ձեռք բերելու մասին, հատկապես եթե ձեր մեքենայի մակնիշը հաճախակի առևանգվող մեքենաների խմբին է պատկանում:
 - Երբ դուք ստիպված եք ձեր բանալին թողնել մեքենան լվացողի, սպասարկողի կամ մեքենագործի մոտ, թողեք միայն վառոցքի բանալին:
 - Թղթի կտորի վրա արտագրեք ձեր համարանիշն ու մեքենայի մասին տվյալները և դրանք միշտ պահեք ձեզ մոտ, այլ ոչ թե մեքենայի մեջ: Ոստիկանությանն անհրաժեշտ կլինեն այդ տեղեկությունները, եթե ձեր մեքենան առևանգեն:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՑԱՆՑ «ԱՐԱԳ ՓԱՍՏԵՐ» ԵՎ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- FFDL 3 Վարորդական իրավունքի վկայականի լրացուցիչ վերանայում նշանակելու գործընթաց
- FFDL 5 Կալիֆոռնիայի վարորդական իրավունքի վկայականի նկատմամբ ներկայացվող պահանջներ (այլ լեզուներ)
- FFDL 6 Կալիֆոռնիայի Ինքնության քարտի նկատմամբ ներկայացվող պահանջներ
- FFDL 8 Մոցիալական ապահովության քարտի համար
- FFDL 8A Մոցիալական ապահովության համարի լրացուցիչ պահանջներ
- FFDL 10 Հավանական վտանգ ներկայացնող վարորդ
- FFDL 14 Տեսողության չափորոշիչներ
- FFDL 15 Վարորդի գործի տեղեկությունների պահպանումը
- FFDL 16 Տրանսպորտային միջոցների բախումներ
- FFDL 19 Վարորդական իրավունքի ժամանակավոր վկայականի տրամադրում
- FFDL 22 Ինչպես նախապատրաստվել մեքենավարման քննությանը
- FFDL 24 Անձնական տվյալների հափշտակում
- FFDL 25 Անձնական տվյալների կեղծում
- FFDL 26 Վարորդի անվտանգության վերաբերյալ վարչական դատալսման գործընթաց
- FFDL 27 DMV-ի վերաքննության գործընթացը
- FFDL 28 Վարորդի ուշադրությունը շեղող գործոնները
- FFDL 29 Դաշնային պահանջներ վտանգավոր նյութերի փոխադրման վերաբերյալ
- FFDL 31 Վառոցքի արգելափակման սարքեր
- FFDL 32 Երկրում օրինական ներկայության սահմանափակ ժամկետ
- FFDL 33 Ինչպես ընտրել վարորդական դպրոց վարորդական ուսուցման և վարորդական վերապատրաստման համար (DE/DT)
- FFDL 34 Արագ փաստեր օրգանների և հյուսվածքների նվիրատվության մասին
- FFDL 35 Տրանսպորտային միջոցի վարում ալկոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ - վարորդական իրավունքի վկայականի անհապաղ կասեցում կամ զրկում. 21 տարեկան և ավելի բարձր տարիքի վարորդներ
- FFDL 36 Տրանսպորտային միջոցի վարում ալկոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ - վարորդական իրավունքի վկայականի անհապաղ կասեցում. Մինչև 21 տարեկան վարորդներ
- FFDL 37 Ճանապարհով այլ մեքենաների հետ միասին երթնելու
- FFDL 40 Շաքարախտը և մեքենավարումը
- FFDL 41 Վարորդի իր անկախ մեքենավարումը պահպանելու ուղեցույց
- FFDL 42 Հրշեջի հավաստագրման վերապատրաստման դասընթացների և ներկայացվող պահանջներ
- FFDL 43 Դուք վետերա՞ն եք:
- FFDL 45 Դեղատոմսով տրվող դեղեր և մեքենավարում. որո՞նք են վտանգները:

- FFDMV 4 Հանրային տեղեկատվության տրամադրման հայց - Տեղեկությունների ստացում *DMV*-ի մատյաններից
- FFDMV 17 Ինչպես են հրապարակվում ձեր տվյալները
- Անվտանգ մեքենավարման ձեռնարկ տարեց անձանց համար (DL 625)
- Կալիֆոռնիայի ծնող-անչափահաս ուսուցողական ուղեցույց (DL 603)
- Մեքենավարման լրացուցիչ գնահատմանը նախապատրաստվելու ուղեցույց (DL 956)
- Մեքենավարման քննության չափանիշները (DL 955)

Քննական հարցերի օրինակների համար այցելեք **DMV**-ի կայքը www.dmv.ca.gov հասցեում:

ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ
ՀԱՏԵՔ



ՉԵՌՔԸ ԲՈՒՆԵՔ
ՔԱՅԼԵՔ, ՄԻ ՎԱԶԵՔ

Այս ծրագրի ֆինանսավորումն իրականացվել է Կալիֆոռնիա նահանգի Երթևեկության անվտանգության գրասենյակի (California Office of Traffic Safety) դրամաշնորհով՝ Մայրուղիներում անվտանգ երթևեկության ազգային վարչության միջոցով:

ՎԱՐՈՐԴՆԵՐ

- Դանդաղեցրեք ընթացքը:
- Մեքենան վարեք աչալքոցերի: Ստուգեք հետիոտների առկայությունը:
- Երբեք մի անցեք հետիոտների համար կանգնած ավտոմեքենայից:

ՀԵՏԻՈՏՆԵՐ

- Եղեք կանխատեսելի: Հնարավորության դեպքում ճանապարհը հատեք հետիոտնային անցումներում կամ խաչմերուկներում:
- Եղեք անվտանգ և տեսանելի: Օրվա ընթացքում կրեք պայծառ գույներով հագուստ, իսկ գիշերը՝ անդրադարձնող նյութերով հագուստ, կամ ձեռքում լապտեր ունեցեք:
- Հաստատեք տետողական հաղորդակցում: Երբեք մի ենթադրեք, թե վարորդները տեսնում են ձեզ:





ԿԱՊԵՔ ԱՍՐԱԳՈՏԻՆ ԿԱՄ ՏՈՒԳԱՆՎԵՔ

Mail to: _____

Address: _____

City, State, ZIP Code: _____